Լ. ԵՁԵԿՅԱՆ, Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ռ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ
ՄԱՆՄԱՐ
MANMAR
2016

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075.3)
ԳՄԴ 81.2Հ g72
Ե 193

Խմբագիր՝ Լ. Հովսեփյան
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Եզեկյան Լ.
Ե 193 Հայոց լեզու 12: Ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 12-րդ դասարանի դասագիրք /Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան; Խմբ.՝ Լ. Հովսեփյան: -Եր.: ՄԱՆՄԱՐ, 2016. - 160 էջ:

ISBN 978-9939-62-044-2

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075.3)
ԳՄԴ 81.2Հ g72

© Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., 2011
© ՄԱՆՄԱՐ, 2011
© Պետական գնումների գործակալություն, 2011

ԽՈՍՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Մարդիկ իրենց մտքերը ձևավորում են լեզվական միջոցներով և արտահայտում խոսքով: Բացի նրանից, որ մարդիկ խոսքի միջոցով են հաղորդակցվում, նաև մեկը մյուսին ճանաչում, գնահատում են խոսքով: Հիշենք, թե ինչով է պայմանավորված շրջապատի վերաբերմունքը յուրաքանչյուրի նկատմամբ. նրա գործերով և նրա խոսքով: Մի անզգույշ խոսքը կարող է անախորժության, վեճերի ու կռվի առիթ դառնալ, անտրամաբանական, անիմաստ խոսքը՝ ծիծաղի պատճառ, խելացի, տրամաբանված խոսքը հարգանք է առաջացնում, խորհելու, մտորելու տեղիք տալիս, կամային, հրամայական խոսքը սաստող է լինում և այլն: Երբևէ զղջացել եք ասած խոսքի համար կամ հպարտացել եք տեղին և լավ ասված խոսքով: Հիշենք, որ մարդկանց բնորոշում են նաև նրանց խոսքը գնահատող բառերով՝ *շատախոս, քչախոս, ճշմարտախոս, ստախոս, դատարկախոս, հաճոյախոս, սրախոս, չարախոս, պերճախոս* և այլն: Հետևաբար, մարդիկ պետք է հետևեն իրենց խոսքին, սովորեն ճիշտ արտահայտվել: Այս ամենի համար անշուշտ պետք է իմանալ քերականական կանոնները, շատ կարդալ ու հարուստ բառապաշար ունենալ: Սակայն խոսքը պետք է ճիշտ լինի ոչ միայն քերականորեն, այլև ոճականորեն: Այսինքն՝ լեզվական միջոցները պետք է տեղին ու տվյալ իրադրությանը համապատասխան գործածվեն: Օրինակ՝ *գեղեցիկ չէ – տգեղ է* կապակցություններից յուրաքանչյուրը ընդհանուր առմամբ նույն իմաստն է արտահայտում, սակայն առաջինը ավելի մեղմ է, երկրորդը՝ ավելի կտրուկ: Ուրեմն որևէ իրողություն գնահատելիս անհրաժեշտ է ընտրել իրադրությանը համապատասխանող, վերաբերմունքը տվյալ պահին ճիշտ արտահայտող բառը կամ արտահայտությունը:

Գեղեցիկ խոսքը միայն ճոխ, գրքային, որևէ ստեղծագործության մեջ կարդացած վերամբարձ բառերով չի կազմվում: Երբեմն այդպիսի բառերի գործածումը լինում է արհեստական և ոչ տեղին: Ճիշտ բառը՝ ճիշտ տեղում. սա է գեղեցիկ խոսք կազմելու հիմնական պայմանը: Օրինակ՝ *մեծապես շնորհակալ եմ, զգացված եմ, հարգանքներիս հավաստիքը, ամենայն սիրով* և նման արտահայտությունները կարող են գործածվել որոշակի իրադրություններում, համապատասխան միջավայրում և գեղեցիկ կինչեն: Իսկ եթե երեխան գործածի այդպիսի արտահայտություններ, դրանք կինչեն կեղծ, արհեստական, իսկույն կզգացվի, որ նրան հատուկ են սովորեցրել դրանք, որոնք տվյալ դեպքում նույնիսկ ծիծաղելի են: Բնական ու անմիջական կլինի երեխայի ասած մի պարզ *շնորհակալություն*-ը:

Արհեստականությունից պետք է խուսափել ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում: Գրավոր խոսքը կարող է վերաբերել տարբեր իրողությունների, և ըստ դրա էլ պետք է ընտրվեն արտահայտության տարբեր միջոցներ ու եղանակներ: Գիտական խոսքում կգործածվեն տերմիններ, սահմանումներ, գեղարվեստական խոսքում՝ պատկերավորման միջոցներ և այլն: Համապատասխան միջոցի ընտրությունն էլ հենց ստեղծագործական աշխատանքի կարևոր բաղադրամասերից է: Օրինակ՝ ստեղծագործական շարադրության մեջ կարող են ներկայացվել տարբեր միջավայրեր ու գործող անձեր: Շարադրություն գրողը պետք է կարողանա ճիշտ ներկայացնել տվյալ

միջավայրը, անձի խոսքը: Եթե երեխա է խոսում, ուրեմն անհրաժեշտ է գործածել մանկական բառապաշարին բնորոշ ձևեր, եթե զրուցում են ընկերներ, ուրեմն գործածվող բառերն էլ պետք է լինեն անմիջականություն հաղորդող, բոլորի կողմից գործածվող չեզոք ոճի բառեր, եթե գեղարվեստական պատկեր է ստեղծվում, ապա չափավոր, առանց չարաշահելու պետք է գործածվեն գեղարվեստականությունն ու հուզականությունը ապահովող բառեր և այլն: Ուրեմն ստեղծագործելիս, մտքերը շարադրելիս անհրաժեշտ է միշտ ուշադիր լինել, ոչ միայն չկատարել ուղղագրական, կետադրական, բառագործածության և քերականական սխալներ, այլև պահպանել ոճական համապատասխանությունը, այսինքն՝ չկատարել ոճական սխալներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ դեր ունի խոսքը:
2. Ի՞նչ է ոճական համապատասխանությունը:

ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ ԼԵԶՎԻ ՈՒ ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ

Երկար լեզուն կյանքը կարճ կանի:
Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:
Աշխարհը շինողն ու քանդողը լեզուն է:
Խոսք կա՝ սարի գագաթն է հանում, խոսք կա՝ սարից ցած է գցում:
Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա:

Վարժություն 1: Գրեք շարադրություն հետևյալ թեմաներից որևէ մեկով՝ «Մայրենի լեզու», «Խոսքի ուժը», «Ճասված բառեր», «Մի ծանր խոսք», «Խոսքը բուժեց»:

Վարժություն 2: Փակագծերում տրված բառերից ընտրեք իմաստով և ոճականորեն համապատասխանողը:

1. Աղբյուրի մեղմ *(կարկաչը, շառաչը)* քուն բերեց հոգնած ճամփորդի աչքերին:
2. Ամռանը մենք մեկնելու ենք *(ծովափ, ծովեզր)*՝ հանգստանալու:
3. Իր տքնաջան աշխատանքով նա հաց *(արարեց, թխեց)* այդ քար ու հողից:
4. Փռում հաց *(թխող, ստեղծող)* մարդիկ ավարտեցին աշխատանքը և գնացին տուն:
5. Հյուրերը զրուցելով *(բարձրանում, մագլցում)* էին հյուրանոցի՝ ուղեգորգով ծածկված աստիճաններով:
6. Ձրի բարակ շիթը *(ցայտեց, ժայթքեց)* վնասված խողովակի հազիվ նշմարելի անցքից:
7. Գիտնականը անքուն գիշերներ անցկացրեց, իր հարուստ գրադարանի շատ գրքեր *(որոնեց, պրպտեց)*, մինչև գտավ իրեն հետաքրքրող հարցի պատասխանը:

8. Գյուղացին մի կերպ *(շուռ տվեց, տապալեց)* ճանապարհին ընկած ծանր քարը:
9. Ձրի կաթիլները դանդաղ *(սահում, սայթաքում)* էին ապակու վրայով:
10. Մեքենան դանդաղ *(սուրում, ընթանում)* էր լեռնային ոլորապտույտ ճանապարհով:

Վարժություն 3: Գրեք «Բնության գրկում» թեմայով շարադրություն՝ գործածելով հետևյալ բառերն ու կապակցությունները՝ *գետ, ժայռ, մեղմ խշշոց, սաղարթախիտ ծառեր, սկյուռ, սառնորակ աղբյուր, մաքրություն, հանգիստ:*

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔ

Գիտական շարադրանքով գրվում են գիտական ամենատարբեր աշխատանքներ՝ մենագրություններ, դասագրքեր, հոդվածներ, ռեֆերատներ, զեկուցումներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, ատենախոսություններ և այլն: Սրանցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ հատկանիշները, որոնցով էլ տարբերվում է մյուսներից, բայց բոլորն էլ շարադրվում են գիտական ոճով: Գիտական խոսքի լեզվական նյութը գրական լեզուն է, սակայն յուրաքանչյուր գիտաճյուղի համար մշակվում են տվյալ բնագավառին վերաբերող տերմինաբանություն, արտահայտման պայմանական նշանների համակարգ: Հեղինակը գիտական շարադրանքի միջոցով իր մտքերը, տեսակետները, ուսումնասիրությունների արդյունքներն է ներկայացնում՝ որևէ իրողություն վերլուծելով ու ապացուցելով, ժխտելով ու համաձայնելով, հակադրվելով տարբեր կարծիքների: Այդ պատճառով էլ գիտական խոսքը գեղարվեստականի նման պատկերավոր ու հուզական չէ: Այստեղ շատ են զանազան ձևակերպումները, սահմանումները, եզրահանգումները և այլն: Գիտական խոսքը ձևով մենախոսական է, այսինքն՝ հեղինակը ներկայացնում է իր գիտական ուսումնասիրությունները, սակայն կարող է լինել նաև բանավիճային, եթե հեղինակը հակադրվում է այլ մասնագետների կարծիքներին, վերլուծում դրանք, հաստատում կամ ժխտում: Ընթերցողների լայն շրջանակի համար նախատեսված տեքստերը գրվում են գիտահանրամատչելի լեզվով, որպեսզի հասկանալի լինեն նաև ոչ մասնագետներին. դրանք հիմնականում ուսուցողական-ճանաչողական դեր ունեն:

Գիտական շարադրանք գրելիս անհրաժեշտ է հետևել տրամաբանական հաջորդականությանը, իմաստի հստակ արտահայտմանը: Թեև գիտական աշխատանքների նպատակը գեղարվեստականի նման գեղեցիկ խոսքով ընթերցողին հաճույք պարգևելը, հուզական լիցքեր հաղորդելը չէ, սակայն գիտական աշխատանք գրելիս էլ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել շարադրանքի լեզվին, շարադրել ընդունված գիտական ոճով, թույլ չտալ բառագործածության, ձևաբանական ու շարահյուսական սխալներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչ աշխատանքներ են գրվում գիտական շարադրանքով:
2. Լեզվաոճական ինչ հիմնական հատկանիշներ են բնորոշ գիտական շարադրանքին:

Վարժություն 4: Կարդացեք տրված գիտահանրամատչելի շարադրանքները և բնութագրեք լեզվական հիմնական առանձնահատկությունները (տերմիններ, տարբեր տվյալներ, ինչպես նաև հանրամատչելիություն հաղորդող լրացուցիչ տեղեկություններ և այլն):

Պեմզան սպունգանման հրաբխային ապար է: Բացարձակ թեթև է. ջրում չի սուզվում: Լինում է բաց մոխրագույնից մինչև շագանակագույն:

Պեմզան, կամ ինչպես անվանում էին առաջ՝ չեչաքարը, մարդկությանը հայտնի է անհիշելի ժամանակներից: Լատիներեն այդ բառը նշանակում է փրփուր:

Երկրաբանները պեմզան համարում են քարե փրփուր, որովհետև այն ծակոտկեն ապար է, որն առաջանում է հրաբխային ուժեղ ժայթքումների ժամանակ: Լավայում լուծված գազերն ու ջրի գոլորշին եռում ու դրանով փքում են հեղուկ զանգվածը: Սկսվում է մի թշշոց, որը հիշեցնում է շամպայնի կամ գազով ջրի շշի բացվելու բուռն թշշոցը: Պեմզայի առաջացումը շատ նման է լաբորատոր եղանակով փքված պեռլիտ ստանալուն:

Խիստ ծակոտկեն լինելով՝ պեմզան 2,5–3 անգամ թեթև է ջրից: Օվկիանոսում հրաբխային ժայթքումների ժամանակ նա ստեղծում է լողացող կղզիներ: Չնայած թեթև է, սակայն պեմզայի բեկորները կործանեցին Պոմպեյն ու լեգենդար Ատլանտիդան[1]: Շատերին է ծանոթ Կ. Բրյուլովի «Պոմպեյի վերջին օրը» կտավը: Այնտեղ պատկերված է Վեզուվը, որը կործանեց մի քանի հին հռոմեական քաղաքներ և գյուղեր, որոնք ծածկվեցին պեմզայի և հրաբխային փոշու շերտով:

Սակայն պեմզան ավելի հաճախ արարում է և ոչ թե կործանում: Պեմզայի լցանյութով բետոնը վեց անգամ ավելի առաձգական է դառնում: Այդպիսի բետոնը հեշտությամբ կարելի է և՛ սղոցել, և՛ ծակել, և՛ մեխել:

Ըստ Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքի

Վաղ գարնանը, երբ ծառերը դեռևս տերևազուրկ են, ուշադրություն են գրավում առատ սպիտակ ծաղիկներով ծածկված խոշոր՝ մինչև 12–15 մ բարձրության հասնող ծիրանենիները: Մեղուները աշխուժորեն նեկտար են հավաքում նրանց ծաղիկներից: Ամռանը ծառերը զարդարվում են համեղ, հյութալի դեղնանարնջագույն պտուղներով: Աշխարհին ծիրանենին հայտնի է «արմենիակա» անվանումով:

2000 տարի սրանից առաջ եվրոպացիներին ծիրանենին դեռևս հայտնի չէր: Դեպի Հայաստան արշավի ելած հռոմեական զորքերը հիացմունքով էին ճաշակում այդ սովորական ծառի արտակարգ համեղ պտուղները: Հռոմեական զորավար Լուկուլլոսը ծիրանենու մի քանի տնկիներ տարավ Հռոմ, որտեղ այն անվանեցին «հայկական միրգ» (պրունուս արմենիակա):

Ծիրանենին աչքի է ընկնում արագ աճով: Մեկ հասուն ծառը կարող է տալ 80–100, անգամ մինչև 800 կգ բերք: Պտուղները պարունակում են բազմաթիվ օգտակար և սննդարար նյութեր (շաքար, օրգանական թթուներ, ազոտական նյութեր, բջջանյութեր, վիտամիններ): Հատկապես A վիտամինի պարունակությամբ ծիրանը համազոր է

1 Մեծ կղզի Ատլանտյան օվկիանոսում, որի մասին միակ տեղեկությունը հայտնում է Պլատոնը: Ըստ նրա՝ Ատլանտիդան գտնվել է Ջիբրալթարից արևմուտք և անհետացել է 10–12 հազար տարի առաջ երկրաշարժի հետևանքով:

կարագին և հավի թարմ ձվին: Սերմերը պարունակում են ճարպեր, սպիտակուցներ, ածխաջրեր: Ծիրանը ունի բուժիչ հատկություններ:

Ըստ Լևոն Հարությունյանի «Քո շրջապատի ծառերը» գրքի

Վարժություն 5: *Ծիրանենի, արագիլ, վարդ, կռունկ, եղևնի* **բառերին կցեք մի քանի բառից կազմված գիտական բնորոշումներ և գեղարվեստական բնութագրումներ:**

Օրինակ՝ *քամի* – օդի հորիզոնական շարժում. չարաճճի ու անհամբեր
շուն – ընտանի կաթնասուն կենդանի. մարդու դարավոր հավատարիմ բարեկամ

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔ ԳՐԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գիտական աշխատանք գրելուց առաջ պետք է նախապատրաստվել դրան: Թեև գիտական աշխատանք գրելն էլ գեղարվեստական շարադրանք գրելու նման ստեղծագործական աշխատանք է, սակայն տարբերվում է նրանով, որ այս դեպքում նախ անհրաժեշտ են փաստական նյութի կուտակում, դասդասում, տվյալ նյութի վերաբերյալ եղած կարծիքների ուսումնասիրություն, այսինքն՝ ստեղծագործական մոտեցումն ուղղված է լինում ոչ թե խոսքարվեստին, այլ գիտական ուսումնասիրությանը: Այդ ամենը կատարելու համար սկզբում ընտրվում է թեման: Թեման պետք է լինի վիճահարույց, լավ չլուսաբանված, որպեսզի հնարավոր լինի վերլուծական աշխատանք կատարել: Գիտական աշխատանք գրել ցանկացողը պետք է ուսումնասիրի եղած կարծիքները, ընթերցի թեմայի մասին գրքեր, հոդվածներ, համացանցում ներկայացված տեղեկություններ և այլն: Այդ ընթացքում պետք է նշումներ կատարել ուսումնասիրվող նյութի, եղած կարծիքների, դրանց աղբյուրների վերաբերյալ, որպեսզի հարկ եղած դեպքում հնարավոր լինի հեշտությամբ գտնել անհրաժեշտ տվյալները: Ընտրված նյութի վերաբերյալ տեսությունները յուրացնելուց հետո կատարվում է փաստական նյութի հավաքում և մշակում կամ լաբորատոր փորձառական ուսումնասիրություն: Երբ գործնականում ուսումնասիրված է փաստական նյութը, կարելի է արդեն անցնել շարադրելուն:

Գիտական ուսումնասիրության սկզբում ներկայացվում են այն հիմնախնդիրները, որոնք հեղինակի կարծիքով վիճահարույց են կամ ուսումնասիրման կարիք ունեն, հետո համառոտ բերվում են դրանց վերաբերյալ եղած կարծիքներն ու տեսակետները: Շարադրելիս կարելի է կատարել բառացի մեջբերումներ, սակայն դրանք պետք է փոքրածավալ լինեն:

Այնուհետև հեղինակը շարադրում է իր տեսակետները, ներկայացնում իր ուսումնասիրության արդյունքները: Վերջում կատարվում են եզրակացություններ, անհրաժեշտության դեպքում բերվում են վիճակագրական հաշվումներ, հավելվածային գծապատկերներ, ցանկեր և այլն, ապա ներկայացվում է ուսումնասիրության ընթացքում օգտագործված գրականության ցանկը:

Գիտական շարադրանք գրելիս պետք է օգտվել բառարաններից ու մասնագիտական գրականությունից՝ դրանց միջոցով ճշտելով գիտական այս կամ այն

տերմինի, հասկացության իմաստը: Վերջում անհրաժեշտ է խմբագրել ամբողջ շարադրանքը թե՛ գիտական, թե՛ լեզվաոճական առումներով:

Օրինակ՝ աշակերտին հանձնարարվել է գրել ռեֆերատ տնտեսագիտական տերմինների հայերեն համարժեքների մասին: Նա նախ կարդում է տերմինաբանությանը, բառակազմությանը և մասնավորապես տնտեսագիտական տերմիններին վերաբերող գրքեր: Այնուհետև բառարաններից, մամուլից կամ տնտեսագիտական տարբեր ուսումնասիրություններից դուրս է գրում տերմինները՝ նշելով, թե որտեղ են գործածված դրանք: Փոքրածավալ ուսումնասիրությունների դեպքում, ինչպիսին ռեֆերատն է, սովորաբար ընտրվում է մեկ աղբյուր: Տվյալ դեպքում դա կարող է լինել տնտեսագիտական որևէ ամսագիր, հոդված և այլն: Երբ աշակերտը կարդացել է տեսական գրականությունը և հանձնարարված աղբյուրից դուրս է գրել իրեն անհրաժեշտ բառերը, դասակարգում է դրանք: Դուրս գրված բառերը դասակարգվում են տարբեր սկզբունքներով: Դրանք կարող են դասավորվել այբբենական կարգով, եթե հետագայում այդպես պետք է ներկայացվեն, կարող են դասակարգվել ըստ բառակազմական հատկանիշների, եթե վերլուծվելու է այդ բառերի կազմությունը, կարող են խմբավորվել ըստ խոսքիմասային պատկանելության, եթե հետագայում ուսումնասիրվելու են այդ տեսանկյունից և այլն: Այսինքն՝ դասակարգումը կատարվում է ըստ նպատակի և անհրաժեշտության: Երբ փաստական նյութը հարկ եղած ձևով դասավորված ու մշակված է, հեղինակն սկսում է շարադրել: Նախ ներկայացնում է տերմինների և մասնավորապես տնտեսագիտական տերմինների վերաբերյալ եղած կարծիքները, այնուհետև բերում է իր գտած օրինակները, վերլուծում դրանց առանձնահատկությունները, համադրում կամ հակադրում իր և ուրիշների կարծիքները: Վերջում կատարում է ամփոփում, եզրակացություններ անում, որոնցում ընդհանրացված ձևով նշում է, թե տերմինների թարգմանության ու բառաստեղծման ինչ միտումներ կան, ինչ կազմություն ունեն եղած կամ նոր ստեղծված տերմինները, մեծ մասամբ դրանք որ խոսքի մասին են պատկանում և այլն: Որպես հավելված՝ կարող է բերել իր գտած բառերի ցանկը: Անշուշտ, ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ հետազոտման իր առանձնահատկություններն ունի, սակայն ընդհանուր սկզբունքը սա է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպե՞ս պետք է նախապատրաստվել գիտական շարադրանք գրելուն:
2. Ի՞նչ աղբյուրներից կարող է օգտվել գիտական շարադրանք գրողը:
3. Գիտական շարադրանքում ի՞նչ հաջորդականությամբ են շարադրվում տեղեկություններն ու փաստերը:

Վարժություն 6: Օգտվելով ներկայացված կողմնորոշիչ հարցերից՝ տրված բառերի վերաբերյալ գրեք փոքրածավալ գիտական շարադրանքներ:

ա) գրել, վազել, ներկել, նկարել, կարդալ, խաղալ, զրնգալ

1. Ի՞նչ են արտահայտում այս բառերը (առարկա, գործողություն և այլն):
2. Ո՞ր խոսքի մասի մեջ են մտնում և ինչպե՞ս են անվանվում:
3. Ի՞նչ վերջավորություններով են կազմվել, և ի՞նչ է որոշվում դրանցով:
4. Ի՞նչ կազմություն ունեն, և ինչպե՞ս է որոշվում կազմությունը:

բ) մեծություն, լայնություն, երկարություն, բարձրություն

1. Ո՞ր խոսքի մասին են պատկանում այս բառերը:
2. Ի՞նչ կազմություն ունեն:
3. Ո՞ր խոսքի մասին պատկանող բառերից են կազմված:
4. Ո՞ր հոլովմանն են պատկանում:

գ) տան, շան, մեծության, ուրախության

1. Ո՞ր խոսքի մասին են պատկանում այս բառերը:
2. Ո՞ր հոլովով են դրված:
3. Ո՞ր հոլովմանն են ենթարկվում:
4. Ո՞ր բառերն են պատկանում այդ նույն հոլովմանը:

դ) երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ

1. Ո՞ր խոսքի մասին են պատկանում այս բառերը:
2. Այդ խոսքի մասի ո՞ր տեսակի մեջ են մտնում և ի՞նչ են ցույց տալիս:
3. Ինչպե՞ս են կազմվում:
4. Գրության ի՞նչ ձևեր ունեն (բառային, տառային, թվային):

Վարժություն 7: Օգտվելով դասագրքերից, հանրագիտարաններից, համացանցից և այլ աղբյուրներից՝ գրեք գիտական փոքրածավալ շարադրանքներ հետևյալ թեմաներից որևէ մեկով՝ «Դեղձենի», «Ճնճղուկ», «Մարմար», «Պղինձ»:

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ԼԵԶՈՒՆ

Գիտական շարադրանքի լեզուն տարբերվում է գեղարվեստականից: Եթե գեղարվեստական շարադրանքում գործածվում են պատկերավորման տարբեր միջոցներ, փոխաբերական իմաստով բառեր և այլն, ապա այս դեպքում հիմնականում գործածվում են տերմիններ, սահմանումներ, եզրահանգումներ և այլն: Մեծ մասամբ գործածվում են պատմողական նախադասություններ, դերբայական դարձվածներ, կարող են կատարվել բառացի մեջբերումներ:

Շարադրանքի սկիզբը ներածական բնույթ ունի, որում ներկայացվում են քննարկվող խնդիրներն ու դրանց վերաբերյալ եղած կարծիքները: Միջին մասում հեղինակը ներկայացնում է իր տեսակետները, իսկ վերջում ամփոփում է դրանք: Փոքրածավալ ուսումնասիրություններում առանձին վերնագրերով սովորաբար չեն առանձնացվում ներածությունը կամ եզրակացությունը, թեև ցանկության դեպքում հնարավոր է նաև նման առանձնացում:

Գիտական շարադրանք գրելիս անհրաժեշտ է ուշադիր լինել: Բառերը պետք է գործածել ճիշտ իմաստներով, ձևակերպումներում խուսափել երկիմաստություններից, խճճված ու անհասկանալի նախադասություններ չկազմել: Եթե գեղարվեստական շարադրանքում նույն բառերի կրկնությունը (ոճական արժեք չունենալու դեպքում) թերություն է, ապա գիտական շարադրանքում հնարավոր են կրկնություններ, թեև անհրաժեշտ է հնարավորինս խուսափել դրանցից: Հիմնականում կրկնվում են այն հասկացությունների անվանումները, որոնց մասին գրվում է ուսումնասիրությունը:

Օրինակ՝ գոյականի հոլովման մասին շարադրանքում հաճախ կկրկնվեն *գոյական, հոլով, հոլովում* բառերը: Գիտական շարադրանք գրելիս, ինչպես գեղարվեստականի դեպքում, պետք է ուշադիր լինել, չկատարել ուղղագրական և կետադրական սխալներ:

Եթե գրվածքը նախատեսված չէ միայն մասնագետ ընթերցողների համար, ապա շարադրվում է գիտահանրամատչելի ձևով, այսինքն՝ գիտական դրույթները ներկայացվում են ավելի պարզ, առանց նեղ մասնագիտական տերմինների, աշխույժ ոճով, կյանքի տարբեր բնագավառներից վերցված օրինակներով, երբեմն նաև հումորով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ հիմնական առանձնահատկություններ ունի գիտական շարադրանքի լեզուն:
2. Ի՞նչ է ներկայացվում գիտական շարադրանքի սկզբում, միջին մասում և վերջում:

Վարժություն 8: Պարբերություններն այնպե՛ս դասավորեք, որ ստացվի տեքստ:

ա) 1. Թռչելիս արագիլը ձգում է իր երկար վիզը և ոտքերը: Թռչում է դանդաղ, բայց թեթև ու գեղեցիկ: Մանավանդ գեղեցիկ են նրա պտույտներն իր բնի վերևում:

2. Նախ նշենք, որ մեզ մոտ տարածված է եվրոպական ճերմակ արագիլը, որը խոշոր թռչուն է՝ 3,5–4 կգ կշիռով, իսկ զույգ թևերը, միասին բացած, երկու մետրից ավելի են: Գույնը ընդհանուր առմամբ ճերմակ է, բայց թիկունքի կեսից թևերի եզրերով մինչև պոչի ծայրը փայլուն սև է: Վիզը երկար է և դարձյալ սպիտակ, իսկ աչքերը թուխ են՝ պատված գորշասև շրջանակներով:

3. Այնքան հանրածանոթ թռչուն է արագիլը և այնքան մարդամոտ, որ քիչ մարդ կլինի, որ իր կյանքում տեսած չլինի նրան և գաղափար չունենա նրա արտաքինի ու մարմնի կառուցվածքի մասին: Համենայն դեպս, երկու խոսքով նկարագրենք այդ թռչունին:

Ըստ Վախթանգ Անանյանի «Հայաստանի կենդանական աշխարհը» գրքի

բ) 1. Եվ պատմել տուֆի մասին միևնույնն է, թե պատմել Հայաստանի մասին: Այդ քարի վաղնջական հայկական անունը կորել է դարերի խորքում, բայց դժվար է հիշել մեկ ուրիշ օգտակար հանածո, որը վերջին երկու հազարամյակում այդքան սերտ կապված լինի մեր ժողովրդի պատմությանը: Տուֆը փոխարինեց կավին և բազալտին, որոնք մինչ այդ գերիշխում էին ճարտարապետության մեջ:

2. Հրաբխային տուֆը դյուրամշակելի ապար է: Այն առաջացել է հրաբխային հզոր ժայթքումներից գոյացած շիկացած մանրակտորների սերտ համաձուլվածքից: Հայկական տուֆը անգերազանցելի է իր գեղեցկությամբ ու որակով:

3. Մեզ հասած հնագույն տուֆակերտ ստեղծագործություններից են Էջմիածնի Մայր տաճարը (303 թվական) և Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված երեխայի գլխի քանդակը (3-րդ դար):

Ըստ Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքի

Վարժություն 9: Գրեք շարադրություն տրված թեմաներից մեկով՝ «Գիրք, հեռուստացույց, համակարգիչ, թե՞ բոլորը», «Մարդը և բնությունը. բարեկամնե՞ր, թե՞ թշնամիներ»:

Վարժություն 10: Տրված ո՞ր նախադասությունն է հակասում տեքստի իմաստին:

ա) Կավը նստվածքային ապար է՝ կազմված 0,01 մմ-ից էլ փոքր մանրագույն հատիկներից: Խոնավ վիճակում նկատելի յուղոտ է: Ըստ բաղադրության՝ լինում են կավի տարբեր տեսակներ: Վերցնելով խեցե ամանեղեն, գունավոր մատիտներ կամ ճենապակե արձանիկներ՝ մենք շփվում ենք կավին, որը երբեմն օգտակար հանածո չեն համարում: Հաճախ մենք այն տեսնում ենք ճանապարհներին՝ ցեխի տեսքով:

Կավը, որն առաջանում է զանազան ապարների, այդ թվում և ամուր բազալտի ու գրանիտի քայքայումից, հանդիպում է համարյա ամենուր: Դրա համար էլ կարծում են, թե կավը այնքան էլ արժեքավոր չէ: Բայց դա ճիշտ չէ, քանի որ զարգացած արդյունաբերական երկրներում մեկ տարում այնքան շատ կավ է արդյունահանվում, որ նրա արժեքը երեք անգամ ավել է լինում նույն ժամանակում հանված ոսկու արժեքից:

Ըստ Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքի

1. Ըստ բաղադրության՝ կան կավի տարբեր տեսակներ:
2. Կավե իրերը լայնորեն գործածվում են կենցաղում:
3. Կավը դժվար գտնվող հանածո է:
4. Կավն առաջանում է զանազան ապարների քայքայումից:

բ) Մասրենի սովորական: Տերևաթափ թուփ է՝ մինչև 3 մ բարձրությամբ, աղեղնաձև թեքված երկար ճյուղերով: Կեղևը կանաչ է կամ գորշակարմրավուն: Փշերն ամուր են, նոսր: Տերևները բարդ են, կենտ, փետրաձև, կանաչ կամ կապտականաչ, մերկ, սուր, կրկնակի ատամնաեզր: Ծաղիկները խոշոր են՝ 2–8 սմ տրամագծով, միայնակ կամ խմբերով: Պտուղը օվալաերկարավուն է կամ կլորավուն, հարթ, կարմիր: Ծաղկում է մայիս-հունիսին, պտուղները հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբերին:

Պտուղները խիստ արժեքավոր են. պարունակում են մեծ քանակությամբ վիտամիններ: Ծաղկի թերթիկները և պտուղներն օգտագործվում են թեյի մեջ: Պտուղներից պատրաստում են հյութեր, լիմոնադ, մածուկ, դոնդող և այլն: Օգտագործում են թարմ և չորացրած:

Ըստ Լևոն Հարությունյանի «Քո շրջապատի թփերը» գրքի

1. Մասրենին ծաղկում է գարնան վերջին – ամռան սկզբին:
2. Մասրենու ճյուղերն ունեն կանաչ կամ գորշակարմրավուն կեղև, ամուր փշեր:
3. Մասրենու պտուղները օվալաերկարավուն են կամ կլորավուն, հարթ, կարմիր:
4. Մասրենու պտուղները օգտագործվում են միայն չորացրած, քանի որ թարմ վիճակում վնասակար են:

գ) Թշշան կարապը տարածված է Արևմտյան Եվրոպայից մինչև Խաղաղ օվկիանոս. ձմեռում է Միջերկրական, Սև և Կասպից ծովերում, նաև Հնդկաստանում: Մեր հանրապետությունում համարվում է հազվագյուտ տեսակ. հանդիպում է միայն ուշ

աշնանը և ձմռան ընթացքում Սևանա լճի ավազանում, Արփա լճում: Չափազանց զգույշ է. վտանգի դեպքում պարանոցն ընդունում է ուղղահայաց դիրք, ինչպես ճչան կարապինը: Թռիչքն սկսելիս ջրից պոկվում է վազքի միջոցով և թևերի խոր ու ծանր թափահարումով: Կերը որոնում է գլուխն ու պարանոցը ջրում խոր սուզած վիճակում. մարմնով սուզվել չի կարողանում: Կերակրվում է ջրային բույսերով և անողնաշարավոր կենդանիներով:

Ըստ Մարտին Աղամյանի «Հայաստանի թռչունները» գրքի

1. Թշշան կարապը սնվում է ջրային բույսերով և անողնաշարավոր կենդանիներով:
2. Կարապի այս տեսակը մեր հանրապետությունում հազվադեպ է հանդիպում:
3. Այս կարապները որս անելիս ամբողջ մարմնով սուզվում են և ջրային բույսեր ու անողնաշարավոր կենդանիներ գտնում:
4. Թշշան կարապը թռիչքն սկսելիս ջրից պոկվում է վազքով և թևերի խոր ու ծանր թափահարումով:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վերլուծական շարադրությունները գրվում են որևէ գրողի ստեղծագործության կամ ստեղծագործությունների վերաբերյալ: Կարող են լինել նաև համեմատական բնույթի շարադրություններ, որոնցում զուգադրվում ու վերլուծվում են տարբեր գրողների (կամ միևնույն գրողի) այնպիսի ստեղծագործություններ, որոնք գաղափարական ընդհանրություններ ունեն (օրինակ՝ երկուսում էլ ներկայացված է հայրենիքի թեման): Ավելի հաճախ շարադրությունները նվիրված են լինում ոչ թե ամբողջ ստեղծագործության վերլուծությանը, այլ որևէ կոնկրետ հարցի քննությանը (օրինակ՝ գլխավոր կերպարի վերլուծությանը): Այսպես՝ հայ նշանավոր արձակագիր Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ կարող են գրվել վերլուծական տարբեր շարադրություններ՝ «Գևորգ Մարզպետունու կերպարը», «Պատմականությունը Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպում», «Մուրացանի աշխարհայացքի դրսևորումը «Գևորգ Մարզպետունի» վեպում» և այլն:

Վերլուծական շարադրության նյութն առաջին հերթին գրական այն երկն է, որի վերաբերյալ պետք է գրվի շարադրությունը, սակայն անհրաժեշտ է նաև այլ նյութերի իմացություն: Շարադրություն գրողը պետք է ծանոթ լինի նաև տվյալ հեղինակի ուրիշ գործերի, պատկերացում ունենա այն ժամանակաշրջանի մասին, որի ընթացքում ապրել և ստեղծագործել է հեղինակը, իմանա գրական այն ուղղության առանձնահատկությունները, որի ներկայացուցիչն է հեղինակը (ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ և այլն):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչ թեմաների վերաբերյալ են լինում վերլուծական շարադրությունները:
2. Ո՞րն է վերլուծական շարադրության հիմնական նյութը:
3. Վերլուծվող գրական երկից բացի՝ ինչ տեղեկություններ պետք է իմանա վերլուծական շարադրություն գրողը:

Վարժություն 11: Գրեք վերլուծական շարադրությունների երեքական վերնագիր «Սասնա ծռեր» էպոսի, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի, Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի և «Քաոս» վեպի համար:

Վարժություն 12: Գրեք վերլուծական շարադրություն Վախթանգ Անանյանի «Խղճալի հայացք» ստեղծագործության վերաբերյալ: Ստորև ներկայացվում են կենսագրական տվյալներ Վ. Անանյանի մասին և պատմվածքը:

Վախթանգ Ստեփանի Անանյանը ծնվել է 1905թ. հուլիսի 26-ին (օգոստոսի 8) Պողոսքիլիսա գյուղում (այժմ՝ Դիլիջան քաղաքի շրջագծի մեջ): Չորս տարի սովորել է Դիլիջանի ծխական դպրոցում, ապա զբաղվել ինքնակրթությամբ: 1926 թվականից աշխատել է տարբեր թերթերի խմբագրություններում, եղել «Սոցիալիստական գյուղատնտեսություն» թերթի, «Սոցիալիստական ագրոնոմիկա» և «Կոլխոզնիկ» հանդեսների խմբագիրը: 1941–45 թվականներին մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1945–50-ին աշխատել է «Սովետական Հայաստան» թերթում: Մանկական լավագույն գրքի համամիութենական մրցույթում նրա «Սևանի ափին» և «Հովազաձորի գերիները» վիպակները արժանացել են մրցանակի: Այդ գրքերի հիման վրա գրված սցենարներով «Հայֆիլմում» նկարահանվել են «Լեռնային լճի գաղտնիքը» և «Հովազաձորի գերիները» ֆիլմերը: Այս երկու վիպակները և որսորդական մի շարք պատմվածքներ թարգմանվել և առանձին գրքերով լույս են տեսել ռուսերեն, ուկրաիներեն, բելառուսերեն, ղազախերեն, ուզբեկերեն, վրացերեն, ադրբեջաներեն, մոլդավերեն, լատիշերեն, լիտվերեն, էստոներեն, կաբարդիներեն, բալկարերեն, թաթարերեն, ֆիններեն, գերմաներեն, լեհերեն, հունգարերեն, չեխերեն, ռումիներեն, բուլղարերեն, անգլերեն, ճապոներեն, հնդկերեն, բենգալերեն, արաբերեն, աֆրիկական սուահիլի լեզվով, չինարեն: Վ. Անանյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (2), Ժողովուրդների բարեկամության և «Պատվո նշան» շքանշաններով: Մահացել է 1980թ. մարտի 4-ին Երևանում:

Ըստ «Գրական տեղեկատուի»

Դեռ փոքր էի, տասնչորս տարեկան հազիվ լինեի:

Մի առավոտ մեր հարևան Արթենանց Արշակը մեր դուռը ծեծեց: Բաց արի:

– Հրացանդ տո՛ւր,– ասաց,– Ջուխտակ աղբյուրներում նապաստակներ եմ տեսել, ո՞նց կլինի, որ մեկը չբերեմ:

Հրացանս տվի, գնաց:

Կեսօրին Արշակը վերադարձավ՝ քրտինքի մեջ կորած:

– Մեկին մի թեթև վիրավորեցի, Բադալանց բլուրն անցկացավ-կորավ, չգտա,– ափսոսանքով հաղորդեց նա:

– Ա՛յ բալամ, որս անելը հո փլա՞մ չէ, ամեն մարդի բան չէ,– լոպազ-լոպազ ասացի ես ու հրացանը նրա ձեռքից առնելով՝ ճամփա ընկա:

Հասա Արշակի ասած տեղը. փափուկ ձյան վրա պարզ երևում էր նապաստակի բոլորովին նոր հետքը:

Երեք ոտքով էր վազել, ուրեմն մեկը վիրավոր է: Մի քանի քայլ չարած՝ ձյան վրա արյան հետքեր նկատեցի:

«Սա իմ ձեռքից չի պրծնի»,– ուրախ մտածեցի ես և առաջ գնացի:

Հետքն անցնում էր քարերի, կոճղերի արանքով, մացառների միջով:

Մի բարձր տեղ վիրավորը նստել էր: Ձյան վրա պարզ երևում էին նրա երեք թաթերի դրոշմած հետքերը, իսկ աջ թաթի տեղ արյուն էր թափվել և ալ կարմիր ներկել սպիտակ ձյունը:

Դիմացս մի մեծ քար կար. հետքն այդտեղ կտրվում էր: Հասա, կռացա, ներս նայեցի քարի տակի արանքից. նապաստակը պառկել էր բնի հատակին և իր վիրավոր ոտքը թաղել մի ուրիշ՝ ավելի փոքր նապաստակի տաք ու փափուկ մազերի մեջ:

Վիրավոր նապաստակը մի խղճալի հայացք գցեց ինձ վրա և փախչելու փորձ չարավ: Ես անմիջապես շուռ եկա և քայլեցի դեպի գյուղ:

Այդ խղճալի հայա՛ցքը...

Պատահեց Արշակը. անասուններին ջուրն է տանում: Հեգնանքով նայում է ու հարցնում.

– Հը՛, բերի՞ր... Չէ՞... Բա լոպազանո՛ւմ էիր:

Ի՞նչ ասեի... Կամ որ ասեի, կհասկանա՞ր...

Վարժություն 13: Ընտրե՛ք հետևյալ վերնագրերից մեկը՝ «Անակնկալ այց», «Կարոտի ուժը», «Ուշացած զղջում», «Լավ ընկերություն», «Կորցրած տարիներ», «Լավ է ուշ, քան երբեք», և շարունակե՛ք տրված շարադրանքը:

Այդ օրը լրանում էր նրա ծննդյան տասնվեց տարին: Սեղանն արդեն պատրաստ էր, և տանտերերը սպասում էին հյուրերին: Հնչեց դռան զանգը:

ՇԱՐԱԳՐԱՆՔԻ ՊԼԱՆԸ

Ամեն մի գրավոր կամ բանավոր խոսք պետք է կազմվի տրամաբանական հաջորդականությամբ: Վերլուծական շարադրությունն էլ գրվում է որոշակի սկզբունքներով, որոնց պահպանումը նպաստում է շարադրանքի իմաստային ամբողջականությանը: Շարադրություն գրողը պետք է կազմի շարադրանքի պլան: Պլանում ներկայացված հարցադրումների պատասխաններով էլ ընդհանուր առմամբ ձևավորվում է ամբողջ տեքստը:

ա) Նախ անհրաժեշտ է ներկայացնել որոշ տեղեկություններ այն մասին, թե որ ժամանակաշրջանում է ապրել ու ստեղծագործել վերլուծվող ստեղծագործության հեղինակը, գրական որ ուղղության հետևորդ է եղել:

բ) Նշել տվյալ հեղինակի առավել հայտնի ստեղծագործություններից մի քանիսը. ցանկալի է, որ դա կատարվի թեմատիկ բաժանումով, այսինքն՝ խմբավորված նշվեն հայրենասիրական, խոհափիլիսոփայական, սիրային և մյուս թեմաներով գրված գործերը:

գ) Այնուհետև անդրադառնալ վերլուծվող երկի ստեղծման ժամանակաշրջանին (օրինակ՝ գրվել է Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, Հայրենական մեծ պատերազմի տարիներին և այլն): Եթե ստեղծման ժամանակը էական դեր է ունեցել, ապա պետք է նշել նաև, թե այն ինչ ազդեցություն է թողել գրական տվյալ երկի վրա:

դ) Սրանից հետո խոսվում է այն մասին, թե ինչ բովանդակություն ունի վերլուծվող երկը, և շատ համառոտ ներկայացվում է սյուժեն:

ե) Սրա հիման վրա էլ վերլուծաբար ներկայացվում են ստեղծագործության գլխավոր գաղափարը, հեղինակի առաջ քաշած խնդիրները, դրանց տրվող լուծումները:

զ) Այս վերլուծությունից հետո ներկայացվում են տվյալ ստեղծագործության մեջ գործածված գեղարվեստական միջոցները (կերպարներ և գործողություններ, պատկերավորման միջոցներ և այլն):

է) Վերջում շարադրության հեղինակն ամփոփում է ասելիքը, գնահատում վերլուծվող երկը, կատարում եզրահանգումներ:

Անշուշտ, պլանը չպետք է կաղապարի շարադրություն գրողին. վերլուծական շարադրությունը թեև գիտական, բայց նաև ստեղծագործական աշխատանք է, և գրելու ընթացքում միշտ էլ հնարավոր են տարբեր շեղումներ՝ սկզբում նախատեսված պլանի հարցադրումներից: Պլանը միայն ընդհանուր կառուցվածքային նշանակություն ունի:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ նպատակով է կազմվում շարադրանքի պլանը:
2. Ի՞նչ հիմնական հարցադրումներ են լինում վերլուծական շարադրության պլանում:

Վարժություն 14: Կազմեք պլաններ՝ հետևյալ թեմաներով շարադրություններ-ի համար. «Կին հերոսները Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպում», «Սայաթ-Նովայի սիրո երգերը», «Աբիսողոմ աղայի կերպարը Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպում»:

Վարժություն 15: Ըստ տրված պլանի՝ գրեք վերլուծական շարադրություն Աղասի Այվազյանի «Ոտավորը» ստեղծագործության վերաբերյալ: Ստորև ներկայացվում են կենսագրական տվյալներ Ա. Այվազյանի մասին և պատմվածքը:

Աղասի Սիմոնի Այվազյան (ծնվ. 07.9.1925, Ախալցխա), գրող, սցենարիստ, կինոռեժիսոր: ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1982): Սովորել է Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայում, Թբիլիսիի համալսարանի բանասիրության ֆակուլտետում, Երևանի գեղարվեստաթատերական և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտներում: 1965–73-ին՝ «Գրական թերթի» արձակի բաժնի վարիչ, 1973-81-ին՝ «Էկրան» ամսագրի, 1992–97-ին՝ «Հայություն» թերթի գլխավոր խմբագիր: Այվազյանի գործերում հաճախ միահյուսվում են սովորականն ու անսովորը՝ ներկայացնելով ժամանակակից մարդու հակասական ներաշխարհը («Ճանապարհորդություն իր շուրջը», «Ընտանիքի հայրը», «Փառահամար», «Սինյոր Մարտիրոսի արկածները», «Եռանկյունին», «Դիպլիպիտո», «Օբյեկտիվ–18», «Թթի ամիսը», «Երկրի վրայի զբաղմունքը», «Պրոբլեմ», «Թատրոն» (պիեսներ), «Ալիբի», «Մանչերը», «Պոեմ վասն շենքի և շինության»): Այվազյանը նկարահանել է «Լիրիկական երթ», «Վառած լապտեր» (1983, Կինոմամուլի միջազգային ֆեդերացիայի մրցանակ՝ 1987), «Գաղտնի խորհրդականը» կինոնկարները: Այվազյանի սցենարներով ստեղծվել են կինոնկարներ՝ «Հայրիկ» (1972), «Մեզանից երեքը» (1989), «Ձայն բարբառոյ» (1991): «Եռանկյունին» կինոնկարի սցենարի համար՝ ՀԽՍՀ Պետական մրցանակ (1975):

Մահացել է 2007 թվականին:

Ըստ «Ով ով է. հայեր» հանրագիտարանի

Գործի, ընտանիքի մարդ, գյուղացի՝ հազար ու մի հոգսով, երբեք ուրիշ տեղ գնալու ժամանակ չէր գտել. հիմա դուրս եկավ պտտելու: Որոշել էր ոտքով ման գալ և տնտղել ամբողջ Հայաստանը. դա այնքան էլ դժվար բան չէր: Ոմն թոշակառու մի քանի տարում Սովետական Միությունն իր բոլոր հանրապետություններով՝ աջ և ձախ, ձախ և աջ, վեր ու վար, վար ու վեր չափեց-ձևեց: Ո՛ւր մնաց Հայաստանը:

Այս հայ ոտավոր ճանապարհորդը կարգին ման եկավ հանրապետությունում, հետո Բջնիի, թե Օշականի մոտակայքում կանգնեց, նշան արեց մի տասը մետր հող ու համոզված ասաց.

– Էս հողին օտարի ոտք չի դիպել:

Հավաքվեցին մի քանի գյուղացի, մի խմորոտ ձեռքերով կին, մի գավառցի հովեկ, ծուլորեն ծիծաղեցին՝ քի՞չ ծուռ կա Հայաստանում: Մի գործարար մարդ սուսուփուս թողեց, հեռացավ: Մեկն ասաց.

– Որ գիրք կարդաս, կիմանաս, որ այս հողը երկար ժամանակ պարսիկների ձեռքին է եղել...

– Չէ՛,– հաստատ ասաց ոտավորը:

– Մենակ պարսիկնե՞րը,– գրգռված զարմացավ մարդը:– Էլ ով ասես՝ չի եղել. ոտնատակ են արել էս կողմի բոլոր գյուղերը...

– Էս հողի վրա օտարը ոտք չի դրել...

– Ինչո՞ւ անպայման էս տասը մետրը,– ասաց գյուղացին:

– Լա՛վ... մարդ գտա՞ք խոսելու...

Ութամյա դպրոցի ուսուցիչը ջղայնացել էր նրա համառության վրա. համբերում էր, որ չհայհոյի, ու կրունկով գետինն էր փորում:

– Բա՞ն գիտես,– հարցրեց խմորոտ ձեռքերով կինը:

– Էդ ինչո՞ւ ես էդպես համոզված,– ասաց գավառցի հովեկը:

– Օտարի ոտք չդիպած մի պատառ հող որ չլիներ, բա ո՞նց կմնար էսքան աշխարհը... Մի փոքրիկ տեղ պիտի մնար, որ դառնար Հայաստան: Սա է էդ հողը...– նա նորից նշեց տեղը,– էս հողի վրա օտարը ոտք չի դրել...

Սովորական հող էր՝ հայկական, քարքարոտ: Ու մարդիկ մի տեսակ առանց հավատալու հավատացին: Բոլորն զգացին, որ մի զարմանալի, թե ծիծաղելի ճշմարտություն կա նրա ասածի մեջ:

Ոտավորը համբուրեց գետինը, մի բուռ հող լցրեց ծոցը ու դարձավ տուն:

Մարդիկ նայեցին նրա ետևից, հետո օղակեցին հողակտորը և երկար ու լուռ նայում էին, ինչպես կնայեին հուշարձանի:

Շարադրանքի պլանը

ա) Աղասի Այվազյան. գրողը, մտավորականը:

բ) «Ոտավորը» պատմվածքը. ոտավորը և նրա նպատակը:

գ) Ոտավորի անակնկալ որոշումը:

դ) Մարդկանց թերահավատությունը ոտավորի ասածի նկատմամբ:

ե) Մարդկանց՝ ցանկալին որպես իրականություն ընդունելու հակումը:

զ) Ոտավորի առաքելության ավարտը և վերադարձը տուն:

է) Հայրենի հողի խորհուրդը:

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը պետք է լինի գեղեցիկ ու արտահայտիչ: Խոսողը կամ գրողը պետք է ձգտի հնարավորինս պարզ (բայց ոչ պարզունակ), հստակ, սահուն ու պատկերավոր արտահայտվել: Շարադրության հեղինակն էլ պիտի ջանա իր գրվածքը շարադրել այս հատկանիշներով: Նշենք որոշ սկզբունքներ, որոնք կիրառելու դեպքում շարադրություն գրելիս հնարավոր է խուսափել մի շարք թերություններից:

ա) Շարադրությունը չպետք է սկսել կաղապարված ներածականներով, որոնք տարածված ու ծամծմված են, օրինակ՝ «Հայ գրականության նշանավոր դեմքերից է....»: Այսպիսի նախադասությունների գործածությունը շարադրության թե՛ սկզբում, թե՛ ցանկացած այլ հատվածում խոսքը դարձնում է միապաղաղ, ոչ տպավորիչ:

բ) Պետք է խուսափել ճոռոմ ու վերամբարձ բնորոշումներից, չափից շատ մակդիրների գործածումից, անհարկի ու կեղծ հուզականությունից:

գ) Պետք է խուսափել նաև ավելորդ բառեր գործածելուց: Այդպիսի բառերին տրվել է դիպուկ անվանում՝ մակաբույծ բառեր: Սովորաբար ավելորդ է լինում տարբեր շաղկապների, դերանունների, բայերի, վերաբերականների գործածությունը՝ *սա, դա, ինքը, ուրեմն, այո, չէ՞, ասում է, հասկանալի է* և այլն: Այսպիսի բառերի ոչ տեղին գործածությունը հաճախ ոչ միայն ոճական, այլև քերականական սխալներ է առաջացնում, օրինակ՝ *Սերը դա վեհ զգացմունք է:* Այս նախադասությունն ունի երկու ենթակա՝ *սերը, դա,* սակայն եզակի թվով ստորոգյալ՝ *զգացմունք է:* Չպետք է տրամաբանորեն հասկանալի իրողություններն առանձին բառերով անվանել, քանի որ այդպիսի բառերի գործածությունն ավելորդ է, օրինակ՝ *Նրանք* ***հետ*** *վերադարձան:* ***Նորից*** *եմ կրկնում:* Այս նախադասություններում *հետ, նորից* բառերի գործածությունը իմաստային առումով ճիշտ չէ: Պետք է խուսափել նաև նույն կամ նույն արմատից կազմված բառերի անհարկի կրկնությունից, ինչպես՝ *Իր* ***ստեղծագործ*** *աշխատանքով գրողը* ***ստեղծում է*** *արժեքավոր* ***ստեղծագործություններ:***

դ) Անհրաժեշտ է վերլուծել, այլ ոչ թե վերապատմել ստեղծագործությունը: Մանավանդ չպետք է կատարել շատ և ծավալուն մեջբերումներ: Չափից շատ մեջբերումները սեփական ասելիքի բացակայության ապացույցն են:

ե) Նախադասությունները, հատկապես բարդ նախադասությունները պետք է կազմել հետևողականորեն և սկսած միտքը հասցնել ավարտին: Բերենք օրինակ՝ *Մի մարդ, որը չի գիտակցում այս գործի կարևորությունը, ես այդպիսի մարդուն չեմ հարգում:* Այստեղ գլխավոր նախադասության սկիզբը *(Մի մարդ...)* տրամաբանորեն և քերականորեն չի կապվում երկրորդական նախադասությունից հետո եկող մասին *(...ես այդպիսի մարդուն չեմ հարգում)*: Կամ անտրամաբանական է հետևյալ նախադասությունը՝ *Դա իմ կարծիքով երևի հաստատ նրա արածն է:*

զ) Անհրաժեշտ է գործածել այնպիսի բառեր, որոնց իմաստները գիտեք. այլապես գրվածքը կարող է անիմաստ, նույնիսկ ծիծաղելի ստացվել: Այս առումով հաճախ շփոթության տեղիք են տալիս հարանուն բառերը: Օրինակ՝ *Այդ վեպը հայ գրականության կարևոր արժանիքներից է.* պետք է լինի՝ *արժեքներից է:*

է) Կարևոր և պարտադիր է ուղղագրական ու կետադրական կանոնների իմացությունը: Թեկուզ գեղեցիկ շարադրված, բայց ուղղագրական և կետադրական սխալներով լի շարադրանքը լավ տպավորություն չի թողնի:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բառագործածության ինչ սկզբունքների պետք է հետևել շարադրություն գրելիս:
2. Քերականական և տրամաբանական ինչ սխալներ են հանդիպում աշակերտական շարադրություններում, որոնցից պետք է խուսափել:

Վարժություն 16: Շարունակեք տրված նախադասությունները: Հետևեք բառագործածությանը և տրամաբանական հաջորդականությանը:

1. Եթե ճամփորդները մութն ընկնելուց առաջ հասնեին գյուղ, ...:
2. Բույսերով ձևավորումը ոչ միայն կգեղեցկացներ բակը, ...:
3. Մի քանի օր էր մնացել մրցույթին, ...:
4. Թեև հիմնական աշխատանքն ավարտել էին, ...:
5. Անշուշտ կավարտեին շինարարությունը, ...:
6. Անհրաժեշտ էր կատարել նախատեսված աշխատանքը, ...:
7. Մեքենաների աղմուկը շենքում չէր լսվի, ...:
8. Հավանաբար դա էր պատճառը, ...:
9. Նախքան կսկսեին գյուղատնտեսական աշխատանքները, ...:
10. Թերևս հասցնեին ավարտել վերանորոգումը, ...:

Վարժություն 17: Գտեք տրամաբանորեն և ոճականորեն ավելորդ բառերը:

1. Ընկերները ոտքով քայլեցին մինչև մոտակա խանութը:
2. Շիկահեր մազերով մի աղջնակ խաղում էր բակում:
3. Աշակերտը նորից կրկնեց իր հարցը:
4. Երեկոյան հետ վերադարձան թագավորի սուրհանդակները:
5. Դա նարնջագույն գույնի նյութ է, որը լուծվում է ջրում:
6. Գանգրահեր մազերով երեխան նկարում էր:
7. Տանտերը դուրս եկավ դուրս և դիմավորեց հյուրերին:
8. Շունը դա ընտանի կաթնասուն կենդանի է:
9. Այդ ամենը երևի հավանաբար նա է կատարել:
10. Նրան երբեմն հազվադեպ հանդիպում եմ այգում զբոսնելիս:

Վարժություն 18: Պատմվածքի համար ավարտ գրեք:

Բժշկի ընդունարանում նստած էր ութ հոգի: Բոլորն էլ անհամբեր իրենց հերթին էին սպասում: Բոլորն էլ աշխատում էին մի բանով զբաղվել, որ ժամանակն աննկատելի անցնի: Մեկը ինչ-որ շաբաթաթերթի նկարներն էր նայում, մի ուրիշը՝ պատի նկարները: Երկու հոգի էլ, նստած միմյանց մոտ, իրենց հիվանդությունից էին խոսում:

Եթե բոլորն էլ այդպես զբաղված չլինեին իրենցով, երևի բոլորի ուշադրությունը կկենտրոնանար պատի տակ նստած պարոնի վրա, որ ներս մտավ, առանց ոչ ոքի նայելու մոտեցավ անկյունում դրված աթոռին, մոտի սեղանի վրայից մի գիրք վերցրեց, նստեց, բացեց գիրքը և մնաց անշարժ:

Դա մոտ քառասուն տարեկան մարդ էր կամ գուցե ավելի երիտասարդ, բայց ժամանակից ավելի վաղ ծերացած: Նա շարունակ նայում էր ձեռքին բռնած գրքին,

բայց չէր կարդում, որովհետև քառորդ ժամից ավելի էր, որ նա նույն երեսին, նույն տողին և գուցե նույն տառին էր նայում:

Երբեմն նա նյարդային կերպով շարժում էր իր ձեռքը՝ կարծես ձանձրացնող ճանճեր քշելու համար: Աչքերի մեջ ձանձրույթ, թե՞ հոգնածություն կար. շրթունքների աջ անկյունը միշտ վեր քաշած՝ նա երբեմն ինչ-որ անորոշ ձայներ էր հանում:

Երբ հերթը հասավ նրան, նա արագ, նյարդային կերպով բարձրացավ, բայց չշտապեց, մինչև բժիշկը երկրորդ անգամ չկրկնեց. «Հետևյալը»:

Բժիշկը դիմեց նրան սովորական հարցով, թե ինչով կարող է օգտակար լինել. նա մի վայրկյան լուռ էր, կարծես ուզում էր ձայն հանել, մի բան ասել, բայց կարծես մոռացել էր խոսելը:

– Չգիտեմ... չգիտեմ՝ ինչ ասեմ,– նյարդային կերպով մի քանի անգամ կրկնեց նա և էլի լռեց:

– Ես հիվանդ չեմ,– շարունակեց նա,– ոչ մի տեղս չի ցավում...

– Երևի լավ չեք քնում,– ընդհատեց բժիշկը:

– Ձեզ ո՞վ ասաց,– վախեցած հարցրեց նա:

– Այդ դժվար չէ գուշակել: Պատմեցե՛ք մանրամասն, ես Ձեզ լսում եմ:

– Ես առողջ եմ, բոլորովին առողջ, լավ ուտում եմ, խմում... բայց չեմ քնում... Մի ամսից ավելի է, որ ես չեմ քնել... Հասկանո՞ւմ եք՝ բոլորովին... Մի ամսից ավելի է, որ ես պառկում եմ և վեր կենում առանց քնելու: Երբեմն ինձ թվում է, որ ահա կքնեմ, վերջապես կքնեմ... Սիրտս սկսում է ավելի կանոնավոր բաբախել, ուղեղս դադարում է այնպես փոթորկվել գանգիս մեջ և մի մտքից մյուսը ցատկել, ուրախությունից քիչ է մնում՝ ճչամ: Հազիվ մի քանի րոպե մնում եմ այդ դրության մեջ և անհամբեր սպասում եմ, որ ահա կընկնեմ ինքնամոռացության մեջ, երբ գալիս է նա... նա...

Դողալով նա կիսով չափ բարձրացավ տեղից:

– Նա՝ այդ ճիվաղը, այդ հրեշը, որ հազար անգամ ավելի վատ է, քան անքնությունը... Ես պատրաստ եմ երբեք, երբեք չքնել, միմիայն չլսեմ նրա ձայնը, նրա սոսկալի ձայնը... նա... Չգիտեմ, ես նրա դեմքը չեմ տեսնում... Ես միայն նրա ձայնն եմ լսում, նրա նուրբ, մելոդիկ ձայնը... որ շարունակ ճախարակի պես միալար պատմում է... Ի՞նչ՝ չգիտեմ: Բժի՛շկ, բժի՛շկ, ես կխելագարվեմ... Փրկեցե՛ք ինձ, փրկեցե՛ք...

Նա հուսահատ գլուխն առավ ափերի մեջ:

Մի րոպե հիվանդն էլ, բժիշկն էլ լուռ էին:

– Ինչո՞ւ այսքան ժամանակ բժշկի չեք դիմել:

Ի պատասխան՝ նա գրպանից հանեց մի կույտ ճխլտված դեղատոմսեր և թափեց բժշկի առաջ:

– Չեն օգնում. բոլորը փորձել եմ:

Բժիշկը մի քանի րոպե նայում էր դեղատոմսերին...

– Ձեզ հանգիստ է պետք... Ձեր նյարդերը շատ են թուլացած, Ձեզ պետք են հանգիստ կյանք, սնունդ, ճանապարհորդություններ, լավ, ուրախ ընկերների շրջան... Իսկ բոլորի վրա ավելացրե՛ք, գուցե տարօրինակ թվա, բայց ես իմ հիվանդներից շատերին խորհուրդ եմ տալիս հաճախել կրկես... Այնտեղ մի ծաղրածու կա, որ ստիպում է մարդկանց սրտանց ծիծաղել... առողջ ծիծաղով... Իմ հիվանդներն էլ վկայում են, թե ինչ լավ ազդեցություն է անում նրանց վրա այդ ծիծաղը... Ես ինքս էլ

մեծ հաճույք եմ ստանում՝ նրան լսելով... Վերին աստիճանի սրամիտ և խելոք մարդ է... Դուք պատահմամբ չե՞ք տեսել այդ ծաղրածուին:

Մի դառը ժպիտ խաղաց նրա դեմքի վրա:

Ըստ Միքայել Մանվելյանի (կրճատումներով)

Վարժություն 19: Շարունակեք և ավարտեք պատմվածքը:

Ես բոլորովին չեմ սիրում, երբ տղաները հետևում են ինձ: Նրանք կանգնում են մեր դպրոցի դռան առաջ ու հայացքով տնտղում բոլոր դուրս եկողներին: Նրանց մեջ կա մեկը, որն անընդհատ հետևում է ինձ: Նա ամեն օր կանգնած է լինում նույն տեղում՝ դպրոցի ցանկապատի առաջ: Չգիտեմ ինչու, նա չի սիրում մտնել մյուս տղաների խմբի մեջ և կանգնում է առանձին: Ընկերուհիս՝ Սաթիկը, նրան տեսնելիս միշտ նայում է ինձ ու ժպտում:

– Քեզ է սպասում,– ասում է նա:

Ես տեսնում եմ, որ նա իսկապես ինձ է սպասում, բայց ասում եմ.

– Պահ, թող հարմար մեկին ընտրի իր համար:

Ու արհամարհանքով նայում եմ նրա արդուկած տաբատին ու փայլեցրած կոշիկներին: Ապա շուռ եմ տալիս գլուխս ու անցնում: Հենց որ Սաթիկը բաժանվում է ինձանից, իսկույն նայում եմ խանութի ցուցափեղկին՝ տեսնելու համար՝ նա գալի՞ս է իմ ետևից, թե՞ ոչ: Եթե նա գա, այնպես կանեմ, որ այլևս չի համարձակվի հետևել ինձ: Հենց որ տեսնեմ՝ մոտենում է, միանգամից կշրջվեմ: Ա՛յ թե հետաքրքիր կլինի տեսնել, թե նա ինչպես միանգամից կշշմի:

Բայց ապակու մեջ ոչ ոք չի երևում: Միայն խանութի աշխատողներն են ներսից զարմանքով նայում, թե ես ինչ եմ կորցրել դատարկ ցուցափեղկի մեջ:

Իսկ ի՞նչ կլինի, եթե ես հանկարծ խոսեմ այդ տղայի հետ: Ասենք, չխոսեմ, այլ թողնեմ, որ նա ինձ բարևի, ինձ հետ քայլի, ինչ-որ բաներ ասի: «Հենց որ թույլ տամ, իսկույն կերևակայի իրեն»,– գլխի եմ ընկնում ես ու նորից ետ եմ նայում: Փողոցը դարձյալ դատարկ է: Միայն հեռվում երևում է դռնապանը, որն ավլում է փողոցը: Ես ակամա շրջվում եմ ու նորից գնում դեպի դպրոց: Դասերից հետո քիմիայից ինչ-որ փորձեր էինք անելու: Ես որոշել էի չմնալ, բայց հիմա որոշում եմ անպայման գնալ: Եվ հետո աչքի տակով կնայեմ՝ նա դեռ այնտե՞ղ է, թե՞ տեսնելով, որ իր վրա ուշադրություն չեմ դարձնում, հեռացել է: Ահա և դպրոցը: Ա՛յ քեզ բան. նա դեռ այնտեղ կանգնած է, թեև բոլոր տղաներն արդեն ցրվել են: Ես հանկարծ խղճում եմ նրան: «Ինչ ուզում է, թող լինի, ես առաջինը կմոտենամ»,– որոշում եմ ես և վճռական քայլում եմ դեպի դիմացի մայթը: Նա նույնիսկ գլուխը չի բարձրացնում: Եղունգով քչփորում է պատը և երբեմն-երբեմն նայում է դպրոցի դռանը: Հանկարծ նա նկատում է ինձ և խոշոր, վճռական քայլերով ուղղվում է դեպի ինձ: Սիրտս սկսում է արագ բաբախել. պայուսակս ամուր սեղմում եմ ու քայլում հակառակ ուղղությամբ: Նա գալիս է իմ ետևից. ես լսում եմ նրա ոտնաձայները, ահա նա կմոտենա ինձ: Ի՞նչ եմ ասելու:

Հանկարծ նշմարում եմ փրկությունը. ահա մոտենում է ավտոբուսը: Նետվում եմ կանգառ: Նրա ոտնաձայները ուժեղանում են. արդեն լսում եմ նրա հևոցը... Շրջվում եմ և զարմանքով տեսնում...

Վարժություն 20: Գրեք շարադրություն «Անկեղծ ընկերություն», «Անձնազոհ արարք», «Մի՛ նեղացրեք իրար» վերնագրերից որևէ մեկով՝ իբրև վերջնամաս ընտրելով տրված շարադրանքն ու ավարտելով այն:

Այդ դեպքից հետո շատերն էին խոսում այդ մասին, շատերը լռում էին, բայց, ավա՜ղ, քչերը միայն մտածեցին, թե ինչպես կվարվեին իրենք: Ես էլ մտածեցի, թե ինչ կանեի. մտածեցի, մտածեցի ու հասկացա, որ....:

Վարժություն 21: Պատմության համար ավա՛րտ գրեք:

ա) Վայրէջք կատարող օդանավի անիվները սահեցին թռիչքուղու վրայով, հետո, աստիճանաբար դանդաղելով, կանգ առան: Օդանավասանդուղքին ուրվագծվեցին առավել անհամբեր ուղևորները, որոնք հայացքով որոնում էին դիմավորելու եկած հարազատներին: Նրանց մեջ առանձնանում էր բարձահասակ, ալեխառն մազերով մի տղամարդ, որը հայացքը չէր կարողանում կտրել Արարատի կոնաձև գագաթներից: Նրա մշուշված հայացքի առաջ աստվածաշնչյան լեռան ուրվապատկերը սկսեց լողալ: Նա քայլեց ու կռանալով ճամփեզրից մի բուռ հող վերցրեց, մոտեցրեց դեմքին և ագահորեն սկսեց շնչել գաղջ հողի բույրը:

...Որքա՜ն ժամանակ էր անցել... Տարիները գլորվել էին անդարձ, ու մանկությունը, հարազատ վայրերն ու մոռացված դեմքերը ժամանակի հեռավորությունից նրան թվում էին խորթ և օտարոտի...

– Ինչ էլ լինի, այսքան ճամփա կտրելուց հետո պիտի գտնեմ նրան,– մրմնջաց նա ինքնիրեն:

բ) Վիճակախաղի տոմսը կարծես նրան հմայում էր ու աչքով անում: Տաբատի գրպանի վերջին երեք հարյուր դրամն ասես շիկացած մետաղ լիներ: «Ինչ ուզում է, թող լինի»,– ինքնիրեն որոշեց նա և կտրուկ քայլերով մոտեցավ կրպակին: Վաճառողը վերցրեց դրամը և տրցակից անփութորեն մի տոմս դուրս քաշելով՝ մեկնեց նրան...

Վարժություն 22: Շարադրանքների համար սկի՛զբ և ավա՛րտ գրեք:

ա) Այդ օրվանից այդ բառը նրա համար դարձավ սրբազան մի խոսք: Բավական էր, որ նա նայեր պատից կախված նկարին, իսկույն հիշողության մեջ կենդանանում էին այդ օրվա դեպքերն ու մարդիկ: «Այս ամենի մասին պետք է բոլորն իմանան, հատկապես թոռնիկներս»,– վճռեց նա ու հայացքը նորից սևեռեց նկարին:

բ) Այնպես ստացվեց, որ ուսուցիչը, կարծես մտքերս կարդալով, ինձ դաս հարցրեց: Անսպասելիությունից ես մի պահ կարկամեցի, խզված ձայնով ինչ-որ բան քրթմնջացի ու մոտեցա գրատախտակին: Նշանակում է՝ ես կարողանում եմ ազդել մարդկանց մտքերի վրա: Ահա և ապացույցը: Անցյալ դասի ցածր գնահատականից հետո այսօր շատ լավ էի պատրաստվել և ուզում էի անպայման բախտս փորձել: Թեև նույնիսկ նշանավոր կանխագուշակողի գրքի կանոններն ինձ վստահություն չէին ներշնչում, բայց ահա և արդյունքը:

Իսկ ահա թե դրան ինչ դեպքեր էին նախորդել...

գ) Եվ նրանք մտան զբոսայգի: Գույնզգույն կարուսելները պտտվում էին, մի խումբ երեխաներ խաղում էին ծառերի տակ, ոմանք քայլում էին ծառուղիներով, մի քանի

տարեց մարդիկ էլ նստել էին նստարաններին: Զբոսայգու լճակի վրա դանդաղ սահում էին չորս-հինգ նավակներ, մյուսները կապված էին ափի մոտ: Մի խոսքով՝ ամենուր ամառային զբոսայգու սովորական պատկերն էր: Հանկարծ մի ճիչ լսվեց:

ԲԱՌԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Շարադրություն գրելը ստեղծագործական աշխատանք է, որը հեշտ գործ չէ. անհրաժեշտ է գրածը մշակել, հղկել, կատարելագործել: Մեծ գրողներն էլ դասական դարձած իրենց երկերը միանգամից չեն գրել. փոխել են բառեր, արտահայտություններ, ջնջել են ավելորդությունները, շտկել թերությունները, ինչպես քանդակագործն է մշակում քարը, կամ նկարիչն է շերտ-շերտ երանգավորում կտավը: Բերենք Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի ընդամենը երկու տողի մշակման օրինակը: Թումանյանը նախ գրել է.

Եվ զուր է Անուշն իր շունչը հատած
Դալկահար կանգնել, ինչպես մի պատկեր:

Այնուհետև ստեղծվել է երկրորդ տարբերակը.

Եվ զուր է Անուշն իր շունչը հատած
Սառել, դժգունել, ինչպես մի պատկեր:

Հետո գրվել է նաև երրորդ տարբերակը.

Եվ զուր է Անուշն իր շունչը հատած
Սառել երկյուղից, ինչպես մի պատկեր:

Եվ ի վերջո ծնվել են պոեմում տեղ գտած տողերը.

Եվ զուր է Անուշն իր շունչը կտրած
Սառել ու կանգնել, ինչպես մի պատկեր:

Գրելիս պետք է ձգտել կատարյալին և ստեղծագործական որոնումների միջոցով գտնել արտահայտման ամենահաջող ձևը:

Շարադրելու գործընթացում անչափ կարևոր է բառերի ընտրությունը: Ճիշտ բառընտրությունը կարևոր է մի քանի առումներով:

Առաջին հերթին բառերը պետք է ճիշտ ընտրվեն, որպեսզի ասելիքը ճիշտ արտահայտվի: Օրինակ՝ հետևյալ նախադասության մեջ սխալ է գործածված *փոխադարձաբար* բառը. *Անուշի և Սարոյի սերը փոխադարձաբար էր:* Պետք է լիներ՝ *փոխադարձ էր:*

Բառերի միջոցով հեղինակն արտահայտում է իր վերաբերմունքը: Օրինակ՝ *բարկացավ, զայրացավ, գազազեց, կատաղեց* հոմանիշներից մեկն ընտրելով՝ հեղինակն արտահայտում է իր վերաբերմունքը, դրանով բնորոշում թե՛ գործողությունը, թե՛ գործողություն կատարողին: Դերենիկ Դեմիրճյանը «Վարդանանք» վեպում Վասակի մասին գրում է. *«Գանգի մի անկյունում նա զգուշորեն որոճում էր»:* Այս նախադասության մեջ գործածված *գանգ* և *որոճալ* բառերի միջոցով հեղինակն արտահայտել է իր բացասական վերաբերմունքը, ուստի չի գործածել *գլուխ, ուղեղ, մտածել, խորհել* կամ մեկ այլ բառ:

Դրական կամ բացասական վերաբերմունքը կարող է արտահայտվել բառային տարբեր միջոցներով՝ հոմանիշների ընտրությամբ (օրինակ՝ *ընկնել – թրմփալ),*

կենդանիներին բնորոշող բառերի գործածությամբ (օրինակ՝ *հաչել, լափել)*, բնաձայնական բառերով (օրինակ՝ *ճղճղալ, ֆշշացնել, տզտզտալ)*: Վերաբերմունքը հնարավոր է արտահայտել բանավոր և գրավոր խոսքի նաև այլ միջոցներով՝ հնչերանգով, բառակրկնությամբ, շղատառ գրելով կամ ընդգծելով և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ դեր ունի բառընտրությունը:
2. Ի՞նչ է արտահայտում հեղինակը բառընտրությամբ:

Վարժություն 23: Արտագրե՛ք՝ փակագծերում տրված բառերից ընտրելով ձեր կարծիքով իմաստով ու ոճականորեն առավել համապատասխանողը: Դասարանում համեմատե՛ք ստացված տեքստերը:

Դասերը *(վերջացան, ավարտվեցին),* և ես *(դուրս եկա, ելա)* դպրոցից ու մտա դիմացի *(զբոսայգին, պուրակը):* Այնտեղ *(բարձր, երկնասլաց)* ծառեր կային, *(գույնզգույն, երփներանգ, խայտաբղետ, բազմագույն)* ծաղիկներ, հարմարավետ նստարաններ, *(քչքչան, կարկաչուն, զվարթ)* ցայտաղբյուրներ ու մի *(գեղեցիկ, սիրուն, հիանալի, սքանչելի, երգող)* շատրվան: Մի քիչ զբոսնեցի, մաքուր օդ շնչեցի, *(այնուհետև, հետո)* քայլեցի դեպի տուն: Ճանապարհին *(հանդիպեցի, տեսա)* մեր *(հարևան, դրկից, դրացի)* Գեղամին, որը տուն էր շտապում: Միասին գնացինք մինչև բակ՝ *(խոսելով, զրուցելով)* մեր գործերից: Մենք տարբեր մուտքերում ենք *(բնակվում, ապրում),* և շենքին հասնելով՝ իրար հրաժեշտ տվինք: Ես աստիճաններով *(ելա, բարձրացա)* չորրորդ հարկ և *(բացեցի, բաց արեցի)* մեր բնակարանի դուռը: Ծնողներս դեռ չէին վերադարձել աշխատանքից, եղբայրս՝ դասից: *(Որոշեցի, վճռեցի)* մի քիչ հեռուստացույց *(դիտել, նայել),* մինչև նրանք վերադառնան: Դելֆինների մասին *(հետաքրքիր, հետաքրքրաշարժ, գրավիչ)* մի գիտահանրամատչելի *(կինոնկար, ֆիլմ)* էին *(ներկայացնում, ցուցադրում)*: Ես այնքան կլանվեցի, որ չզգացի, թե ինչպես *(անցավ, թռավ, սահեց)* ժամանակը: Երբ ֆիլմը *(վերջացավ, ավարտվեց), (բոլորը, ամենքը)* արդեն տանն էին: Նստեցինք ճաշելու:

Վարժություն 24: *Անտառ, գետ, փողոց, ներկայացում, զբոսայգի* **բառերի համար գրե՛ք երեքական որոշիչ, որոնցից առնվազն մեկը լինի փոխաբերական իմաստով:**

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ՁԵՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Շարադրելիս պետք է ճիշտ ընտրել ոչ միայն բառերը, այլև քերականական միջոցներն ու ձևերը: Հայտնի է, որ հայերենում ձևաբանական շատ իրողություններ արտահայտվում են մեկ կոնկրետ միջոցով, բայց մի շարք իրողություններ էլ հնարավոր է կազմել մեկից ավելի ձևերով: Օրինակ՝ բայի սահմանական եղանակի անկատար ներկա ժամանակաձևը կազմվում է *-ում* վերջավորությունն ունեցող անկատար ձևաբայով և օժանդակ բայի ներկայի խոնարհված ձևերով, ինչպես՝ *գրում եմ, գրում ես, գրում է* (եզակի թիվ)*, գրում ենք, գրում եք, գրում են* (հոգնակի թիվ): Այլ ձևով այս

ժամանակաձևը կազմել հնարավոր չէ: Գոյականների հոգնակին կազմվում է հետևյալ ձևով. միավանկ բառերը ստանում են *-եր* վերջավորությունը, իսկ բազմավանկները՝ *-ներ* (կան շեղումներ): Բայց որոշ բառերի հոգնակին հնարավոր է կազմել թե՛ *-ներ*, թե՛ *-ք* վերջավորություններով, ինչպես՝ *քաղաքացի – քաղաքացիներ – քաղաքացիք:* Այսինքն՝ հնարավոր է քերականական միևնույն իրողությունը՝ հոգնակի թիվը, կազմել տարբեր միջոցներով: Անշուշտ, *քաղաքացիներ* և *քաղաքացիք* ձևերն իրարից տարբերվում են. *քաղաքացիք* բառաձևը ժողովրդախոսակցական լեզվին է բնորոշ, իսկ *քաղաքացիները* համագործածական է: Այսպիսի տարբերություններն էլ անհրաժեշտ է հաշվի առնել քերականական ձևերն ընտրելիս: Այն դեպքերում, երբ քերականական իրողությունն արտահայտվում է մեկ ձևով, բոլորն էլ գործածում են եղած միակ ձևը, որը ոճական առումով չեզոք է: Բայց երբ կան արտահայտության մեկից ավելի ձևեր, պետք է գործածել տվյալ դեպքում ավելի հարմարը: Շարադրության մեջ կարող են նկարագրվել տարբեր դեպքեր, իրադարձություններ, միջավայրեր, մարդիկ: Ըստ դրա էլ անհրաժեշտ է ընտրել քերականական ձևը:

Քերականական միջոցների գործածումը խոսքին տարբեր երանգներ կարող է հաղորդել, օրինակ՝ վերը նշված *-ք*-ով կազմված հոգնակիները ժողովրդախոսակցական երանգ ունեն, բայց միայն *-ցի* ածանցով կազմված այն բառերում, որոնք որևէ վայրի բնակիչ լինելն են ցույց տալիս: Մինչդեռ մյուս դեպքերում *-ք*-ով կազմված հոգնակիները գրաբարյան շունչ ու վերամբարձություն են հաղորդում խոսքին, ինչպես՝ *դարք, ծնողք* և այլն: *Հուսո, լուսո, պատվո, սգո, կորստյան* ձևերը բնորոշ են գրական լեզվին, իսկ սրանց *-ի*-ով հոլովված ձևերը չեզոք են: Նույն ձևով նաև՝ *տիկնայք – տիկիններ, պարոնայք – պարոններ, անձինք – անձեր* հոգնակիները, որոնցից ոճականորեն չեզոք են երկրորդները:

Խոսքին իմաստային և ոճական երանգավորում հնարավոր է հաղորդել ոչ միայն քերականական միևնույն կարգը տարբեր միջոցներով կազմելով, այլև քերականական մի ձևի փոխարեն մյուսը գործածելով: Համեմատենք հետևյալ նախադասությունները. *Անմիջապես տո՛ւն գնա, նստի՛ր ու դասե՛րդ սովորի՛ր: Անմիջապես տուն կգնաս, կնստես և դասերդ կսովորես: Անմիջապես գնում ես տուն, նստում ես ու դասերդ ես սովորում:* Առաջին նախադասության ստորոգյալներն արտահայտված են հրամայական եղանակի բայաձևերով, և նրանցով խոսքին հաղորդվել է խիստ, կտրուկ, հրամայական երանգ: Երկրորդ նախադասության ստորոգյալները արտահայտված են ենթադրական (պայմանական) եղանակի բայաձևերով, որոնցով հրամայական երանգն ավելի թույլ է արտահայտվում: Երրորդ նախադասության ստորոգյալներն արտահայտված են սահմանական եղանակի անկատար ներկա ժամանակաձևի բայերով: Անկատարի գործածությունը հրամայականի փոխարեն ընդհանրապես բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին, ուստի այս վերջին նախադասությունն էլ այդպիսի երանգ ունի: Բացի դրանից՝ այդ դեպքում հրամայական երանգը մեղմանում է. ասվածն ավելի շատ հորդոր է, քան հրաման:

Ինչպես տեսնում ենք, ձևաբանական տարբեր ձևերի ու միջոցների ընտրությունը մեծապես ազդում է խոսքի երանգավորման վրա, ուստի շարադրություն գրելիս և ընդհանրապես խոսք կազմելիս պետք է մեծ ուշադրություն դարձնել այդ ձևերի ընտրությանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ե՞րբ է հնարավոր քերականական ձևերի ընտրություն:
2. Ինչպե՞ս է ազդում քերականական ձևերի ընտրությունը խոսքի վրա:

Վարժություն 25: Դուրս գրեք շղատառ գրված բառաձևերը և այլ մասնիկներով կազմեք քերականական նույն ձևերը (նույն հոլովը, նույն թիվը):

Հեյ, *պարոննե՛ր,* ակամնջ արեք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն *տիկնայք,* ջահել *տղերք,*
Լավ ուշ դըրեք իմ խաղին:

Մենք ամենքըս հյուր ենք կյանքում
Մեր *ծնընդյան* փուչ օրից,
Հերթով գալիս, անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից:

.....

Ես լավության խոսքն եմ ասում,
Որ ժըպտում է մեր սըրտին.
Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,
Լավ արարքը, լավ *մարդին:*

Հովհաննես Թումանյան

Վարժություն 26: Արտագրեք նախադասությունները՝ փակագծերում տրված բառերը քերականական անհրաժեշտ ձևերով դնելով համապատասխան տեղերում:

1. Վարպետը քարի վրա ... փորագրել է հրաշալի ..., որոնք զարմացնում են թանգարանի ....:

   (նախշ, հմտություն, այցելու)

2. Ճանապարհի ... հետո այդ հինավուրց ... մոտենալը այլևս դժվար չէ, և հիմա շատ զբոսաշրջիկներ ... այդ տեսարժան վայրը:

   (վերանորոգում, այցելել, հուշարձան)

3. Օձագալար գետը, ... այստեղ-այնտեղ ... հսկայական քարերը, դանդաղ ... նեղ կիրճով:

   (ընկնել, շրջանցել, հոսել)

4. Փողոցը լավ լուսավորված էր գեղեցիկ ..., որոնք վերջերս ... մայթեզրերի բարձր ....:

   (տեղադրել, լապտեր, սյուն)

5. .... հետո մարդիկ ... թատրոնի մերձակա պուրակում և ... բեմադրությունը:

   (քայլել, վերլուծել, ներկայացում)

6. Ամեն ինչ ... հաստ ... էր ծածկված, և թվում էր, թե այն ... էլ չի հալվի:

   (շերտ, ձյուն, գարուն)

7. Ճանապարհի ... կանգնած՝ նա նայում էր անցնող-դարձող ... ու սուրացող մեքենաներին, որոնք հայտնվում էին ու ոլորանն անցնելով՝ ...:

(մարդ, եզր, անհետանալ)

8. Լուսանկարիչը հարմար տեղ ..., որպեսզի կարողանա լուսանկարել ... առջև ... ծաղկանոցն ու փոքրիկ շատրվանը:

(որոնել, լինել, տուն)

9. Հորդ անձրև սկսվեց, և բնության գրկում ... եկած մարդիկ ... մոտակա մի քանի ....:

(քարայր, հանգստանալ, պատսպարվել)

10. Աղբյուր-հուշարձանի զարդանախշ ... թափվող ջուրը ... քարե փոքրիկ գուռի մեջ, որտեղից մի բարակ ... հոսում էր դեպի ավազանը:

(խողովակ, շիթ, լցնել)

Վարժություն 27: Հնարավոր բոլոր ձևերով կազմեք տրված բառերի նշված քերականական կարգերը:

հոգնակի թիվ – տիկին, պարոն, անձ, քաղաքացի, համերկրացի
սեռական հոլով – Աստված, հույս, լույս, պատիվ, հանգիստ, ծնունդ, կայսր
գործիական հոլով – շարժում, մոտեցում, ծագում

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Միևնույն իմաստը հաճախ հնարավոր է արտահայտել շարահյուսական տարբեր միջոցների ու եղանակների գործածմամբ, և դրանցից յուրաքանչյուրը տարբեր ձևերով է երանգավորում խոսքը: Մտքերը շարադրելիս հեղինակը կազմում է բառակապակցություններ ու նախադասություններ: Կարևոր է, որ շարադրություն գրողը նախադասությունները ճիշտ կազմի, այսինքն՝ չլինեն բառագործածության, համաձայնության, խնդրառության և այլ սխալներ: Սակայն շատ կարևոր է նաև շարահյուսական միջոցների ընտրությունը: Օրինակ՝ դերբայական դարձվածը և երկրորդական նախադասությունը շարահյուսական հոմանիշներ են, և նրանցից մեկը կարող է փոխարինել մյուսին, ինչպես՝ *Այդ դժվար աշխատանքը վերջապես ավարտելով՝ նստեց հանգստանալու: Երբ այդ դժվար աշխատանքը վերջապես ավարտեց, նստեց հանգստանալու:* Դերբայական դարձվածով նախադասություններն ավելի շատ բնորոշ են գրական, գիտական, վարչական ոճերին, իսկ երկրորդականով նախադասությունները ոճականորեն համեմատաբար չեզոք են և գործածվում են թե՛ նշված ոճերում, թե՛ առօրյա-խոսակցական ոճում: Հետևաբար շարադրություն գրելիս անհրաժեշտ է ընտրել շարադրանքին ոճականորեն համապատասխանող կապակցություններ: Համեմատենք՝ *թևերը կարճ վերնաշապիկ – կարճաթև վերնաշապիկ, հաստ բնով ծառ – հաստաբուն ծառ:* Առաջին կապակցությունները ժողովրդախոսակցական երանգ ունեն, ուստի դրանք պետք է գործածել այն դեպքում, երբ խոսքին ժողովրդախոսակցական երանգ հաղորդելու կարիք կա:

Խոսքին ոճական բազմազան երանգներ են հաղորդում հարցական, բացականչական, հրամայական, ինչպես նաև անդեմ, անենթակա նախադասությունները,

շրջուն շարադասությունը, զեղչումները և այլն: Օրինակ՝ Հ. Թումանյանը «Գիքորը» պատմվածքում գրում է. *«Տեսան՝ տանը **չի կարողանում ծառայի,** խանութ տարան Գիքորին»:* Այսպիսի կառույցները շեշտված ժողովրդախոսակցական երանգ ունեն. գրական ձևը կլիներ *Տեսան՝ տանը **չի կարողանում ծառայել**, խանութ տարան Գիքորին:* Հենց այդպես է գրել նաև Թումանյանը պատմվածքի սկզբնական տարբերակում, որը հետո փոխել է ոճական համապատասխան երանգավորում ստանալու համար:

Բերենք մեկ այլ օրինակ: Հիշենք Եղիշե Չարենցի տողերը.

Ամեն ինչ գորշ առօրյա:
Ինչպես միշտ գորշ, փոշոտ փողոց:
Սառը ջուր:
Խաղող:
Գինի:
Մարդիկ: Կառքեր: Մարդիկ:

Եվ ոչ ոք չգիտեր, որ հիմա
Աստաֆյան փողոցի վրա
Հրաշք պիտի լինի:

Բերված օրինակի շղատառ գրված հատվածը կազմված է անվանական անդեմ նախադասություններից, և դրանց գործածումը հուզական լիցք, կտրուկություն է հաղորդում ասվածին: Մեկ-երկու բառով ստեղծվում է պատկեր, որի մանրամասները մտովի պետք է վերականգնի ընթերցողը:

Շարադրություն գրելիս պետք է օգտվել շարահյուսական միջոցների ընձեռած լայն հնարավորություններից, սակայն սա չի նշանակում, որ անընդհատ պետք է գործածել հարցական կամ բացականչական նախադասություններ, շրջուն շարադասությամբ կապակցություններ, անդեմ նախադասություններ և այլն: Այդ ամենը պետք է գործածվի տեղին, երբ դրա անհրաժեշտությունը կա: Օրինակ՝ բնության նկարագրության ընթացքում անընդմեջ հիացական բացականչություններ գործածելը խոսքը ոչ միայն չի գեղեցկացնում, այլև, ընդհակառակը, ընդհատում, աղճատում է այն տպավորությունը, որն ընթերցողը պիտի ստանար այդ նկարագրությունից, քանի որ այդ դեպքում նա ոչ թե տպավորվում է նկարագրվածից, այլ ստիպված է լինում անընդհատ կարդալ հեղինակի հիացմունքի արտահայտությունները: Յուրաքանչյուր միջոցի ոչ տեղին կամ չափից շատ գործածումը նույնքան թերություն է, որքան չոր ու ցամաք, առանց հուզականության շարադրանքը:

Այսպիսով՝ շարադրություն գրելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շարահյուսական միջոցների ընտրությանը, որպեսզի խոսքը ստացվի ոճականորեն ճիշտ և գեղեցիկ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսք կազմելիս ի՞նչ դեր ունի շարահյուսական միջոցների ու եղանակների ընտրությունը:
2. Շարահյուսական ո՞ր կառույցներն են ավելի շատ բնորոշ ժողովրդախոսակցական լեզվին:

Վարժություն 28: Միայն անդեմ նախադասություններով շարունակեք գրվածը:

Ամառ

Ամառ: Արև: Աշխույժ մի բակ: Բակում խաղացող երեխաների ճիչ ու աղմուկ:

Վարժություն 29: Փակագծերում նշված անդամների փոխարեն համապատասխանող բառեր դնելով՝ կազմեք պարզ ընդարձակ նախադասություններ:

1. Ձկնորսը *(ժամանակի պարագա, որոշիչ, տեղի պարագա, ուղիղ խնդիր)* էր որսում:
2. Նկարիչը *(որոշիչ, միջոցի խնդիր, որոշիչ, ուղիղ խնդիր)* էր նկարում:
3. Գյուղացին *(հատկացուցիչ, ուղիղ խնդիր, ժամանակի պարագա, տեղի պարագա)* տարավ:
4. Աշակերտը *(տեղի պարագա, ձևի պարագա, որոշիչ, ուղիղ խնդիր)* էր կարդում:
5. Այգեպանը *(ժամանակի պարագա)* ջրում էր *(հատկացուցիչ, որոշիչ, ուղիղ խնդիր):*
6. Ծաղկաբույծը *(հատկացուցիչ, տեղի պարագա, որոշիչ, ուղիղ խնդիր)* էր աճեցնում:
7. Ծաղիկները *(ժամանակի պարագա)* բացում էին *(հատկացուցիչ, որոշիչ, ուղիղ խնդիր):*
8. *(Որոշիչ)* քամին *(ձևի պարագա)* տարուբերում էր *(հատկացուցիչ, ուղիղ խնդիր):*
9. Քանդակագործը *(որոշիչ, տեղի պարագա, ձևի պարագա, ուղիղ խնդիր)* էր փորագրում:
10. Հնագետները *(ժամանակի պարագա, որոշիչ, տեղի պարագա, ուղիղ խնդիր)* հայտնաբերեցին:

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՉԵՐ

Լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, գործում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում և ունի կիրառական տարբեր գործառույթներ: Դրանց հիման վրա էլ կատարվում է ոճերի գործառական դասակարգումը:

Ոճերն այսպես խմբավորելիս նախ և առաջ հաշվի են առնվում նրանց գործառական առանձնահատկությունները, ինչպես նաև հետևյալ չորս հիմնական հատկանիշները՝ իմաստային, բառապաշարային, քերականական և հուզաարտահայտչական:

Իմաստային առումով կարևորվում են հաղորդվող նյութի բնույթը, նրա արտահայտած իմաստն ու բովանդակությունը, հեղինակի նպատակադրումը, ինչպես նաև այն հանգամանքը, թե ում է ուղղված խոսքը, և թե ինչ դեր է խաղում տվյալ նյութը հաղորդակցման գործընթացում:

Բառապաշարային հատկանիշները շատ կարևոր են գործառական ոճերը տարբերակելու համար: Որքան էլ ընդհանուր գործածական բառերը բնորոշ են լեզվի կիրառության բոլոր ոլորտներին, այնուամենայնիվ կան բառաշերտեր, որոնք ավելի բնորոշ են այս կամ այն գործառական ոճին: Այսպես՝ գիտական ոճում ավելի գործածական են լեզվի գրական ոլորտի բառերը, տերմինները, մինչդեռ դրանք բացակայում են կամ սակավ գործածություն ունեն առօրյա-խոսակցական կամ

գեղարվեստական ոճերում: Գիտական ոճին սովորաբար բնորոշ չեն խոսակցական, բարբառային, ժարգոնային բառերը, սակայն դրանք ոճական տարբեր նպատակներով կարող են հանդիպել գեղարվեստական կամ առօրյա-խոսակցական ոճերում և այլն:

Տարբերակման հաջորդ չափանիշը քերականական հատկանիշն է: Այստեղ նկատի են առնվում տվյալ նյութի ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները, հատկապես քերականական զուգաձևությունները, շարահյուսական զանազան կառույցները, նախադասության տարբեր տեսակները, որոնք ընտրվում են տվյալ ոճին համապատասխան:

Հուզաարտահայտչական հատկանիշով բնորոշվում են տվյալ նյութի պատկերավորման համակարգը, հուզական-արտահայտչական երանգավորումը, լեզվաոճական համապատասխան միջոցների գործածությունը:

Ըստ նշված հատկանիշների՝ հայերենում առանձնացվում են գործառական հետևյալ ոճերը՝ **գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, առօրյա-խոսակցական** և **գեղարվեստական:**

Գործառական յուրաքանչյուր ոճ ունի իր առանձնահատկությունները, լեզվական միջոցների գործածության յուրահատուկ համակարգն ու հաճախականությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչի՞ հիման վրա է կատարվում գործառական ոճերի դասակարգումը:
2. Ո՞ր հիմնական հատկանիշներն են հաշվի առնվում գործառական ոճերի դասակարգման համար:
3. Որո՞նք են հայերենի գործառական ոճերը:

Վարժություն 1: Կարդացեք փշատենու մասին գիտական և գեղարվեստական բնորոշումները:

Փշատենի արևելյան: Տերևաթափ ծառ է՝ մինչև 10 մ բարձրությամբ և 30–50 սմ բնի տրամագծով: Տերևները էլիպսաձև են, էլիպսանշտարաձև, երկարավուն ձվաձև կամ ռոմբաձև, 3–7 սմ երկարությամբ և 1–2 սմ լայնությամբ:

Տարածված է Կովկասում, Միջին Ասիայում, Հյուսիսային Իրանում: Հայաստանի սահմաններում հանդիպում է կենտրոնական շրջաններում, Արաքս գետի հովտում, նախալեռնային գոտում, գետերի և առուների ափերին:

Պտուղները պարունակում են մինչև 90% չոր նյութեր (շաքարներ՝ 65%, սպիտակուցներ՝ 11%, վիտամին C՝ 200 մգ/%) և մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ բազմաթիվ արժեքավոր նյութեր ու վիտամիններ: Ունեն բուժիչ հատկություն. օգտագործվում են աղեստամոքսային հիվանդությունները բուժելու, արյունահոսությունը դադարեցնելու և այլ նպատակներով:

Բազմանում է սերմերով, կտրոնների արմատակալմամբ, բնային մացառներով ու անդալիսով[1]: Պտղաբերում է 3–4 տարեկանում:

Չորադիմացկուն է, բավականին ցրտադիմացկուն: Ապրում է 35–40 տարի: Լավ զարգացած, առողջ ծառի բերքատվությունը հասնում է 40–50 կիլոգրամի:

1 Բույսերի բազմացման եղանակ, որի դեպքում բույսի մատղաշ ոստի մի մասը թաղում են հողի մեջ՝ նորատունկ ստանալու համար:

Պատկանում է փշատազգիների ընտանիքին: Գերադասում է փուխր, հարուստ հողեր: Ծաղիկները բուրումնավետ են ու մեղրատու: Խորհուրդ է տրվում լայնորեն օգտագործել նաև բնակավայրերի կանաչապատման բնագավառում, քանի որ դեկորատիվ են ոչ միայն ծաղիկներն ու պտուղները, այլ նաև արծաթափայլ տերևները:

Ըստ Լևոն Հարությունյանի «Քո շրջապատի ծառերը» գրքի

Փշատենի

Փշատենի՛, համեստ ու պա՛րզ փշատենի,
Պտուղների խտությունից ճյուղերը կա՛խ փշատենի,
Սիրագորով ու սրտաշա՛րժ փշատենի՝
Դեղին ոսկի հատիկներով արծաթաշաղ:
Գիրկս առնեմ ես քո դալար ճյուղերն արծաթ
Ու պտույտ գամ բոլոր կողմերը աշխարհի,
Երկրներում բազմալեզու ու բազմամարդ
Նվիրեմ քեզ ամեն հողի, ամեն քարի:
Որ տեսնես դու ամեն երկիր,
Ծաղկես ամեն երկնքի տակ
Ու ցույց տաս մի փոքրիկ պատկեր
Իմ աշխարհից՝ շռայլ ու տաք,
Թե ինչպես է փոքրիկ ճյուղը
Պտուղների մեծ բեռ տանում,
Թե ինչպես է անափ սիրուց
Լցվում կյանքն ու հարստանում,
Թե ինչպես է բուրում հողը
Իմ հեռավոր Հայաստանում.
Փշատենի՛, համեստ ու պա՛րզ փշատենի,
Պտուղների խտությունից ճյուղերը կա՛խ փշատենի,
Սիրագորով ու սրտաշա՛րժ փշատենի,
Դեղին ոսկի հատիկներով արծաթաշաղ
Ու տաք բույրով, այնպե՛ս բույրով փշատենի,
Որի խաղաղ ծփանքները տալու համար
Ոչ մի լեզու,
Ոչ մի բարբառ բառեր չունի:

Մարո Մարգարյան

ԳԻՏԱԿԱՆ ՈՃ

Գիտական ոճն ունի կիրառության տարբեր ոլորտներ: Այս ոճով են գրվում ուսումնասիրությունները, մենագրությունները, գիտական հոդվածները, դասագրքերը և այլն: Գիտական ոճը կարող է դրսևորվել նաև բանավոր (օրինակ՝ գիտական բանավեճերի ժամանակ), բայց հիմնականում հանդես է գալիս գրավոր խոսքում:

Գիտական ոճով գրված շարադրանքներում կարևոր են խոսքի ճշտությունն ու ճշգրտությունը, տրամաբանականությունը, պատճառահետևանքային կապը, որը հաճախ դրսևորվում է լեզվական տարբեր միջոցների գործածությամբ (հատկապես զուգադիր շաղկապների, ինչպես՝ *եթե … ապա, քանի որ … ուրեմն, ոչ միայն … այլև, ոչ թե … այլ, քանի որ … ապա, որովհետև … ուստի* և այլն):

Գիտական ոճով գրվածքներում հաճախ են լինում կանոններ, սահմանումներ, բանաձևեր:

Գիտական ոճում, ինչպես և գործառական մյուս ոճերում, մեծաթիվ են ընդհանուր գործածական բառերը, սակայն գիտական ոճին բնորոշ հիմնական շերտը ձևավորում են տերմինները, զբաղմունքային կամ մասնագիտական բառերը:

Տերմինը հիմնականում մենիմաստ է, չունի հուզաարտահայտչական երանգավորում: Տերմինը կարող է արտահայտվել ինչպես մեկ բառով, այնպես էլ բառակապակցությամբ, օրինակ՝ *դերբայ, հոլով, քառյակ, լարում, էլեկտրոն,* բայց նաև՝ *դերբայական դարձված, խոսքի մաս, մագնիսական դաշտ* և այլն: Հիշենք, որ նույն բառը կարող է գործածվել առօրյա խոսքում, բայց գիտական ոճում կարող է ստանալ տերմինի արժեք, օրինակ՝ *Դարբնոցից լսվում էին մուրճի հարվածների* ***հնչյունները****:* ***Հնչյունները*** (տերմին) *լեզվի ձայնային նվազագույն միավորներն են:*

Գիտական ոճը տարբերվում է նաև իր քերականական որոշ առանձնահատկություններով: Այստեղ կիրառական մեծ հաճախականություն ունեն վերացական իմաստ արտահայտող գոյականները, բայի դիմավոր ձևերից ավելի գործածական են սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը՝ հիմնականում 3-րդ դեմքի, բացակայում են ձայնարկությունները, քանի որ դրանք ամենից առաջ խոսքին հուզականություն հաղորդող բառեր են, երբեմն հանդիպում են եղանակավորող բառեր՝ հաստատական կամ երկբայական իմաստով:

Շարահյուսական կառույցներում գերակշռում են բարդ ստորադասական նախադասությունները՝ պատճառի, նպատակի, պայմանի երկրորդական նախադասություններով, որոնց շնորհիվ ևս ապահովվում է գիտական շարադրանքի տրամաբանական, պատճառահետևանքային կապը:

Գիտական ոճը սովորաբար զուրկ է հուզաարտահայտչական երանգավորումից, որը նշված ոճի հիմնական առանձնահատկությունն է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր բնագավառներում է գործածվում գիտական ոճը:
2. Բառապաշարային ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի գիտական ոճը:
3. Քերականական ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի գիտական ոճը:

Վարժություն 2: Տրված տերմինները խմբավորե՛ք ըստ կիրառության ոլորտների՝ լեզվաբանություն, քիմիա, ֆիզիկա, աշխարհագրություն:

Ջրածին, հոլովում, ճնշման ուժ, խոնարհում, պոտենցիալ էներգիա, քամի, լիճ, հոդակապ, խոսքի մաս, հասարակած, իներտ գազ, վանկ, վալենտականություն, օքսիդավերականգնման ռեակցիա, հրաբուխ, կատալիզատոր, հոսանքի շղթա, արագացում, դելտա:

Վարժություն 3: Տրված բառերով կազմեք երկուական նախադասություն, որոնցից մեկում բառը գործածված լինի առօրյա-գործածական իմաստով (ուղղակի կամ փոխաբերական), իսկ մյուսում՝ տերմինի արժեքով:

Գետ, աղ, թթու, լուսին, շղթա, ոսկի, բառ, ամպ, ջուր, հնչյուն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ (ՎԱՐՉԱԿԱՆ) ՈՃ

Պաշտոնական ոճը հաճախ անվանում են նաև վարչագործարարական, գրասենյակային կամ գործավարական: Այն կիրառվում է պետական-վարչական, դիվանագիտական, իրավաբանական, գործավարական, գրասենյակային բոլոր ոլորտներում ու փաստաթղթերում (օրենքներ, հրամանագրեր, տեղեկանքներ, դիմումներ, արձանագրություններ և այլն):

Պաշտոնական ոճի կարևոր ու հիմնական առանձնահատկություններից են խոսքային կաղապարների, ընդունված պատրաստի կառույցների առկայությունը, խոսքի միօրինակությունն ու բանաձևայնությունը, և այդ պատճառով էլ հաճախ առանձին փաստաթղթեր (տեղեկանք, հարցաթերթիկ և այլն) ներկայացվում են տպագիր, պատրաստի վիճակում, որպեսզի դրանք համապատասխանեն արդեն իսկ ընդունված կաղապարին:

Պաշտոնական ոճի բառապաշարում գերակշիռ մաս են կազմում պետական, քաղաքական, վարչական, դիվանագիտական, իրավաբանական, գրասենյակային-գործավարական տերմինները, դիմելաձևերը, բառակապակցություններն ու դարձվածքները, որոնք հիմնականում լեզվի գրական ոլորտին պատկանող, զբաղմունքային, մասնագիտական իմաստ արտահայտող բառեր են, ինչպես՝ *պատիվ ունեմ հայտնելու, ընդունեք մեր հարգանքների հավաստիքը, հասունության վկայական, տեղազննական արձանագրություն, նոտարական գրասենյակ, ի ցույց դնել, ընդունել ի գիտություն* և այլն:

Պաշտոնական ոճում գերակշռում են հատկապես վերացական իմաստ արտահայտող գոյականները (**-ում, -ություն** ածանցներով), ինչպես՝ *որոշում, կատարում, ցուցում, հրապարակում, տնօրինում, վերականգնում, խոստովանություն, ընդունելություն, լիազորություն* և այլն:

Մեծ գործածություն ունեն նաև անորոշ դերբայն ու նրա թեքված ձևերով կազմված կառույցները, ինչպես՝ *ընդունել, կատարել, կարգադրել, ազատել, ապահովել, հետաձգել, նկատի ունենալ(ով)* և այլն:

Դիվանագիտական և պայմանագրային փաստաթղթերում, ընդունված կարգի համաձայն, որոշ հասարակ գոյականներ կամ երկրորդ դեմքի անձ ցույց տվող դերանվան հոլովաձևեր հաճախ գրվում են մեծատառով, ինչպես՝ *Ձեր համաձայնությամբ, դիմում եմ Ձեզ, համաձայնող Կողմերը պայմանավորվում են* և այլն:

Շարահյուսական կառուցվածքով, մանավանդ առանձին կառույցների գործածությամբ և նրանց հաճախականությամբ պաշտոնական ոճը տարբերվում է և՛ գեղարվեստական, և՛ առօրյա-խոսակցական ոճերից:

Այս ոճում գերակշռում են բարդ ստորադասական նախադասությունները, ինչպես նաև հանդիպում են զեղչված անդամներով, անենթակա, միակազմ նախադասություններ, ինչպես՝ *հանձնարարել համապատասխան օղակներին, ուղարկել ըստ պատկանելության, նկատի ունենալ, պահանջել լրացուցիչ փաստաթղթեր* կամ՝ *լսեցին, որոշեցին, հանձնարարվեց* և այլն:

Պաշտոնական ոճը ընդհանուր առմամբ զերծ է հուզական, արտահայտչական երանգավորումից, միայն որոշ դեպքերում (առավելապես միջազգային դիվանագիտական փաստաթղթերում), ոճական այս կամ այն նպատակներով, նկատելի են փոխաբերական, փոխանվանական գործածություններ, կրկնություններ, ճարտասանական դիմումներ և այլն, ինչպես՝ *մեր ջերմ ողջույնն ենք հղում, ընդունեք մեր բարեմաղթանքը, սառը պատերազմ, խաղաղության աղավնի, պատերազմի հրձիգ* և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր բնագավառներում է գործածվում պաշտոնական ոճը. ուրիշ ինչ անվանումներ ունի այս ոճը:
2. Բառապաշարային ինչ հիմնական հատկանիշներ ունի պաշտոնական ոճը:
3. Քերականական ինչ հիմնական հատկանիշներ ունի պաշտոնական ոճը:

Վարժություն 4: Կարդացեք և առանձնացրեք պաշտոնական ոճին բնորոշ հատվածները:

Միլիցիան դուրս եկավ կենտրոնից, գնաց, փնտրեց ու գտավ Գետամեջ գյուղը, քարտեզով ստուգեց, որ գտնված գյուղը լինի միայն Գետամեջը, Գետամեջ գյուղում հետախուզությամբ գտավ Ռևազ Մովսիսյանի տունը, գոմը, գոմի դուռը: Ռևազի (կարծեցյալ կորստատեր Ռևազ Մովսիսյանը կտրականապես հայտարարեց, որ ինքը լավ չի հիշում, թե իրենք երբևէ ունեցել են ոչխարներ) և մանավանդ նրա կնոջ մանրակրկիտ հարցաքննությամբ պարզեց, որ երկու օր առաջ (ս. թ. օգոստոսի 27-ին՝ երեկոյան ժամը հինգի մոտերքը, ոչ շուտ չորսն անց երեսունից, ոչ ուշ հինգն անց երեսունից) կորել են Գետամեջ գյուղի բնակիչ քաղաքացի Ռևազ Գևորգի Մովսիսյանի չորս ոչխարները, երկուսը՝ չորս տարեկան, մեկը՝ երեք, մեկը՝ երկու. երկուսը՝ սպիտակ, երկուսը՝ սև, տեղական տեսակին պատկանող. մեկը՝ երկու տարեկանը՝ խրտնող, երեքը՝ հանգիստ բնավորության պատկանող (առաջինի պատճառով էլ, հաշվի առնելով կորստատիրուհի Թագուհի՝ հորենական ազգանվամբ՝ Կարապետյանի կարծիքը, վերոհիշյալ չորս ոչխարները հեռացել են տիրոջական դռնից):

Հրանտ Մաթևոսյան

Վարժություն 5: Գտեք պաշտոնական ոճին բնորոշ բառերն ու կապակցությունները:

Հրահանգ գավառական հեղկոմների լուսավորության բաժանմունքներին

Լուսժողկոմի N 13 հրամանի համաձայն՝ առաջարկում ենք անմիջապես անցնել երաժշտական գործիքների ցուցակագրման և հաշվի առման՝ ըստ հետևյալ ցուցակագրական թերթիկի.

Ցուցակագրման թերթիկ

1. Գործիքների տեսակը և թիվը:
2. Ինչ վիճակում են գործիքները:
3. Ում մոտ են գտնվում:
4. Ով է նրանցից օգտվում:
5. Ինչով է զբաղվում գործիքի տերը:
6. Հասցեն:

Երաժշտական գործիքները հաշվի առնելիս տերերին տրվում է հետևյալ վկայականը.

ՎԿԱՅԱԿԱՆ

Տրվում է սույն վկայականը քաղաքացի ..... առ այն, որ նրանից հաշվի են առնված ..... երաժշտական գործիքներ, որոնք ..... գավառական հեղկոմի լուսավորության բաժանմունքը թույլատրում է իր մոտ պահել:

Ծանոթություն. ցուցակագրած գործիքները արգելվում է տալ ուրիշին, ծախել կամ նվիրել առանց լուսավորության բաժանմունքի գիտության: Սույն կարգադրությունը խախտողները կենթարկվեն պատասխանատվության՝ հեղափոխական ժամանակների օրենքների համաձայն:

Արվեստի բաժնի վարիչ՝ *Եղիշե Չարենց*
Քարտուղար՝ *Լ. Բաշինջաղյան*

3 հունվարի, 1921 թ.

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՈՃ

Հրապարակախոսական ոճը կիրառվում է տարբեր ոլորտներում, որոնցով պայմանավորված են այդ ոճի բազմաթիվ տարբերակները: Այն առավելապես ձևավորվում է հրապարակային ելույթներում ու բանավեճերում, պարբերական մամուլում, ռադիոհեռուստատեսային հաղորդումների ժամանակ և այլն:

Հրապարակախոսական ոճը մեծապես կիրառվում է զանգվածային լրատվամիջոցներում: Այստեղ հուզականությունը և կաղապարը հանդես են գալիս միասնաբար, որոնց միջոցով հնարավոր է դառնում հասարակության լայն զանգվածներին տեղյակ պահել ժամանակակից կյանքի առավել կարևոր հարցերին ու իրադարձություններին, այս կամ այն կերպ ազդել մարդկանց գիտակցության վրա, համոզել նրանց և ձևավորել որոշակի հասարակական կարծիք: Այստեղ հավասարապես գործում են հրապարակախոսության երեք հիմնական տարրերը՝ տեղեկատվություն, քարոզչություն և գնահատողական վերաբերմունք:

Տարաբնույթ և բազմաշերտ է հրապարակախոսական ոճի բառապաշարը:

Ավելի շատ գործածական են գրական, նորմավորված և հատկապես գնահատողական բնույթի բառեր ու արտահայտություններ, հասարակական, քաղաքական հարաբերություններ արտահայտող բառեր, բառակապակցություններ, ինչպես նաև մասնագիտական տերմիններ՝ *կուսակցություն, կազմակերպություն, հասարակական*

կարծիք, կենսամակարդակ, բանավեճ, հակառակորդ, արտադրության առաջավոր, շուկայական հարաբերություններ, երկխոսություն և այլն:

Հրապարակախոսական ոճի քերականական կառուցվածքը կանոնավոր է. լեզվական, քերականական իրողությունները կառուցվում են գրական լեզվի օրինաչափություններով:

Հրապարակախոսական շարադրանքը հիմնականում ներկայացվում է բայի սահմանական եղանակի ներկա ժամանակով, որը ստույգ կատարվող գործողություն է արտահայտում և ավելի համոզիչ է ու իրական: Հաճախ են գործածվում երրորդ դեմքի բայաձևերը *(հաղորդում են, նշում են, հայտարարում են)*, ինչպես նաև՝ կրավորական բայեր *(տրվել են, ստեղծվել են, կառուցվել են, բացվել են* և այլն): Շարահյուսական կառուցվածքը ևս գրական է, կանոնարկված, բայց երբեմն, գլխավորապես մամուլում, ոճական որոշակի նպատակներով փոխվում է նախադասության առանձին անդամների ընդունված շարադասությունը: Այս իրողությունը հատկապես նկատելի է վերնագրերում, երբ նախադասության մեջ շեշտվում է տվյալ պահին կարևոր և խիստ ընդգծվող բառը կամ բառակապակցությունը, ինչպես՝ *առաջավորին են նմանվում բոլորը, կանաչ ճանապարհ հսկա նորակառույցներին* և այլն:

Կարևոր նշանակություն ունեն տպագրված նյութերի վերնագրերը, որոնք ոչ միայն գովազդային արժեք ու նպատակադրում ունեն, այլև առաջին իսկ հայացքից անմիջապես իրենց վրա են հրավիրում ընթերցողի ուշադրությունը, ինչպես՝ *«Փրկենք Սևանը», «Աշխարհը կործանման շեմին է»* և այլն:

Այս ոճում էապես զգալի են հեղինակի ինքնատիպությունն ու անհատականությունը: Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ երկու հանգամանք. առաջին՝ փաստերի ճշմարտացի շարադրանք, պատումի թարմություն ու հրատապություն, փաստագրություն, և երկրորդ՝ շարադրանքի արտահայտչականություն:

Հրապարակախոսական ոճում պատկերավորման միջոցներից հատկապես տարածված են մակդիրները *(կանաչ* ճանապարհ, *պայծառ* ապագա և այլն), հակադրությունը *(հաղթանակ* և *պարտություն, ներկա* և *ապագա* և այլն): Արտահայտչական-շարահյուսական միջոցներից ավելի հաճախ են գործածվում ճարտասանական հարցն ու դիմումը *(Ո՞վ է մեղավոր, Ինչո՞ւ չենք կատարում, Չփորձե՞նք կառուցել* և այլն):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր բնագավառներում է գործածվում հրապարակախոսական ոճը:
2. Բառապաշարային ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի հրապարակախոսական ոճը:
3. Քերականական ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի հրապարակախոսական ոճը:

Վարժություն 6: Կարդացեք Դերենիկ Դեմիրճյանի «Նրանք Հայրենիք են վերադառնում» հոդվածից բերվող հատվածները և գտեք հրապարակախոսական ոճին բնորոշ լեզվական հատկանիշները (հոդվածը տպագրվել

է «Սովետական Հայաստան» լրագրում 1945թ. դեկտեմբերի 4-ին: Դեկտեմբերի 3-ին հրապարակվել էր ԽՍՀՄ ժողկոմխորհրդի ընդունած որոշումը արտասահմանի հայության հայրենադարձությունն սկսելու մասին):

Նրանք Հայրենիք են վերադառնում, Հայրենիք, որի մի մասը ավերված է թշնամու ձեռքով, որտեղից նրանց անջատեց սրի ու սարսափի զարհուրանքը միայն...

Հայրենիքները դյուրին չեն կառուցվում, Հայրենիքը պետք է փորձել ստեղծել, որ կարելի լինի ձեռք բերել այն ծանրակշիռ իմաստությունը, թե որքան դժվարին և տաժանելի գործ է այդ Հայրենիք ձեռք բերելը: Հայության արյունալի պատմության օրինակը և խրատը գոնե հայերը լավ պիտի իմանան: Դյուրին է կորցնել Հայրենիքը, բայց դժվար է վերագտնել այն, երբեմն էլ անկարելի... Անշուշտ, հայությունը դյուրին ու անպայքար չկորցրեց իր Հայրենիքի մեծագույն մասը: Արյունով ու քրտինքով պաշտպանեց հազարամյակներ հաշվող իր Հայրենիքը: Սակայն պատմությունը խնայել չէր կարող միշտ: Պատմությունը լքեց հայությանը: Եվ հայության կյանքը կխզվեր ընդմիշտ, եթե նոր պատմության հրաշագործ ձեռքը չմեկնվեր դեպի հայությունը և նորից չվերակոչեր դեպի կյանք:

Այո՛, սրի ու սարսափի զարհուրանքը միայն անջատեց հայությանը իր Հայրենիքից: Հայկական բանաստեղծությունը հատուկ երգերի հատորներ ունի՝ «ղարիպի երգեր», որոնք սրտակսկիծ ողբեր են հայրենազուրկ հայության, որոնցով հայրենապաշտ սիրտը իզուր տենչացել է մեղմել իր հայրենաբաղձության ցավը: Ինչ օտար երկրների շահախնդրության խոսք կարող էր լինել այն հայության մասին, որ երեք հազար տարի արյուն թափեց իր Հայրենիքը պաշտպանելու և այնտեղ մնալու համար... Եվ մնաց էլ...

Հայրենազուրկ հայությունը Հայրենիք է վերադառնում: Դա ամենաբնական գործն է: Ինչ ունի հայությունը օտար երկինքների տակ՝ հազար ու մի պատրանքների ենթակա: Նա պիտի ապրի իր Հայրենիքում, ջանա, ստեղծագործի իր սեփական տանը: Այստեղ միայն իմաստ ունի նրա կյանքը:

ՍՍՀՄ Ժողովրդական կոմիսարների սովետի՝ արտասահմանից հայերի՝ Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումները բարձրագույն մեծահոգության, աննախընթաց մեծագործության մի ակտ են: Թող գա տուն և ծաղկի տարագիր հայությունը:

Վարժություն 7: Հրապարակախոսական ոճով շարադրանքներ գրե՛ք հետևյալ թեմաներից որևէ մեկով՝ «Պահպանենք բնությունը», «Չխախտենք երթևեկության կանոնները», «Խնայենք ջուրը», «Պահպանենք մաքրություն»:

ԱՌՕՐՅԱ-ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃ

Առօրյա-խոսակցական ոճն ունի բավականին լայն ընդգրկում. այն ոչ միայն գրական լեզվին տիրապետող հանրության բանավոր, անկաշկանդ, ոչ պաշտոնական խոսքն է, այլև հասարակության այն մասի խոսքը, որի համար գրական լեզուն սովորաբար հաղորդակցման միջոց չէ: Այլ կերպ ասած՝ այն ժողովրդախոսակցական լեզուն է, որը գործածվում է ոչ պաշտոնական, ոչ հանդիսավոր իրադրության դեպքում (տանը, ընկերների հետ սովորական, մտերմիկ խոսակցության ժամանակ, փողոցում և այլուր):

Առօրյա-խոսակցական ոճը երբեմն գործածվում է նաև գեղարվեստական գրականության մեջ:

Գործառական ոճերի համակարգում այն առանձնանում է նաև նրանով, որ հաղորդակցման գործընթացում առաջնայինը երկխոսությունն է, որում դրսևորվում են խոսողի ինքնատիպությունն ու անհատական մտածելակերպը: Այստեղ կարևոր նշանակություն ունեն խոսքային միջավայրը, խոսող-խոսակից փոխհարաբերությունները:

Առօրյա-խոսակցական ոճն ունի իր հնչյունական-արտասանական, բառակազմական, քերականական և հուզաարտահայտչական յուրահատուկ համակարգը, որով և տարբերվում է գործառական մյուս ոճերից:

Ամենից առաջ արտասանական ոլորտում ակնհայտ է երկհնչյունների վերածումը պարզ ձայնավորների (հատկապես՝ *այ>է* փոխակերպումը և՛ բառասկզբում, և՛ բառամիջում): Այստեղից էլ՝ *այս, այդ, այն* ցուցական դերանունների և նրանցից կազմված բաղադրյալ ձևերի խոսակցական տարբերակները՝ *էս, էդ, էն, էսպես, էդպես, էնպես, էսքան, էդքան, էնքան,* ինչպես նաև՝ *հեր* (հայր), *մեր* (մայր) և այլն:

Արտասանական համակարգում նկատելի են նաև օտար լեզուների ազդեցությունը, ինչպես՝ *Վոլոդյա – Վալոդյա, Մոսկվա – Մասկվա,* քմայնացված արտասանությունը և ոչ ճիշտ շեշտադրությունը, ինչպես՝ *Էդիկ – Էձիկ, Դինամո – Ձինամո, մատյան – մածյան, ուրախություն – ուրախուցյուն,* կամ *օպերատոր –օպերատըր* և այլն: Արտասանության ժամանակ նկատելի են նաև հնչյունների հավելում և կորուստ, ինչպես՝ *գրի՛ր – գրի՛, խոսի՛ր – խոսի՛, ծանր – ծանդր, մանր –մանդր, կանաչ – կանանչ, ճանաչել – ճանանչել* և այլն:

Այս ոճի բառապաշարի հիմնական շերտը ամենից առաջ կազմում են ընդհանուրխոսակցական, առօրյա-կենցաղային բառերը: Բնորոշ են նաև մի շարք ածանցներ, ինչպես՝ ***-չի՝*** *դհոլչի, նախրչի,* ***-կոտ՝*** *քնկոտ, ալարկոտ,* ***-կան՝*** *մրսկան, խռովկան* և այլն:

Հաճախ են գործածվում նաև *-ուկ, -իկ (-լիկ)* փաղաքշական, փոքրացուցիչ ածանցները՝ *սիրունիկ, պստլիկ, փոքրիկ, հաստլիկ, ճստլիկ, սևուկ, թմբլիկ* և այլն: Խոսակցական լեզվի բառապաշարի հիմնական շերտում մեծ թիվ են կազմում հարադրական, կրկնավոր բարդությունները, դարձվածքները, որոնց գործածությամբ առավել ակնհայտ է դառնում ժողովրդական լեզվամտածողությունը: Այս խմբի մեջ առանձնահատուկ տեղ ունեն նաև առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը, անեծքներն ու օրհնանքները:

Խոսակցական լեզվին բնորոշ են նաև բարբառներից անցած մի շարք փոխառություններ, որոնք երբեմն գործածվում են գեղարվեստական գրականության մեջ, ինչպես՝ *ջան, ջիգյար, ազիզ, մուրազ, թասիբ*, ինչպես նաև որոշ հասարակաբանություններ, գռեհկաբանություններ և ժարգոնային բառեր ու արտահայտություններ, ինչպես՝ *լակել, լափել, ռեխ, ցրել (թռցնել, գողանալ), ֆռցնել (խաբել)* և այլն:

Խոսակցական ոճի բանավոր տարբերակին բնորոշ են ոչ միայն բարբառային բառերն ու հասարակաբանությունները, այլև օտարաբանությունները: Մանավանդ կենցաղային ոլորտում բավական տարածված են կենցաղային առարկաներ, իրեր,

հասկացություններ անվանող օտար բառեր (հաճախ աղավաղված), ինչպես՝ *տելեվիզը* (հեռուստացույց), *կուխնի* (խոհանոց), *խալադիլնիկ* (սառնարան), *բալկոն* (պատշգամբ), *լամպըչկա* (լամպ), *լիֆտ* (վերելակ) և այլն:

Խոսակցական լեզվի ոճական կարևոր առանձնահատկություններից մեկը լեզվական միջոցների խնայողությունն է, խոսքի սեղմությունն ու հակիրճությունը, որը պայմանավորված է նաև խոսքային իրավիճակով:

Հաճախ ամբողջ նախադասության միտքը կարող է արտահայտվել մեկ բառով, հատկապես երկխոսությունների ժամանակ, ինչպես՝

– *Ո՞ւր (դու ո՞ւր ես գնում):*

– *Տուն (տուն եմ գնում):*

Նման դեպքերում հիմնականում զեղչվում են նախադասության գերադաս անդամները, իսկ նախադասության ավարտվածությունը ձևավորվում է հնչերանգի միջոցով:

Առօրյա-խոսակցական ոճն ունի պատկերավորման իր որոշակի համակարգը, որը և պայմանավորված է տվյալ գործառական ոճի հիմնական առանձնահատկություններով՝ խոսքի հուզականությամբ և ներգործումով:

Պատկերավորման տարածված միջոցներից են մակդիրը, համեմատությունը, չափազանցությունը և այլն, ինչպես՝ *սև սիրտ, ծանր օր, կրակ աղջիկ, թրի պես կտրեց, հազար անգամ ասել եմ, քիթ մաքրելու ժամանակ չունեմ* և այլն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ո՞ր իրադրություններում է գործածվում առօրյա-խոսակցական ոճը:
2. Բառապաշարային ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի առօրյա-խոսակցական ոճը:
3. Քերականական ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի առօրյա-խոսակցական ոճը:

Վարժություն 8: Գտեք առօրյա-խոսակցական ոճին բնորոշ բառային, դարձվածային ու քերականական իրողությունները (երկխոսություններում առոգանության նշանները դրված են ըստ բարբառային արտասանության):

Ու սկսվեց վեճը երկաթուղու վրա, թե երկաթուղին օգո՞ւտ էր բերելու, թե՞ վնաս:

Էդ վեճի ժամանակ երկաթուղու գծի վրա աշխատող օտարականներից մինը ձորիցը դուրս եկավ ու մոտեցավ մեզ:

– Բարի իրիկուն ձեզ:

– Աստծու բարին, ո՛ւստա:

– Ինձ մի չափ ալյուր է հարկավոր, ձեզանից ո՞վ ալյուր կծախի,– դիմեց օտարականը ամենքիս:

– Ո՞րտեղացի ես, ո՛ւստա,– հարցրեց Ուհանես բիձեն[1]:

– Օսմանլվի հողիցն եմ:

– Ուհա՛նես բիձա, հալա մի հարցրո՛ւ, տես՝ ո՞ր քաղաքիցն ա,– խնդրեց մի գյուղացի:

– Քու քաղաքի անունն ի՞նչ ա, բարե՛կամ,– կրկին հարցրեց Ուհանես բիձեն:

1 Բիձա – Լոռու բարբառով՝ հորեղբայր, փոխառվել է վրացերենից:

– Սվազ:

– Սվա՛զ,– երկարացնելով ու խորհրդավոր կերպով կրկնեց Ուհանես բիձեն:

– Ի՞նչ ասավ, Ուհա՛նես բիձա:

– Սվազ...

– Պա՛հ, քու տունը չքանդվի...– ծափ տվին ու ծիծաղեցին մի քանի գյուղացի:

– Էնտեղից էստեղ քա՞նի ամսվա ճանապարհ է,– շարունակում էր հարցուփորձը Ուհանես բիձեն:

– Երեք ամսվա:

– Պահո՛...– միաբերան զարմացան ամենքը:

– Համե՛ցեք, ղա՛րիբ ախպեր, նստի՛ր, հաց բերեն, հա՛ց անուշ արա:

– Չէ՛, շնորհակալ եմ, վռազ եմ. ձեզանից ո՞վ ալյուր կծախի, մի չափ ալյուր տա՝ գնամ:

– Ա՛խչի, մի չափ ա՛լյուր դուրս բերեք,– դռնից ձեն տվեց Ուհանես բիձեն,– գլուխ-գլուխ լցրեք:

Հովհաննես Թումանյան

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃ

Գեղարվեստական ոճն իր կառուցվածքային առանձնահատկություններով և հատկապես հուզաարտահայտչական երանգավորմամբ որոշակիորեն տարբերվում է գործառական մյուս ոճերից: Գեղարվեստական ոճը հեղինակային անհատականությամբ ու ինքնատիպությամբ օժտված ոճ է, ձևավորվում է թե՛ մենախոսությունների, թե՛ երկխոսությունների միջոցով և դրսևորվում արձակում, չափածոյում և դրամատիկական ժանրերում: Այն հիմնականում գեղարվեստական գրականության ոճն է, նրա լեզվական միջոցների գործածության ամբողջական համակարգը:

Գեղարվեստական ոճի կարևորագույն հատկանիշները խոսքի հուզականությունն ու արտահայտչականությունն են, որոնք ստեղծվում են լեզվի պատկերավորության ու արտահայտչական բազմաթիվ միջոցներով ու ոճական հնարքներով:

Գեղարվեստական երկի բառապաշարը կարող է ներառել տվյալ լեզվի բառապաշարի բոլոր շերտերը, այսինքն՝ գեղարվեստական ոճում գրական և ընդհանուր գործածական բառերի հետ որոշակի համամասնությամբ գործածվում են նաև ժողովրդախոսակցական, բարբառային, ժարգոնային բառեր, նորաբանություններ, հնաբանություններ, ինչպես նաև փոխառություններ և օտարաբանություններ:

Գեղարվեստական երկի բառապաշարում կարևոր և յուրահատուկ ոճական երանգավորում ունեն հոմանիշները, հականիշները, համանունները, հարանունները:

Բազմաբնույթ է ու լեզվական տարբեր իրողություններով հարուստ նաև գեղարվեստական ոճի քերականական կառուցվածքը, մանավանդ, երբ առանձնացնում ու տարբերակում ենք հեղինակային խոսքը կերպարների խոսքից: Եթե հեղինակային խոսքը սովորաբար կառուցվում է գրական լեզվի նորմայի սահմաններում, ապա կերպարների խոսքը հաճախ կարող է չենթարկվել գրական լեզվի պահանջներին և կառուցվել ընդունված օրինաչափություններից շեղվող լեզվական իրողություններով:

Գեղարվեստական երկում ոճավորման նպատակով կարող են գործածվել ժողովրդա-խոսակցական, բարբառային, քերականական ձևեր ու շարահյուսական կառույցներ: Կարող են լինել *-ք*-ով հոգնակիի կազմություններ *(քաղաքացիք, գյուղացիք* և այլն), թեք հոլովաձևերում հոդերի անհարկի կիրառություններ *(դաշտերիցը, դռնովը, քաղաքումը* և այլն), հրամայականի առանց *ր* վերջնահնչյունի ձևեր *(գրի՛, խոսի՛, մոտեցի՛* և այլն, փոխանակ՝ *գրի՛ր, խոսի՛ր, մոտեցի՛ր)*, որոնք գրական լեզվին անհարիր են:

Հատկապես տարաբնույթ է գեղարվեստական ոճի շարահյուսական կառուցվածքը: Այստեղ կարող են գործածված լինել թերի, զեղչված անդամներով, միակազմ նախադասություններ, շրջուն շարադասություն և այլն:

Գեղարվեստական ոճում գործածվում են հնչերանգային տարբեր բնույթների նախադասություններ՝ պատմողական, հարցական, բացականչական, հրամայական:

Գեղարվեստական ոճում, առավելապես կերպարների խոսքում (երբեմն նաև հեղինակային խոսքում) հանդիպում են նաև շարահյուսական օտարաբան կառույցներ, որոնք սովորաբար բնորոշ են առօրյա-խոսակցական ոճին (բառային անհարկի հավելադրություններ, սխալ խնդրառություն և համաձայնություն, կապերի ոչ ճիշտ գործածություն և այլն): Այսպիսի շեղումները պայմանավորված են ոճական որոշակի նպատակադրումով, հեղինակի անհատականությամբ: Գեղարվեստական ոճի առանձնահատկություններն ավելի ցայտուն, պարզորոշ են երևում, երբ համեմատում ենք միևնույն իրողությունը ներկայացնող, բայց տարբեր ոճերով գրված տեքստեր, այսինքն՝ երբ նույն հասկացությունը կամ պատկերը ներկայացվում է գործառական տարբեր ոճերով:

Անձրև

Սիրում եմ անձրևը, երբ նոսր վարագույրներով կախվում է սևագորշ ամպերից և տիեզերական ցնցուղի նման իր տարափի տակ առնում հանդ ու անդաստան:

Սիրում եմ շռնդալի անձրևը՝ ջրառատ, ծանր, որ աղմկալի հարվածում է տանիքներին ու ջրհորդաններով գահավիժում ցած, և որին սաղարթախիտ ծառերը միայն վայրկյաններ դիմադրելուց հետո թևաթափ ու խոնարհ հնազանդվում են լուռ: Հանկարծահաս հորդ անձրևը, անակնկալ տեղատարափը, որ հեղեղում է արար աշխարհ և շեկ առվակներով իջնում մեր լեռների լանջերից:

Սիրում եմ անձրևը ամառվա երկարատև երաշտին, երբ թոշնած բույսերը ուշքի են գալիս և վերակենդանացող արարածների նման «օխա՛յ» են քրթմնջում հրճվանքով: Երբ պապակած հողը կլանում է երկնային շիթերն այնպիսի ագահությամբ, որ ոչ մի առվակ չի գոյանում երկրի վրա:

Սիրում եմ և գարնանամուտի անձրևը, որին ուղեկցում են ամպերի առաջին որոտներն ու հրեղեն կայծակները, որոնք կարծես գարնան առաջին համբավաբերներն են, նրա հաղթական մուտքն ազդարարողները: Օ՜, այնպիսի շքեղ երևույթ աշխարհի վրա, որպիսին գարունն է, պետք է որ այդպիսի շռնդալի համբավաբերներ ունենա...

...Սիրում եմ անձրևը իր բոլոր ձևերով, իր բոլոր արտահայտություններով՝ և՛ հախուռն ու ջրառատ, և՛ կարճատև տեղատարափը, որ դեռ չդադարած՝ ծիածանն է

շքեղ կամարներ կապում մեր ձորերի վրա: Սիրում եմ և՛ գարնան ուրախ անձրևը, որ անթիվ կյանքեր է արթնացնում երկրի վրա, և՛ աշնան մելամաղձոտ ու տևական անձրևը, որ թախիծ է բերում ու տխուր հուշեր:

Ըստ Վախթանգ Անանյանի

Անձրև. ամպերից թափվող մթնոլորտային հեղուկ տեղում, որն առաջանում է ջրային գոլորշիների անմիջական խտացման, բյուրեղային խոշոր մասնիկների հալման կամ տարբեր չափերի մանր կաթիլների միաձուլման հետևանքով: Անձրևի կաթիլների տրամագիծը տատանվում է 0,5–6,0 մմ: Տարբերում են մանրամաղ, համատարափ և տեղատարափ անձրևներ: Անձրևների քանակը որոշում են նրանից առաջացած ջրի շերտի բարձրությամբ՝ արտահայտված մմ-ով: Անձրևների ուժգնությունը տատանվում է 0,25 մմ/ժ-ից (մանրամաղ) մինչև 100 մմ/ժ (տեղատարափ): ՀՍՍՀ-ում ամենաշատ անձրևները թափվում են Գեղամա լեռների կատարային մասում (650 մմ), ամենաքիչը՝ Արածո դաշտում[1] (100 մմ):

Ըստ «Հայկական սովետական հանրագիտարանի»

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որո՞նք են գեղարվեստական ոճի ամենակարևոր հատկանիշները:
2. Բառապաշարային ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի գեղարվեստական ոճը:
3. Քերականական ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի գեղարվեստական ոճը:

Վարժություն 9: Կարդացեք Հովհաննես Թումանյանի «Շունը» պատմվածքից բերված հատվածը և մեկնաբանեք գիտական ու գեղարվեստական ոճերին բնորոշ իրողությունները:

Լավ չեմ հիշում՝ երկրորդ, թե երրորդ դասարանի աշակերտ էի: Մի ուսումնական ծանոթ ունենինք. օտար մարդ էր, մե-մեն մեր տունն էր գալիս, մերոնց հետ զրույց էր անում:

Էդ ժամանակները մի էսպես դեպք պատահեց: Մեր հարևան հովիվը մեռավ: Նա երեք շուն ուներ: Էս երեք շունը իրենց տիրոջ մեռնելուց մի քանի օր առաջ անդադար ոռնում էին էնքան ողբալի ու չարագուշակ, որ ահ ու սարսափ էին գցել ամենքի սիրտը:

– Չո՛ռ, չո՛ռ, ձեր գլուխն ուտեք, քա՞նի[2] ոռնաք,– կանչում էր երիտասարդ հովվի մերն ու փետով զարկում շներին:

Շները կլանչկլանչելով էս կողմ, էն կողմ էին փախչում ու մի քանի րոպեից հետո նորից սկսում ոռնալ: Հովիվը մեռավ թե չէ, բոլոր հարևանները բացականչեցին.

– Ա՛յ, ընչի համար էին շները ոռնում...

Սրանից հետո մի անգամ էլ, երբ մեր ուսումնական ծանոթը եկել էր զրույց անելու, մերոնք էս դեպքը պատմեցին, ու խոսքն ընկավ շան վրա:

– Օ՛, չգիտեք, թե ինչ տեսակ կենդանի է շունը,– լուրջ ու խորհրդավոր խոսեց նա:

1 Արարատյան դաշտի հարավարևելյան մասը Արածո գետի ստորին հոսանքում:
2 Հարցական նշանը ըստ բարբառային արտասանության է դրված: Ըստ գրական արտասանության՝ պետք է լիներ վերջին *ի* ձայնավորի վրա:

– Շունը իմաստուն կենդանի է,– նույն լրջությամբ վրա բերեց հերս:

– Այո՛, շունը իմաստուն կենդանի է, լավ է նկատել ժողովուրդը,– ասավ մեր ծանոթն ու ավելացրեց,– մարդկային կյանքի զարգացումը շան վրա է հիմնած: Մենք դեռ լավ չգիտենք, թե ինչ կենդանի է շունը, դեռ լավ չի ուսումնասիրված շունը...

Հակառակի նման իմ դասն էլ շունն էր, ու լավ էլ անգիր էի արել: Իսկույն մեջ մտա: Ասի.

– Ես գիտեմ: Մենք շունը սովորել ենք:

– Չէ՛, էն քու սովորած շունը չի,– մեղմ ու բարի ժպտալով՝ նկատեց մեր բարեկամը:

Ես վիրավորվեցի: Ո՞նց թե իմ սովորած շունը չի... Ինքն ասում է՝ լավ չգիտենք... իսկ մեր ուսուցիչն էնտեղ... իմ տետրակն էնտեղ... ես էլ գրեթե անգիր գիտեմ... և առանց լսելու ասում է՝ քու սովորածը շունը չի...

– Լա՛վ, լա՛վ, նեղա՛նալ մի, դե ասա՛, տեսնենք՝ ո՞րն է քու սովորած շունը,– նույն մեղմ ժպիտով հարցրեց նա ու թևիցս բռնեց, իրեն մոտ քաշեց:

Ես սկսեցի. «Շունը չորքոտանի, կաթնասուն, մսակեր, ընտանի կենդանի է: Նա ունի մի գլուխ, երկու աչք, մի քիթ, մի պոչ, երեսունչորս ատամ: Նրա մորթին ծածկված է մազով: Նա ծնում է սովորաբար 4–6 ձագ, բայց պատահում է, որ մինչև 12 էլ է ծնում: Շան ձագերը ծնվում են առաջին ատամներով, բայց կույր են լինում և միայն 10–12 օրից հետո են աչքերը բաց անում: Շունը ապրում է 15–20 տարի: Նա մարդուն շատ օգուտ է տալիս...»:

Մեր ծանոթը շարունակ ժպտում էր: Ես սկսեցի շփոթվել, մանավանդ գիտեցածս էլ հատնում էր:

– Այո՛, այո՛, ճիշտ ես ասում, սիրելի՛ս,– վրա հասավ նա:– Դասդ լավ ես սովորել, բայց... Էդ շունը չի:

Վարժություն 10: Որոշեք, թե յուրաքանչյուր շարքի բառերն ու կապակցությունները գործառական որ ոճին են բնորոշ:

1. Շփման ուժ, լարում, էլեկտրամագնիսական դաշտ, լիցքավորում, դիմադրություն, էլեկտրական շղթա, հոսանքի ուժ:
2. Հիասքանչ, շողարձակում, մարգարտափայլ, լուսաշող արեգակ, մեղմահոս գետակ, ականակիտ ջուր, երգող աղբյուր:
3. Հասարակություն, քաղաքական հոսանքներ, ժողովրդի կամք, լուսավոր ապագա, ժողովրդավարություն, միասնություն, արդարություն:
4. Սույն, առ այն, ըստ օրենքի, արձանագրություն, նիստի քարտուղար, քաղվածք որոշումից, կանոնադրական պահանջներ:

Վարժություն 11: Նշված թեմաներից որևէ մեկով գրեք փոքրիկ շարադրանքներ գործառական տարբեր ոճերով՝ «Անտառ», «Վթար», «Սևանա լիճ»:

ԳՐՎԱԾՔԻ ՈՃԸ. ՈՃԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Յուրաքանչյուր շարադրանք գրվում է որևէ նպատակով, և գործառական ոճերի ընտրությունը պայմանավորված է դրանով: Քանի որ տարբեր են լինում նպատակները, տարբեր են նաև գրվածքները: Եթե գեղարվեստական ոճով գրվածքներին բնորոշ են պատկերավորությունն ու հուզականությունը, ապա պաշտոնական ոճով գրվածքներին բնորոշ են միօրինակությունն ու կաղապարայնությունը: Գիտական ոճով շարադրանքը հստակ է, տրամաբանված, լի տերմիններով ու սահմանումներով, որոնք երբեմն ծավալուն են, բայց դրանով ապահովվում են բնորոշման ճշտությունն ու լիակատարությունը: Մինչդեռ առօրյա-խոսակցական ոճում շատ են իրադրությամբ պայմանավորված զեղչումները, անհետևողականորեն կազմված նախադասությունները: Հրապարակախոսական ոճում լինում են տարբեր ոճերի տարրեր, որոնց միջոցով խոսողը փորձում է տեղեկացնել ու համոզել լսողներին (գրավոր խոսքի դեպքում՝ ընթերցողներին), ապացուցել իր տեսակետի ճշմարտացիությունը:

Գործառական ոճերից յուրաքանչյուրով կազմված խոսքն ունի կիրառության իր հիմնական ոլորտը՝ գեղարվեստական գրականություն, մամուլ, գիտական բնագիր, պաշտոնական գրություն և այլն:

Գեղարվեստական ոճի կիրառական ոլորտները: Գեղարվեստական ոճի կիրառության հիմնական ոլորտը գեղարվեստական գրականությունն է: Գեղարվեստական խոսքը բանաստեղծների, արձակագիրների ու թատերագիրների խոսքն է՝ ուղղված ընթերցողներին: Գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով հեղինակները և՛ արծարծում են հասարակությանը հուզող, հետաքրքրող տարբեր խնդիրներ, և՛ միաժամանակ գեղագիտորեն դաստիարակում են մարդուն, խոսքի արվեստով բավարարում նրա ճաշակը: Այդ պատճառով էլ գեղարվեստական խոսքը պետք է լինի մշակված, բովանդակալից, հուզական, պատկերավոր: Այդ ամենը ստեղծվում է պատկերավորման ու արտահայտչական զանազան միջոցներով՝ մակդիր, փոխաբերություն, համեմատություն և այլն: Գեղարվեստական ստեղծագործությունները իրարից տարբեր են. կան ծավալուն վեպեր, վիպակներ, պատմվածքներ, պոեմներ, բանաստեղծություններ, քառյակներ, դրամաներ և այլն: Դրանց մի մասն ուղղված է մանուկներին, մյուս մասը՝ պատանիներին կամ մեծերին, սակայն, այս բոլոր տարբերություններով հանդերձ, գեղարվեստական բոլոր ստեղծագործություններն առաջին հերթին ունեն մեկ ընդհանրություն. բոլորն էլ գրված են գեղարվեստական պատկերավոր ոճով, որով էլ տարբերվում են գործառական մյուս ոճերով գրվածքներից:

Գիտական ոճի կիրառական ոլորտները: Գիտական ոճը կիրառում են գիտությամբ զբաղվող մարդիկ, որոնք այդ ոճով գրվածքներում ներկայացնում են տարբեր ուսումնասիրություններ ու վերլուծություններ: Այս ոճով են հաղորդվում գիտության տարբեր բնագավառներին վերաբերող գիտելիքները, տեղեկությունները, նորանոր նվաճումները: Ինչպես գեղարվեստական, այնպես էլ գիտական ոճի գրվածքները տարբեր են: Գիտական ոճով են գրվում մենագրությունները, հոդվածները, ատենախոսությունները, դասագրքերը և այլն: Սրանք մի շարք հատկանիշներով տարբերվում են իրարից: Մենագրությունները, ատենախոսությունները, գիտական հոդվածները նախատեսված են տվյալ գիտությամբ զբաղվողների համար: Ոչ մասնագետին դրանք անհասկանալի են կամ մասամբ հասկանալի: Դասագրքերը գրվում են մատչելի և

ուսուցողական ձևով, գիտահանրամատչելի գրքերը գրվում են պարզ ու աշխույժ ոճով. նրանցում կարող են լինել նաև թեմային առնչվող զրույցներ, առակներ, հումորային պատմություններ, քանի որ նման գրվածքները նախատեսվում են ընթերցողների լայն շրջանակի համար և պետք է հասկանալի լինեն ու հետաքրքրեն ոչ մասնագետին: Կան ֆիզիկային, աշխարհագրությանը, քիմիային, լեզվաբանությանը և այլ գիտություններին վերաբերող գիտահանրամատչելի գրվածքներ, որոնցում ներկայացվում են հետաքրքիր, հաճախ առաջին հայացքից տարօրինակ, զվարճալի իրողություններ, փաստեր, ինչպես նաև մեկնաբանություններ: Գիտահանրամատչելի գրվածքները ճանաչողական բնույթ ունեն, և այդ պատճառով էլ սրանց շարադրանքն իր ոճական հատկանիշներով որոշ չափով նմանվում է գեղարվեստականին, բայց այնուամենայնիվ գեղարվեստական չէ: Ինչպես ընդհանուր առմամբ գիտական, այնպես էլ գիտահանրամատչելի գրվածքներում հեղինակի բուն նպատակը ոչ թե հուզական լիցքեր հաղորդելը, մարդկային զանազան հարաբերությունները ներկայացնելն է, այլ որոշակի գիտելիքներ մատուցելը՝ պարզապես մատչելի եղանակով: Հետևաբար գիտահանրամատչելի գրվածքներում էլ որոշ չափով գործածվում են տերմիններ, մասնագիտական բառեր և այլն:

Պաշտոնական ոճի կիրառական ոլորտները: Պաշտոնական ոճը գործածվում է հասարակական հարաբերությունները կարգավորող ոլորտներում: Ցանկացած փաստաթուղթ պետք է գրվի այս ոճով, որպեսզի համապատասխանի ընդունված սկզբունքներին: Վարչական ոճում գործածվող ընդունված ձևերը և՛ հեշտացնում են աշխատանքը, և՛ նպաստում են վրիպումներից ու սխալներից խուսափելուն: Օրինակ՝ կա դիմում գրելու մշակված ձև: Այդ ձևն օգնում է, որ իսկույն պարզ դառնա, թե ում է այն ուղղված, ով է գրել դիմումը, ինչ նպատակով է դիմել տվյալ անձը, և երբ է գրվել դիմումը: Եթե չլիներ մշակված ձև, յուրաքանչյուր մարդ իր ձևով կշարադրեր ասելիքը, մեկն իր անունը կնշեր սկզբում, մյուսը՝ տեքստում, երրորդը՝ վերջում, և այլն: Բացի դրանից՝ դիմում գրողը միգուցե մոռանար գրել որևէ տեղեկություն (օրինակ՝ ամսաթիվը): Այսինքն՝ մշակված ձևը գրվածքի հեղինակին օգնում է ավելի հեշտ, մատչելի ու ճշգրիտ շարադրելու իր մտքերը:

Առօրյա-խոսակցական ոճի կիրառական ոլորտները: Առօրյա-խոսակցական ոճի կիրառման ոլորտն ամենից ծավալունն է և ընդգրկում է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառները: Այս ոճն էլ ունի իր առանձնահատկությունները՝ զեղչումներ, դարձվածքներ, անեծքներ, օրհնանքներ, մաղթանքներ, խոսակցական բառեր և այլն: Առօրյա-խոսակցական, գեղարվեստական ու հրապարակախոսական ոճերը կապակցված են, և կատարվում են տարբեր ներթափանցումներ: Գեղարվեստական գրականության մեջ, պայմանավորված ներկայացվող միջավայրով ու կերպարներով, կարող են չափավոր գործածվել ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ տարրեր, որոնք աշխուժացնում են խոսքը, նպաստում միջավայրը կենդանի ու ճիշտ ներկայացնելուն:

Հրապարակախոսական ոճի կիրառական ոլորտները: Հրապարակախոսական ոճը գործածվում է մարդկանց ուղղված այնպիսի խոսք կազմելու համար, որով հեղինակը ցանկանում է անմիջական ներգործություն ունենալ լսողների կամ ընթերցողների վրա: Հրապարակախոսական ոճը բնութագրելիս սովորաբար առաջին հերթին հիշատակվում են ճառերը, հոդվածները, մեկնաբանությունները, հարցազրույցները և

այլն: Սակայն պետք է հաշվի առնել, որ այս ոճի կիրառության ոլորտներն ավելի լայն են: Օրինակ՝ ուսուցիչը աշակերտներին կարող է բացատրել, որ պետք է պահպանել բնությունը, խնայել ջուրը, չխախտել երթևեկության կանոնները և այլն: Խոսողը պետք է համոզի լսողներին (ընթերցողներին), նրանց դարձնի իր համախոհները: Այդ նպատակով կարող են բերվել գիտական փաստեր, գեղարվեստական նկարագրություններ, առօրյա-խոսակցական ոճով ինչ-որ արտահայտություններ և այլն: Գլխավորը խոսքի միջոցով ներգործելն է: Օրինակ՝ բնության պահպանության մասին խոսողը կարող է ներկայացնել գիտական փաստեր մթնոլորտի աղտոտման, անտառահատման, գլոբալ տաքացման և այլնի մասին: Կարող է նաև իր խոսքը համեմել բնության գեղարվեստական ու հուզական նկարագրությամբ, խոսքին անմիջականություն հաղորդելու համար առօրյա-խոսակցական ոճով կարող է պատմել զրույց, առակ, զվարճալի պատմություն, իսկ վերջում ընդհանրացնել այդ ամենը, շեշտել խոսքի բուն նպատակը՝ ապացուցելով իր ասածի կատարման անհրաժեշտությունը:

Գործառական բոլոր ոճերի հատկանիշներն էլ ձևավորվում են լեզվի հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական միջոցներով. տարբերություններն առաջանում են դրանց ընտրությունից և կիրառման ձևից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչո՞վ է պայմանավորված գործառական ոճերի ընտրությունը:
2. Կիրառության ի՞նչ հիմնական ոլորտներ ունի գեղարվեստական ոճը:
3. Կիրառության ի՞նչ հիմնական ոլորտներ ունի գիտական ոճը:
4. Կիրառության ի՞նչ հիմնական ոլորտներ ունի պաշտոնական ոճը:
5. Կիրառության ի՞նչ հիմնական ոլորտներ ունի առօրյա-խոսակցական ոճը:
6. Կիրառության ի՞նչ հիմնական ոլորտներ ունի հրապարակախոսական ոճը:

Վարժություն 12: Համեմատե՛ք տրված գիտահանրամատչելի և գեղարվեստական տեքստերը, բնորոշե՛ք յուրաքանչյուր ոճի առանձնահատկությունները (հաշվի՛ առեք այլ ոճերին բնորոշ տարրերի ներթափանցումները):

Արջերը գիշատիչ կաթնասունների ընտանիքի կենդանիներ են: Հայտնի է 7 տեսակ՝ սպիտակ, գորշ, սպիտակակուրծք կամ հիմալայան արջերը, սև արջը կամ հյուսիսամերիկյան բարիբալը, մալայան արջը, Հնդկաստանում բնակվող հաստաշուրթը և հարավամերիկյան ակնոցավոր արջը:

Խոշոր կենդանիներ են. ունեն հզոր, ծանր մարմին, մեծ գլուխ, կարճ պոչ, փոքր ականջներ: Մարմինը ծածկված է խիտ միագույն մազածածկով: Ծնոտները հզոր են՝ խոշոր ժանիքներով, թաթերն ուժեղ են՝ կեռ մագիլներով: Հոտառությունը և լսողությունը լավ են զարգացած:

Սպիտակ արջը երկրագնդի ամենախոշոր գիշատիչ կենդանին է: Հանդիպում է միայն Արկտիկայում: Ամբողջ կյանքն անցկացնում է սառույցների մեջ. ջուրը նրա հարազատ տարերքն է: Սպիտակ արջը կարող է ժամում 4–5 կմ արագությամբ երկար ժամանակ լողալ, սուզվել գրեթե փոկի նման և 2 րոպե մնալ ջրի տակ....:

Գորշ արջը հանդիպում է Եվրոպայում, Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում՝ Ալյասկայում, մասամբ՝ Կանադայում, որտեղ նրան անվանում են գրիզլի: ՀՀ-ում (հար-

թավայրերում, լեռներում, այնտեղ, որտեղ կան հողմակործան ծառերով, ճահիճներով, ջրամբարներով խուլ անտառներ) բնակվում են կովկասյան և սիրիական գորշ արջեր....:

Աշնանն արջը հարկադրված է լինում հոգալ հուսալի ապաստանի (որջ) մասին, որտեղ կկարողանա քնել մինչև գարուն: Դրա համար անհրաժեշտ է, որ աշնանն արջն իր օրգանիզմում բավականաչափ ճարպ կուտակի: Հակառակ դեպքում նա որջում չի փակվի և ամբողջ ձմեռ կթափառի չարացած ու սոված....:

Կես կիլոգրամ քաշով ծնված նորածինները, որ սովորաբար երկուսն են լինում, լույս աշխարհ են գալիս հունվար-փետրվարին: Մայր արջը նրանց կերակրում է մինչև գարուն: Այդ ընթացքում նրանք դանդաղ են աճում: Գարնանը ձագերը «գայլի ախորժակ» են ունենում, որջից դուրս են գալիս շնիկի չափ դարձած, բայց հետո այնքան են աճում, որ երբեմն նույնիսկ դառնում են 2,5 մ երկարությամբ և մինչև 650 կգ զանգվածով հսկաներ: Գորշ արջերն ապրում են մինչև 50 տարի....:

1971-ից ՀՀ-ում գորշ արջի որսն արգելված է:

Ըստ «Դպրոցական մեծ հանրագիտարանի»

Ավագը խոզի կշտին կացավ, ես գնացի. տանը մի հին հրացան ունեինք. վեր կալա, եկա: Եկա, շիտակ գնացի ներքի մոշուտնին, որտեղ, գիտեմ, արջի տեղն է: Ման էկա, որ գտա ոչ, մի տեղ մի լավ մոշուտ պատահեց. կանգնեցի, ասի՝ մի քիչ մոշ ուտեմ: Միամիտ մոշ ուտելիս հենց մոշենու տակիցը մինը ֆրթացրեց ու հրացանս բռնեց:

Դու մի ասիլ՝ գնացել եմ, հենց անտեր արջի վրա եմ կանգնել:

Որ հրացանիս լուլիցը բռնեց, ես էլ կոթը պինդ բռնեցի: Հիմի նա օլորում է, ուզում է՝ կոտրի, ես էլ օլորում եմ, որ հենց անեմ՝ ծերը վրեն ընկնի, հուպ տամ, ծուխը փորն անեմ: ...Հրացանը բաց թողի, ասի՝ խտըտիցն ազատվեմ, եղավ ոչ: Բռնեցինք իրար:

...Տեսա՝ էլ ազատվելու դուռը չկա, ասի՝ ես առաջուց երեսիս վրա վեր ընկնեմ, որ երեսս փչացնի ոչ:

...Իմացել եմ, որ արջը ականջ է դնում՝ տեսնի՝ շունչ կա՞, թե՞ չէ: Թե իմանում է, որ շունչ է քաշում տակի օքմինը, ջարդում է, մինչև շունչը կտրի, թե հո չէ՝ քոթոթաթաղ է անում, թողնում, գնում, որ հոտի, հետո գա, հանի, ուտի: Էս միտք անելիս մին էլ էն տեսա՝ գլուխը բերավ, գլխիս վրա դրավ, շունչը իրեն քաշեց. ականջ է դրել: Ես էլ շունչս փորս գցեցի, ոնց որ թե մեռած եմ: Գլուխը վեր քաշեց, մի քիչ կացավ, մին էլ ականջ դրավ: Էլ ետ շունչս պահեցի: Սա որ տեսավ՝ ես էս է՝ մեռած եմ, ինձ թող արավ, մրթմրթալով գնաց: Աչքս ծերպ արի, ասի՝ մտիկ անեմ, տեսնեմ՝ ուր է գնում: Ասում եմ՝ հենց լինի՝ մի քիչ տեղ հեռանա, վեր կենամ, փախչեմ:

Գնաց, մտիկ ցախ ու մախ կար, փետ կար, հավաքեց, բերավ, վրես ածավ: ...Տեսնեմ՝ մի ահագին քոթուկ կա, չարչարվում է՝ պոկի, որ բերի, էն էլ վրես գցի: Միտք արի, որ՝ թե էս քոթուկը բերի, վրես գցի, տակին շունչս կկտրի: Ասի՝ քանի ուշքը քոթուկումն է, վեր կենամ, կորչեմ:

...Եկավ, տեսավ՝ փետերի տակին մարդ չկա: Քոթուկը խտըտին՝ զարմացած կանգնեց, փետերի տակին մտիկ արավ, չորսը կուռը մտիկ արավ, հանկարծ քոթուկը վեր գցեց ու, թռ՛ու հա թռ՛ու, թռ՛ու հա թռ՛ու, մարդի նման թքոտում է. ասի՝ երևի ափսոսում է, էլի՛:

Ըստ Հովհաննես Թումանյանի «Արջաորս» պատմվածքի

ԱՆՅԱՄ ԼԵԶՎԱՈՒՍԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՂԸ ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ. ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

19-րդ դարի առաջին քառորդից Եվրոպայում հիմնադրվեց համեմատական լեզվաբանության տեսությունը, որով ապացուցվեց, որ նախկին քիչ թվով լեզուներից հետագայում տրոհումով առաջացել են նորերը: Առանձնացվեցին մայր լեզուները և նրանցից առաջացածները: Դրանք կոչվում են լեզվաընտանիքներ: 1875 թ. լույս տեսավ գերմանացի նշանավոր լեզվաբան Հայնրիխ Հյուբշմանի «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում» հոդվածը, որով նա ևս հիմնավորում էր, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ է, և ապացուցում, որ ուղղակիորեն սերում է հենց մայր լեզվից:

5-րդ դարից՝ այբուբենի ստեղծումից հետո հայերենն անցել է զարգացման երեք շրջան՝ գրաբար (5–11-րդ դդ.), միջին հայերեն (12–16-րդ դդ.) և աշխարհաբար (17-րդ դ. մինչև մեր օրերը): Աշխարհաբարն իր զարգացումը շարունակեց երկու ճյուղով, որի հետևանքով արդի հայերենն ունի երկու տարբերակ՝ արևելահայերեն և արևմտահայերեն:



Վարժություն 1: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. լեզվաընտանիքը՝
   ա) տարբեր մայր լեզուներից ծագած լեզուների խումբ է
   բ) նույն լեզվի զարգացման տարբեր շրջանների ամբողջությունն է
   գ) մեկ մայր լեզվից ծագած ու ճյուղավորված լեզուների ամբողջությունն է
2. հայերենի զարգացման փուլերն են՝
   ա) գրաբարը, արևելահայերենը, արևմտահայերենը
   բ) գրաբարը, միջին հայերենը, բարբառները
   գ) գրաբարը, միջին հայերենը, աշխարհաբարը

Վարժություն 2: Որոշեք, թե տրված բնագրերից որն է գրաբար, որը՝ միջին հայերեն, որը՝ արևելահայերեն, որը՝ արևմտահայերեն:

1. Եվ հորդաբուխ աղբյուր բխեց, հոսեց, ծավալվեց բոլոր դաշտերում ու ամեն ինչ լցրեց, որչափ աչքը տեսնում էր:

Ագաթանգեղոս

2. Դեմ դեմի են պատուհանի առջև Պիեր ու Կոստան: Սա համաչափ ու միօրինակ ցնցումը շոգեկառքին տեսակ մը թմրություն կուտա իրենց, և մելամաղձոտությունը կավելնա վագոնին կիսաստվերներեն ու դուրսի ցած, աղտոտ երկինքեն:

Շահան Շահնուր

3. Եւ բղխեաց աղբիւր յորդաբուղխ, և հոսեցաւ ծաւալեցաւ ընդ դաշտս ամենայն, և ելից առ հասարակ՝ որչափ ակն բաւեաց:

Ագաթանգեղոս

4. Եկն ձեռնաւորն և ասէ.
   – Ես քեզ լաւ չեմ արարել, դու ինձ համար է՞ր կու աղօթես:
   Նա ասաց, թէ՝
   – Քո հայրն վատ մարդ էր, ես անիծեցի, նա մեռաւ, դու նստար ի նորա տեղն՝ այլ խիստ չար. կու վախեմ, թէ մեռանիս, նայ քո որդին այլ խիստ լինի չար:

Վարդան Այգեկցի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ

Արդի հայերենն ունի երկու տարբերակ՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Արևելահայերենն ու արևմտահայերենը ունեն հնչյունական, բառային և քերականական տարբերություններ: Իհարկե, այդ տարբերություններն այնքան մեծ չեն, որ արևելահայերենով խոսողը չհասկանա արևմտահայերենով խոսողին և հակառակը, սակայն դրանք պետք է իմանալ մեր լեզվի երկու ճյուղերի առանձնահատկությունները լավ պատկերացնելու համար: Արևմտահայերենում **պ, կ, տ, ծ, ճ** հնչյուններն արտասանվում են **բ, գ, դ, ձ, ջ,** իսկ վերջիններս՝ **փ, ք, թ, ց, չ**: Սահմանական եղանակի ներկան կազմվում է *կը* մասնիկով *(գրում եմ – կգրեմ),* բացառական հոլովը կազմվում է *ե(է), մե(է)* մասնիկներով *(գյուղից – գյուղե, քրոջից – քրոջմե):* Արևմտահայերենում ներգոյական հոլով չկա, և հիմնականում գործածվում են *մեջ* կապով կառույցները *(սենյակին մեջ):* Կան բառապաշարային և մի շարք այլ տարբերություններ:

Վարժություն 3: Աջ սյունակից գտեք տրված բառերի արևմտահայերեն համարժեքները:

արևելահայերեն	**արևմտահայերեն**
ատամ	ըլլալ
քանի որ	քով
մոտ	ակռա
լինել	վասնզի
առավոտ	քալել
քայլել	գոց

շտապել	առտու
այստեղ	ատեն
փակ	աճապարել
ժամանակ	հոս

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՐԲԱՌՆԵՐ

Հայերենը հարուստ է բարբառներով: Հրաչյա Աճառյանը, ըստ սահմանական եղանակի ներկայի կազմության, առանձնացրել է *ում, կը, ել* ցյուղերի բարբառներ: Բարբառները միմյանցից տարբերվում են հնչյունական, բառային և քերականական հատկանիշներով:

Վարժություն 4: Աջ սյունակից ընտրեք ձախ սյունակում գրված բարբառային բառերից յուրաքանչյուրին համապատասխանողը:

իսան	կատակ
ճանանչել	հանգիստ
լիս	մարդ
օճորք	ճանաչել
արխեին	լույս
դես	հավանաբար
հանաք	առաստաղ
դրուստ	այստեղ
հալբաթ	ճիշտ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ

Լեզվաբանության բաժիններն են հնչյունաբանությունը, բառագիտությունը և քերականությունը, որն ունի երկու ենթաբաժին՝ ձևաբանություն և շարահյուսություն:

Հնչյունաբանության մեջ ուսումնասիրվում են լեզվի հնչյունները, դրանց արտասանության և գրության առանձնահատկությունները, փոփոխության տեսակները և այլն:

Բառագիտություն մեջ ուսումնասիրվում են լեզվի բառապաշարի շերտերը, բառերի կազմությունը (պարզ, բարդ, ածանցավոր, բարդածանցավոր), ծագումը (բնիկ, փոխառյալ), ձևաիմաստային հատկանիշները (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն) և այլն:

Ձևաբանության մեջ ուսումնասիրվում են խոսքի մասերն ու նրանց հատկանիշները (հոլովում, խոնարհում, հոգնակի թվի կազմություն և այլն):

Շարահյուսության մեջ ուսումնասիրվում են բառերի ու նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, կապակցական տարբեր հարաբերությունները, բառակապակցության ու նախադասության անդամների պաշտոնները:



Վարժություն 5: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. լեզվաբանության բաժիններն են՝
   ա) հնչյունաբանությունը, բառապաշարը, քերականությունը
   բ) գրաբարը, միջին հայերենը, աշխարհաբարը
   գ) հնչյունաբանությունը, բառագիտությունը, քերականությունը
2. հնչյունաբանություն բաժնում ուսումնասիրվում են՝
   ա) նախադասությունների հնչերանգային տեսակները
   բ) լեզվի հնչյունների արտասանության, գրության, փոփոխության առանձնահատկությունները
   գ) խոնարհման առանձնահատկությունները
3. բառագիտություն բաժնում ուսումնասիրվում են՝
   ա) բառերի հոլովման առանձնահատկությունները
   բ) բառերի կապակցման եղանակները
   գ) բառերի կազմությունը, ձևաիմաստային հատկանիշները, ծագումը
4. ձևաբանություն բաժնում ուսումնասիրվում են՝
   ա) խոսքի մասերն ու նրանց հատկանիշները
   բ) բառակազմության ձևերն ու եղանակները
   գ) նախադասության կազմությունը
5. շարահյուսություն բաժնում ուսումնասիրվում են՝
   ա) հոլովման և խոնարհման համակարգերի առանձնահատկությունները
   բ) հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն բառերը
   գ) բառերի ու նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, կապակցական հարաբերությունները, բառակապակցության ու նախադասության անդամների պաշտոնները

Վարժություն 6: Գտեք, թե յուրաքանչյուր տողում նշված տերմինները լեզվաբանության որ բաժնին են հիմնականում վերաբերում:

ա) հոլովում, խոնարհում, հոգնակի թիվ – ձևաբանություն, հնչյունաբանություն, բառագիտություն

բ) ձայնավոր, վանկ, հնչյունափոխություն – ձևաբանություն, շարահյուսություն, հնչյունաբանություն

գ) նախադասություն, ենթակա, լրացում – շարահյուսություն, բառագիտություն, հնչյունաբանություն

դ) արմատ, ածանց, հարանուն – հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՀՆՉՅՈՒՆՆԵՐ

Հնչյունը լեզվի ձայնային-արտասանական նվազագույն միավորն է, որը բառ է կազմում կամ հանդես է գալիս որպես բառ: Հնչյունները լինում են ձայնավոր և բաղաձայն:

Ձայնավոր են այն հնչյունները, որոնց արտաբերման ժամանակ արգելքներ չեն ստեղծվում: Ձայնավոր են *ա, է, ը, ի, ու, օ* հնչյունները:

Բաղաձայն են այն հնչյունները, որոնց արտաբերման ժամանակ ստեղծվում են արգելքներ: Բաղաձայն են *բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ* հնչյունները:

Վարժություն 7: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. հնչյունը՝
   ա) գրային միավոր է
   բ) լեզվի արտասանական նվազագույն միավորն է
   գ) բառի՝ մեկ շնչով արտասանվող հատվածն է

2. տառը՝
   ա) արտասանական միավոր է
   բ) բառակազմական միավոր է
   գ) հնչյունի գրային նշանն է

3. հնչյունները լինում են՝
   ա) ձայնավոր և գաղտնավանկ
   բ) երկհնչյուն և բաղաձայն
   գ) ձայնավոր և բաղաձայն

4. ձայնավոր են այն հնչյունները,
   ա) որոնք արտաբերվում են արգելքների հաղթահարմամբ
   բ) որոնք արտաբերվում են առանց արգելքների
   գ) որոնք չեն կարող հնչյունափոխվել

5. բաղաձայն են այն հնչյունները,
   ա) որոնց արտաբերության ընթացքում ստեղծվում են արգելքներ
   բ) որոնք *յ*-ի հետ կարող են կազմել երկհնչյուն
   գ) որոնք արտաբերվում են առանց արգելքների

Վարժություն 8: Գրեք՝ ա) ձայնավորով սկսվող, բ) ձայնավորով ավարտվող, գ) բաղաձայնով սկսվող, դ) բաղաձայնով ավարտվող, ե) ձայնավորով սկսվող ու ավարտվող, զ) բաղաձայնով սկսվող ու ավարտվող հնգական բառ:

Վարժություն 9: Ո՞ր շարքերի բոլոր բառերն են սկսվում ձայնավոր հնչյունով:

1. արագ, էջանշան, սյուն, ընկեր
2. ով, որսորդ, անուն, ուրախ
3. ալիք, ուրուր, էակ, ինքնաթիռ
4. անափ, իսկույն, ընկույզ, ունկնդիր
5. ըմպանակ, հանգրվան, էներգիա, անապատ

Վարժություն 10: Սիլվա Կապուտիկյանի «Կարոտի պահին» բանաստեղծությունից դուրս գրեք և խմբավորեք ձայնավորով և բաղաձայնով սկսվող բառերը (կրկնվող բառերից միայն մեկը դուրս գրեք):

Արի՜, արի՜, արի՜,
Թեկուզ վերջի՜ն անգամ,
Թեկուզ քայլով դժկամ,
Միայն արի՜, արի՜,

Թեկուզ անսեր, անսի՜րտ,
Թեկուզ հեգնող ու խիստ,
Թեկուզ խայթող ու բիրտ,
Միայն արի՜, արի՜:

Թեկուզ բերես դու ինձ
Մի նոր դավի կսկիծ,
Թեկուզ ուրի՜շ գրկից,
Միայն արի՜, արի՜...

Վարժություն 11: *Ա, գ, լ, ծ, կ, շ, պ, վ* հնչյուններն ավելացրեք տրված բառերին՝ ստանալով այլ բառեր (օրինակ՝ *շուն – աշուն*):

Անոթ, արագ, գահ, ոգի, անձ, ամպ, տառ, այտ:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐ

Որևէ ձայնավորի և *յ* կիսաձայնի արտասանական զուգակցումը կոչվում է երկհնչյուն: Ժամանակակից հայերենի երկհնչյուններն են՝

այ – *փայտ, ձայն*
յա – *պատյան, մատյան*
ույ – *գույն, լույս*
յու – *սյուն, նյութ*
օյ (ոյ) – *խոյ, Նոյ*
յօ (յո) – *արդյոք, յոթ*
էյ (եյ) – *թեյ, հեյ*
յէ (յե) – *նայել, հայերեն, երակ*
յի – *տղայի, խաղայի:*

Երկհնչյունները կարող են հնչյունափոխվել, օրինակ՝ *լույս – լուսավոր*:

Վարժություն 12: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. երկհնչյունները՝
   ա) կազմվում են *յ*-ի և որևէ ձայնավորի արտասանական զուգակցմամբ
   բ) ձայնավորի և ցանկացած բաղաձայնի զուգակցմամբ
   գ) բաղաձայնի և գաղտնավանկի *ը*-ի զուգակցմամբ
2. երկհնչյունները՝
   ա) բառակազմության ժամանակ կարող են հնչյունափոխվել
   բ) բառակազմության ժամանակ երբևէ չեն հնչյունափոխվում
   գ) բառակազմության ժամանակ միշտ հնչյունափոխվում են

Վարժություն 13: Արտագրեք՝ լրացնելով բաց թողնված երկհնչյունները:

Դ...զն-ինչ, ատամնաբ...ժ, Օֆել..., զգ...շ, ար...ն, արդ...ք, Ռաֆա...լ, դեղոր...ք, անագոր...ն, գա...սոն, դաշ...ն, երև...թ, Միքա...լ, եղ...մ, մշակ...թ, անփ...թ:

Վարժություն 14: Գտեք, թե որ շարքերի բոլոր բառերում է բաց թողնված երկհնչյուն:

1. ս...նազարդ, անփ...թորեն, հարյուր...կ, դաշ...ն
2. զգ...շ, դեղոր...ք, երև...թական, հ...րասիրություն
3. եղ...մ, այծ...մ, օթ...կ, հեծ...լ
4. պայթ...ն, միմ...նց, նախազգ...շական, աղբ...ր
5. դ...րին, վ...րկյան, մոխրակ...տ, ներկան...թ
6. մ...թեզր, կա...նություն, մշակ...թ, ձ...նագրություն
7. արծվաբ...ն, կղզ...կ, թի...վարել, վարագ...ր
8. հորաք...ր, հարթավ...ր, բ...րավոր, աստղալ...ս
9. լռել...յն, բազմանկ...ն, թռչ...ն, հնգամ...կ
10. աստղաբ...լ, բ...րեղապակե, սար...կ, զգա...ն

Վարժություն 15: Արտագրեք՝ ըստ անհրաժեշտության ավելացնելով *յ*:

Նա...րի, հա...ելի, ժողովածու...ում, մի...այն, լռել...այն, Սերգե...ի, վա...րկենական, թե...ել, կղզ...ակ, հարյուր...ակ, զգու...շ, է...ակ, թի...ակ, հի...անալ, մի...ակ, պո...եմ, տի...եզերք:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Գրության և արտասանության միջև կարող են լինել որոշ տարբերություններ, օրինակ՝ գրվում է *վարդ*, արտասանվում է *վարթ*, *օձ*-ը՝ արտասանվում է *օց* և այլն: Ճիշտ գրելու և ճիշտ խոսելու համար կան կանոններ:

Ուղղագրությունը ճիշտ գրելու կանոնների համակարգն է:

Ուղղախոսությունը ճիշտ խոսելու, նաև գրվածը ճիշտ կարդալու կանոնների համակարգն է:

Վարժություն 16: Արտագրեք՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողնված տառերը:

Է–Ե

1. Այժմ...ական, ան...անալ, առ...ջ, առօր...ական, բազմ...ռանգ, գոմ...շ, գրեթ..., դող...ռոցք, ելև...ջ, երբև..., երբևից..., զարկ...ռակ, էլեկտրա...ներգիա, էմալ..., ինչև..., ինչևից..., լայն...կրան, ծովահ...ն, հր...շ, հն...աբան, մանր..., միջօր..., նախօր..., որև..., որևից.., վայր...ջք, վայրկ...նական, Վարդգ...ս, քրիստոն...ական:

Օ–Ո

2. Ազգ...գուտ, աման...ր, ամեն...ոյա, այս...ր, ան...թ, ան...ղնաշար, ան...ռակ, ան...գնական, ան...թևան, ան...ռեն, ապ...ռինի, արծաթազ...ծ, բաց...թյա, բն...ռրան, գիշերուզ...ր, գիշեր...թիկ, կես...ր, հանապազ...ոյա, հանապազ...ոդ, հանր...գուտ, հն...ոյա, հ...գուտ, մեղմ...ռեն, միջ...ռե, մի...ռինակ, սառն...ռակ, վաղ...ռոք, տն...ռեն, օրեց...ր, օր...ռել:

Ը

3. Ակ...նբախ, ակ...նդետ, ակ...նթարթ, ամենա...նտիր, այլ...նտրանք, անակ...նկալ, ան...նդհատ, ան...նդունելի, ան...նդունակ, առ...նթեր, առ...նչվել, արագ...նթաց, գահ...նկեց, գույն...զգույն, դաս...նթաց, դաս...նկեր, երկ...նտրանք, ինքն...ստինքյան, լուս...նկա, խոչ...նդոտ, համ...նդհանուր, համ...նթաց, համ...նկնել, հատ...նտիր, հյուր...նկալ, ձեռ...նտու, մեկ...նդմիշտ, մերթ...նդմերթ, նախ...նտրել, սր...նթաց, ունկ...նդիր, օր...ստօրե:

Յ

4. Ալեքսե..., է...ական, է...ություն, թե...ել, թի...ակ, լի...ություն, խնա...ել, հա...ելազարդ, հի...անալ, ձի...արշավ, մի...ակ, մի...այն, մի...անալ, որդի...ական, պո...եմ, Սերգե..., վա...ելել, տի...եզերք, տրամվա..., ուխտադրու...ժ:

Բ–Պ–Փ

5. Ալեծու..., աղ..., աղ...յուր, ա...շել, ար...ի, Գա...ռիել, դար...ին, եղ...այր, եր..., եր...ներանգ, թ...ռտալ, ի...ռև, լե...-լեցուն, խա...ել, խարխա...ել, Հակո..., համ...երել, համ...ուրել, հար...ել, հղ...անալ, ճող...յուն, նուր..., շա...աթ, ող..., որ..., ջրար...ի, ս...ռդել, ս...ռթնել, սուր..., սր...ել, ուր...աթ, քարակո...:

Գ–Կ–Ք

6. Ան...ամ, ավա..., գո...ավոր, եր..., զու...ել, թա...ավոր, թար...մանել, կարա..., կար..., հա...նել, հո...նել, հո...ի, ձա..., ձի..., ճի..., ճրա..., մարա..., մար...արե, մար...արիտ, նորո...ել, շա...անակ, շաղ...ամ, շո..., ո...ի, պատարա..., սայթա...ել, սու..., արտասու..., վարա...ույր, մեներ..., տարեր..., տրտմաշու..., ուրա..., փեղ..., փող..., օ...նել:

Դ–Տ–Թ

7. Աղո...ք, ան...ամ, ար...ար, ար...են, ար...յոք, ար...յունք, ար...ուն, բար..., բեր..., բուր..., դա...արել, դր...ել, եր...իկ, եր...ում, շքեր..., զար..., ըն...ամենը, ըն...արմանալ, ըն...հանուր, ըն...ունել, թա...երական, լեր...անալ, լյար..., խն...իր, խոր...ուբոր...,

խր...վիլակ, կար...ալ, կեն...անի, հաղոր...ել, մար..., նյար..., որ...ի, պայ..., վար..., վար...ապետ, փար...ամ, օ...ապարիկ:

Ձ–Ճ–Ց

8. Ամբար...իչ, անցուդար..., ասացվա...ք, ատաղ...ագործ, ար...ակ, ար...ան, բար..., բար...ել, բար...ր, գլուխկոն...ի, դաղ..., դեղ..., դեղ...ան, դեր...ակ, դեր...ան, թխվա...ք, լպր...ուն, լվա...ք, խ...կել, խուր..., կեղ...ամ, կ...կել, կո...կել, կ...կտուր, հանդեր..., հանդիպակա..., հար...ակվել, համբար...վել, հե...կլտալ, հինավուր..., ձվա...եղ, մազապուր..., որ...կալ, որ...աքար, պախուր..., վար..., վեհապան..., վր...ին, տր...ակ, ուր..., փղ...կալ, փոր..., քաղ...ր, օ..., օ...իք:

Ջ–Ճ–Չ

9. Ակնակապի..., աղ...ատել, աղջամուղ..., աղ...իկ, ա...պարար, ամբող..., այծենակա..., անուր..., ա..., առա..., առէ..., առ...և, ար..., բա...կոն, գաղ..., գա...ա..., գեղ...ուկ, գո...ի, դար...ին, զեղ...ել, զի...ել, զղ...ալ, թր...ել, խառնիճաղան..., խոխո..., խո...կոր, կո...կել, հաղար..., մար...ան, մե..., մի...և, մին...և, ող..., որ..., չղ...իկ, պ...նանք, պ...ռանք, վեր..., փար... :

Ղ–Խ

10. Ա...տ *(հիվանդություն),* ա...տ *(կեղտ),* ա...քատ, ապու...տ, բա...տ, բո...կ, դա...ձ, դժո...ք, դրա...տ, ե...բայր, երա...տիք, զմրու...տ, թա...տ, թ...կի, թու...պ, թու..թ, ժ...տել, խա...տել, խե...դել, խրո...տ, ծա...ս, կթ...ա, կ...տար, կմա...ք, կո...պեք, հա...ճապակի, ճե...ք, նա...կին, նա...շ, ո...կույզ, Որմիզդու...տ, պանդու...տ, պ...տոր, ջա...ջախել, սանդու...ք, Վա...թանգ, վա...ճան, վ...տալ, տա...տակ, տա...տուկ, փա...չել, ու...տ *(դաշինք, երդում)*, ու...տ *(կենդանի):*

Ր–Ռ

11. Ա...համարհել, բա...բառ, թ...վռալ, թ...թռալ, կա...կառել, կերկե...ուն, կ...ճիկ, կ...ծել, հու...թի, ճ...ճռալ, մարմա..., պա...կել, սա...սուռ, սրթս...թալ, վա...վռուն, փրփու... :

Վ–Ֆ

12. Աս...ալտ, ա...տոմեքենա, թա...շյա, խռո...ք, հարա..., նա...թ, փլա... :

Հ

13. Աշխար..., աշխար...այացք, ապաշխար...ել, արհամար...ել, ար...ավիրք, խոնար..., խոր...ել, խոր...ուրդ, հայթ...այթել, հեղ...եղ, հեղ...եղուկ, ճանապար..., նախագա..., նշխար..., շնոր... :

Եվ–և

14. Ագ...ազ, գեր...արել, գին...աճառ, դափն...արդ, կար...եր, կար...որ, համա...որ-պական, հար...ան, հոգ...արք, ոսկ...ազ, սերկ...իլ:

Կրկնակ բաղաձայններ

15. Անդո..., բա...ադ, բե...ի, ե...որդ, չո...որդ, մ...կահողմ, ճ...ալ, տա..., տո...ա, օ...ան:

Վարժություն 17: Արտագրեք՝ բաց թողնված տեղերում ըստ անհրաժեշտության գրելով *յա-իա-եա, ույ-յու, ոյ-յո-եո-իո:*

ա) Ալելու..., ակաց..., Ամալ..., Ազար..., Անան..., առօր..., Աս... *(տեղանուն)* Աս... *(անձնանուն),* Արաքս..., բամ..., Բեն...մին, Բուն...թյան, դաստ...րակ, Եղ...զար, եղ...մ, Երեմ..., Երմոն..., էքսկուրս..., իդ...լ, խավ...ր, կղզ...կ, կր..., հեք...թ, Մար...մ, միլ...ոդ, միմ...յն, միմ...նց, մում..., ս...նս, Սիս...ն, Սյուն...ց, Սոֆ... *(տեղանուն),* Սոֆ... *(անձանուն),* Սուք...ս, վայրկ...ն, Վիկտոր... *(տեղանուն),* Վիկտոր... *(անձնանուն),* փաս...ն, օվկ...նոս, Օֆել...:

բ) Ալ...ր, աղբ...ր, աղ...սակ, աշխ...ժ, առ...ծ, ատամնաբ...ժ, արդ...նք, ար...ն, դաշ...ն, դ...զն-ինչ, երև...թ, զգ...շ, ընկ...զ, համբ...ր, հար...ր, մակաբ...ծ, մ...ս, մշակ...թ, ողկ...զ, ողջ...ն, պա...սակ:

գ) Ամբ...ն, ամ...բա, ակորդ...ն, ավիաց...ն, արդ...ք, աքս...մ, Բյուզանդ...ն, բրաբ...ն, էքսկուրս...ն, թ...րեմ, լեգ...ն, խ...ակ, հետ...տն, մարմար...ն, միլ...ն, մուլտիպլիկաց...ն, Նապոլ...ն, չեմպ...ն, պանթ...ն, ռադ...ցանց, քամել...ն, օր...ոդ:

Վարժություն 18: Փակագծերում տրված բաղադրիչը գրեք միասին, անջատ կամ գծիկով:

1. դարից (դար), փայտ (փորիկ), դեմ (դիմաց), զույգ (զույգ)
2. հեռու (մոտիկ), հլու (հնազանդ), ամեն (մեկը), հողմ (աղաց)
3. հարյուր (քսան), դուրս (մղել), փոքր (ինչ), գլուխ (կոտրուկ)
4. հազիվ (թե), բուժ (քույր), ծառից (ծառ), նետ (աղեղ)
5. երկու (երրորդ), բրոնզե (դարյան), ի (զուր), ճեփ (ճերմակ)
6. ծով (եզր), տուն (թանգարան), անթիվ (անհամար), մուգ (կարմիր)
7. երկաթ (ուղի), երեսուն (չորս), փունջ (փունջ), գազ (այրիչ)
8. մեկ (մեկ), միտք (անել), տեղի (անտեղի), առ (նվազն)
9. հարավ (արևմտյան), տարուց (տարի), ի (շահ), գնալ (գալ)
10. հարավ (արևմուտք), շուրջ (պար), բաց (կանաչ), խոսք (տալ)

Վարժություն 19: Գտեք, թե որ շարքերի բոլոր բառերում է բաց թողնված նշված բաղաձայնը:

Բ
1. աղ...յուր, նր...որեն, սր...ել, ջրար...ի
2. խա...ել, խարխա...ել, համ...երություն, ի...րև
3. դար...ին, եղ...այրական, շա...աթական, Գա...րիել
4. եր...եմնի, եր...ներանգ, ող...անվագ, համ...արձվել
5. աջհամ...ույր, թմ...կահար, բոր...ոս, եր...ևիցե

Գ
1. մար...արե, օ...նել, կարա..., զու...ել
2. ձ...ել, թա...ավոր, շա...անակ, տարեր...
3. վարա...ույր, շաղ...ամ, սայթա...ել, կատվաձա...
4. հա...նել, եր...եցողություն, ճ...նել, ս...ավոր
5. պատարա..., շո...եքարշ, արտասու..., թար...մանել

Դ 1. նյար...այինն, որ...ի, եր...իկ, շքեր...
2. մար...կայինն, դա...արել, օ...ամղիչ, կար...ալ
3. ուղտաբուր..., լեր...անալ, ըն...ամենը, խորդուբոր...
4. խն...րագիրք, ար...յունավետ, կեն...անական, զար...արանք
5. խորհր...ատու, ըն...ունակ, զար...ոնք, վար...ապետ

Զ 1. բարձրաբեր..., հար...ակվել, ատաղ...ագործ, դեր...ակ
2. փղ...կալ, որ...կալ, որ...աքար, օ...իք
3. դաղ..., համար...ակ, շրջադար..., ձվա...եղ
4. վր...ին, հանդեր...անք, ամբար...իչ, օ...աձև
5. համբար...վել, անցուդար..., ար...ան, գլուխկոն...ի

Ջ 1. աղջամուղ..., զղ...ալ, որ..., ող...
2. զի...ել, զեղ...ել, թր...ել, անուր...
3. խառնիճաղան..., խոխո..., մի...և, չղ...իկ
4. առա...նորդ, առէ..., գյուղամե..., գո...ի
5. մր...յուն, հաղար..., գաղ..., ճան...ասպան

Ղ 1. ա...տոտ, սանդու...ք, ա...քատ, ճե...քել
2. խե...դել, ո...կույզ, հա...ճապակի, կթ...ա
3. տա...տկալի, ու...տաբուրդ, պ...տոր, թա...տ
4. բո...կ, շա...գամ, կո...պեք, փե...կ
5. նա...շ, փո...ք, դա...ձ, ե...բայր

Ռ 1. ճ...ճռալ, կա...ապան, հու...թի, պա...կել
2. վա...վռուն, ա...համարհել, ամրակու..., մե...ոն
3. մա...ախուղ, մարմա..., թ...վռալ, ա...վակ
4. սա...սռալ, կա...չել, սա...չել, կ...ծել
5. հա...աչել, կիսակա...ույց, դա...նալ, ե...ակցել

Հ 1. աշխար..., շնոր..., ար...ավիրք, հեղ...եղուկ
2. արհամար...ել, խոտ...արք, աշխար...այացք, խոր...ուրդ
3. խոր...ել, նշխար..., ճանապար..., նախագա...
4. խոնար..., կա...ույք, ապաշխար...ել, մեղմասա...
5. հայթ...այթել, հեղ...եղ, մտախո..., դա...լիճ

Վարժություն 20: Արտագրեք՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողնված տառերը:

Այն օրը, երբ իշխան Կամսարականը անզուսպ ցասումով կար...ադրություն էր անում, որ գտնեն փա...չողներին և բերեն իր մոտ, նրա կալվա...քներից հեռացած շինականները, անտառից ար...են դուրս եկած, գնում էին դեպի հարա...-արևելք՝ նոր

քաղաքը: Գնում էին հո...նած, հևիհև, գրեթ... ուժասպառ: Բայց չնայած խորդուբոր... ճանապար...ի խոչ...նդոտներին՝ նրանք ներքուստ զվար... էին. անցել էին մահասա... սուռ վտանգի սահմանագիծը:

Երբ որոշ ժամանակ ձիու ոտնաձայն չլսվեց, Թորգոմը սրտի թ...թիռով գնաց դեպի անտառի եզրը ու բերանքսիվայր պա...կելով՝ նայեց ա... և ձախ: Չէր երևում ոչ մար..., ոչ ձի, ոչ որև... այլ էակ: Դիմացը միայն բարձրաբեր... սարն էր՝ լերկ ու քարակա...կառ, իսկ շուրջը՝ ամայություն ու անդո...ություն: Հավաստիանալու համար, որ իրոք չկա ոչ ոք, նա նույն դիրքով սրտատրոփ դ...զն-ինչ էլ սպասեց: Դարձյալ ոչ մի ձայն: Այնժամ նա զգու...շ հետ դար...ավ և շշնջաց.

– Ելնենք, քանի չկան:

Ըստ Ստեփան Զորյանի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՎԱՆԿ

Բառի այն հնչյունը կամ հնչյունախումբը, որն արտասանվում է օդի մեկ մղումով, կոչվում է վանկ: Ժամանակակից հայերենում վանկի կազմում անպայման պետք է լինի մեկ ձայնավոր, որը կոչվում է ***վանկարար***: Վանկը լինում է ***բաց*** և ***փակ***: *Ձայնավորով ավարտվող կամ միայն ձայնավորից կազմված վանկը կոչվում է բաց, իսկ բաղաձայնով ավարտվող վանկը՝ փակ:* Ըստ վանկերի քանակի՝ բառերը լինում են **միավանկ** և **բազմավանկ**: Կան վանկեր, որոնց ձայնավոր հնչյունը *ը*-ն է, որը լսվում է, բայց չի գրվում, օրինակ՝ *ն(ը)կար, ծ(ը)ռար* և այլն: Լսվող բայց չգրվող *ը* ձայնավոր ունեցող վանկը կոչվում է **գաղտնավանկ**: Գաղտնավանկի *ը*-ն գրվում է միայն վանկատման և տողադարձի ժամանակ, երբեմն էլ բանաստեղծական տողի չափը հուշելու համար: Գաղտնավանկի *ը*-ն կարող է լինել նաև բառի առաջին հնչյունը, օրինակ՝ *(ը)սկսել, (ը)զգույշ* և այլն: Բառասկզբում *ը*-ն գրվում է միայն *ղ, մ, ն* բաղաձայններից առաջ և *ըստ* բառում, օրինակ՝ *ըղձալի, ըմպանակ, ընդհանուր* և այլն:

Վարժություն 21: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. վանկը՝
   ա) բառի հնչյուն է կամ հնչյունախումբ, որն արտասանվում է օդի մեկ մղումով
   բ) բառի հատվածներն են՝ ըստ նրանում եղած արմատների ու ածանցների
   գ) հնչյունի գրային նշանն է
2. ժամանակակից հայերենում վանկի կազմում պարտադիր լինում է՝
   ա) մեկ բաղաձայն
   բ) մեկ ձայնավոր
   գ) մեկ երկհնչյուն

3. վանկում եղած ձայնավորը կոչվում է՝
   ա) կիսաձայն
   բ) վանկարար
   գ) վանկատում
4. վանկերը լինում են՝
   ա) պարզ և ածանցավոր
   բ) բաց և փակ
   գ) միավանկ և բազմավանկ
5. լսվող, բայց չգրվող *ը* ձայնավորով ձևավորված վանկը կոչվում է՝
   ա) վանկարար
   բ) հոդակապ
   գ) գաղտնավանկ
6. գաղտնավանկի *ը*-ն գրվում է՝
   ա) բառակազմության ժամանակ
   բ) տողադարձի և վանկատման ժամանակ
   գ) *ա*-ից և *ո*-ից հետո

Վարժություն 22: Գտեք, թե յուրաքանչյուր շարքի որ բառը միավանկ է:

1. տուն, մարդ, սյուն, մկան
2. ծառ, մկրատ, լեռ, հույս
3. կրակ, հայր, քույր, մայր
4. կարգ, դուստր, նոր, մեղմ
5. ըստ, ձայն, ով, սանր
6. նյութ, մերթ, արկղ, քայլ
7. այն, նեղ, մեծ, մանր
8. մանրէ, կոր, կազմ, բարդ
9. հյութ, լույս նկար, մայթ
10. կայծ, երգ, ֆիլմ, տետր

Վարժություն 23: Նշեք, թե յուրաքանչյուր շարքում վանկատման որ ձևը ճիշտ է:

1. ո-րո-նել, կը-տը-տել, հար-թեց-նել, սա-նը-ել
2. լու-սա-մուտ, լու-սա-նը-կար, կան-աչ-ա-պատ, դա-սա-գիրք
3. բը-նա-նը-կար, խո-խոջ-յուն, մայ-ոու-ղի, կատ-ա-ղի
4. հե-ոարձ-ակ, սե-վաչ-յա, սա-ղար-թա-խիտ, հու-սա-լի
5. բը-նա-կա-ոան, հա-ոե-վան, մը-տա-սե-վեռ, հա-մա-կարգ-իչ
6. ա-նա-գո-ոույն, ժա-մաց-ույց, նը-կա-ոա-զարդ, մայ-ոա-քա-ղաք
7. ը-զ-գուշ-ացնել, ը-զ-գա-լի, ը-ս-պի-տակ, ը-ն-դու-նակ
8. ծա-ռու-ղի, հի-ա-նա-լի, մի-ա-սին, մի-ա-մը-տ-որեն
9. ան-գի-տու-թյուն, մար-զադ-աշտ, ա-թո-ռա-նիստ, վազ-քու-ղի
10. հա-յե-լա-զարդ, նը-կար-չա-կան, թը-ր-թը-ռալ, սա-ոալ-անջ

Վարժություն 24: Գտեք, թե յուրաքանչյուր տողի որ բառում կա մեկ փակ վանկ:

1. առու, հեռու, կատու, այգի
2. կաշի, խաբեբա, պողոտա, աժդահա
3. շրջակա, մուրաբա, մոտակա, ապագա
4. հետագա, պարագա, անզգա, մեդուզա
5. գենետիկա, մարտավկա, բացակա, առաջիկա
6. մեծահոգի, լուսահոգի, փոքրոգի, բարեհոգի
7. նշանակալի, զվարճալի, իմանալի, հյութալի
8. նազելի, հայելի, կեռասենի, թվարկելի
9. նախալեզու, քացախաթթու, հավաքածու, ահարկու
10. վրիժառու, տեղեկատու, վերարկու, օդաչու

Վարժություն 25: Գրեք հինգ երկվանկ բառ, որոնք կազմված լինեն բաց և փակ վանկերից, և հինգ երկվանկ բառ, որոնք կազմված լինեն փակ և բաց վանկերից:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՏՈՂԱԴԱՐՁ

Գրելիս երբեմն տողավերջի բառը չի տեղավորվում, և բառի վերջին մասը հաջորդ տող տանելու անհրաժեշտություն է առաջանում: *Բառի մի մասը հաջորդ տող փոխադրելը կոչվում է տողադարձ:* Տողադարձ կատարելիս կիրառվում է երկու սկզբունք՝ վանկատման և բառակազմական:

Վարժություն 26: Նշեք, թե յուրաքանչյուր շարքում տողադարձման որ ձևը ճիշտ չէ:

1. համակարգիչ – *հա-մակարգիչ, համա-կարգիչ, համակարգ-իչ, համակար-գիչ*
2. լուսարձակներ – *լու-սարձակներ, լուսար-ձակներ, լուսարձ-ակներ, լուսարձակ-ներ*
3. հարևանը – *հարե-վանը, հա-րևանը, հա-րեվանը, հարևա-նը*
4. գրաքննիչ – *գրա-քննիչ, գը-րաքննիչ, գրաքըն-նիչ, գրա-քըննիչ*
5. երկնասլաց – *երկ-նասլաց, երկնա-սըլաց, երկնասը-լաց, երկնա-սլաց*
6. բանաստեղծական – *բա-նաստեղծական, բանաստ-եղծական, բանաստեղ-ծական, բանաստեղծա-կան*
7. հաշվետվություն – *հաշ-վետվություն, հաշվե-տըվություն, հաշվետվու-թյուն, հաշվե-տվություն*
8. փոխգնդապետ – *փոխ-գընդապետ, փոխգնդա-պետ, փոխգըն-դապետ, փոխ-գնդապետ*
9. հյուրասենյակ – *հյու-րասենյակ, հյուրա-սենյակ, հյուրասեն-յակ, հյուր-ասենյակ*
10. ուրախանալ – *ու-րախանալ, ուրա-խանալ, ուրախ-անալ, ուրախա-նալ*

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՇԵՇՏ

Բազմավանկ բառի ձայնավոր հնչյուններից մեկն արտասանվում է մյուսներից ավելի ուժգին և տևական, օրինակ՝ *դասարան* բառում վերջին *ա*-ն արտասանվում է փոքր-ինչ ուժեղ և երկար: Միավանկ բառում ուժեղ է արտասանվում միակ ձայնավորը: Բառի որևէ ձայնավորի արտասանության ուժեղացումը կոչվում է շեշտում: Գրավոր խոսքում շեշտումն արտահայտվում է կետադրական շեշտ նշանով, որը դրվում է միայն որոշակի դեպքերում՝ հրամայական բայաձևեր, կրկնվող շաղկապներ, ձայնարկություններ, կոչական և այլն: Հայերենում հիմնականում շեշտվում է բառի վերջին վանկի ձայնավորը: Եթե բառի վերջից ավելանում է նոր բաղադրիչ, ապա շեշտը տեղափոխվում է ավելացած մասի վերջին ձայնավորի վրա, օրինակ՝ *ուսանո՛ղ – ուսանողակա՛ն*: Սակայն կան բառեր, որոնցում շեշտը վերջին ձայնավորի վրա չի ընկնում, օրինակ՝ *գո՛նե, գրե՛թե, գո՛ւցե, երբևէ, իհա՛րկե, մաթեմատիկա, մա՛նավանդ, մի՛գուցե, մի՛թե, մի՛միայն, նա՛մանավանդ, նո՛ւյնիսկ, նո՛ւյնպես, ո՛վևէ, ո՛րևէ, ռադիո, տեխնիկա, քիմիա, օլիմպիադա* և այլն:

Վարժություն 27: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. շեշտը հիմնականում ընկնում է՝
   ա) գաղտնավանկի *ը* ձայնավորի վրա
   բ) բառի վերջին վանկի ձայնավորի վրա
   գ) բառի առաջին բաց վանկի ձայնավորի վրա
2. շեշտի դիրքը հայերենում՝
   ա) միշտ չի փոխվում
   բ) փոխվում է բառը տողադարձելիս
   գ) փոխվում է բառի վերջից նոր բաղադրիչ ավելացնելիս

Վարժություն 28: Գտեք, թե յուրաքանչյուր շարքի որ բառում շեշտը վերջին վանկի ձայնավորի վրա չի ընկնում:

1. կառույց, հայելի, սլաք, մարմար, երբևէ, մանրէ
2. հիանալի, ցուցափեղկ, հայրենիք, ձեռք տալ, օվկիանոս, մակույկ
3. լեզվաբանություն, պատմություն, քիմիա, աշխարհագրություն, կենսաբանություն, երկրաչափություն
4. հնէաբան, կայծկլտալ, այստեղ, յուրաքանչյուր, բոլոր, որերորդ
5. սարքավորում, ամբարձիչ, տեխնիկա, ասֆալտ, եթե, հաճախ
6. հարավ, հյուսիս, հերոս, ջրվեժ, կարապ, կակաո
7. կոկորդիլոս, աղվես, կաչաղակ, զեբր, արծիվ, գետաձի
8. այսպես, այդպես, այնպես, նույնպես, այսքան, այդքան
9. ահա, անշուշտ, իհարկե, ահավասիկ, հավանաբար, կարծես
10. առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, երեքական

Վարժություն 29: Գտեք, թե յուրաքանչյուր շարքի որ բառում է շեշտն ընկնում վերջին վանկի ձայնավորի վրա:

1. գոնե, նույնպես, որերորդ, միայն, տեխնիկա, ծափ տալ
2. ովևէ, ծրար, որևէ, ռադիո, պար գալ, քանիերորդ
3. իհարկե, երբևէ, շունչ քաշել, նույնիսկ, միգուցե, ոչ-ոքի
4. հարց տալ, միմիայն, այդպիսի, գրեթե, քիմիա, մանավանդ
5. ֆիզիկա, ֆիզկուլտուրա, օլիմպիադա, մաթեմատիկա, Բյուզանդիա, Նաիրի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հնչյունների այն փոփոխությունը, որը պայմանավորված է շեշտի դիրքի փոփոխությամբ, կոչվում է *շեշտափոխական հնչյունափոխություն:* Հիմնականում հնչյունափոխվում են *է, ի, ու, ը* ձայնավորները և *ույ, յու, յա* երկհնչյունները:

Վարժություն 30: Յուրաքանչյուր շարքում գտեք այն բառը, որում կատարվել է ձայնավորի կամ երկհնչյունի շեշտափոխական հնչյունափոխություն:

1. ծառուղի, պարախումբ, հուշասյուն, աշխարհագրություն
2. լայնեզր, ծաղկաման, թեյաման, այստեղ
3. անուշահամ, աշխատաժամ, անվադող, հեքիաթային
4. ծանրամարտ, մեծություն, լայնահուն, մետաղահատ
5. ծիծաղախիտ, խաչքար, խաղադաշտ, գթասիրտ
6. ձյունոտ, երգարվեստ, տուֆակերտ, միջնաշերտ
7. հողաշերտ, նավթամուղ, կատվաձուկ, արևահամ
8. քաղցրահամ, ութհարկանի, երկարավիզ, նախամարդ
9. ճանապարհորդ, ջրաղաց, նավարկելի, ծիրանենի
10. աստղածաղիկ, թարգմանելի, ծովաձիուկ, որսկան

Վարժություն 31: Գտեք, թե յուրաքանչյուր տողի որ բառում է կատարվել տողասկզբում նշված ձայնավորի կամ երկհնչյունի հնչյունափոխություն:

1. Ու – քարավան, կարեվեր, կատվախոտ, մոտավոր, առյուծաձև
2. Ու – լուսավոր, ընտանիք, մտավոր, մտնել, ընչաքաղց
3. Ու – հավանոց, կավագործ, նավավար, գավաթակիր, առվակ
4. Ի – հուշարձան, ըմպանակ, այգեպան, իգական, հիանալ
5. Ի – ջրահարս, ընկուզենի, հուրհրալ, կղզյակ, ջրաղաց
6. Է (Ե) – երբևէ, վզնոց, ծռել, աղմկալի, գիսավոր
7. Է (Ե) – ճգնել, դռնապան, առէջ, ոոպեական, կիսալուսին
8. Է (Ե) – մտածել, հրագույն, գրատուն, վիպագիր, միամիտ

9. Ը – մկրատ, սրել, մտածել, մանրել, գրել
10. Ը – գնորդ, լռել, շրջանակ, ծաղրել, սրամիտ
11. Ը – տնամերձ, ծանրամարտիկ, մրգավաճառ, լուսավոր, ընկուզենի
12. ՈՒՅ – հուսահատ, սյունազարդ, մայրամուտ, տնական, հյուրընկալ
13. ՈՒՅ – կայտառ, սնամեջ, մատենադարան, կուտակել, մայթեզր
14. ՅՈՒ – գունավոր, մայրական, բուրավետ, լուսավոր, եղջերափող
15. ՅԱ – հնէաբան, բուսական, լայնեզր, գործունեություն, հնօրյա

Վարժություն 32: Դուրս գրեք շղատառ գրված բառերը, առանձնացրեք նրանցում եղած հնչյունափոխված արմատները և վերականգնեք անհնչյունափոխ ձևերը:

Ջրարծիվը տարածված է *երկրագնդի* բոլոր երկրներում՝ բացառությամբ ծայրագույն հյուսիսի: Խոշոր *թռչուն* է՝ համեմատաբար նեղ ու երկար թևերով: *Փետրավորումը* չափազանց ինքնատիպ է: Հանրապետությունում համարվում է հազվագյուտ բնադրող տեսակ. հանդիպում է զուլալ ջրերով *սնվող* ջրավազաններում, գետերում ու *լճերում*, մասնավորապես Սևանա լճում. *նշված* է նաև Մարմարիկ գետի *հովտում*: Բնադրվում է Սևանի ավազանի առափնյա լեռներում. բույնը տեղադրում է ժայռերի անմատչելի քիվերին և պատրաստում ծառերի չոր ճյուղերից: Հիմնականում լռակյաց թռչուն է. ձայնը նման է սուլոցի: Սնվում է բացարձակապես *ձկներով*: Զուկ որսում է ջրի մակերեսային շերտերում մի քանի մետր *բարձրությունից սրընթաց* դեպի որսը սլանալու միջոցով: Այդ դեպքում մինչև թևերի կեսը կարող է *սուզվել* ջրի մեջ:

Ըստ Մարտին Ադամյանի «Հայաստանի թռչունները» գրքի

Վարժություն 33: *Լույս, տուն, գիր, վեպ, թթու, բույն, գույն, տեր, այգի, գին* **բառերից յուրաքանչյուրով կազմեք երկուական բառ, որոնցից մեկում տրված բառը հնչյունափոխված լինի, իսկ մյուսում մնա անհնչյունափոխ:**

Վարժություն 34: Ո՞ր շարքերի բոլոր բառերում կա հնչյունափոխված արմատ կամ ածանց:

1. լուսավոր, կատվաձագ, այգեպան, սննդարար
2. ողջունել, սանրել, հուսադրել, գրել
3. տնային, հրակայուն, մշտադալար, մեծատառ
4. հնչյուն, մատենագիր, բնութագիր, վայրէջք
5. ծանրամարտ, ծաղկման, գրադարան, երգչախումբ
6. մտավոր, ջրածածկ, հուշարձան, շքահանդես
7. լճափ, թվանշան, շրջանցում, ջրավազան
8. ուղեբաժան, հոգեվիճակ, ծառատունկ, բնօրինակ
9. փոքրահասակ, կիսալուսին, նռնածաղիկ, շնաձուկ
10. փշատերև, հանդիսասրահ, լեզվաճյուղ, բարձրագույն

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Բառ է կոչվում այն հնչյունը կամ հնչյունախումբը, որն ունի իմաստ, ինքնուրույն գործածություն և շեշտ: Ըստ ձևի և իմաստի հարաբերության՝ բառերը լինում են հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն:

Հոմանիշ են իմաստով իրար մոտ կամ նույն իրողությունն արտահայտող բառերը, օրինակ՝ *մեծ – խոշոր – վիթխարի – հսկայական – ահագին – լայնատարած* և այլն:

Վարժություն 35: Գտեք, թե յուրաքանչյուր շարքի որ բառն է հոմանիշ տողասկզբի բառին:

1. սնապարծ – *սնահավատ, առատաձեռն, ամբարտավան, անխելք*
2. հրատարակել – *տպագրել, հաստատել, հիմնադրել, հաղորդել*
3. հատուցել – *վերադառնալ, փոխադարձել, հեռանալ, կանչել*
4. շիկնել – *զարդարել, կարմրատակել, գունատվել, դողալ*
5. մագիլ – *զարդանախշ, արմատ, ժանիք, ճիրան*
6. զարհուրել – *երկմտել, հիանալ, ապշել, սարսափել*
7. դայլայլել – *զբոսնել, թռչկոտել, գեղգեղալ, սավառնել*
8. անխաթար – *անհասկանալի, անգիտակից, անաղարտ, անեզր*
9. շեղջ – *խորխորատ, կույտ, սաղարթ, թփուտ*
10. մացառ – *գետաբերան, անդունդ, ժայռ, փշաթուփ*
11. սփոփանք – *բաղձանք, մխիթարություն, հուզմունք, խինդ*
12. վսեմ – *ստոր, ականավոր, գծուծ, վեհ*
13. պատրանք – *ցնորք, ցնծություն, հույս, սարսափ*
14. պատեհ – *անտեղի, պատշաճ, հուսալի, ստոր*
15. տկար – *հաղթանդամ, չարաբարո, անառողջ, կենսախինդ*
16. պարսավել – *կշտամբել, գովաբանել, պարգևատրել, նկատել*
17. կազդուրվել – *նիհարել, մոռանալ, շփոթվել, ապաքինվել*
18. ծանրոց – *ծանրաձող, կշռաքար, ուղեբեռ, փոստարկղ*
19. խոժոռվել – *մեծամտանալ, ժպտալ, մտածել, մռայլվել*
20. խունանալ – *լայնանալ, կծկվել, բորբոսնել, գունաթափվել*
21. հյուսն – *ներկարար, դարբին, ատաղձագործ, հողագործ*
22. ճեմել – *ճզմել, փորել, կտրատել, զբոսնել*
23. ջանք – *ալիք, զեփյուռ, կարոտ, ճիգ*
24. հարթ – *ուռուցիկ, լայն, կպչուն, ողորկ*
25. լողակ – *լողավազան, լողաթև, լողազգեստ, լողասենյակ*
26. քողարկել – *փորագրել, զարդանախշել, թաքցնել, փխրեցնել*
27. քաջալերել – *հաղթանակել, գրոհել, ներխուժել, խրախուսել*
28. ուշիմ – *անխելք, նենգ, կայտառ, խելացի*
29. բրուտ – *դարբին, նկարիչ, հյուսն, կավագործ*

30. բերկրանք – *հրճվանք, ափսոսանք, կարոտ, նախանձ*
31. հերքել – *փորել, նվագել, ժխտել, տոնել*
32. փարատել – *սփոփել, նախատել, զայրանալ, գովել*
33. ողկույզ – *տերև, արմատ, ճութ, կեղև*
34. պրպտել – *ներկայացնել, որոնել, մերժել, գտնել*
35. սկուտեղ – *մատուցարան, սփռոց, անձեռոցիկ, թավա*
36. ծորալ – *ոլորվել, հոսել, բարակել, սոսափել*
37. ծնոտ – *ծոծրակ, արմունկ, կզակ, սրունք*
38. համբավ – *վիրավորանք, հռչակ, նախատինք, կարոտ*
39. կորյուն – *գայլաձագ, աղվեսաձագ, առյուծաձագ, կատվաձագ*
40. ձիրք – *ողկույզ, զարդանախշ, քանքար, ճրագ*

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Հականիշ են իմաստով իրար հակառակ բառերը, օրինակ՝ *մեծ – փոքր, լավ – վատ, լուսավոր – մութ, գեղեցիկ – տգեղ* և այլն:

Վարժություն 36: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքի որ բառն է հականիշ տողասկզբի բառին:

1. ազատ – *համարձակ, խոհեմ, գերի, նախանձախնդիր*
2. ազնիվ – *անկեղծ, կեղծավոր, վեհ, դյուրահավատ*
3. ակնհայտ – *անհիշաչար, բարձրաշխարհիկ, սեղմ, ծածուկ*
4. աղմկոտ – *ալեծուփ, հանդարտ, փրփրուն, անախորժ*
5. աղոտ – *զվարթ, մռայլ, պայծառ, դժգույն*
6. աղտոտ – *մաքուր, ցեխոտ, հին, փրփրադեզ*
7. ամպոտ – *ջինջ, թխպամած, տիեզերական, մռայլ*
8. ապացուցում – *հիմնավորում, վերացարկում, հերքում, զեկուցում*
9. առույգ – *կենսախինդ, թույլ, կորովի, ուժեղ*
10. արատավոր – *ամբարտավան, ամբարիշտ, անբասիր, անսփոփ*
11. բազում – *համայն, բյուր, սակավ, հոծ*
12. հազվադեպ – *հաճախ, մերձակա, սակավ, երկարատև*
13. գագաթ – *խորշ, կատար, ստորոտ, անձավ*
14. գժտվել – *հանդարտվել, խելագարվել, հուսահատվել, հաշտվել*
15. դալար – *խոնավ, փթթուն, չոր, բարակ*
16. երաշտային – *ձայնային, անձրևային, աշնանային, գյուղական*
17. ըմբոստ – *կատաղի, ժլատ, խիզախ, հնազանդ*
18. ընդարձակ – *զառիթափ, ծանծաղ, անձուկ, շրջանաձև*
19. թանձր – *մածուցիկ, գոգավոր, նոսր, սորուն*
20. ժրաջան – *գծուծ, խոժոռ, ծույլ, համառ*
21. լավատես – *բարետես, հեռատես, հոռետես, կարճատես*
22. խարդախ – *ալարկոտ, հուսաբեկ, ազնիվ, անկուշտ*
23. կարծր – *կոշտ, խորդուբորդ, ողորկ, փուխր*

24. համարձակ – *ըմբոստ, երկչոտ, սրտոտ, խոհուն*
25. ձիավոր – *սուրհանդակ, նամակաբեր, հետևակ, ասպետ*
26. ճապաղ – *բոցաշունչ, անկեղծ, սեղմ, երկարատև*
27. մեներգ – *եղերերգ, օրհներգ, խմբերգ, պարերգ*
28. ողորկ – *ականակիտ, խորդուբորդ, փայլուն, զարդարուն*
29. ներողամիտ – *հմուտ, առատաձեռն, հիշաչար, մոռացկոտ*
30. ջրարբի – *ջրառատ, անջրանցիկ, անմշակ, անջրդի*
31. ստույգ – *հավաստի, երկբայական, հիմնավոր, առկա*
32. վեհանձն – *վեհերոտ, խիզախ, մռայլ, ստոր*
33. տկար – *ապիկար, վսեմ, հպարտ, առողջ*
34. ցնծալ – *աղաղակել, երկմտել, պնդել, տրտմել*
35. ուղղամիտ – *նենգ, բարի, ուշիմ, հյուրասեր*
36. ուսյալ – *ուսումնատենչ, թերահավատ, գիտակից, տգետ*
37. փառաբանել – *ներբողել, ներկայացնել, հուսադրել, պախարակել*
38. փութաջան – *անվեհեր, եռանդուն, ծույլ, գործունյա*
39. քնքուշ – *հեզ, վեհ, ինքնահավան, բիրտ*
40. օրինական – *անօրինաչափ, հավաստի, ապօրինի, հաստատուն*

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Համանուն են այն բառերը, որոնք ունեն նույն ձևը, սակայն տարբեր իմաստներ են արտահայտում, օրինակ՝ *փող* (դրամ և խողովակ), *հոտ* (բույր և ոչխարների խումբ): Համանունները լինում են՝ ա) բառային, բառաքերականական, քերականական, բ) լիակատար և մասնակի, գ) բուն, նույնահունչ, նույնագիր:

Վարժություն 37: Գտե՛ք, թե յուրաքանչյուր շարքում շղատառ գրված բառերից որն է համանուն մյուս երկուսին:

1. *աղոտ* հիշել, *աղոտ* գույներ, *աղոտ* լոլիկ
2. պատվարժան *այր,* խիզախ *այր,* ժայռապատկերներով *այր*
3. *անարգել* պատիվը, *անարգել* մարդուն, *անարգել* ճանապարհ
4. երեքով *ավել,* երկարապոչ *ավել,* փոքր-ինչ *ավել*
5. *բուն* իմաստ, *բուն* էություն, ծուռումուռ *բուն*
6. գեղեցիկ *գոլ, գոլ* ջուր, *գոլ* թեյ
7. *խոզուկ* կերակրել, *խոզուկ* պահել, *խոզուկ* հիվանդանալ
8. *ծիրանի* հյութ, արքայական *ծիրանի, ծիրանի* կորիզ
9. *կարող* ուժ, *կարող* վարպետ, *կարող* ասեղ
10. հատման *կետ,* ելման *կետ,* քաղցած *կետ*
11. թավշյա *կտոր,* մետաքսյա *կտոր,* փայտի *կտոր*
12. երրորդ *հարկ,* գույքի *հարկ,* կիսանկուղային *հարկ*
13. փոխադարձ *սեր,* կաթի *սեր,* անպատասխան *սեր*
14. ցածր *տոն,* ազգային *տոն,* եկեղեցական *տոն*

Վարժություն 38: **Գտե՛ք, թե որ բառազույգերն են բուն համանուններ, որոնք՝ նույնագիր, որոնք՝ նույնահունչ:**

1. հանդերձ (հագուստ) – հանդերձ (միասին)
2. աղտ (կեղտ) – ախտ (հիվանդություն)
3. զատիկ (եկեղեցական տոն) – զատիկ (կարծրաթև միջատ)
4. ուղտ (սապատավոր կենդանի) – ուխտ (դաշինք, խոստում, երդում)
5. աղի (չափից շատ աղ պարունակող) – աղի (աղիք)
6. այր (տղամարդ) – այր (քարանձավ)
7. հորդ (վարար, առատ) – հորդ (քո հորը)
8. սարդ (ոստայն հյուսող հոդվածոտանի կենդանի) – սարդ (քո սարը)
9. անոթ (ման) – անօդ (օդ չունեցող, օդ չպարունակող)
10. բազուկ (մարդու թևի հատված) – բազուկ (ճակնդեղ)

Վարժություն 39: **Գտե՛ք, թե որ բառազույգերն են բառային համանուններ, որոնք՝ բառաբերականական, որոնք՝ քերականական:**

1. տոն (որևէ նշանավոր իրադարձության նվիրված հանդիսությունների օր) – տոն (ձայնաստիճան)
2. ծաղկի *(ծաղիկ* գոյականի սեռական հոլովաձևը) – ծաղկի *(ծաղկել* բայի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքը)
3. անապատ (աղքատիկ բուսականությամբ չորային տարածություն) – անապատ (ճգնավորների բնակության մեկուսացած վայր, մենաստան)
4. ջրի *(ջուր* գոյականի սեռական հոլովաձևը) – ջրի *(ջրել* բայի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքը)
5. կուզ (սապատ) – կուզ (կզաքիսների ցեղին պատկանող կենդանի)
6. օդի *(օդ* գոյականի սեռական հոլովաձևը) – օդի (ոգելից խմիչք)
7. կանաչի *(կանաչել* բայի ըղձական ապառնու եզակի երրորդ դեմքը) – կանաչի (կանաչեղեն, ուտելի բանջարաբույս)
8. հյուսիս (հորիզոնի չորս կողմերից մեկը) – հյուսիս *(հյուս* գոյականի սեռական հոլովաձևը **u** հոդով)
9. ջրում *(ջուր* գոյականի ներգոյականը) – ջրում *(ջրել* բայի անկատար ձևաբայը)
10. նետեր *(նետ* գոյականի հոգնակին) – նետեր *(նետել* բայի ըղձական անցյալի եզակի երրորդ դեմքը)

Վարժություն 40: **Կազմե՛ք նախադասություններ՝ գործածելով նախորդ վարժության մեջ տրված համանունները:**

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Հարանուն են այն բառերը, որոնք ձևով նման են, սակայն իմաստով տարբեր են: Օրինակ՝ *հրավեր – հրավերք, ցուցում – ցուցմունք, զգացում – զգացմունք, այգաբաց – այգեբաց* և այլն: Հարանունները չպետք է շփոթել նույնագիր և նույնահունչ համանունների հետ: Այդ համանունների գրության կամ արտասանության ձևը նույնն է, իսկ հարանունների դեպքում երկուսն էլ տարբեր են:

Վարժություն 41: Արտագրեք՝ փակագծերում գրված հարանուններից ընտրելով իմաստով համապատասխանողը:

1. Նա միջոցառմանը մասնակցելու (հրավեր, հրավերք) էր ստացել:
2. Ոչ միայն չօգնեցին, (այլ, այլև) խանգարեցին:
3. Այդ տեսակետն ապացուցվում է (վերոբերյալ, վերաբերյալ) փաստերով:
4. Այդ (հրատարակության, հրատարակչության) լույս ընծայած գրքերը միշտ էլ բարձրորակ են:
5. Խոսքը (վերաբերվում, վերաբերում) է մրցույթի մասնակիցներին:
6. Նրա անբասիր (վարգը, վարքը) հարգանք էր առաջացնում նրա նկատմամբ:
7. Այդ հազվագյուտ գտածոն (պաշտպանվում, պահպանվում) է թանգարանում:
8. Տղան զարմանքով (թոթովեց, թոթվեց) ուսերն ու հեռացավ:
9. Վերջերս (հրապարակվեցին, հրատարակվեցին) մրցույթի արդյունքները:

Վարժություն 42: Գտեք, թե որ բառազույգերն են կազմված համանուններից, որոնք՝ հարանուններից:

1. սեր (զգացմունք) – սեր (կաթի մակերեսի թանձր շերտ)
2. ուղտ (սապատավոր կենդանի) – ուխտ (դաշինք, խոստում, երդում)
3. կառք (փոխադրամիջոցի տեսակ) – կարգ (որևէ ամբողջության մասերի հաջորդականություն, դասավորություն, դաս)
4. համար (թվակարգ) – համառ (չզիջող, հաստատամիտ)
5. հանդերձ (հագուստ) – հանդերձ (միասին)
6. հանգ (բանաստեղծական տողավերջի հնչյունական նմանություն կամ նույնություն) – հանք (բնական հումք հանելու վայր)
7. ճութ (ողկույզ) – ճուտ (թռչնաձագ)
8. որդ (ճիճու) – որթ (խաղողի վազ)
9. գոլ (ոչ շատ տաք, գաղջ) – գոլ (ֆուտբոլի խաղում գնդակը դարպասը գցելը)

Վարժություն 43: Արտագրեք և ըստ անհրաժեշտության լրացրեք հարանուն բառերում բաց թողնված տառերը:

1. Անցյալ տարի հրա...արակվեց գրողի երկերի ժողովածուն:
2. Երեկ հրա...արակվեցին հաղթողների անունները:
3. Գարնանը՝ այգ...բացին, նա այգ...բացից մինչև երեկո աշխատում էր:
4. Վերջին շրջանում երիտասարդը լուրջ չէր վերաբեր...ում իրեն հանձնարարված աշխատանքին և չկարողացավ ժամանակին ավարտել:
5. Գիտնականի խոսքը վերաբեր...ում էր վերջերս տպագրված գրքին:
6. Այդ գրքի վերջին հրատարակ...ությունը շատ որակյալ էր, և հրատարակ...ությունը այն ներկայացրեց իր աշխատանքների ցուցահանդեսում:
7. Կատաղի քամին ցն...ում էր սյունից կախված ցուցանակը:
8. Հաղթող թիմի մարզիկները ցն...ում էին, իսկ երկրպագուներից ոմանք հուզմունքից արտասվում էին:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՄԵՆԻՄԱՍՏ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏ ԲԱՌԵՐ

Ամեն մի բառ ունի իր իմաստը, որը կոչվում է բառիմաստ: Սակայն բառերի մի մասն արտահայտում է ոչ թե մեկ, այլ մեկից ավելի իմաստներ: *Միայն մեկ իմաստ արտահայտող բառերը կոչվում են մենիմաստ, իսկ մեկից ավելի իմաստներ արտահայտող բառերը՝ բազմիմաստ:* Բազմիմաստ բառերի իմաստներից մեկը լինում է առաջնային, իսկ մյուսները՝ երկրորդական՝ փոխաբերական, որոնք հասկանալի են դառնում կապակցություններում:

Վարժություն 44: Կազմեք նախադասություններ՝ տրված բառերը գործածելով փոխաբերական իմաստներով:

Ծանր, մութ, քար, երկաթե, աղվես, ջերմ, մայրամուտ, չոր, թեթև, սառը:

Վարժություն 45: Գտեք, թե յուրաքանչյուր տողի փակագծերում նշված բառերից որը փոխաբերական իմաստով կլրացնի տողասկզբի բառին:

1. գիրք *(նկարազարդ, կաշեկազմ, հոգեհարազատ, բազմահատոր)*
2. աղբյուր *(հորդաբուխ, զվարթ, սառնորակ, զուլալ)*
3. փողոց *(ասֆալտապատ, նեղ, երկար, մռայլ)*
4. տուն *(քարաշեն, հյուրընկալ, երկհարկանի, նորակառույց)*
5. շատրվան *(զվարթ, գեղեցիկ, խշշուն, հորդաբուխ)*
6. լուսանկար *(գունավոր, պատռված, գեղեցիկ, հարազատ)*
7. անձրև *(վարար, խենթ, գարնանային, հորդ)*
8. գետակ *(հորդահոս, գիժ, ծանծաղ, լեռնային)*
9. քամի *(սառը, անապատային, չարաճճի, հարավային)*
10. սրճարան *(մաքուր, ապակեպատ, նորաբաց, ուրախ)*

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզուն անընդհատ զարգանում է ու փոփոխվում, որովհետև անընդհատ զարգանում է հասարակական կյանքը: Ստեղծվում են նոր իրողություններ, դուրս են մղվում հները: Նոր իրողություններն արտահայտելու համար ստեղծվում են նոր բառեր, իսկ հնացած երևույթներն արտահայտելու համար եղած բառերն աստիճանաբար դուրս են գալիս գործածությունից: Մի շարք բառեր էլ ժամանակակից լեզվում ունեն իրենց նոր համարժեքները և այդ պատճառով են հազվադեպ գործածվում: Նոր իրողություններն անվանելու համար ստեղծված բառերը կոչվում են *նորաբանություններ*, իսկ հնացած և հազվադեպ գործածվող բառերը կոչվում են *հնաբանություններ*: Նորաբանության մի տեսակն է հեղինակային նորաբանությունը: Դրանք այն բառերն են, որոնք ստեղծում են գեղարվեստական կամ այլ երկերի հեղինակները այս կամ այն իրողությունն արտահայտելու համար:

Վարժություն 46: Գտեք հնաբանությունները:

Ճանապարհ, գահավորակ, լույս, մուտք, թիկնօթոց, կայարան, կազմ, գրասեղան, սեպուհ, աշտե, գետափ, հագուստ, մոգպետ, թատրոն, սենեկապետ, այգի, կապարճ, ցանկապատ, ուղևորություն, աշտանակ, ծաղկաման, բաբան, վաղր, պահարան, ցուցափեղկ:

Վարժություն 47: Գտեք նորակազմ բառերը:

Ծով, գեղասահք, գյուղ, քաղաք, հեծանվավազք, արիություն, վազքուղի, իմաստություն, տեսաձայնագրել, անտառ, կինոակնարկ, լույս, տեսանյութ, համակարգիչ, մատյան, վարդ, համացանց, ծաղիկ, թվայնացնել, կիսապաշտպան:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզուներն իրենց զարգացման ընթացքում բառեր են վերցնում այլ լեզուներից: Մեկ այլ լեզվից փոխառված բառը կոչվում է *փոխառություն:* Դարերի ընթացքում հայերենը ևս շատ բառեր է վերցրել այլ լեզուներից: Հնարավոր է, որ հետագայում լեզվում ստեղծվի փոխառված օտար բառի իմաստն արտահայտող բառ (կամ արդեն եղած որևէ բառ գործածվի այդ իմաստով): Այդ դեպքում փոխառված բառը վերածվում է *օտարաբանության*, օրինակ՝ *կորպուս – մասնաշենք, միկրոֆոն – խոսափող* և այլն:

Վարժություն 48: Համեմատելով ձեր իմացած այլ լեզուների (մասնավորապես ռուսերենի) հետ՝ գտեք փոխառյալ բառերը:

Տետր, ավտոբուս, ձեռք, հորիզոն, օվկիանոս, ֆուտբոլ, էստրադա, սյուն, մեդուզա, էներգիա, պղպջակ, սպորտ, լիմոնադ, հողմ, վագոն, կարտոֆիլ, չեմպիոն, քարավան, թալիսման, խալաթ, տորթ, հովիվ:

Վարժություն 49: Աջ սյունակից գտեք տրված օտար բառերի հայերեն համարժեքները:

ա)	պաուզա	նորաձևություն
	անկետա	դադար
	սխեմա	ձայնագիր
	բյուրո	խճանկար
	մոդա	արժույթ
	գաստրոլ	հարցաթերթիկ
	բուլյոն	գծապատկեր
	մոզաիկա	գրասենյակ
	վալյուտա	հյուրախաղ
	ֆոնոգրամա	արգանակ

բ) էնցիկլոպեդիա
լիդեր
լոզունգ
լոմբարդ
կասետ(ա)
միսիա
ֆորմուլա
սիստեմ
պրոֆեսիոնալ
ռեալիստ

գ) սայթ
սյուժե
կոմպլեքս
մակետ
նոստալգիա
պարաշյուտ
տենդենցիոզ
տուրիստ
օնլայն
կոմպրոմիս

դ) ֆիլիալ
ֆորում
կոնկուրս
ստարտ
պրեմիա (դրամական)
բեսեդկա
ստատուս
սուվերեն
կոմերցիոն
սերտիֆիկատ

ե) ռեժիսոր
սիմվոլիստ
մենյու (կերակուրների)
կոլեկցիա
կորպուս (շինության)
կոնտրակտ
պրինտեր
սկաներ
վազա
ատեստատ

գրավատուն
համակարգ
իրապաշտ
հանրագիտարան
առաջնորդ
կարգախոս
ձայներիզ
արհեստավարժ
առաքելություն
բանաձև

դիպաշար
կարոտախտ
միտումնավոր
զբոսաշրջիկ
փոխզիջում
կայք(էջ)
համալիր
մանրակերտ
անկարգել
առցանց

կարգավիճակ
մեկնարկ
պարգևավճար
մասնաճյուղ
համաժողով
մրցույթ
առևտրային
տաղավար
հավաստագիր
ինքնիշխան

հավաքածու
վկայական
բեմադրիչ
խորհրդապաշտ
ճաշացուցակ
սկահակ
մասնաշենք
պարտավորագիր
տպիչ
պատկերամուտ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՌԱՊԱՏՏՃԵՆՈՒՄՆԵՐ

Հնարավոր է, որ ոչ թե բառը վերցվի ուրիշ լեզվից, այլ նրա կազմության կաղապարը, այսինքն՝ կատարվի *բառապատճենում*, օրինակ՝ *самолёт – ինքնաթիռ, пулемёт – գնդացիր* և այլն:

Վարժություն 50: Աջ սյունակից գտեք ձախ սյունակի յուրաքանչյուր բառին համապատասխանող բառապատճենումը:

1. подразделение	1. կիսապաշտպան
2. химчистка	2. հակագազ
3. носорог	3. ռնգեղջյուր
4. медсестра	4. ինքնասպասարկում
5. полузащитник	5. գնդացիր
6. пулемёт	6. բուժքույր
7. самообслуживание	7. քիմմաքրում
8. гололёд	8. ինքնաթիռ
9. самолёт	9. ստորաբաժանում
10. противогаз	10. մերկասառույց

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Բառակազմության մեջ ուսումնասիրվում են բառերի կազմության օրինաչափությունները: Բառի հիմնական իմաստը ձևավորող ու արտահայտող մասը կոչվում է *արմատ:* Այն մասնիկը, որն ավելանում է հիմքին և նոր բառ կազմում, կոչվում է *ածանց: Ա* ձայնավորը, որն իրար է կապում բաղադրյալ բառի տարբեր բաղադրիչները, կոչվում է *հոդակապ:* Այն մասնիկը, որն ավելանում է բառին և հաղորդում է քերականական տարբեր իմաստներ, կոչվում է *վերջավորություն:*

Վարժություն 51: Ո՞ր բառերում հոդակապ չկա:

Ալրաղաց, արձակագիր, բազմազգ, բառարմատ, բեռնատար, բերքառատ, բնավեր, գրատախտակ, զբոսայգի, ինքնաթիռ, լայնահուն, լայնարձակ, խաղասաց, ծաղկման, ծովափ, հաղթանդամ, հանրախանութ, հերարձակ, հողածին, հողմաղաց, հորդառատ, հուշարձան, ձյունապատ, ձյունառատ, մայրաքաղաք, մանուշակագույն, մարզադաշտ, մեծարժեք, նկարազարդ, նույնարմատ, սրճաղաց, սրտամոտ, ցլամարտ, քչախոս:

Վարժություն 52: Գտեք, թե յուրաքանչյուր շարքի որ բառում չկա տողասկզբում նշված ածանցը:

1. ներ – ներմուծում, ներում, ներկրում, ներաճում
2. ներ – ներգծում, ներշնչում, ներգործություն, ներկանյութ

3. հակ – հակասություն, հակադարձ, հակիրճ, հակադիր
4. համ – համապատասխան, համեղ, համատարած, համազգեստ
5. համ – համերգ, համազարկ, համադրել, համակել
6. համ – համարակալել, համակցել, համատեղել, համալրել
7. նախ – նախատիպ, նախրապան, նախասրահ, նախօրոք
8. ան – անվնաս, անագ, անկեղծ, անտուն
9. ան – անգիտակ, անկայուն, անանուխ, անանուն
10. ան – անկյուն, անգիր, անբիծ, անխելք
11. դժ – դժգոհ, դժպատեհ, դժբախտ, դժվար
12. ապ – ապաշնորհ, ապակի, ապաբախտ, ապազոդում
13. տ – տգեղ, տոհմ, տկար, տգետ
14. ին – լռին, վերին, դարբին, միջին
15. ուկ – ձիուկ, գայլուկ, գիրուկ, թմբուկ

Վարժություն 53: Յուրաքանչյուր տողի բառերից ընտրեք մեկ արմատ և տողասկզբի ածանցով կազմեք բառ (առանց երկրորդ ածանցի):

1. ություն – անհոգի, անկայուն, հասուն, լիաբերան
2. իչ – մասուր, ինքնուսույց, մարզպան, գրախանութ
3. ուկ – բամբակե, ճնճղապաշար, անգիր, մակբայ
4. իկ – անմարդկային, շողարձակում, թռչուն, երթուղային
5. ային – ազնվացեղ, թաղար, առաջնորդ, հոսանք
6. ակի – բեռնակիր, ինքնաեռ, խճուղի, մասնաբաժին
7. գին – քաղաքագլուխ, անալի, ջերմաչափ, թանկարժեք
8. ուն – քարաղ, թթվասեր, ինքնաթիռ, շրջայց
9. իք – իրիցկին, քարաղ, արժան, չարություն
10. որդ – տեսաերիզ, միջնաբերդ, առաջնային, վարչական

Վարժություն 54: Յուրաքանչյուր շարքում գտեք այն բառը, որը կազմված է միայն երկու արմատից:

1. բարձրաշխարհիկ, ջերմեռանդորեն, դասագիրք, շքերթ
2. հեռախոսավար, շաքարավազ, վարքագիծ, հոսանքակիր
3. նորընտիր, նախահայր, գրչատուփ, հանքավայր
4. գերհզոր, ջրհոր, կամավոր, համատեղ
5. արտասանդուղք, խնդրագիրք, անշուք, վազանց
6. ճոպանուղի, բնակչուհի, անցանկալի, վառելանյութ
7. շնորհալի, վազքուղի, փայտփորիկ, չվերթ
8. ճանապարհորդ, արտամղում, մայրուղի, սառցարան
9. հեռագրասյուն, խոսքաշար, հյուրանոց, ծովափ
10. շարադրանք, պղնձահանք, մայրցամաք, նախավերջին

Վարժություն 55: Տրված բայերի արմատներից տարբեր ածանցներով կազմեք մեկական գոյական:

ա) աշխատել, նկարել, բուժել, հոգնել, սպասել
բ) գրել, երգել, շարժել, հնձել, վազել
գ) ջարդել, մաքրել, պատմել, կախել, հուզել

Վարժություն 56: Կազմեք առնվազն երեքական բառ *ան-, ապ-, տ-, դժ-, չ-* **ժխտական նախածանցներով:**

Վարժություն 57: Տրված բառերից առանձնացրեք *-յուն* **ածանցն ունեցողները:**

Քաջություն, արյուն, դոփյուն, մայուն, ձյուն, հնչյուն, պայթյուն, սյուն, անկյուն, շառաչյուն, մեծություն, ճռվողյուն:

Վարժություն 58: Յուրաքանչյուր շարքում գտեք ածանց ունեցող մեկ բառ:

1. գրատախտակ, դասագիրք, վիպագիր, գրասեղան
2. երկանիվ, ազգանուն, փշատերև, երկհարկանի
3. հյուրասենյակ, խճուղի, այլազգի, մարզադաշտ
4. հացթուխ, պղնձապատ, մրգատու, բանջարեղեն
5. բարձրաճիչ, կազմակերպիչ, ելևէջ, բարձրահարկ
6. կավահող, ծառատունկ, գյուղամեջ, ռադիոլսող
7. զբոսայգի, գեղատես, ամառանոց, սյունազարդ
8. գիտարշավ, զբոսանք, ծյունածածկ, լեռնալանջ
9. ճանապարհ, ծանրամարտ, հուշարձան, սրճարան
10. հողածածկ, դեղատուն, ծովեզրյա, խաղափուլ

Վարժություն 59: Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական նախածանց և արմատ՝ կազմեք նախածանցավոր վեց բառ (անհրաժեշտության դեպքում նախածանցը կապակցեք հոդակապով):

անդր	կատարյալ
գեր	կապոց
թեր	կշռաքար
համ	բայածանց
մակ	լեռնաշխարհ
շաղ	ստորակարգ

նախ	լայնարձակ
դժ	գեղատես
արտ	ցածրաձայն
բաղ	ճաշարան
բաց	բախտավոր
տ	սահմանամերձ

փոխ	հաճելի
մակ	տանջամահ
տ	սևերես
անդր	գծավոր
ց	բևեռաղվես
պար	արքայական

մակ	ուժեղ
գեր	կամեցող
ստոր	ձկնաբուծարան
ապ	բարձրակարգ
չ	բախտավոր
ներ	հիմնախնդիր

արտ	մշտական
ընդ	անվանական
թեր	այժմեական
դեր	կղզիաբնակ
առ	անկարգ
ենթ	սովորական

ընդ	գրական
բաղ	հպանցիկ
մակ	ձայնակցել
նախ	մշտական
ապ	դիպված
ընդ	ցուցանմուշ

Վարժություն 60: Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական արմատ և վերջածանց՝ կազմեք վերջածանցավոր վեց բառ:

ձկնորս	ացու
անփույթ	ք
ջրահարս	որդ
կապտականաչ	ոց
մրգավաճառ	եղեն
խորամուխ	կոտ

զբոսայգի	ացի
քաղցրահամ	ուն
մայրուղի	եղ
մայրաքաղաք	(ա)վոր
ցայտաղբույր	ուկ
թզաչափ	ստան

անակնկալ	գին
մեղրածոր	ք
ներուժ	ուն
գրասեղան	եղեն
ոսկեգույն	ու
օրավարձ	ոց

մեղմասահ	ակ
ալեբախում	իք
քարաղ	որեն
համերաշխ	ի
փառամոլ	ալի
մրգահյութ	ք

փշատերև	ացու
սրճագույն	երեն
ջրահարս	արան
հայորդի	ք
մեծամիտ	իք
կեղծավոր	ոտ

խաչբառ	որդ
երկաթագիր	վածք
թանկագին	արան
նրբահյուս	ույթ
մրցանակ	ույք
հաճելի	յա

Վարժություն 61: Յուրաքանչյուր սյունակի ո՞ր բառը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

ա) 1. սկեսրայր
2. այրական
3. քեռայր
4. քարայր

բ) 1. սերուցք
2. հայրենասեր
3. սիրավեպ
4. սիրահար

գ) 1. պաշտոնաթող
2. աչքաթող
3. քարակոթող
4. գործաթող

դ) 1. հնգատող
2. վերջնատող
3. հեռուստադիտող
4. միատող

ե) 1. կարճափող
2. եղեգնափող
3. խոսափող
4. շոշափող

զ) 1. կիսադեմ
2. թխադեմ
3. եղեմ
4. ժպտադեմ

է) 1. դողդողալ
2. սրտադող
3. անվադող
4. ահուդող

ը) 1. բուսայուղ
2. զամբյուղ
3. քսայուղ
4. վարդայուղ

թ) 1. մարզային
2. մարզական
3. մարզահագուստ
4. մարզադաշտ

ժ) 1. սակագին
2. թանկագին
3. փրկագին
4. ջերմագին

ժա) 1. օրացույց
2. այսօր
3. օրորոց
4. օրակարգ

ժբ) 1. մեծատառ
2. սկզբնատառ
3. մեսրոպատառ
4. լեղապատառ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հապավում է կոչվում այն բառը, որը կազմված է մեկից ավելի բառերի (բառակապակցության) կրճատման միջոցով: Հապավումներ կազմելու համար կարող են վերցվել բառերի տարբեր մասեր, և ըստ դրա էլ հապավումները լինում են *տառային, բառամասային* (կամ *վանկային)* և *խառը:*

Տառային են այն հապավումները, որոնք կազմվում են կրճատվող բառերի սկզբնատառերով, օրինակ՝ ՀՀ (Հայաստանի Հանրապետություն):

Բառամասային (վանկային) են այն հապավումները, որոնք կազմվում են կրճատվող բառերի վանկերից կամ մասերից, օրինակ՝ *ուսմասվար* (ուսումնական մասի վարիչ), *դասղեկ* (դասարանի ղեկավար):

Խառն են այն հապավումները, որոնց կազմում կարող են լինել և՛ կրճատված բառերի սկզբնատառեր, և՛ վանկեր կամ ամբողջական արմատներ ու բառեր, օրինակ՝ *շինհրապարակ* (շինարարական հրապարակ):

Վարժություն 62: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. հապավումների մի մասը լինում է՝
   ա) ածանցային բ) տառային գ) տարարմատ
2. հապավումներից հետո՝
   ա) դրվում է կետ բ) չի դրվում կետ գ) դրվում է փակագիծ
3. տառային հապավումները կազմվում են՝
   ա) կրճատվող կապակցության բառերի սկզբնատառերով
   բ) կրճատվող կապակցության բառերի առաջին վանկերով
   գ) կրճատվող կապակցության բառերի առաջին և վերջին տառերով

Վարժություն 63: Յուրաքանչյուր շարքում գտեք հապավումը:

1. ջրհոր, շաքարավազ, շինհրապարակ, ջերմաչափ
2. դասարան, գրատախտակ, դասագիրք, դասղեկ
3. տարեվերջ, ուսմասվար, դասամատյան, մատենադարան
4. բարձրադիր, ուսադիր, զինգրքույկ, զորամաս

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Լեզվում կան կայուն կապակցություններ, որոնք փոխաբերական իմաստ ունեն, օրինակ՝ *սար ու ձոր ընկնել* կապակցությունը նշանակում է *որոնել, թափառել:* Այսինքն՝ կապակցության բառերը միասնաբար մի նոր իմաստ են արտահայտում: *Վերաիմաստավորված կայուն կապակցությունները կոչվում են դարձվածքներ:* Դարձվածքների տեղին գործածությունը հարստացնում ու գեղեցկացնում է խոսքը:

Վարժություն 64: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. դարձվածք է՝
   ա) ցանկացած բառակապակցություն
   բ) ցանկացած կայուն բառակապակցություն
   գ) կայուն և վերաիմաստավորված կապակցությունը
2. դարձվածքները գործածվում են՝
   ա) միայն գրական լեզվում
   բ) միայն խոսակցական լեզվում
   գ) և՛ գրական, և՛ խոսակցական լեզուներում
3. դարձվածքների ճիշտ և տեղին գործածությունը՝
   ա) խոսքը դարձնում է դիպուկ ու պատկերավոր
   բ) սահմանափակում է հականիշների գործածությունը
   գ) խոսքը դարձնում է միօրինակ

Վարժություն 65: Գտեք յուրաքանչյուր դարձվածքի ճիշտ բացատրությունը:

1. ականջ կախել – 1. քնել, հանգստանալ. 2. լսել, անսալ
2. ամպերում սավառնել – 1. մահանալ. 2. երազներով տարվել
3. անուն հանել – 1. հռչակ ձեռք բերել. 2. մեկին կանչել
4. աշխարհով մեկ անել – 1. ամենուրեք տարածել. 2. սաստիկ ուրախանալ
5. աշխարհով մեկ լինել – 1. սաստիկ ուրախանալ. 2. թափառել
6. աչքը քաղցր – 1. բարեհամբույր, բարյացակամ. 2. ագահ, անկուշտ
7. աչքի առաջ ունենալ – 1. հսկել. 2. նկատի ունենալ
8. աչքերը չորս անել – 1. նախանձել. 2. զգաստանալ, լարված հետևել
9. ավազի վրա տուն շինել – 1. ծովափին տուն շինել. 2. անհիմն գործ ձեռնարկել
10. ափերից դուրս գալ – 1. չափն անցնել. 2. սաստիկ զայրանալ, հուզվել
11. բոլոր կամուրջներն այրել – 1. ճակատամարտում հաղթել. 2. նահանջի ճանապարհ չթողնել
12. լույս սփռել – 1. գիշերելու տեղ տալ. 2. բացահայտել, պարզաբանել
13. խոփը քարին առնել – 1. հողը վարել. 2. դժվարության հանդիպել
14. ձուկը գլխից բռնել – 1. հմուտ որսորդ լինել. 2. գործն էականից սկսել
15. սառույցը շարժվել – 1. գարունը գալ. 2. գործը տեղից շարժվել

Վարժություն 66: Գտեք, թե յուրաքանչյուր շարքի որ կապակցությունը չի կարող գործածվել ուղղակի (ոչ դարձվածքային) իմաստով:

1. մատների արանքով նայել, շարքից դուրս գալ, խելքը կորցնել
2. բեմից իջնել, օրը տարի դառնալ, ձեռք տալ
3. ջուրն ընկնել, դիմակը պատռել, մտքից գցել
4. դռները բացել, մտքի թելը կտրվել, ճանապարհը փակել

5. մեռյալ ժամ, բաց գիրք, դատարկ տակառ
6. պատիվը գետնին տալ, հաց կտրել, ոտքի տակ ընկնել
7. աչքը փակել, սիրտը զբաղված լինել, ճանապարհից շեղվել
8. ձուկը գլխից բռնել, ձեռք բարձրացնել, աչքը կշտանալ
9. մեջտեղ բերել, միտքը ծռել, ջուրը պղտորել
10. սրտի ճրագը մարել, պտուղներ քաղել, քար կտրել

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բառարանագրությունը բառագիտության այն բաժինն է, որում ուսումնասիրվում են բառարանների տեսակները և բառարան կազմելու սկզբունքները: Բառարանները լինում են *հանրագիտական* և *բանասիրական (լեզվաբանական)*: Հանրագիտական բառարաններում ներկայացվում, բացատրվում է բառի նշանակած առարկան կամ երևույթը, իսկ բանասիրական բառարաններում մեկնաբանվում են բառի լեզվական հատկանիշները:

Վարժություն 67: Պատասխանեք հարցերին:

1. Ինչո՞վ են տարբերվում հանրագիտական և բանասիրական բառարանները:
2. Հանրագիտական ի՞նչ բառարաններ գիտեք:
3. Ի՞նչ տեսակների են լինում բանասիրական բառարանները:
4. Բանասիրական ի՞նչ բառարաններ գիտեք:

Վարժություն 68: Ընտրեք ճիշտ պատասխանները:

Հանրագիտական բառարաններում՝

ա) մեկնաբանվում է բառի կազմությունը

բ) մեկնաբանվում է բառի արտահայտած առարկան, երևույթը

գ) ներկայացվում են բառի քերականական հատկանիշները

Վարժություն 69: Գտեք, թե որ շարքերում են բառերը դասավորված այբբենական հաջորդականությամբ:

1. թվանիշ, թվանշում, թվատեսակ, թվարկում, թվացուցակ
2. լուսամուտ, լուսամփոփ, լուսային, լուսան, լուսանկար
3. ծովափրփուր, ծովեզրյա, ծորակ, ծորալ
4. հանգիստ, հանդարտ, հանճար, հանքանյութ, հաշվեկշիռ
5. մշտավառ, մշուշախառն, մոխրակույտ, մոմագործ, մոմակալ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Ժամանակակից հայերենում կա տասը խոսքի մաս՝ ***գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն:***

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱԽՏԱԿ



ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Գոյական են կոչվում այն բառերը, որոնք անվանում են առարկա, հասկացություն, օրինակ՝ *տուն, քար, երաժշտություն, ընկերություն, հարգանք* և այլն: Գոյականներն ունեն քերականական երեք հատկանիշ՝ թիվ, առում և հոլովում:

Վարժություն 1: Գտեք, թե յուրաքանչյուր շարքի որ բառը գոյական չէ:

1. ավազան, ծիածան, էժան, իշխան
2. նամականի, մատանի, առածանի, պիտանի
3. բնակիչ, վարակիչ, ծովանկարիչ, կրակխառնիչ
4. ժողովածու, քնարերգու, վերարկու, ահարկու
5. ճաշատեսակ, ենթատեսակ, տառատեսակ, յուրատեսակ
6. սկուտեղ, ուխտատեղ, հանճարեղ, գոտկատեղ
7. ծավալ, հախճասալ, մահճակալ, անհյուրընկալ
8. հյութ, անհյութ, մրգահյութ, նարնջահյութ
9. երկթերթ, հարցաթերթ, պսակաթերթ, օրաթերթ
10. ամսավճար, հավելավճար, վարձավճար, անվճար

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Գոյականի թիվը

Գոյականի թիվը ցույց է տալիս գոյականի արտահայտած առարկաների քանակը: Կա երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա և արտահայտվում է առանց վերջավորությունների, օրինակ՝ *տուն, գիրք, սեղան* և այլն: Հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ, օրինակ՝ *տներ, գրքեր, սեղաններ* և այլն: Հոգնակի թիվը կազմվում է *-եր, -ներ, -իկ, -ք, -այք, -ինք* վերջավորություններով, ինչպես՝ *քարեր, գրիչներ, մարդիկ, քաղաքացիք, կանայք, անձինք:*

Վարժություն 2: Գտեք, թե յուրաքանչյուր շարքի որ չորս բառերի հոգնակին է կազմվում *-եր* վերջավորությամբ:

1. արգելաշերտ, նախագիծ, շոգենավ, պատմագիր, ուղեկցորդ, բառախաղ
2. կայսր, որթատունկ, հորեղբայր, հաստատություն, գետաքար, բառատետր
3. ծաղկեփունջ, հակագրոհ, լուսանկարչատուն, վագր, հետնորդ, հեռագրասյուն
4. քարայծ, գործարան, տանտիկին, ձայնալար, ճաշացանկ, խաչքար
5. ձեռնարկ, ձյունաշերտ, գարեհաց, մայրամուտ, աղբարկղ, բազրիքաճաղ
6. առաջարկ, անտառաշերտ, անվադող, նամակաբեր, անցագիր, ավտոմաս
7. սուսերակիր, ձեռագիր, ձկնորս, ճամփեզր, մայթաքար, շրջանագիծ
8. թռչնորս, զորասյուն, երկնաքար, շոգեքարշ, ավազահանք, սահադաշտ
9. կոմբայնավար, լաստանավ, ինքնաթիռ, խոտաբույս, էլեկտրագիծ, այցետոմս

10. արվեստագետ, ջրաներկ, մարզադաշտ, միջադեպ, նշաձող, ձեռնարկ
11. խաղակես, մեղրահաց, նշխար, ներկանյութ, ոտնաձայն, շրթունք
12. որսատեղ, ջրկիր, անվաճաղ, ազդանշան, ամսաթիվ, ծրագիր
13. քայլերգ, փոստարկղ, ջրափոս, ծանրորդ, փոշեկուլ, ջրաշիթ
14. սառցաջուր, ռադիոլար, վանահայր, սուսերակիր, պարթև, ժանր
15. մեծատուն, բաղադրամաս, ժամացույց, լեռնալանջ, ծննդավայր, ծաղկաթերթ
16. գիսաստղ, հասցեատեր, ճեմասրահ, հիմնապատ, մենատնտես, ձորալանջ
17. բառացանկ, նախանշան, այցետոմս, նորաբնակ, միջնաբերդ, մրցագորգ
18. ամսագիր, մատենագիր, անձրևաշիթ, լողաձև, գահակալ, յուղաներկ
19. աստղաբույլ, խմբերգ, խաչապաշտ, պողպատաշերտ, դեղատուն, գրասեղան
20. առաքավճար, խճաքար, սառցադաշտ, խոսակից, ցախատուն, տանտեր

Վարժություն 3: Գտեք, թե յուրաքանչյուր շարքի որ չորս բառերի հոգնակին է կազմվում *-ներ* վերջավորությամբ:

1. երկաթագործ, վերահաշվարկ, ալեհավաք, ուսապարկ, զուգապար, գազատար
2. թղթակից, գրագիր, թռչնաբույծ, դասաժամ, դիմագիծ, ծովանկար
3. հատապտուղ, բեռնակիր, գետաձի, հայագետ, մեղվապահ, մոլախոտ
4. մեդալակիր, հիմնաքար, սայլապան, սրբագրիչ, ջրաբույս, ջրկիր
5. ոտնաձայն, խմբավար, վիրաբույժ, տառասխալ, ուսադիր, խմբերգ
6. բեռնատար, տուֆահանք, ջրաղացաքար, ջրատար, որկրամոլ, գրանշան
7. ստուգարք, ստախոս, պայտամեխ, պտղահյութ, գեղանկար, բուսաբույծ
8. ծաղրանկար, աշխատավայր, բարեկամ, անկյուն, կայծքար, կենսագիր
9. կահույք, ճաշասրահ, ձիատեր, արձագանք, բաժնետոմս, արվեստագետ
10. մկանացավ, շեփորահար, նորեկ, ավտովթար, ածխակույտ, ճարտարապետ
11. ձիթապտուղ, տեղաբնակ, ձյունակույտ, ոոպեավճար, ցուցափեղկ, քարհատ
12. բազկաթոռ, ամսաթիվ, ակնթարթ, գինեթաս, գնդացիր, ննջարան
13. բառահիմք, զինագործ, թիավար, ձիթաբլիթ, ճաղաշար, ձկնաբույծ
14. մեդալակիր, խաղաքարտ, խեցեգործ, խոսակից, կիլոմետր, հերթապահ
15. խխունջ, ծամկալ, կոճակատուփ, հարթավայր, հաշվարկ, հիմնարկ
16. միջնորդ, յուղաբլիթ, շեմաքար, որմնադիր, հողագործ, շրջանագիծ
17. ջրկիր, սրնգահար, տարեկից, ոտնահետք, սահմանապահ, փակագիծ
18. սակագին, մեքենավար, մաքսանենգ, որսաշուն, ջրաղացպան, տիեզերագնաց
19. ձկնաբույծ, հուշաքար, հրթիռ, ճեմասրահ, տնտեսաձև, վարձավճար
20. գործավար, հանքափոր, գեղագետ, գիսաստղ, մայթաքար, փողկապ

Վարժություն 4: Որոշեք, թե որ շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում *-ներ* վերջավորությամբ:

1. կայծակ, մարզասրահ, մեծատառ, սեղան
2. հանքափոր, համալսարան, պահապան, միջնապատ
3. բազկաթոռ, աշակերտ, գրիչ, նկարիչ
4. տղամարդ, դերասան, լուսարձակ, լուսան

Վարժություն 5: Որոշեք, թե որ շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում *-եր* վերջավորությամբ:

1. տուն, գարուն, բույն, սյուն
2. տառ, ծառ, բառ, սար
3. հայր, մայր, եղբայր, քույր
4. հույս, բույս, լար, վարազ

Վարժություն 6: Դուրս գրեք հոգնակի թվով գոյականները և առանձնացրեք հոգնակիի վերջավորությունները:

ա) Խշշաց անձրևը մայթերի վրա, տանիքների վրա, ցուցանակների վրա. մի ուսանող ընդհատեց պարապմունքն ու մոտեցավ պատուհանին: «Սկսվեցին անձրևային եղանակները»,– մտածեց նա և հետո մտածեց, որ նա չի գա: Բայց հինգ րոպե հետո նախասենյակից լսվեցին մոտեցող մանր ոտնաձայներ. ներս մտավ տասնևութ տարեկան, սև աչքերով մի աղջիկ. իսկ ուսանողն ուրախ-ուրախ մոտեցավ նրան ու հանեց աղջկա՝ անձրևից թրջված վերարկուն:

Գուրգեն Մահարի

բ) Անանուխը անհիշելի ժամանակներից ի վեր հայտնի է եղել մարդկությանը: Հին Հռոմում հյուրընկալությունների ժամանակ հյուրասենյակը սրսկել են անանուխի ջրով, սեղանները սրբել են բույսի տերևներով: Միջնադարում գտնում էին, որ անանուխի հոտը ակտիվացնում է ուղեղի աշխատանքը, և առաջարկում էին ուսանողներին կրել անանուխի պսակներ:

Որպես բուժական միջոց՝ անանուխը բարձր է գնահատվել հայ նշանավոր բժիշկների կողմից: Այսպես՝ Մխիթար Հերացին, «քարանուխ» անվանելով, հավասարապես օգտագործել է բույսի մշակովի և վայրի տեսակները որպես թարմացնող և ցավազրկող միջոց:

Ըստ Արշավիր Թորոսյանի «Հայաստանի դեղաբույսերը» գրքի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Որոշյալ և անորոշ առումներ

Գոյականի առումը ցույց է տալիս գոյականի հայտնի կամ անհայտ լինելը տվյալ իրադրությունում: Առանձնացվում են որոշյալ և անորոշ առումները: Որոշյալ առումով գոյականները ցույց են տալիս տվյալ դեպքում հայտնի առարկաներ, իսկ անորոշ առումով գոյականները՝ անհայտ, անորոշ առարկաներ:

Անորոշ առումն արտահայտվում է առանց մասնիկների (օրինակ՝ *գիրք*), հաճախ էլ՝ *մի* անորոշ դերանվան զուգակցմամբ (օրինակ՝ *մի գիրք)*: Որոշյալ առումն արտահայտվում է *ն, ը* հոդերի միջոցով (օրինակ՝ *գիրքը, գիրքն*):

Ը և *ն* հոդերից բացի՝ կան նաև *ս* և *դ* հոդերը, որոնք արտահայտում են պատկանելություն *(Գրիչս կոտրվեց),* դիմորոշություն *(Աշակերտներս պետք է լավ սովորենք)*, ցուցականություն *(Օրերս վերադարձել է արտասահմանից):*

Վարժություն 7: Սյունակներով դուրս գրեք որոշյալ և անորոշ առումներով գոյականները:

Գանձեր է փրկել բյուրավոր
Իր ազգը սիրող Խորենացին,
Հասցրել դարն այս լուսավոր
Իր ազգը սիրող Խորենացին:
Կկորչեր Վահագնը հուրհեր,
Լայնալիճ աղեղը Հայկի,
Թե լիներ անմիտ ճգնավոր
Իր ազգը սիրող Խորենացին:

Համլետ Կարճիկյան

Մեր ծիծաղների ու մեր լացի մեջ,
Հանապազօրյա մեր երազներում
Մենք բնակվում ենք նույնքան մերկ, մաքուր,
Ինչպես վայրենի նախնիները մեր՝
Բարկ խարույկների ջերմությամբ լեցուն
Կամ ցուրտ հողմերի, ձնաբքի մեջ:
Ու թե մենք այսօր ամեն մի երգում
Նոր հնչյուններ ենք անվերջ որոնում
Ու ամեն վայրկյան ջանում նոր լույսով
Ցողել կոպտացող հոգիները մեր,
Եկեք՝ միշտ հիշենք, որ, այնուհանդերձ,
Հին արեգակն է մնում առաջնորդ նոր գարուններին,
Իսկ ծաղիկները չեն զգում բնավ պճնանքի կարիք...

Լևոն Բլբուլյան

Վարժություն 8: Յուրաքանչյուր շարքում գտեք այն բառը, որն անորոշ առումով է:

1. քամին, ծերունին, բարդին, աղախին
2. կենդանին, փոշին, մարգագետին, ընկուզենին
3. կատուն, ծառաբուն, մեղուն, ժողովածուն
4. քնարերգուն, նախալեզուն, իրիկուն, վերարկուն
5. տեղանուն, թեկնածուն, թոշակառուն, եղջերուն
6. ռադիոն, երեկոն, երգեհոն, մետրոն
7. բազեն, պատճեն, ափսեն, հասցեն
8. մուրաբան, լեռնաշղթան, գավազան, շուկան
9. փասիան, շոգեմեքենան, քամանչան, փոխարքան
10. փիլիսոփան, նորափեսան, քահանան, հուշարձան

Վարժություն 9: Որոշեք, թե որ հոդերն են արտահայտում դիմորոշություն, որոնք՝ ստացականություն, որոնք՝ ցուցականություն, որոնք՝ որոշյալություն:

1. – Այգուս ծառերը պետք է ջրեմ,– ասաց ծերունին:
2. – Բոլորս պետք է մասնակցենք միջոցառմանը,– ասաց դասարանի ավագը:
3. Եղբայրս օրերս է վերադարձել գործուղումից:
4. – Մենք՝ մրցույթի հաղթողներս, օրերս կհանդիպենք ընկերոջս, որը նվաճել էր նախորդ մրցույթի գավաթը:
5. Ծառի ճյուղին նստած ճնճղուկը ուրախ ճռվողում էր:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Հոլովում

Այլ բառերի կապակցվելու և քերականական տարբեր իմաստներ արտահայտելու համար գոյականները որոշակի ձևերով փոփոխվում են: Գոյականի կապակցական փոփոխությունների համակարգը կոչվում է հոլովում, իսկ փոփոխման ամեն մի ձև՝ հոլով: Գոյականն ունի 7 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական:

Ըստ սեռական հոլովի կազմության՝ առանձնացվում են հոլովումները: Կա 8 հոլովում՝ **ի, ու, վա, ան, ոջ, ց, ա, ո,** օրինակ՝ *գրքի, այգու, օրվա, շարժման, ընկերոջ, Արամենց, տան, հոր*: **Ա** և **ո** հոլովումները ներքին են, մյուսները՝ արտաքին:

Վարժություն 10: Յուրաքանչյուր շարքում գտեք նշված հոլովումներին պատկանող բառը:

1. Ան – տուն, մեծություն, դուռ, սյուն, լիություն
2. Ան – ձյուն, անկյուն, լեռ, հաջողություն, անուն
3. Ա – շուն, գառ, թոռ, մուկ, ուսում
4. Վա – կիրակի, ամիս, դար, ուրբաթ, երեկո
5. Ու – այգի, առու, կաղին, պապ, թոռ

Վարժություն 11: Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման.

1. դուռ, շուն, պատմություն, տուն
2. ծնունդ, զվարթություն, աշուն, լեռ
3. ավյուն, արյուն, բարություն, Սևան
4. ձյուն, անուն, միություն, սյուն

Վարժություն 12: Յուրաքանչյուր շարքում գտեք այն բառը, որը նշված հոլովով չէ:

1. ուղղական – այգին, ծերունին, քամին, ճյուղին
2. սեռական – քանոնի, դպրոցի, նռնենի, ձեռքի
3. տրական – մարդուն, կղզուն, ձիուն, ծաղրածուն
4. հայցական – ծիածան, հրացան, լեռան, պատվանդան
5. բացառական – լույսից, դրկից, սարից, շենքից
6. գործիական – հանձնաժողով, հեռախոսով, մուրճով, փողոցով
7. ներգոյական – երկնքում, ցուցակում, պատմվածքում, վերանորոգում

Վարժություն 13: Դուրս գրեք գոյականները՝ խմբավորելով ըստ հոլովների:

Թափառում ենք փողոցներում՝
Ես քո սիրով, դու՝ ուրիշի,
Այրվում ենք մենք հրդեհներում՝
Ես քո հրով, դու՝ ուրիշի...

Կարոտում ենք, խնդում, տխրում՝
Ես քո խոսքով, դու՝ ուրիշի,
Սուզվում քաղցր երազներում՝
Ես քո տեսքով, դու՝ ուրիշի...

Էհ, ի՜նչ արած, բախտը խռով
Թող աշխարհում մեզ չհիշի,
Միայն ապրենք մենք սիրելով՝
Թեկուզ ես՝ քեզ, դու՝ ուրիշի...

Միլվա Կապուտիկյան

Մարմանդ, մարմանդ լույսը հիմա
Սրսփում է աշունով,
Գետերն արդեն նվազել են
Ու գնում են փափրուկ, փափրուկ շրշյունով:
Ու բարդին է իր ստվերը
Արագիլի չված կողմը երկարել...
Լուռ է հիմա, ամեն ինչ լուռ.
Ես չեմ ուզում, ամ՛ի, չեմ ուզում՝
Լռությունն այս խանգարեն:

Լյուդվիգ Դուրյան

Ասֆալտին տրորված մի ծաղիկ
Ծնչահեղձ՝ ձորեր է երազում,
Քարափին ծվարող հավքերի
Երգերի պատրանքը հոգու մեջ:
Մի փոքրիկ ցայտաղբյուր զովաշուրթ
Իզուր է կարկաչում՝ եկ ինձ մոտ...
Ասֆալտին տրորված մի ծաղիկ
Մեռնում է ձորերի կարոտից...

Լիպարիտ Մարգսյան

Վարժություն 14: Գրեք *ի, ու, վա, ան, ոջ, ց* **արտաքին և** *ա, ո* **ներքին հոլովումներին պատկանող երեքական գոյական:**

Վարժություն 15: Արտագրեք նախադասությունները՝ փակագծերում տրված գոյականները դնելով քերականական անհրաժեշտ ձևերով:

ա) 1. ...՝ ծառի տակ, դրված էր ... փայտից պատրաստված մի սեղան, որը ծածկված էր շագանակագույն ...:

(սփռոց, ընկուզենի, բակ)

2. Նա հիշում էր, որ որևէ նոր գրքի ... հետո ինքը և իր բոլոր .... քննարկում էին գրքի արժանիքները, վերլուծում ..., թվարկում թերությունները:

(դասընկեր, հրատարակում, գաղափար)

3. Էքսկուրսավարը ... ցույց էր տալիս հինավուրց մի հուշարձան և պատմում նրա կառուցման մասին եղած ... մեկը, իսկ նրանք լուսանկարում էին ... ու անձրևից մաշված քանդակազարդերը:

(քամի, ավանդություն, զբոսաշրջիկ)

4. Բայց երբ մոտեցան ..., իրենց ... չհավատացին. այն, ինչն իրենց հեռվից մի ահարկու գազան էր թվացել, ընդամենը մի չորացած ծառաբուն էր՝ ... այրված:

(աչք, կայծակ, բացատ)

5. Քամի բարձրանալիս այնպես էին ճռնչում դարավոր ..., որ թվում էր, թե իրենց երկարատև ... հետո այս անգամ չեն դիմանա օդի ահռելի ... ու արմատախիլ կլինեն:

(մաքառում, ծառ, ճնշում)

6. ... զուրկ այդ վայրում ... չկային, և փոքրաթիվ բնակիչները ջուրը հայ-թայթում էին իրենց բակերում փորված ...:

(հոր, աղբյուր, բուսականություն)

7. Գյուղի ..., որոնք նախկինում նեղ ու ծուռումուռ էին, լայնացվեցին, ասֆալտապատվեցին և լուսավորվեցին սյուներից կախված պայծառ ..., որոնք լուսավորում էին ... նման:

(փողոց, լապտեր, ցերեկ)

8. Նրա ... հիշեց այդ ... հավաքույթը, որի ընթացքում հանդիպել էր ուսանողական շրջանի ... մի քանիսին:

(օր, ընկեր, երանություն)

9. Այդ դարավոր կաղնին, եթե խոսել կարողանար, գուցե պատմեր մեզ իր ... պատառիկներից մի քանիսը, որոնք կբացեին պատմական այդ ... առնչվող խորհրդավոր մի քանի ...:

(գաղտնիք, հուշ, վայր)

10. Այդ հինավուրց ... մոտով քանի՜-քանի՜ բանակներ են անցել իրենց ընտիր զորագնդերով ու աշխարհազորով, իրենց վեհապանծ ..., որոնց ... կամ պարտությունների մասին չի խոսել պատմությունը:

(հաղթանակ, զորավար, կառույց)

բ) 1. Մի ուրիշ տեղ՝ փրփրահոս գետի ..., ուղղաձիգ կանգնած էր մի քանի մետր ... մի քարաժայռ, որը պոկվել էր լեռան գառիվեր ... ու գլորվել էր մինչև գետափ:

(ափ, լանջ, բարձրություն)

2. Տանտերը, անակնկալ ... հանկարծակիի եկած, ... համրացած, շարունակում էր խորազնին նայել անծանոթ ...:

(հանդիպում, մարդ, զարմանք)

3. Նրա դիմաց՝ շքամուտքի ... քիչ ձախ, կանգնած էր տարօրինակ այցելուն, և միջօրեի ...՝ հանդիպակաց միակ ... թափանցող ճառագայթները լուսավորում էին նրա դեմքը:

(արև, աստիճան, պատուհան)

4. Երբ քամի է փչում, ահռելի ... ցայտող .. տարածվում է մի քանի կիլոմետր և թափվում սարսռեցնող ... պես:

(ջրափոշի, անձրև, ջրվեժ)

5. Առջևի սայլը դեմ էր առել մի ... ու չէր շարժվում, և ալեզարդ սայլապանը փնթփնթում էր, զինվորները՝ գոռգոռում. ընկերները, չսպասելով հրավերի, իջան իրենց ... և սկսեցին օգնել դիմացի սայլը հրող ... խմբին:

(ձյունակույտ, սայլ, մարդ)

6. Արևի առաջին ... շրջակայքը բաց դեղին հագավ, կենդանացավ և լցվեց ... դյութիչ ...:

(դայլայլ, թռչուն, շող)

7. Բաց ... լսվող երաժշտության ձայնը վկայում էր, որ ... ... տարեդարձի խնջույքը շարունակվում է:

(աղջիկ, պատուհան, ծնունդ)

8. Երբ իրերն արդեն իջեցրել էին բոլոր ..., զբոսաշրջիկները մտան հյուրանոց և ... համար հյուրանոցի միակ գրառող ... ներկայացրին իրենց անձնագրերը:

(գրանցում, մեքենա, աշխատակից)

9. Թանձրացող ... մեջ գունավոր ... լուսավորվող շենքը շատ գեղեցիկ էր, իսկ մոտակա մի քանի ... ցայտող ջուրը եթերային էր թվում:

(լապտեր, աղջամուղջ, շատրվան)

10. Արդեն ապրիլն էր. ... ծածկույթը ... ամենուրեք հալվել էր, ու սարերն այլևս առաջվա նման կայծակներին ու ... արձագանք չէին տալիս:

(ձյուն, լեռնալանջ, ամպրոպ)

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Հատուկ և հասարակ, անձնանիշ և իրանիշ գոյականներ

Միատեսակ առարկաներին տրվող ընդհանուր անվանումը կոչվում է *հասարակ* անուն, օրինակ՝ *քաղաք, աշակերտ* և այլն: Միատեսակ առարկաներից յուրաքանչյուրին անհատապես տրվող անունը կոչվում է *հատուկ* անուն, օրինակ՝ *Երևան, Գևորգ* և այլն:

Անձ ցույց տվող գոյականները կոչվում են *անձնանիշ* (օրինակ՝ *մարդ, երեխա*), իսկ ոչ անձ ցույց տվող գոյականները՝ *իրանիշ* (օրինակ՝ *տուն, քար, արջ*):

Վարժություն 16: Արտագրեք՝ բաղադրյալ հատուկ անունների բաղադրիչներն ըստ անհրաժեշտության գրելով մեծատառով կամ փոքրատառով:

(Ա/ա)րփա (Գ/գ)ետ, (Ա/ա)շոտ (Ե/ե)ղկաթ, (Ա/ա)նանիա (Շ/շ)իրակացի, (Ա/ա)ռայի (Լ/լ)եռ, (Տ/տ)յառնընդառաջի (Տ/տ)ոն, (Ա/ա)մերիկայի (Մ/մ)իացյալ (Ն/ն)ահանգներ, (Գ/գ)առնիի (Տ/տ)աճար, (Դ/դ)ավիթ (Ա/ա)նհաղթ, (Ռ/ռ)ուսաստանի (Դ/դ)աշնություն, (Ս/ս)ևանա (Լ/լ)իճ, (Ն/ն)իժնի (Ն/ն)ովգորոդ, (Տ/տ)իգրան (Մ/մ)եծ, (Բ/բ)արձր (Հ/հ)այք, (Ա/ա)րևելյան (Ե/ե)փրատ, (Ա/ա)ռա (Գ/գ)եղեցիկ, (Ա/ա)ռարատյան (Դ/դ)աշտ, (Ն/ն)երքին (Թ/թ)ալին, (Փ/փ)ոքր (Ա/ա)սիա, (Ն/ն)յու (Յ/յ)որք, (Հ/հ)յուսիսային (Ս/ս)առուցյալ (Օ/օ)վկիանոս, (Լ/լ)եոնարդո (Դ/դ)ա (Վ/վ)ինչի, (Ն/ն)երսես (Ա/ա)շտարակեցի, (Հ/հ)արա-վային (Ա/ա)մերիկա, (Խ/խ)աղաղության (Հ/հ)ամաշխարհային (Խ/խ)որհուրդ, (Ե/ե)ռե-խաների (Պ/պ)աշտպանության (Մ/մ)իջազգային (Օ/օ)ր, (Ռ/ռ)իո (Դ/դ)ե (Ժ/ժ)անեյրո, (Ս/ս)ուրբ (Հ/հ)ովհաննես (Ե/ե)կեղեցի:

Վարժություն 17: Արտագրեք՝ ըստ անհրաժեշտության գրելով մեծատառերով և փոքրատառերով:

1. ԼՃԵՐԸ, Ի ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԾՈՎԵՐԻ, ՕՎԿԻԱՆՈՍԻՆ ԿԱՊՎԱԾ ՉԵՆ: ԳԵՏԵՐԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԵՆ ՆՐԱՆՈՎ, ՈՐ ՆՐԱՆՑՈՒՄ ՋՈՒՐԸ ՉԻ ՀՈՍՈՒՄ: ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ ԼՃԵՐՆ ԶԲԱՂԵՑՆՈՒՄ ԵՆ ՄՈՏ 2,7 ՄԼՆ ԿՄ^2 ՄԱԿԵՐԵՍ: ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ ԵՆ ԲԱՐԵԽԱՌՆ ԳՈՏՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵՐՁԲԵՎԵՌԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ, ՕՐԻՆԱԿ՝ ԻՍԼԱՆԴԻԱՅՈՒՄ, ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, ԼԻՏՎԱՅՈՒՄ, ԿԱՆԱԴԱՅՈՒՄ: ԱՄԵՆԱՇԱՏ ԼՃԵՐԸ ԿԱՐԵԼԻԱՅՈՒՄ ԵՆ՝ ՇՈՒՐՋ 64 ՀԶ.: ԼՃԵՐԻ ԵՆ ՆՄԱՆ ՆԱԵՎ ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԾ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՋՐԱՎԱԶԱՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ, ԱՍԵՆՔ, ԿԱՐԱՊԻ ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԼՃԵՐԸ:

Ըստ «Դպրոցական մեծ հանրագիտարանի»

2. ՍՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ ԽՈՇՈՐ ԾԱՌ Է. ԱՊՐՈՒՄ Է 300–400 ՏԱՐԻ: ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՆՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ 30 ՄԵՏՐԻ: ՔԱՆԻ ՈՐ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ ԳԵՐԱԴԱՍՈՒՄ Է ՔԱՐՔԱՐՈՏ, ՏԱՔ ԼԱՆՋԵՐ, ԱՊԱ ԴՐԱ ԽՈՇՈՐ ՏՆԿԱՐԿՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ, ՎԱՅՔԻ, ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ, ԱՆՏԱՌԱԿՆԵՐՈՒՄ, ԴԵԿՈՐԱՏԻՎ ՏՆԿԱՐԿՆԵՐՈՒՄ: ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԿՈՎԿԱՍՈՒՄ, ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ, ԲԱԼԿԱՆՅԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ, ԻՐԱՆՈՒՄ, ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ, ՀԻՄԱԼԱՅՆԵՐՈՒՄ, ԿՈՐԵԱՅՈՒՄ, ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ, ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ: ԸՆԿՈՒՅԶԻ 100 Գ ՄԻՋՈՒԿԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 6000 ԿԱԼՈՐԻԱ:

Ըստ Լևոն Հարությունյանի «Քո շրջապատի ծառերը» գրքի

3. ԵՐԿՐԻ ՎՐԱ ԿԱ ԱՎԵԼԻ ՔԱՆ 1300 ԳՈՐԾՈՂ ՀՐԱԲՈՒԽ: ԴՐԱՆՑ ԹՎԻՆ ԵՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՐԿՐԱԳՆԴԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԱՏԿԱՊԵՍ ԱՀԱՐԿՈՒ ԱՎԱՉԻՆՍԿԱՅԱ ԵՎ ԿԼՅՈՒՉԵՎՍԿԱՅԱ ՀՐԱԲՈՒԽՆԵՐԸ՝ ԿԱՄՉԱՏԿԱՅՈՒՄ, ՎԵԶՈՒՎԸ՝ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ, ՀԵԿԼԱՆ՝ ԻՍԼԱՆԴԻԱՅՈՒՄ, ՖՈՒՋԻՅԱՄԱՆ՝ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ, ԿՐԱԿԱՏԱՈՒՆ՝ ԻՆԴՈՆԵԶԻԱՅՈՒՄ, ՕՐԱՍԻԱԲԱՆ՝ ՄԵՔՍԻԿԱՅՈՒՄ ԵՎ ԱՅԼՆ: ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԵՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ 500 «ՔՆԱԾ» ՀՐԱԲՈՒԽՆԵՐ, ՈՐՈՆՑԻՑ ԱՄԵՆԱՄԵԾԸ ԱՐԱԳԱԾ ԼԵՌՆ Է:

Ըստ «Դպրոցական մեծ հանրագիտարանի»

4. ՀՐԱԶԴԱՆԸ (ՈՒՐԱՐՏԵՐԵՆ՝ ԻԼԴԱՐՈՒՆԻ) ԿԱՄ ԶԱՆԳՈՒՆ ԱՐԱՔՍԻ ԶԱԽ ՎՏԱԿՆ Է: ՍԿԻԶԲ Է ԱՌՆՈՒՄ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ, ՀՈՍՈՒՄ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՔԻՑ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՈՒՏՔ: ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ 141 ԿՄ Է: ԽՈՇՈՐ ՎՏԱԿՆԵՐՆ ԵՆ ՄԱՐՄԱՐԻԿԸ, ԾԱՂԿԱԶՈՐԸ, ԴԱԼԱՐԸ, ԱՐԱՅԻ ԳԵՏԸ, ԳԵՏԱՌԸ: ՀՐԱԶԴԱՆԻ ԱՓԻՆ ԵՆ ՍԵՎԱՆ, ՀՐԱԶԴԱՆ, ՉԱՐԵՆՑԱՎԱՆ, ԼՈՒՍԱԿԵՐՏ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ, ԱՐՁՆԻ ԱՌՈՂՋԱՐԱՆԸ: ԳԵՏԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻՑ ՀՆԱԳՈՒՅՆԸ ԿԱՐՄԻՐ ԿԱՄՈՒՐՋՆ Է (1679 Թ., ԵՐԵՎԱՆ):

Ըստ «Դպրոցական մեծ հանրագիտարանի»

5. ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԳՐԱԴԱՐԱՆԸ (Մ. Թ. Ա. 1-ԻՆ ԴԱՐ) ԵԳԻՊՏՈՍԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ ՔԱՂԱՔՈՒՄ ԷՐ. ՈՒՆԵՑԵԼ Է ՄԻՆՉԵՎ 700 ՀԶ. ՁԵՌԱԳԻՐ: ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ԵՂԵԼ ԵՆ ՎԱՆՔԵՐԻՆ ՈՒ ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐԻՆ ԿԻՑ. ՏԵՂԱՎՈՐՎԵԼ ԵՆ ԱՌԱՆՁԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՎԱՆՔԱՄԵՐՁ ՔԱՐԱՅՐԵՐՈՒՄ ԵՎ ԿՈՉՎԵԼ ԵՆ ԳՐԱՏՈՒՆ, ԳՐԱՆՈՑ, ԳԱՆՁԱՏՈՒՆ, ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ԴԻՎԱՆ, ԵՐԲԵՄՆ ԷԼ՝ ՆՇԽԱՐԱՆՈՑ: ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԸ ԵՎ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑՆ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼ ԵՆ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՄԱՅՐ ՊԱՀՈՑԸ:

Ըստ «Դպրոցական մեծ հանրագիտարանի»

6. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՉԻՉԽԱՆԸ (ՓՇԱՐՄԱՎ) 6–10 Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ԾԱՌ Է՝ ՓՇՈՎ ԱՎԱՐՏՎՈՂ ԸՆՁՅՈՒՂՆԵՐՈՎ: ՓՇԵՐԸ ՉԱՓԱԶԱՆՑ ԱՄՈՒՐ ԵՆ՝ 2–7 ՍՄ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ: ԾԱՂԻԿՆԵՐԸ ՄԱՆՐ ԵՆ: ԾԱՂԿՈՒՄ Է ԱՊՐԻԼ–ՄԱՅԻՍԻՆ. ՊՏՈՒՂՆԵՐԸ ՀԱՍՈՒՆԱՆՈՒՄ ԵՆ ՕԳՈՍՏՈՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ: ՏԱՐԱԾՎԱԾ Է ԿՈՎԿԱՍՈՒՄ, ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՇՐՋԱՆՈՒՄ, ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ, ԻՐԱՆՈՒՄ, ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ, ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ, ՄՈՆՂՈԼԻԱՅՈՒՄ, ՍԻԲԻՐԻ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ, ՀԻՄԱԼԱՅՆԵՐՈՒՄ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ, ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ, ՁԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ, ՄԵՂՐԻՈՒՄ, ՎԱՅՔՈՒՄ:

Ըստ Լևոն Հարությունյանի «Քո շրջապատի ծառերը» գրքի

7. «ՕՍԿԱՐ» ՄՐՑԱՆԱԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ «ՄԵՏՐՈ-ԳՈԼԴՈՒԻՆ-ՄԱՅԵՐ» ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱՅԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԼՈՒԻՍ ՄԱՅԵՐԻՆՆ Է: ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ 1929 Թ.-ԻՆ ՀՈԼԻՎՈՒԴՈՒՄ: «ՕՍԿԱՐԸ» 34 ՍՄ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ 3,85 ԿԳ ԿՇՌՈՎ ՄԵՏԱՂԵ ՈՍԿԵԶՕԾ ԱՐՁԱՆԻԿ Է՝ ՍԵՎ ՄԱՐՄԱՐԵ ՊԱՏՎԱՆԴԱՆԻ ՎՐԱ: ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԸ՝ ՄԱՐԳՐԵՏ ՀԵՐԻԿԸ, ՏԵՍՆԵԼՈՎ ՈՍԿԵԶՕԾ ԱՐՁԱՆԻԿԸ, ԲԱՑԱԿԱՆՉԵԼ Է. «ԱՐՁԱՆԻԿՆ ԻՆՁ ՀԻՇԵՑՆՈՒՄ Է ԻՄ ՔԵՌԻ ՕՍԿԱՐԻՆ», ՈՐԻՑ ՀԵՏՈ ՄՐՑԱՆԱԿՆ ԱՆՎԱՆԵԼ ԵՆ «ՕՍԿԱՐ»:

Ըստ «Դպրոցական մեծ հանրագիտարանի»

8. ՍՊԻՏԱԿԱԾԱԿԱՏ ՍԱԳԸ ՏԱՐԱԾՎԱԾ Է ՍԱՌՈՒՑՅԱԼ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԱՓԵՐԻ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ՝ ԿԱՆԻՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՉՈՒԿՈՏՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ, ԳՐԵՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ ԵՎ ԻՍԼԱՆԴԻԱՅՈՒՄ: ՁՄԵՌՈՒՄ Է ԵՎՐՈՊԱՅՈՒՄ, ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ: ԶԳԱԼԻ ՓՈՔՐ Է ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ՍԱԳԻՑ. ՓԵՏՐԱՎՈՐՈՒՄԸ ՄՈԽՐԱԳՈՒՅՆ Է: ՄԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՄԻԱՅՆ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՈՒ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՉՈՒԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍԵՎԱՆԱ ԵՎ ԱՐՓԱ ԼՃԵՐՈՒՄ ՈՒ ԱՐԱՔՍԻ ՀՈՎՏՈՒՄ:

Ըստ Մարտին Աղամյանի «Հայաստանի թռչունները» գրքի

9. «ՊԱՆԹԵՈՆ» (ՀՈՒՆԱՐԵՆ Է. ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՍՐԲԱՎԱՅՐ) ԱՆՈՒՆԸ ՓՈԽԱՆՑՎԵԼ Է ՀՌՈՄԻ՝ ԱՍՏՎԱԾՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏԱՃԱՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԻՑ: ՊԱՆԹԵՈՆԸ ՀԱՏՈՒԿ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ Է, ՈՐՏԵՂ ԱՄՓՈՓՎՈՒՄ ԵՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ԱՃՅՈՒՆՆԵՐԸ: ԵՎՐՈՊԱՅԻ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ ՓԱՐԻԶԻ ՊԵՐ ԼԱՇԵՁՆ Է: ԱՅՍՏԵՂ ԵՆ ԹԱՂՎԱԾ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԱՐԺԱՆԱՅԱԾ ԳՐՈՂՆԵՐ ՄՈԼԻԵՐԸ, ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿԸ, ՄԱՐՍԵԼ ՊՐՈՒՍՏԸ, ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԸ, ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ ԺՈՐԺ ԲԻԶԵՆ, ՋՈԱԿԻՆՈ ՌՈՍՍԻՆԻՆ ԵՎ ՖՐԻԴԵՐԻԿ ՇՈՊԵՆԸ, ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐ ԷԺԵՆ ԴԵԼԱԿՐՈՒԱՆ ԵՎ ԱՄԵԴԵՈ ՄՈԴԻԼԻԱՆԻՆ, ԵՐԳՉՈՒՀԻՆԵՐ ՄԱՐԻԱ ԿԱԼԱՍՆ ՈՒ ԷԴԻՏ ՊԻԱՖԸ, ՊԱՐՈՒՀԻ ԱՅՍԵԴՈՐԱ ԴՈՒՆԿԱՆԸ, ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ ՍԱՌԱ ԲԵՌՆԱՐԸ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ: ՄԻՆՉԵՎ 2000 Թ. ԱՅՍՏԵՂ ԷՐ ԱՄՓՈՓՎԱԾ ՆԱԵՎ ԱՆԴՐԱՆԻԿ ՕՁԱՆՅԱՆԻ ԱՃՅՈՒՆԸ:

Ըստ «Դպրոցական մեծ հանրագիտարանի»

10. ՄՇՏԱԴԱԼԱՐ ՏՈՍԱԽԸ ԾԱՌ Է՝ 6–10 Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ: ՏԱՐԱԾՎԱԾ Է ԱԼԺԻՐՈՒՄ, ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՐԱՎՈՒՄ, ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ, ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ, ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ: ՄԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՅԱԾՐԱԴԻՐ ԵՎ ՄԱՍԱՄԲ ՄԻՋԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ: ՀՄՈՒՏ ԱՅԳԵԳՈՐԾՆԵՐԸ, ԱՅՍ ԲՈՒՅՍԸ ԽՈՒԶԵԼՈՎ, ՁԱՆԱՁԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՁԵՎ ԵՆ ՏԱԼԻՍ: ՀԱՏԿԱՊԵՍ ՇԱՏ ՏԱՐԱԾՎԱԾ Է ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՁԲՈՍԱՅԳԻՆԵՐՈՒՄ ՈՒ ՊՈՒՐԱԿՆԵՐՈՒՄ:

Ըստ Լևոն Հարությունյանի «Քո շրջապատի ծառերը» գրքի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը կոչվում են ածական: Ածականները հատկանիշը ցույց են տալիս երկու ձևով՝ ուղղակի և միջնորդված: Ըստ դրա՝ ածականները բաժանվում են երկու տեսակի՝ որակական (հատկանիշն ուղղակիորեն արտահայտող) և հարաբերական (հատկանիշը միջնորդված արտահայտող): Որակական ածականները հիմնականում ունեն համեմատության աստիճաններ՝ դրական, բաղդատական, գերադրական:

Վարժություն 18: Յուրաքանչյուր շարքում գտեք այն ածականը, որը համեմատության աստիճաններ չունի:

1. մեծ, լավ, բարակ, դատարկ
2. հին, թեթև, հավասար, թանձր
3. ուրախ, լայն, նոր, սև

4. մերկ, բարձր, հեռու, սուր
5. խոր, ծանր, նեղ, բոբիկ

Վարժություն 19: Յուրաքանչյուր շարքում գտեք այն ածականը, որի գերադրական աստիճանը հնարավոր է կազմել *-ագույն* մասնիկով:

1. սուր, լավ, շատ, բարի
2. մեծ, բարակ, հեռու, ուրախ
3. հպարտ, բարձր, հարթ, ցուրտ
4. լայն, նոր, տաք, մռայլ
5. թանձր, ծանծաղ, սառը, հին

Վարժություն 20: Դուրս գրեք և խմբավորեք որակական ու հարաբերական ածականները:

Մագաղաթի սրբությունով
Ու մաքրությամբ ծաղկաներկի
Արվեստ եղար, երազ ու երգ
Քո սրբացած հիմք ու հունով,
Մատյաններով քո լուսաթերթ,
Քո սիրախենթ պատմությունով,
Իմ ժայռակող փոքրիկ երկիր:

Քո կրակի սուր ձևերով,
Քանդակներով ու քիվերով
Եղար փլչող գեղեցկություն
Ու քարեղեն տողեր երգի:

Ծաղկի՛ր հիմա, իմ սեր, իմ լա՛վ,
Ելած մթին անդունդներից,
Ճամփաներից հազարադավ.
Դարե՛ր անցիր օրերի մեջ,
Ցավերդ խոր սերերի մեջ,
Առաջնորդի՛ր զավակներիդ
Կայաններով լուսակատար,
Հրաշքներով հորինումի.
Անդունդներիդ եզրին անտակ
Ծարի՛ր նորից քիվ ու քանդակ.
Մատյաններդ լցրո՛ւ լույսով
Ու քո քարոտ հո՛ղը հերկիր
Մագաղաթի սրբությունով
Ու մաքրությամբ ծաղկաներկի:

Մարո Մարգարյան

Վարժություն 21: Շղատառ գրված գոյականների հոլովված ձևերը փոխարինեք համապատասխան ածականներով:

Աշնան անձրև, *ուսանողի* տետր, *մոր* սիրտ, *հարավի* տոթ, *լեզվի* առանձնահատկություն, *տիեզերքի* գաղտնիք, *երկաթից* դուռ, *չթից* շոր, *գիտության* նվաճում, *մարդու* խոսք, *շուկայի* հարաբերություն, *հերոսի* արարք:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Թվական անունը ցույց է տալիս առարկայի թիվ, քանակ, թվային կարգ, օրինակ՝ *հինգ գիրք, երրորդ դասարան, մեկական գիրք, ապրանքի մեկ երրորդը* և այլն: Թվականները լինում են չորս տեսակի՝ քանակական, դասական, բաշխական և կոտորակային:

Վարժություն 22: Տրված թվականները գրե՛ք բառերով:

9, 19, 99, 999, 1931, 45, 66, 55, 80, 512:

Վարժություն 23: Ըստ անհրաժեշտության՝ տրված թվականները գրե՛ք միասին, անջատ կամ գծիկով:

Ութսուն(ութ), քառասուն(հինգ), քսան(յոթ), հարյուր(մեկ), հինգ(վեցերորդ), երկու(երրորդ), երեք(քառորդ), երեք(երեք), զրո(ամբողջ)(հինգ)(հարյուրերորդական), վեց(ական), հինգ(երորդ), չորս(չորս), հազար(ինը)(հարյուր)(յոթանասուն)(երեք):

Վարժություն 24: Տրված թվականները խմբավորե՛ք ըստ տեսակների:

Յոթանասունհինգ, վեց, երրորդ, տասնհինգերորդ, մեկ երրորդ, երեքական, քսաներեք, երեք հինգերորդ, երկու-երկու, տասնութ, մեկական, առաջին, երեք քառորդ, չորրորդ, ութական, տասնիններորդ, չորս-չորս, մեկ ութերորդ, քառասուն, զրո ամբողջ հինգ տասնորդական:

Վարժություն 25: Դո՛ւրս գրեք թվականները և խմբավորե՛ք ըստ տեսակների:

Հազար ութ հարյուր վաթսունինը թվին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին...

Գեթ հայրը մնար...
Բայց հայրն էլ գնաց,
Երբ որդին չկար տասը տարեկան:

Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:
Միրգ ու փոշի: Անխիղճ արև:

Պարույր Սևակ

Առաջին սերս ձնծաղիկի պես
Ձնհալի միջից մի անգամ ժպտաց...

Երկրորդը խոնարհ մանուշակ էր մի,
Կանաչ թփի մեջ թաքուն ծիծաղեց...

Երրորդը վարդ էր՝ մի բոսորաթերթ,
Ծանոթ էր արդեն արևի ուժին:

Իմ մահով ոչինչ չի փոխվի կյանքում,
Եվ չի պակասի աշխարհում ոչինչ.
Մի լույս կմարի հինգերորդ հարկում,
Կմթնեն մի պահ աչքերը քո ջինջ:

Անցել է ուղիղ
Քառասուն տարի:

Համո Սահյան

Մոծակը մեկ վայրկյանի ընթացքում իր թևիկներով կատարում է հինգ հարյուրից վեց հարյուր լրիվ թափահարում. նշանակում է՝ վայրկյանի մեկ հազարերորդ մասի ընթացքում նա հասցնում է բարձրացնել դրանք կամ իջեցնել:

Յակով Պերելմանի «Հետաքրքրաշարժ ֆիզիկա» գրքից

Վեց բանվոր վեցական արկղ տարան վեցերորդ պահեստ. դա բոլոր արկղերի մեկ վեցերորդն էր:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԴԵՐԱՆՈՒՆ

Առանց կոնկրետ անվանումների անձ, առարկա և տարբեր հատկանիշներ ցույց տվող բառերը միավորվում են մեկ խոսքի մասի մեջ, որը կոչվում է դերանուն: Դերանունները հարաբերակից են տարբեր խոսքի մասերի՝ գոյականին, ածականին, թվականին, մակբային:

Վարժություն 26: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. դերանուններն արտահայտում են՝
   ա) վերաբերմունք
   բ) անձեր, առարկաներ, հատկանիշներ առանց կոնկրետ անվանելու
   գ) գործողություն, ընթացք
2. դերանունները կարող են փոխարինել՝
   ա) գոյականին, բային, մակբային, կապին
   բ) գոյականին, ածականին, շաղկապին, վերաբերականին
   գ) գոյականին, ածականին, թվականին, մակբային

Վարժություն 27: Դուրս գրեք դերանունները, որոշեք տեսակը, նշեք յուրաքանչյուրի քերականական հատկանիշները՝ դեմք, թիվ, հոլով (չփոխվողների դեպքում նշեք չփոխվող լինելը):

Գուցեև ճիշտ ես, զուր եմ հավատում, ժպտում բոլորին,
Մի բարի խոսքով ճանաչում մարդուն այսքան մտերիմ...

Բայց մեր սիրո մեջ թե ազնիվ լինես ու ինձ հավատաս,
Իմացիր, որ դու խաբած կլինես ինձ խաբողներին...

Մեսրոպ Սեւակ

Իրար են կրծում սրտերն օրնիբուն,
Ա՜խ, ինչ է դարձել մեր աշխարհն հիմի,
Մահվան ավելի շատ ես հանդիպում,
Քան մտերիմի...

Մեսրոպ Սեւակ

Ինչ է կարոտը.
Պարզապես առանց քեզ հանդիպելու
Օրերն ինձ համար դժվար են անցնում...

Լիպարիտ Սարգսյան

Վարժություն 28: Դուրս գրեք դերանունները, որոշեք տեսակը և առանձնացրեք նրանք, որոնց հիմքը հոլովվելիս փոխվում է:

Իսկ ինձանից
Ինչո՞ւ ես դու այսպես քաշվում և ամաչում:
Ինչ է, մենք նո՞ր ծանոթացանք,
Իրար դեռ լավ չե՞նք ճանաչում:
Բայց, ամաչկոտ իմ սիրելի, ես քեզ գիտեմ
Ու սիրում եմ առնվազն մի 40
Կամ ... 4000 կարճլիկ տարի:
Դու ինչպե՞ս ես դա մոռանում...

***

Ես օգնեցի բոլորին, ես միայն ինձ չօգնեցի,
Կորով տվի ամենքին, միայն ինքս հոգնեցի:
Խորհուրդներով իմ խելոք խելք հավաքած՝ գնացին
Քանի-քանիսը կյանքում. ես էլի գիժ մնացի:
Ով հանդիպեց, ստացավ մի թաս գինի ինձանից,
Լոկ ես գինի չըմպեցի իմ սեփական հնձանից:
Ինչ եմ եղել ողջ կյանքում՝ հարսանքավոր ու քավոր,
Մինչ ամենքից ավելի ինձ էր օջախ հարկավոր:
Վստահեցին ոմանք ինձ. հոգիս դարձավ գաղտնարան,
Վստահեցի շատերին. գաղտնիքս առան ու տարան:
Ու զղջում եմ ես մի պահ՝ սեր ու բարիք եմ ցրել,
Մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ գաղտնիքը՝ վաճառել:

Պարույր Սեւակ

Վարժություն 29: Դուրս գրեք դերանունները, որոշեք տեսակը և առանձնացրեք հոլովվողները: Հոլովված դերանունների դեպքում նշեք ուղղական հոլովաձևը:

Ես վիճում եմ,
Մեկ է՝ ում հետ,

Ինքս ինձ հետ,
Թե՞ ուրիշի:
Իսկ դու մի պահ ակամնջ արա
Ու լավ հիշիր:
Ես վիճում եմ և աստղերից լավերի՛ հետ,
Եթե նրանք տալիս են մեզ աղոտ մի լույս,
Բայց ոչ կրակ...
Ես վիճում եմ զավակի հետ,
Ա՛յն զավակի,
Որ իր մորը փող է տալիս դատարանով...
Ես վիճում եմ ավագի հետ,
Ա՛յն ավագի,
Որ կրտսերից ինքը պիտի խելք հավաքի,
Մինչդեռ նրան իր ետևից
Քարշ է տալիս հաստ պարանով:

Դարույր Սևակ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՅ

Բայ խոսքի մասի մեջ միավորվում են այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողություն կամ վիճակ, օրինակ՝ *գրել, քնած, կարդում եմ, խաղաց* և այլն: Բայն ունի *եղանակի, դեմքի, թվի, ժամանակի, սեռի քերականական կարգեր*: Ըստ այս կարգերի դրսևորման՝ բայը խոսքում գործածվում է երկու ձևով՝ *դիմավոր* և *անդեմ:* Անդեմ ձևերը բաժանվում են երկու խմբի՝ անկախ դերբայներ, որոնք կարող են առանձին գործածվել, և կախյալ դերբայներ, որոնք գործածվում են միայն օժանդակ բայի հետ՝ կազմելով խոնարհման ձևեր:

Անկախ դերբայներ

անորոշ դերբայ	*գրել*	*կարդալ*
ենթակայական դերբայ	*գրող*	*կարդացող*
համակատար դերբայ	*գրելիս*	*կարդալիս*
հարակատար դերբայ	*գրած*	*կարդացած*

Կախյալ դերբայներ

անկատար ձևաբայ	*գրում*	*կարդում*
վաղակատար ձևաբայ	*գրել*	*կարդացել*
ապակատար ձևաբայ	*գրելու*	*կարդալու*
ժխտման ձևաբայ	*գրի*	*կարդա*

Ինչպես տեսնում ենք, անորոշ դերբայը ստանում է ***ել*** կամ ***ալ*** վերջավորությունները: Ըստ դրա՝ բայերը լինում են ***ե*** խոնարհման (կամ լծորդության) և ***ա*** խոնարհման:

Վարժություն 30: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. բայերը ցույց են տալիս՝
   ա) գործողություն բ) քանակ գ) անձ
2. բայերին բնորոշ են հետևյալ բոլոր հատկանիշները՝
   ա) հոլովում, առում, համեմատության աստիճաններ, թիվ,
   բ) թիվ, դեմք, ժամանակ, եղանակ
   գ) համեմատության աստիճաններ, առում, անձնանիշ և իրանիշ
3. բայերը լինում են հետևյալ խոնարհումների՝
   ա) *ե, ա* բ) *ոջ, վա* գ) *ան, ց*
4. դերբայներն են՝
   ա) անորոշ, ենթակայական, հարակատար, համակատար
   բ) որակական, հարաբերական, քանակական, դասական
   գ) որոշյալ, բացառական, գործիական, ներգոյական
5. ձևաբայերն են՝
   ա) սահմանական, ըղձական, հարկադրական, հրամայական
   բ) անկատար, ապակատար, վաղակատար, ժխտման
   գ) ուղղական, սեռական, տրական, հայցական

Վարժություն 31: Ո՞ր շարքերի բոլոր բայերն են *ե* խոնարհման:

1. բացատրած, մաքրող, փորում է, օգտվի
2. զբաղվում, չեն կանչի, ծալած, թեթևացող
3. պատկերելիս, խորացել է, կզբոսնենք, հասնում է
4. գրի՛ր, կարդացել է, իջնելիս, պիտի օգնեն
5. համընկնող, գովաբանում է, զանազանելու են, թեյել էին
6. ուղղած, քաղենք, նշե՛ք, կառուցած
7. խնամող, փորձում էին, կատարեցինք, սկսի՛ր
8. ներկեիր, կճամփորդի, հսկելիս, հեռացել է
9. կուտակած, գծում են, հալված, հասնենք
10. քայլեցինք, կզբոսնեն, մոտեցել ենք, վազող

Վարժություն 32: Ո՞ր շարքերի բոլոր բայերն են *ա* խոնարհման:

1. քչքչում է, կզրնգա, խաղացին, սլացող
2. իմանում էին, կենդանացավ, ջերմացած, կխնայեն
3. ուշացած, լուսանալիս, լրջանում է, հպարտանալ
4. խտացող, մոտեցե՛ք, չի տաքանա, եփվում է
5. հավատացին, թրթռացող, նվագող, թեթևացավ
6. փոքրացել է, սևացած, կհանգստանանք, պիտի ձանձրանա
7. վերջացել է, հնացած, մեկուսացած, ամայացել էին
8. հպարտացե՛ք, մի՛ զլացեք, կգոլորշանա, զվարթացանք
9. մգացել է, կղզիացած, աշխուժացող, փոխադրելիս
10. լիացած, ճահճանում է, կենդանացող, մոռացել է

Վարժություն 33: Յուրաքանչյուր շարքում գտեք նշված դերբայը:

1. անորոշ – կարդալիս, թռել, վազել, կատարող, գրում, նստած
2. անորոշ – երգող, հեռացած, նայելիս, հեռացել, լցնել, գրված
3. անորոշ – գիրացել, մոտեցել, գտել, փախել, կորել, գրել
4. ենթակայական – հիանալ, հուզված, վազելիս, նկարող, սնել, տպում
5. հարակատար – խոխոջել, կիրառելիս, շրջած, ըմպում, ճառող, վառել
6. համակատար – ապշած, հնչող, ճնշելիս, լռելու, գրելիք, փախել

Վարժություն 34: Առանձնացրեք նշված դերբայները:

1. ***Անորոշ*** – գթալ, գդալ, մեծանալ, լավանալ, արտադրյալ, զգուշանալ, արևագալ, աշխուժանալ, հիանալ, ճռնչալ, թրթռալ, վերոհիշյալ, արագանալ, որակյալ, զուլալ, ցոլցլալ, բազմածալ, հեկեկալ, ճրագակալ, ձնհալ, հյուրընկալ, իմանալ, զառամյալ, պսպղալ, ուրախանալ, ծանոթանալ, արժանանալ, տառասխալ, կենտրոնանալ, խշխշալ, անակնկալ, թպրտալ, հուրհրալ, շորորալ:
2. ***Անորոշ*** – նվագել, ճառագել, երկրպագել, շանթարգել, բարեկարգել, ամրապնդել, պատկերազարդել, սեթևեթել, ծամթել, մաղթել, հաղթել, ջրարգել, թերթել, մետաքսաթել, կսմթել, մամռակալել, շաղախել, ցախավել, ջախջախել, խիզախել, միաձուլել, ներգործել, կռավել, առավել, գրավել, շփոթել, ձեռնարկել, բնակվել, թողնել:
3. ***Ենթակայական*** – վերանորոգող, կառուցող, երթևեկող, ամենակարող, ներկայացնող, մտերմացող, երկաթաձող, իջեցնող, հոգնեցնող, հիշեցնող, նոսրացող, անհանդուրժող, ամբողջացող, գեղեցկացող, հաստակող, մեղմացող, կենդանացող, անվադող, ահուդող, պաշտոնաթող, հիացնող, նախաձեռնող, կինոդիտող, մեծացնող, երկտող, գովաբանող, թարգմանող, լրագրող, շնչափող, թիկնալող, արևկող, կանաչապատող, կավահող, կարդացող, կարթաձող, փոփոխվող, հյուրընկալվող, կուտակվող, սպասարկվող, արծաթաշող, բարեհաջող, կազմվող, հնգատող, արտահանվող, խուսափող, խոսափող, ջնջվող:
4. ***Հարակատար*** – արտագրած, նկարած, անկասկած, նվիրած, ամոթխած, վերակառուցած, մեկնաբանված, մոտեցած, հասարակած, խաշնարած, փոխված, ներկված, հիացած, հռչակած, տախտակամած, թրջված, տեսած, նկարազարդած, ամպամած, ուշացած, պարգևատրված, հողազանգված, ողողված, պատմած, միացված, հեռացած, լայնատարած, առեղծված, շարված, ժամանակահատված, մոռացած, կառուցած:
5. ***Համակատար*** – վազելիս, մոտենալիս, ներկելիս, երազելիս, օազիս, խոսելիս, արտասանելիս, ասուլիս, պատմելիս, ուշանալիս, ներգրավելիս, նորոգելիս, ամսեամիս, բարձրանալիս, հեռանալիս, էլեկտրամագնիս, խնամելիս, սովորելիս, դիտելիս, քարաբաղնիս, մշակելիս, տպագրելիս, հիշելիս, ներհյուսելիս, հյուսիս, հանգցնելիս, փակելիս, շարելիս, կզաքիս, խաղալիս, երգելիս, ներկայացնելիս, ավետիս:

Վարժություն 35: Դուրս գրեք բայերը, առանձին սյունակներում խմբավորեք դիմավոր և անդեմ ձևերը, որոշեք կազմությունը (պարզ կամ ածանցավոր):

Ելած արթնացող քաղաքից ահա
Ոլորապտույտ շոսսեով այդ լայն,
Առջևում կարմիր մի դրոշ պահած՝
Անցնում է վաշտը պիոներական:
Հնչում է նրանց դոփյունը հաստատ,
Թմբուկն է թնդում ռիթմով կորովի,
Անցնում են նրանք քայլերով վստահ,
Աչքերով հստակ, դեմքերով թովիչ:
Քայլում են նրանք շոսսեով. հետո
Կտրելով այդ լայն ասֆալտե շոսսեն՝
Անցնում են ահա այն ձորի մոտով,
Ուր աղմկաձայն Զանգուն է հոսում:

***

Հոգուս մեջ իջել ու փռվել էր մի
Հիվանդոտ, հիվանդ տխրություն հանգիստ:
Հաշտվել էի ու լռել էի:
Ու լուռ էր հոգիս, լուռ ու լռանիստ:
Եվ մեկը հանկարծ խնդաց խավարում,
Դուրսը՝ դաշտերի մենակության մեջ:
Մեկը դաշտերում տագնապ էր փռում,
Ու մութ սենյակում հսկում էի ես:

***

Անցնում են, հոսում օրերը անծայր:
Ճամփորդների պես գնում են հեռու:
Հիշում եմ միայն, որ մի օր անցար
Օրերիս նման ու ետ չես գալու:

***

Երբ իջնի գիշերը, ու անցած հուշերը,
Անցյալի փշերը դառնորեն խոցեն,
Որբ, մենակ կգաս դու և կերգես քո սերը,
Որ վերջին մեր սերն է աշխարհում գուցե:

Որբ, մենակ կգաս դու, և նորից քո երգը
Կվառե սրտում մեր կարոտանք ու սեր,
Անարև մեր սրտում կվառե քո երգը
Երազներ անմար ու ցնորքներ լուսե:

Եվ նորից կզգանք, որ մեր սրտին դու մոտ ես,
Մորմոքող հրի պես մեր հիվանդ արյան,
Որ լուսե երգին քո մեր հոգին կարոտ է,
Օ՜, հեռու՛ ընկեր իմ, օ՛, Վահա՛ն Տերյան...

Եղիշե Չարենց

Վարժություն 36: Տրված բառերով կազմեք բայական հարադրություններ:

Միտք, սիրտ, աչք, ձեռք, ոտք, գլուխ, երես, պար, ծափ, ականջ:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Բայածանցներ

Բայերի կազմում կարող են լինել յուրահատուկ ածանցներ, որոնք կոչվում են բայածանցներ: Բայածանցներն են՝ *բաղադրական ածանցներ* (կամ *սոսկածանցներ*) *(ան, են, ն, չ – հեռ**ան**ալ, մոտ**են**ալ, գտ**ն**ել, թռ**չ**ել), պատճառական ածանցներ (ացն, եցն, ցն – հեռ**ացն**ել, մոտ**եցն**ել, թռ**ցն**ել), բազմապատկական ածանցներ (ատ, ոտ, կոտ, տ – կտր**ատ**ել, ջարդ**ոտ**ել, թռչ**կոտ**ել, պատռ**տ**ել), կրավորական ածանց (վ – գր**վ**ել)*:

Վարժություն 37: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. ածանցավոր են համարվում այն բայերը,
   ա) որոնց հոդակապով միացել է որևէ վերջածանց
   բ) որոնցում կան նախածանց և վերջածանց
   գ) որոնցում *-ել, -ալ* վերջավորություններից առաջ կան բայածանցներ
2. բայածանցներն են՝
   ա) բաղադրական (սոսկական), կրավորական, բազմապատկական, պատճառական
   բ) սահմանական, ըղձական, հարկադրական, ենթադրական
   գ) անորոշ, ենթակայական, համակատար, հարակատար
3. *-ան, -են, -ն, -չ* բայածանցները կոչվում են՝
   ա) բաղադրական կամ սոսկական բ) բազմապատկական
   գ) պատճառական
4. *-ատ, -ոտ, -կոտ, -տ* բայածանցները կոչվում են՝
   ա) բազմապատկական բ) կրավորական
   գ) բաղադրական կամ սոսկական
5. *-ացն, -եցն, -ցն* ածանցները կոչվում են՝
   ա) բաղադրական կամ սոսկական բ) բազմապատկական
   գ) պատճառական

Վարժություն 38: Ո՞ր շարքերի բոլոր բառերն են բայեր:

1. գալ, տալ, լալ, բալ
2. ավլել, ավել, գրվել, զզվել
3. շահել, պահել, խմել, ասել
4. թևածել, ակնածել, խորհրդածել, մտածել
5. գթալ, գդալ, աղալ, խաղալ
6. նազել, վազել, ասել, պարզել
7. քենակալ, բարկանալ, հասկանալ, զարգանալ

Վարժություն 39: Առանձնացրեք բաղադրական ածանց (սոսկածանց) ունեցող բայերը:

Գտնել, կանչել, ջանալ, պարզաբանել, կանաչել, կոշտանալ, կենտրոնանալ, շնչել, թողնել, կայունանալ, լրջանալ, փախչել, մոռանալ, հեծնել, տուգանել, խթանել, դիպչել, պատճենահանել, խոնավանալ, թռչել, հերոսանալ, մնալ, հանգչել, փրկագնել, ցանել, գովաբանել, իջնել, պատասխանել, սառչել, ձայնել, կայտառանալ, իմաստնանալ, ճանաչել:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Բայի սեռը

Բայն ունի երեք սեռ՝ **ներգործական**, **կրավորական** և **չեզոք**:

Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որով ենթական ուղղակիորեն ազդում է որևէ առարկայի վրա, և պահանջում են ուղիղ խնդիր լրացում (որն արտահայտում է կրող առարկան): Օրինակ՝ *Աշակերտը կարդաց գիրքը*:

Կրավորական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը մեկ այլ առարկայից անցնում է քերականական ենթակային, և պահանջում են ներգործող խնդիր լրացում (որն արտահայտում է, թե ում կողմից կամ ինչից է գործողությունն անցնում ենթակային): Օրինակ՝ *Աշակերտը գնահատվեց ուսուցչի կողմից. Պատը քանդվեց հարվածից*:

Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որով ո՛չ ենթական է ազդում մեկ այլ առարկայի վրա, ո՛չ էլ ինքն է կրում մեկ այլ առարկայից: Օրինակ՝ *Ես հիացա նկարով:*

Վարժություն 40: Առանձնացրեք նշված սեռերի բայերը:

Ներգործական – զարդարել, ծափահարել, վճարել, մոտենալ, կոտրել, զբոսնել, արտագրել, հիմնադրել, հիանալ, տեղավորել, թափառել, մանրել, պատվիրել, նվիրել:

Կրավորական – փորագրվել, բռվել, մեքենագրվել, գովել, արդյունահանվել, գգվել, ավելացվել, բերվել, գրվել, արտատպվել, դրվել, կիրառվել, չվել:

Չեզոք – մռնչալ, նվագել, տաքանալ, լողալ, հետադիմել, զուգել, խլել, ջերմել, տապալել, սավառնել, զրնգալ, գոլորշանալ, թելել:

Վարժություն 41: Գտեք բայերը, որոշեք սեռը և կազմությունը:

Վրա հասան դառնաշունչ օրերը, ինչպես ցուրտ աշուն: Արտերում հասած ցորենները ծլում էին, հողի մշակները մրսում էին խրամատներում և անվարժ ձեռքերով շարժում հրացանի փականակը: Արճիճե կարկուտը ծեծում էր քարերն ու քարափները, հրանոթի գնդակը շառաչելով պայթում էր ծմակներում, սարսափահար անում մարդկանց ու գազաններին, ջարդում դողահար ծառերը:

Չոքեց ձմեռը՝ մահվան նման սառն ու անողոք:

Քաղաքում գզգզված մազերով մի մոնտյոր՝ մազութից սևացած շորերով, սանդուղքն ուսին, իբրև լապտերավառ տնետուն էր ման գալիս: Մի տեղ բուքը պղնձե լարերն էր կտրատել, մյուս տեղը գնդակը փշրել էր լամպը:

Ակսել Բակունց

Նրանք ասում են, որ դու անցել ես
Ու հնացել ես ու հեռացել,
Որ լքել են քեզ ու մոռացել
Օրերում այս խենթ ու դարձդարձիկ.
Բայց տես՝ կանչում է ահա մի ձեռ
Եվ մի սիրտ, որ քեզ սիրում է դեռ.
– Վերադարձի՛ր, օ՛, վերադարձի՛ր...
– Վերադարձի՛ր, օ՛, մենք քեզ կտանք
Թե՛ սեր, թե՛ հուրեր, թե՛ խնդություն.
Ինչպես սիրած մի թափառական,
Դու կրկին, կրկին կմտնես տուն...
Կգգվի դեմքիդ քամի մի զով,
Օրերի շունչը՝ արդեն հնչեղ,
Կլցնի հոգիդ անհուն հույզով
Ու նոր, նոր երգեր կներշնչե...
– Վերադարձի՛ր, օ՛, վերադարձի՛ր...

Եղիշե Չարենց

Վարժություն 42: Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:

1. Եղիշե Չարենցը ծնվել է Կարս քաղաքում:
2. Սուրենը վաղուց գյուղում չէր բնակվում:
3. Նա ամեն առավոտ լվացվում էր սառը ջրով:
4. Խեղճ կենդանիները նեղվում էին քաղցից, շոգից և անսովոր միջավայրից:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Բայի ժամանակը, դեմքը, թիվը

Ժամանակի կարգը ցույց է տալիս, թե խոսելու պահի համեմատությամբ երբ է կատարվում գործողությունը՝ խոսելու պահի՞ն, դրանից առա՞ջ, թե՞ դրանից հետո: Ըստ այդմ՝ առանձնացվում է երեք հիմնական ժամանակ՝ *ներկա* (խոսելու պահին կատարվող գործողություն), *անցյալ* (խոսելու պահից առաջ կատարված գործողություն), *ապառնի* (խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն):

Դեմքի կարգը ցույց է տալիս գործողության և կատարողի դիմային հարաբերությունը: Ըստ այդմ՝ առանձնացվում է երեք դեմք՝ *առաջին*, որն արտահայտում է խոսողի կատարած գործողությունը, *երկրորդ,* որն արտահայտում է խոսակցի կատարած գործողությունը, *երրորդ,* որն արտահայտում է մեկ այլ անձի կամ առարկայի կատարած գործողությունը:

Թվի կարգը ցույց է տալիս՝ մե՞կ, թե՞ մեկից ավելի անձեր կամ առարկաներ են կատարում գործողությունը: Ըստ դրա՝ առանձնացվում է երկու թիվ՝ *եզակի* (մեկ անձի կամ առարկայի կատարած գործողությունը) և *հոգնակի* (մեկից ավելի անձերի կամ առարկաների կատարած գործողությունը):

Վարժություն 43: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. բայի ժամանակն արտահայտում է՝
   ա) գործողության տևականությունը
   բ) գործողության կատարման ժամանակը խոսելու պահի համեմատությամբ
   գ) խոսողի վերաբերմունքը
2. բայի դեմքերը ցույց են տալիս՝
   ա) խոսող, խոսակից, երրորդ անձ
   բ) խոսողի, խոսակցի կամ երրորդ անձի (առարկայի) կատարած գործողությունը
   գ) պատկանելություն, վերաբերություն
3. բայն ունի հետևյալ թվերը՝
   ա) քանակական և դասական
   բ) դրական և ժխտական
   գ) եզակի և հոգնակի

Վարժություն 44: Խմբավորեք տրված բայերը՝ ա) ըստ թվերի. բ) ըստ դեմքերի:

Գնացին, վազեց, կկարդային, քայլել են, նորոգելու է, կասես, պատմեցի, ներկել եք, պատրաստում եմ, պիտի կարդամ, արտագրեց, արտադրեն, կուշանաս, տեսնեի, ավարտվեց, ստացան, կխոստանա, տպագրեցին, ներկայացնելու ենք, հաղթել է:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Բայի եղանակները

Եղանակի կարգը ցույց է տալիս ներկայացվող գործողության նկատմամբ խոսողի այն վերաբերմունքը, որն արտահայտվում է բայի միջոցով: Առանձնացվում է բայի հինգ եղանակ՝ *սահմանական, ըղձական, ենթադրական (պայմանական), հարկադրական, հրամայական:* ***Սահմանական եղանակը*** ցույց է տալիս ստույգ կատարված, կատարվող կամ կատարելի գործողություն: ***Ըղձական եղանակը*** ցույց է տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն: ***Ենթադրական (պայմանական) եղանակը*** ցույց է տալիս պայմանով, ենթադրաբար կամ էլ հաստատապես կատարելի գործողություն: ***Հարկադրական եղանակը*** ցույց է տալիս հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի գործողություն: ***Հրամայական եղանակը*** ցույց է տալիս գործողության կատարման հրաման, խնդրանք:

Բայը կարող է խոնարհվել նաև ժխտական ձևով: Ժխտական խոնարհման բայը ցույց է տալիս, որ գործողությունը տեղի չի ունեցել, տեղի չի ունենում կամ տեղի չի ունենալու, օրինակ՝ *գրում է – չի գրում, գրեց – չգրեց* և այլն:

Վարժություն 45: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. բայի եղանակն արտահայտում է՝
   ա) գործողության կատարման ժամանակը խոսելու պահի համեմատությամբ
   բ) խոսողի վերաբերմունքը գործողության կատարման նկատմամբ
   գ) բայի պարզ կամ ածանցավոր լինելը
2. բայի խոնարհումը կարող է լինել՝
   ա) հարցական և հրամայական
   բ) դրական և ժխտական
   գ) անորոշ և ենթակայական
3. բայի դիմավոր ձևերը կազմվում են՝
   ա) *-ել, -ալ* մասնիկներով
   բ) բազմապատկական ածանցներով
   գ) ձևաբայերով ու *եմ* օժանդակ բայով, բայահիմքով ու վերջավորություններով կամ նաև եղանակիչ *(կ, պիտի)* ավելացնելով
4. բայի եղանակներն են՝
   ա) սահմանական, հրամայական, ըղձական, ենթադրական, հարկադրական
   բ) անորոշ, ենթակայական, հարակատար, համակատար
   գ) անկատար, ապակատար, վաղակատար, ժխտական

Վարժություն 46: Շղատառ գրվածներից որո՞նք վաղակատար դերբայներ չեն:

1. Նա ցանկացավ *գրել* այդ հիանալի միջոցառման մասին:
2. Երիտասարդ գիտնականը արդեն *գրել* է մի քանի գրքեր:
3. Ուզում եմ *զբոսնել* հարազատ քաղաքի ծանոթ փողոցներում:
4. Հիմա ճանապարհը *վերանորոգել* են, և այնտեղ *հասնելը* դժվար չէ:
5. Այդ հինավուրց արձանագրության տառերը վաղուց էին *ջնջվել* ժամանակի քայքայիչ ներգործությունից:
6. Մեր քաղաքում թատրոնի մի նոր շենք են *կառուցել*:
7. Եթե ցանկանում եք *հաղթել*, ապա պետք է լավ մարզվեք:
8. Վարարած գետը *ելել* է ափերից և *ողողել* շրջապատը:
9. Նրա միակ ցանկությունը մրցույթում *հաղթելն* էր:
10. Բոլորը հիացմունքից *քարացել* էին բնության անձեռակերտ հրաշքի առջև:

Վարժություն 47: Արտագրեք նախադասությունները՝ փակագծերում տրված բայերը քերականական անհրաժեշտ ձևերով դնելով համապատասխան տեղերում:

1. Հեռվից արջի ... այդ առարկան իրականում ծառի ... մի ճյուղ էր, որը աստիճանաբար ... դեղնած տերևներով:

   (կոտրել, ծածկել, նմանվել)

2. Վայրի աղավնիները սովորաբար ... շենքի տանիքի մետաղածողերին, իսկ քամիներ ... ... ափամերձ ժայռի խոռոչներում:

   (լինել, պատսպարել, թառել)

3. Մոտակա լեռներից անընդհատ ... վաղորդյան ... քամին, և թեթև ... լճի մակերևույթը:

(սարսռեցնել, փչել, ալեկոծել)

4. Ահա սարի թիկունքից ... ... արևի սկավառակը, և լիճն իսկույն ... ոսկեզօծ ծփանքով:

(առկայծել, ելնել, ծագել)

5. Աղբյուրի ջուրը, փոքր-ինչ ... քարերի արանքով, ... գետին, որի մեջ դեռ մի քիչ զգացվում էր աղբյուրի սառը երակը, ապա ... գետի ջրին:

(խառնել, հոսել, ձուլել)

6. Մայրը բարի ժպիտով ... քնած փոքրիկին, ապա զգույշ ... բազմոցից և կամացուկ դուրս եկավ ննջասենյակից՝ աշխատելով ... հատակի տախտակները:

(վեր կենալ, ճռռացնել, նայել)

7. Տանտերերը բակը ... զանազան ծաղիկներով ու թփերով, որոնք շատ ... արտասահմանից ... հյուրերին:

(ձևավորել, ժամանել, դուր գալ)

8. Չորրորդ օրը դեռ ..., որ նա ... այդ քաղաք, բայց արդեն հարմար աշխատանք ...:

(գալ, ճարել, լրանալ)

9. Հովեկները ամեն օր՝ երեկոյան, ... զբոսայգում, որպեսզի ... առողջարանի աշխատակիցների ... բացօթյա ներկայացումները:

(կազմակերպել, հավաքել, դիտել)

10. Ճանապարհորդական ընկերության աշխատակիցները ... զբոսաշրջիկներին և ... մոտակա հյուրանոցը, որտեղ ընկերությունը նախօրոք ...անհրաժեշտ քանակի սենյակներ:

(ուղեկցել, դիմավորել, պատվիրել)

Վարժություն 48: Ո՞ր նախադասություններում չկան՝ ա) սահմանական եղանակի, բ) ըղձական եղանակի, գ) ենթադրական եղանակի, դ) հարկադրական եղանակի, ե) հրամայական եղանակի բայաձևեր:

ա) 1. Մեքենան, որն ընթանում էր միջքաղաքային ճանապարհով, կանգ առավ բենզալցակայանի մոտ:

2. Վաղորդայնին արշավախումբը բարձրացավ բլրի գագաթը՝ դիտելու արևածագը:

3. Նրանք պետք է առավոտյան մեկնեն, որպեսզի չուշանան ինքնաթիռի թռիչքից:

4. Այդ գործից պետք է երևար նրա հմտության աստիճանը, ուստի անհրաժեշտ էր լավ նախապատրաստվել:

5. Աշակերտները որոշել էին, որ քննությունը հանձնելուց հետո գնալու են էքսկուրսիա:

բ) 1. Որպեսզի մասնակցեն մրցույթին, անհրաժեշտ է, որ ժամանակին ներկայացնեն աշխատանքները:

2. Հարկավոր է, որ այդտեղ կամուրջ կառուցեն, որ քաղաք հասնելը հեշտ լինի:

3. Բոլոր աշխատանքները կներկայացվեն մինչև կիսամյակի ավարտը, և տարեվերջին արդյունքները կամփոփվեն:
4. Հարկավոր է լավ նախապատրաստվել ճամփորդությանը, և դժվարությունները ձեզ հանկարծակիի չեն բերի:
5. Թող այդ ծառերը մեծանան, որ այգին գեղեցկանա:

գ) 1. Շատ կարդանք, որ կարողանանք պատասխանել հարցերին:
2. Նրանք անշուշտ կպնդեն, որ կկարողանան աշխատանքը կատարել:
3. Երբ կարոտում էր հարազատներին, վերադառնում էր հայրենի քաղաք:
4. Եթե չեն կատարի նախնական աշխատանքը, չեն մասնակցի մրցույթին:
5. Կդիմանամ արդյոք կամուրջը վարարած գետի ճնշմանը:

դ) 1. Այգին պիտի ժամանակին ջրեն, իսկ ծառերը՝ ժամանակին էտեն:
2. Պետք է բարեկարգել ճանապարհը, որ շատերն այցելեն գեղատեսիլ այդ վայրը:
3. Պետք է կառուցեն մի այնպիսի նոր հյուրանոց, որը պետք է համապատասխանի անհրաժեշտ պահանջներին:
4. Պետք չէ միայն երազել, այլ պետք է աշխատել ու երազանքներն իրականացնել:
5. Բնակավայրը ջրով ապահովելու համար պիտի նոր ջրագիծ կառուցվի:

ե) 1. Կգնաք և կկատարեք հանձնարարությունը:
2. Մի՛ աղտոտեք շրջապատը և մի՛ կոտրեք ծառերը:
3. Նա շատ էր ցանկանում, որ մասնակցի այդ հավաքույթին:
4. Սիրեք և պահպանեք բնությունը:
5. Պետք է չաղմկել և չխանգարել մյուսներին:

Վարժություն 49: Դուրս գրեք դիմավոր ու անդեմ բայերը և ձևաբանորեն վերլուծեք:

Գրանիտը կարծր և ամուր բյուրեղային ապար է: Առաջանում է խորքային պայմաններում մագմայի սառչելուց և լայնորեն տարածված է բոլոր լեռնային շրջաններում: Օգտագործվում է շինարարության և քանդակագործության մեջ:

Ալմաստը հիրավի համարվում է աշխարհի ամենակատարյալ քարը: Այն անգերազանցելի է իր թափանցիկությամբ, փայլով, կարծրությամբ: Բայց ալմաստը դյուրաբեկ է և հարվածից հեշտությամբ փշրվում է: Քարերի մեջ ամրությամբ նա զիջում է գրանիտին, որի յուրահատկության համար օգտագործում են «գրանիտի պես ամուր» թևավոր արտահայտությունը:

Երկրաբաններին ու քանդակագործներին հայտնի է, թե ինչքան դժվար է գրանիտի կտորները կոտրելը: Բանն այն է, որ գրանիտը կազմված է միմյանց ամուր կպչող զանազան միներալների մանրահատիկներից: Դրանից էլ առաջացել է գրանիտի հայկական անունը՝ հատաքար: Առասպելական հսկաների ուժը չափվում էր նրա դեմ մենամարտելիս: Պատմահայր Մովսես Խորենացին (5-րդ դար) պատմում է, որ Տորք Անգեղը գրանիտե ժայռերը կոտրում էր, եղունգներով հարթում և նրանց վրա թռչունների ու կենդանիների պատկերներ փորագրում:

Ըստ Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՄԱԿԲԱՅ

Գործողության հատկանիշ ցույց տվող բառերը միավորվում են մեկ խոսքի մասի մեջ, որը կոչվում է մակբայ: Մակբայները լինում են *տեղի, ձևի, չափի, ժամանակի:*

Որոշ մակբայներ բազմիմաստ են և տարբեր նախադասություններում կարող են արտահայտել տարբեր իմաստներ: Սրանք կոչվում են *ընդհանրական* մակբայներ:

Նախադասության կազմում մակբայները հիմնականում կատարում են պարագաների պաշտոններ:

Վարժություն 50: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. մակբայները ցույց են տալիս՝
   ա) անձեր և առարկաներ
   բ) գործողության հատկանիշ
   գ) գործողություն՝ դեմքի, թվի, ժամանակի, եղանակի կարգերով
2. մակբայները՝
   ա) հոլովվում են
   բ) խոնարհվում են
   գ) քերականորեն չեն փոփոխվում
3. մակբայները լինում են՝
   ա) պատճառի, պայմանի, նպատակի, հիմունքի
   բ) ժամանակի, տեղի, ձևի, չափի
   գ) քանակական, դասական, բաշխական, կոտորակային
4. մակբայներ կարող են կազմվել՝
   ա) *-ուհի, -ություն, -ստան, -ք, -վածք* ածանցներով
   բ) *-անի, -ածո, -իչ, -անոց, -եղեն* ածանցներով
   գ) *-բար, -պես, -որեն, -ովին, -գին* ածանցներով

Վարժություն 51: Գտեք, թե տրված բառերից որոնք են մակբայներ:

Հաճախ, լիովին, ապա, իսպառ, մասին, հերոսաբար, բայց, ուժգին, մեղմորեն, իսկ, դեպի, տարի, օրեցօր, գյուղեգյուղ, եթե, քանի որ, վաղուց, թեև, կամացուկ:

Վարժություն 52: Յուրաքանչյուր շարքում գտեք նշված տեսակի մակբայը:

1. *Ձևի* – ա) ամբողջովին, գրեթե, կամացուկ, այդպես, քառակի
   բ) վաղուց, հազիվ, գյուղեգյուղ, շուտով, օրեցօր
   գ) միասին, նախապես, ամենուրեք, դեռ, հավիտյան
   դ) վաղուց, համարյա, իսպառ, հապճեպ, բազմիցս
2. *Տեղի* – ա) չափազանց, այդտեղ, ուր, ամենուր, այլևս
   բ) վերջերս, այլուր, այնուհետև, գլխովին, կիսով չափ
   գ) չափազանց, փոքր-ինչ, դեսուդեն, որտեղ, հազիվ
   դ) գողեգող, կուզեկուզ, գյուղեգյուղ, փոխնիփոխ, հոտնկայս

3. *Ժամանակի* – ա) առայժմ, բազմիցս, երբ, լիովին, ամենուր
բ) վերուստ, այլևս, հապճեպ, հանկարծ, դանդաղ
գ) դեռևս, գլխովին, մասամբ, թեթևակի, ավելի
դ) շուտով, քիչ-քիչ, իսպառ, ուժգին, երիցս

4. *Չափի* – ա) փոքր-ինչ, դանդաղորեն, ներքուստ, դեռ, հավետ
բ) առմիշտ, գրեթե, վաղօրոք, հիմա, ամենուրեք
գ) ի վերջո, վաղուց, մասամբ, միասին, հանկարծ
դ) հավիտյան, ինչքան, օրավուր, առայժմ, լիովին

Վարժություն 53: Դուրս գրեք մակբայները և որոշեք տեսակը:

Պատահաբար են պատահում կյանքում,
Անհրաժեշտաբար հրաժեշտ տալիս...

***

Մեկը լալիս է նորածընի պես,
Ճչում է, սակայն... արցունքներ չկան:

Մեկն էլ բերանից ծպտուն չի հանում,
Բայց արցունքներն են շիթ-շիթ լճանում:

Մեկն էլ ինձ նման (գուցե նաև՝ քեզ),
Բարձր ճչալու սովոր չէ բնավ,
Եվ արցունքներն էլ աչքից չեն հորդում,
Այլ հոսում են ներս
Ու կիտվում դանդաղ
Չեչաքարի պես ծակծկված սրտում:

Պարույր Սևակ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԿԱՊ

Լեզվում կան բառեր, որոնք մի բառ կապում են մեկ այլ բառի և այդ կապվող բառի հետ դառնում են նրա լրացումը: Այդ բառերը միավորվում են կապ խոսքի մասի մեջ:

Կապվող բառից առաջ դրվող կապերը կոչվում են նախադիրներ՝ *առանց, դեպի, մինչև, հանուն, նախքան, չնայած, ըստ, հօգուտ* և այլն (օրինակ՝ *առանց գրքի*): Կապվող բառերից հետո դրվող կապերը կոչվում են հետադիրներ, օրինակ՝ *առթիվ, զատ, համար, հանդերձ, հանդեպ, մասին, միջև, մեջ, վրա, տակ* և այլն (օրինակ՝ *սեղանի վրա*): Որոշ կապեր կարող են դրվել կապվող բառերից թե առաջ, թե հետո, օրինակ՝ *բացի (բացի նրանից* կամ *նրանից բացի)*, *անկախ* և այլն:

Որպես կապ կարող են հանդես գալ այլ խոսքի մասերին պատկանող բառեր (հիմնականում գոյականներ և մակբայներ), որոնք կոչվում են կապական բառեր, օրինակ՝ Դասի *Ժամանակը* (գոյական) սպառվեց. Դասի *ժամանակ* (կապական բառ) անընդհատ խոսում էր:

Վարժություն 54: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. կապ են կոչվում այն բառերը,
   ա) որոնք ստորադաս նախադասությունը կապակցում են գերադասին
   բ) որոնք մի բառ կապում են այլ բառի՝ այդ կապվող բառի հետ դառնալով նրա լրացումը
   գ) որոնք կապակցում են իրար համազոր նախադասություններ
2. կապերը՝
   ա) չեն կարող դրվել կապվող բառից հետո
   բ) դրվում են միայն կապվող բառից առաջ
   գ) կարող են դրվել կապվող բառից առաջ կամ հետո, իսկ որոշ կապեր՝ և՛ առաջ, և՛ հետո
3. կապերը լինում են՝
   ա) որակական և հարաբերական
   բ) նախադիրներ և հետադիրներ
   գ) քանակական և դասական
4. կապերը կարող են արտահայտել՝
   ա) դատողական վերաբերմունք
   բ) զգացում կամ կոչ
   գ) տեղ, ժամանակ, պատճառ, նպատակ, բացառում, ձև
5. կապերի հետ կարող են գործածվել՝
   ա) ուղղական, սեռական, տրական, հայցական, ներգոյական հոլովներով բառեր
   բ) հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով բառեր
   գ) սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական հոլովներով բառեր

Վարժություն 55: Կազմեք նախադասություններ՝ գործածելով *հանուն, համար, մասին, մոտ, բացի, ներքո, մինչև, դեպի, փոխարեն, պես* **կապերը:**

Վարժություն 56: Յուրաքանչյուր շարքում գտեք նախադիրներն ու հետադիրները:

1. նախքան, հօգուտ, նման, մասին, մինչև, չափ
2. օրոք, առանց, հետ, դեպի, հանուն, մոտ
3. իբրև, ի հաշիվ, տակ, ի շահ, մեջ, փոխարեն
4. հանձին, առթիվ, հետո, որպես, ըստ, միջև
5. առ, ի պատիվ, հանդերձ, վերաբերյալ, պես, մինչ

Վարժություն 57: Գտեք կապերն ու կապական բառերը և որոշեք դրանց տեսակն ըստ դիրքի:

Գագատը խեժածուխ է, որն օգտագործում են զարդեր պատրաստելու համար: Դանակի և խարտոցի միջոցով այն կարելի է հեշտությամբ տաշել ու կտրել: Գագատի

և ագաթի միջև ոչ մի ընդհանրություն չկա՝ բացի անվանումների տարօրինակ նմանությունից: Գագատը քարածխի տարատեսակ է, որը միլիոնավոր տարիների ընթացքում չի հասցրել դառնալ բարձրորակ քարածուխ: Քարի սև գույնը պատճառ է դարձել գագատի հայկական հին անվանը՝ գիշեր: Այդ անվանումը տարածվեց հարևան ժողովուրդների մեջ, մտավ հանքաբանության դասագրքերը և միջազգային ճանաչում ստացավ: Քարհատներին դուր էին գալիս քարի ամրությունն ու դյուրամշակելիությունը: Սովորական դանակի միջոցով գիշերից պատրաստում էին զարմանահրաշ արձանիկներ, ապարանջաններ, զարդեր: Մինչև պլաստմասսաների երևան գալը այդ էժան, բայց գեղեցիկ իրերը մեծ պահանջարկ ունեին: Նախկինում գիշերն օգտագործվել է նաև որպես դեղամիջոց: Բնության մեջ շատ քիչ են հանդիպում բացարձակ սև քարեր: Եղածների մեջ էլ գիշերը համարվում է ամենասևը: Նրա հետ, իրոք, կարող է համեմատվել միայն անթափանցելի, սև, մութ գիշերը:

Ըստ Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքի

Վարժություն 58: Յուրաքանչյուր շարքում գտեք կապը:

1. կամ, ահավասիկ, գրեթե, ներքո, սույն
2. բայց, նույնքան, նախքան, էլ, նաև
3. մասին, բոլոր, ահա, գուցե, որովհետև
4. իսկ, առանց, թերևս, իրոք, այստեղ
5. քանի որ, ինչ-որ, մյուս, փոխանակ, մշտապես
6. հանդերձ, այնուամենայնիվ, ողջ, որպեսզի, հենց
7. այսպիսի, եթե, ըստ, անշուշտ, յուրաքանչյուր
8. լիովին, մինչև որ, բարեբախտաբար, հանուն, քանի
9. պես, այդպես, իսկ, նույնիսկ, իսկույն
10. օգտակար, օգտավետ, հանրօգուտ, հօգուտ, անօգուտ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՇԱՂԿԱՊ

Բառեր կամ նախադասություններ իրար շաղկապող բառերը կոչվում են շաղկապներ:

Ըստ իրենց շարահյուսական գործառույթի՝ շաղկապները բաժանվում են երկու խմբի՝ *համադասական* և *ստորադասական:* Համադասական շաղկապներն իրար են կապում բառակապակցության, նախադասության անդամներ կամ համադաս նախադասություններ, իսկ ստորադասական շաղկապները ստորադաս նախադասությունը կապում են գերադասին:

Համադասական շաղկապներից են՝ *և, ու, բայց, իսկ, սակայն, էլ, այլ, նաև, այլև, կամ, ապա* և այլն:

Ստորադասական շաղկապներից են՝ *որ, որովհետև, քանզի, մինչև որ, եթե, թեև, թեկուզ, թեպետ, որպեսզի, քանի որ* և այլն:

Վարժություն 59: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. շաղկապները այն բառերն են,
   ա) որոնք մի բառ կապում են այլ բառի՝ այդ կապվող բառի հետ դառնալով նրա լրացումը
   բ) որոնք շաղկապում են նախադասության համազոր անդամներ կամ բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններ
   գ) որոնք կարող են փոխարինել գոյականին, ածականին, թվականին, մակբային
2. շաղկապները լինում են՝
   ա) նախադիրներ և հետադիրներ
   բ) համադասական և ստորադասական
   գ) որակական և հարաբերական
3. համադասական շաղկապները՝
   ա) շաղկապում են գերադաս և ստորադաս նախադասություններ
   բ) ենթական ու ստորոգյալը
   գ) համադաս նախադասություններ կամ բառակապակցության, նախադասության համադաս անդամներ
4. ստորադասական շաղկապները՝
   ա) շաղկապում են նախադասության անդամներ
   բ) բացահայտիչ և բացահայտյալ
   գ) գերադաս և ստորադաս նախադասություններ

Վարժություն 60: Յուրաքանչյուր շարքում գտեք շաղկապը:

1. վրա, դեմ, չափ, իսկ, պես
2. քանի որ, ինչ-որ, ահա, դեռևս, գուցե
3. այստեղ, քանի դեռ, մասին, հանձին, չէ՞ որ
4. բազմիցս, ինչու, այլև, այլևս, ախր
5. որքան, ինչպիսի, մինչդեռ, միևնույն, միմիայն

Վարժություն 61: Առանձնացրեք համադասական շաղկապները:

Բայց, քանի որ, և, թեպետ, ու, որ, թե, սակայն, կամ, եթե, նաև, որպեսզի, որովհետև, թեև, էլ, հենց որ, քանի դեռ:

Վարժություն 62: Լրացրեք բաց թողնված շաղկապները *(իսկ, եթե, սակայն, ապա, բայց, ու, որ, և, թե՛... թե՛, այսինքն, կամ: Իսկ* **և** *բայց* **շաղկապները գործածված են երկուական):**

Մեկ ամբողջ հինգ տասնորդական կիլոմետրը լավ վազորդն անցնում է մոտավորապես երեք րոպե հիսուն վայրկյանում: ... հետիոտնի սովորական արագությունը մեկ և կես մետր-վայրկյան է, ... ստացվում է, ... մարզիկը մեկ վայրկյանում անցնում է յոթ մետր: ... հետիոտնը կարող է երկար քայլել, ... մարզիկն ընդունակ է պահպանելու իր արագությունը միայն կարճ ժամանակ:

Հետաքրքիր է մարդու ընթացքը զանազան կենդանիների, թռչունների ... միջատների արագությունների հետ համեմատելը: Խխունջն ... կրիան լիովին

արդարացնում են իրենց մասին ստեղծված ... իրական, ... մտացածին պատմությունները: Խխունջը սողում է հինգ ամբողջ չորս տասնորդական մետր մեկ ժամում, ...՝ մարդուց ուղիղ հազար անգամ քիչ: Կրիան փոքր-ինչ գերազանցում է խխունջին. նա շարժվում է մինչև յոթ մետր-ժամ արագությամբ: Մարդը կարող է հաջողությամբ մրցել դանդաղահոս գետերի մեծ մասի հոսանքի հետ, ... սովորական ճանճի հետ, որը մեկ ակնթարթում թռչում է հինգ մետր, մարդը կարող է մրցել գուցե միայն դահուկներով: Նապաստակից ... որսորդական շնից մարդը հաճախ առաջ չի անցնում նույնիսկ ձիով, ... արծվի հետ կարող է մրցել միայն ինքնաթիռով:

... մարդը հայտնագործել է բազմազան մեքենաներ, որոնք նրան արագընթաց են դարձնում:

Ըստ Յակով Պերելմանի «Հետաքրքրաշարժ ֆիզիկա» գրքի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ

Խոսողի վերաբերմունքն արտահայտող բառերը կոչվում են վերաբերականներ: Ըստ իրենց իմաստների՝ վերաբերականները բաժանվում են տարբեր խմբերի:

Հաստատում արտահայտող՝ *այո՛, արդարև, անշուշտ, անկասկած, անպատճառ, անտարակույս, անպայման, իսկապես, իրոք, հիրավի* և այլն:

Ժխտում արտահայտող՝ *ո՛չ, չէ՛:*

Կասկած, ենթադրություն, երկբայություն արտահայտող՝ *գուցե, երևի, թերևս, կարծեմ, կարծես, կարծես թե, ասես, միգուցե* և այլն: Մի շարք վերաբերականներ միաժամանակ արտահայտում են կասկած և հարց՝ *չլինի՞, չլինի՞ թե, մի՞թե, արդյոք* և այլն:

Սաստկացում, շեշտում արտահայտող՝ *անգամ, նույնիսկ, հենց, մանավանդ, նամանավանդ, մինչև անգամ, մինչև իսկ* և այլն:

Ցուցադրում արտահայտող՝ *ահա, ահավասիկ*:

Սահմանափակում արտահայտող՝ *գեթ, լոկ, գոնե, թեկուզ, միայն, սոսկ, միայն թե* և այլն:

Հորդոր, խնդրանք, կամք արտահայտող՝ *հապա, ապա, մի, թող, դե* և այլն:

Ափսոսանք կամ ուրախություն արտահայտող՝ *բարեբախտաբար, դժբախտաբար, ցավոք, ախր, չէ՞ որ* և այլն:

Իղձ, ցանկություն, բաղձանք արտահայտող՝ *երանի, երնեկ:*

Վերաբերականները նախադասության անդամ չեն համարվում:

Վարժություն 63: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. վերաբերականները՝
   ա) նախադասություններ շաղկապող բառեր են
   բ) խոսողի վերաբերմունքն արտահայտող բառեր են
   գ) առարկայի հատկանիշ ցույց տվող բառեր են

2. վերաբերականները՝
   ա) նախադասության մեջ լինում են որոշիչ
   բ) կատարում են խնդրի պաշտոն
   գ) նախադասության անդամ չեն համարվում
3. վերաբերականները՝
   ա) քերականորեն չեն փոփոխվում
   բ) հոլովվում են
   գ) խոնարհվում են

Վարժություն 64: Գտեք վերաբերականները և որոշեք, թե վերաբերմունքային ինչ տեսակի են պատկանում:

Կարծես թե դարձել եմ ես տուն,
Բոլորն առաջվանն է կրկին...

***

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի.
Մա՞հն է արդյոք, թե՞ նինջը քեզ
Պատել, պայծառ Նաիրի:

***

Ահով ահա կանչում եմ քեզ.
Ցոլա՛, ցնո՛ր Նաիրի...

Վահան Տերյան

***

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

***

Թող աչքերիս լույսն էլ մարի,
Միայն միտքս փոխվի բառի,
Համերգի մեջ այս աշխարհի
Չհամրանամ, չհամրանամ:

***

Գուցե նստած պատշգամբում
Թախծում ես դու մեկի մասին,
Որ երազում է ուրիշին
Եվ քեզ բնավ չի նկատում:

***

Մայրամուտն, ավա՜ղ, մոտ է, բարեկամ:
Քո ստվերն արդեն մի քանի անգամ
Երկար է քո այդ երկար հասակից:

Համո Սահյան

***

Ափսոս այն ճանապարհներին,
Որ անց եմ կացրել առանց քեզ:

Նաիրի Զարյան

Վարժություն 65: Գտեք վերաբերականները՝ նշելով, թե մյուս բառերը որ խոսքի մասերին են պատկանում:

Բարեկամաբար, արդարև, բարեբախտաբար, այսպիսի, անշուշտ, մոտ, սոսկ, անկասկած, վրա, անպատճառ, հետո, այսքան, բայց, անպայման, իսկապես, օրեցօր,

իրոք, դարձյալ, հիրավի, այո՛, մինչև անգամ, ո՛չ, միայն, գրեթե, մանավանդ, գեթ, գուցե, երևի, թերևս, որպեսզի, ասես, միգուցե, ինչո՞ւ, մի՞թե, արդյոք, մեկմեկու, գոնե, քանի որ, դժբախտաբար, լիովին, ցավոք, ախր, նամանավանդ, նույնիսկ, լոկ, թեկուզ, թեև, ահա, վաղուց, ահավասիկ, մեղմորեն:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Զգացմունք, զգացում, ինչպես նաև կոչ, նմանաձայնություն արտահայտող բառերը կոչվում են ձայնարկություններ: Ձայնարկությունները բաժանվում են երեք տեսակի՝ *զգացական, կոչական* և *բնաձայնական* (կամ *նմանաձայնական*):

Զգացական են այն ձայնարկությունները, որոնցով խոսողն արտահայտում է իր զգացումը կամ զգացմունքը, օրինակ՝ *ա՜խ, պա՜հ, ջա՛ն, վա՜խ, ո՛ւխ* և այլն:

Կոչական են այն ձայնարկությունները, որոնց միջոցով խոսողը կանչում է, ուշադրություն հրավիրում, օրինակ՝ *է՛յ, էհե՛յ, տո՛ւ, ջո՛ւ-ջո՛ւ, փի՛շտ* և այլն:

Բնաձայնական (նմանաձայնական) ձայնարկություններով խոսողը փորձում է արտահայտել բնության մեջ եղած ձայները, օրինակ՝ *խըշշ, բըզզ, ծի՛վ-ծի՛վ, ճըռռ* և այլն:

Ձայնարկությունները նախադասության անդամ չեն համարվում և մյուս բառերից անջատվում են ստորակետով, նրանց վրա դրվում է բացականչական նշան կամ շեշտ: Ձայնարկություններից կարող են կազմվել այլ խոսքի մասեր, օրինակ՝ *խըշշ – խշշալ (բայ) – խշշոց (գոյական) – խշշուն (ածական)*:

Վարժություն 66: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. ձայնարկություններն արտահայտում են՝
   ա) զգացմունք, կոչ, նմանաձայնություն
   բ) խոսողի դատողական վերաբերմունքը
   գ) առարկաների որակական հատկանիշներ
2. ձայնարկությունները լինում են՝
   ա) որակական և հարաբերական
   բ) զգացական, կոչական, բնաձայնական
   գ) համադասական և ստորադասական
3. ձայնարկությունները՝
   ա) նախադասության մեջ դառնում են որոշիչ
   բ) կապակցում են նախադասություններ
   գ) նախադասության անդամ չեն համարվում

Վարժություն 67: Գտեք ձայնարկությունները (ձայնարկությունների վրա առոգանության նշանները դրված չեն)՝ նշելով մյուս բառերի խոսքի-մասային պատկանելությունը:

Ախ, հեյ, ախ քաշել, էհ, այ, ջան, խշշոց, խըշշ, ծուղրուղու կանչել, դեհ, հեյ-հեյ, էհե, ուֆ, ճռճռալ, օհ, խշշուն, վայ տալ, չրխկալ, ախ ու վախ անել, օխայ, վաշ-վիշ, օհո, հը, մլավել, զրնգուն, վայ, ուխ:

Վարժություն 68: Ձևաբանորեն վերլուծեք տրված նախադասությունները:

1. Փողոցի բնակիչները արևի մայր մտնելուց հետո փակում էին տների ու պարտեզների դռները:

2. Օտարերկրացի ճանապարհորդները մեր երկրի մասին տարաբնույթ տեղեկություններ են թողել՝ ներկայացնելով աշխարհագրական յուրօրինակությունները, բուսական և կենդանական աշխարհը:

3. Օ՜, ի՜նչ երջանիկ կլինեի, եթե կարողանայի չհիշել այլևս այն, ինչ որ կատարվել է:

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Շարահյուսությունը քերականության այն բաժինն է, որն ուսումնասիրում է բառերի ու նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, նրանց հարաբերություններն իրար նկատմամբ, բառերի կատարած դերը բառակապակցության և նախադասության մեջ:

Վարժություն 1: Կազմեք պարզ ընդարձակ նախադասություններ՝ գործածելով տրված բառերը:

1. ճանապարհ, մեքենա, աղբյուր, սառնորակ
2. մեղու, ծաղիկ, բզզոց, նեկտար
3. զբոսայգի, երեխա, կարուսել, գույնզգույն
4. ուռենի, ցայտաղբյուր, նստարան, մարդ
5. շենք, փողոց, նորակառույց, բակ
6. դասարան, աշակերտ, խնդիր, գրատախտակ
7. նավ, ալիք, ուղևոր, բարձրանալ
8. անտառ, կենդանի, գետ, գեղեցիկ
9. նկարիչ, բնություն, կտավ, վրձնահարված
10. մարզադաշտ, երկրպագու, խաղ, թիմ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բառերը կապակցվելիս իրար նկատմամբ ունենում են համադասական, ստորադասական և ստորոգական հարաբերություններ: Օրինակ՝ *Ծաղկամանում բուրում էին կարմիր, ճերմակ, վարդագույն, դեղին ծաղիկներ* նախադասության մեջ *կարմիր, ճերմակ, վարդագույն, դեղին* բառերը կապակցված են համադասական հարաբերությամբ, որովհետև իրար համազոր են. մեկը չի լրացնում մյուսին: Այդ բառերը, սակայն, *ծաղիկներ* բառին կապված են ստորադասական հարաբերությամբ, որովհետև նրա լրացումներն են: Իսկ *բուրում էին ծաղիկներ* բառերը կապակցված են ստորոգական հարաբերությամբ: Ստորոգական է այն կապը, երբ հատկանիշը վերագրվում է ժամանակային հարաբերությամբ: Ստորոգական կապը լինում է նախադասություններում: Բառակապակցություններում բառերի կապը ստորադասական է, օրինակ՝ *բարձր շենք, աղբյուրի քչքչոց* և այլն:

Բառակապակցությունները լինում են անվանական, բայական և մակբայական: Անվանական են այն բառակապակցությունները, որոնց գերադաս անդամը որևէ անուն խոսքի մաս է՝ գոյական, ածական, թվական, դերանուն, օրինակ՝ *գեղեցիկ նկար, շատ գեղեցիկ, մոտավորապես քսան, գրեթե այդքան:* Բայական են այն բառակապակցությունները, որոնց գերադաս անդամը դերբայ է, օրինակ՝ *արագ վազել, լավ նկարող:* Մակբայական բառակապակցությունների գերադաս անդամը մակբայ է՝ *շատ արագ, բավական ուժգնորեն:*

Վարժություն 2: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. շարահյուսության մեջ ուսումնասիրվում են՝
   ա) բառերի կազմությունը
   բ) հնչյունների գրությունն ու արտասանությունը
   գ) բառերի ու նախադասությունների կապակցումը խոսքում, նրանց հարաբերություններն իրար նկատմամբ, բառերի կատարած դերը
2. շարահյուսական միավորներ են՝
   ա) հնչյունը և վանկը
   բ) ածանցը և արմատը
   գ) բառակապակցությունը և նախադասությունը
3. շարահյուսական կապը կարող է լինել՝
   ա) համադասական, ստորադասական, ստորոգումային
   բ) պատմողական, հարցական, հրամայական
   գ) որոշյալ և անորոշ
4. բառակապակցություններն ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության լինում են՝
   ա) դիմավոր և անդեմ
   բ) անվանական, բայական, մակբայական
   գ) պարզ և բարդ

Վարժություն 3: **Գրեք հնգական անվանական, բայական և մակբայական բառակապակցություն:**

Վարժություն 4: **Առանձնացրեք գոյականական, ածականական, թվականական, դերանվանական և բայական բառակապակցությունները:**

Գեղեցիկ ծաղիկ, վարպետորեն պատրաստել, մոտավորապես երեք, գրեթե այդքան, բարձրահարկ շենք, կարկաչուն առվակ, շատ հմտորեն, դանդաղ ընթանալ, համարյա ութ, չափազանց հետաքրքիր, լիովին ավարտված, շատ մտերմաբար, ամողջովին երկաթե, ասֆալտապատ ճանապարհ, մոտավորապես այդտեղ, շատ գեղեցիկ, շատ տաք, ուրախ խաղալ:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բառը կամ բառերի կապակցությունը, որն արտահայտում է ամփոփ միտք և ունի ստորոգում, կոչվում է նախադասություն: Ստորոգումը *ժամանակային հարաբերությամբ հատկանիշի վերագրումն է*: Օրինակ՝ «*Տղան վազում* է» նախադասության մեջ վազելու հատկանիշը ստորոգման միջոցով վերագրվել է տղային: Իսկ *վազող տղա* կապակցության մեջ ժամանակային հարաբերություն չկա, ուստի չկա ստորոգում: Նույն ձևով՝ «*մեծ տուն*» և «*Տունը մեծ է*»:

Նախադասությունը կարող է կազմվել գլխավոր և երկրորդական անդամներից: Գլխավոր անդամներն են *ենթական* և *ստորոգյալը,* իսկ երկրորդական անդամներն են *լրացումները*:

Լրացումները լինում են երկու տեսակի՝ բայական անդամի և գոյականական անդամի: Գոյականական անդամի լրացումները երեքն են՝ *որոշիչ, հատկացուցիչ* և *բացահայտիչ:* Բայական անդամի լրացումներն են *խնդիրները* և *պարագաները*, որոնք ունեն իրենց տեսակները:



Վարժություն 5: Գտեք, թե շղատառ գրված անդամներից որոնք են գոյականական անդամի լրացումներ, որոնք՝ բայական:

Իմաստունը հարցրեց *ծառերին*. «Ինչն է պատճառը, որ դուք որքան *շատ* եք վեր բարձրանում, այնքան *խոր* եք արմատ ձգում»: Ծառերը պատասխանեցին. «Այդ ինչպե՞ս է, որ չգիտես, իմաստո՛ւն. չէ՞ որ մենք, *առատ* ճյուղակալելով, չենք կարող դիմակայել *սաստիկ* քամուն, եթե *մեր* արմատները *խորությամբ* չտարածենք *հողում:* Տեսնո՞ւմ ես *մեր եղբայրներին՝ հաճարենուն* ու *սոսիին*, որոնք թեև սաղարթախիտ չեն, բայց *խոր արմատներ* չունենալու պատճառով չեն կարողանում դիմադրել *քամուն*»:

Ըստ Մխիթար Գոշի առակի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեկ ստորոգում ունեցող նախադասությունը կոչվում է պարզ: Եթե նախադասությունը կազմված է մեկից ավելի պարզ նախադասություններից, այսինքն՝ ունի մեկից ավելի ստորոգումներ, ապա կոչվում է բարդ:

Պարզ նախադասություններն ըստ կազմության լինում են *պարզ համառոտ* և *պարզ ընդարձակ*: Պարզ համառոտ նախադասությունների կազմում չկան լրացումներ (օր.՝ «*Դուռը բացվեց*»), իսկ պարզ ընդարձակ նախադասությունների կազմում կա գոնե մեկ լրացում (օր.՝ «*Դուռը քամուց բացվեց*»):

Բարդ նախադասությունը ևս ունի իր կառուցվածքային տեսակները:

Վարժություն 6: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. նախադասություններն ըստ կազմության լինում են՝
   ա) պարզ և բարդ բ) պատմողական և հարցական
   գ) անվանական և բայական
2. պարզ նախադասությունները լինում են՝
   ա) համադասական և ստորադասական
   բ) համառոտ և ընդարձակ
   գ) գերադաս և ստորադաս
3. պարզ համառոտ նախադասություններում լինում են՝
   ա) խնդիրներ և պարագաներ բ) որոշիչ և բացահայտիչ
   գ) ենթակա և ստորոգյալ

Վարժություն 7: Ո՞ր նախադասություններն են պարզ համառոտ:

1. Ֆիլմն ավարտվեց:
2. Ոչ ոք չպետք է ձեռք տա:
3. Կանչեցին, և գնաց:
4. Լուսադեմին հասանք:
5. Աղմուկը դադարեց:
6. Աշխատանքն ավարտեցին:
7. Կառուցվեց աղբյուր-հուշարձան:
8. Մոտեցանք շենքին:
9. Ոչ մեկը ջանք չթափեց:
10. Ձյունը հալվեց:

Վարժություն 8: **Կազմեք հնգական պարզ համառոտ, պարզ ընդարձակ և բարդ նախադասություն:**

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԻ (ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ)

Նախադասությունները դասակարգվում են նաև ըստ հաղորդակցման նպատակի կամ հնչերանգի: Ըստ հնչերանգի՝ նախադասությունները լինում են *պատմողական, հրամայական, բացականչական, հարցական*, օրինակ՝ պատմողական՝ «*Տուն եք վերադառնալու*». հրամայական՝ «*Տո՛ւն վերադարձեք*». բացականչական՝ «*Տո՜ւն եք վերադառնալու*». հարցական՝ «*Տո՞ւն եք վերադառնալու*»: Երբեմն առանձնացվում են նաև ըղձական նախադասություններ:

Վարժություն 9: **Կազմեք հնգական պատմողական, հարցական, հրամայական, բացականչական նախադասություն:**

Վարժություն 10: **Որոշեք յուրաքանչյուր նախադասության հնչերանգային տեսակը:**

Ձորի մասին առասպելներ էին պատմում: Դա Զանգվի ձորն էր, որը հիմա բոլորովին էլ հեռու չի թվում, բայց այն ժամանակ շատ հեռու էր: Ճանապարհը դարուփոս էր, քարքարոտ, հատող առուներով: Ոչ մեկն էլ մենակ ձոր չէր իջնում. խուսափում էին: Իսկ ինչ՞ր չէին պատմում մեծ քարայրի մասին, որտեղ երբեք չէինք եղել:

Որքա՜ն էինք ուրախանում, երբ ցածր դասարաններում մեզ էքսկուրսիա էին տանում: Էքսկուրսիա կոչվածը Շիրվանզադեի դպրոցից մինչև ձորաբերանն էր: Իսկ չորրորդ դասարանում արդեն հայրենի բնության որոշ դասեր այնտեղ էինք անցկացնում: Ուսուցիչը բացատրում էր, թե ինչ են կիրճը, գետը, հողային ու քարային շերտերը և այլն:

Այժմ մի քանի րոպեում ասֆալտապատ ճանապարհով, մեքենա նստած, իջնում ես ձոր, գետի կողքի ճանապարհով դուրս գալիս Հրազդանի մեծ կամրջի մոտ: Էլ ի՞նչ հմայք, էլ ի՞նչ էքսկուրսիա: Մի քանի րոպե... և ոչ մի ռոմանտիկա: Իսկ այն ժամանակ ձոր գնալը երևույթ էր, ճանապարհորդություն:

Ո՞ւր է այն ժամանակվա հորդացած Զանգուն: Ափսո՜ս մեր մանկության ձորը...

Ըստ Գևորգ Դևրիկյանի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Շարահյուսական կապակցման եղանակներն են *համաձայնությունը, խնդրառությունը* և *առդրությունը:*

1. *Համաձայնությունը* կապակցման այն եղանակն է, որի դեպքում իրար կապակցվող բառերը դրվում են քերականական միևնույն կարգով, օրինակ՝ միևնույն դեմքով, միևնույն թվով և այլն: Ժամանակակից հայերենում համաձայնությամբ կապակցվում են ենթական ու ստորոգյալը, բացահայտիչն ու բացահայտյալը: Ենթական և ստորոգյալը համաձայնում են դեմքով և թվով: Բացահայտիչը և բացահայտյալը համաձայնում են դեմքով, թվով և հոլովով:

2. *Խնդրառությունը* կապակցման այն եղանակն է, որի դեպքում գերադաս բառի պահանջով լրացումը դրվում է որոշակի հոլովով կամ կապով ու հոլովված բառով: Օրինակ՝ *զրուցել* բայը պահանջում է բացառական հոլովով կամ *մասին* կապով ու նրա խնդրով ձևավորված լրացում՝ *զրուցել առօրյայից* կամ *առօրյայի մասին: Ելնել* բայը պահանջում է բացառականով լրացում՝ *ելնել տնից*, *հիանալ* բայը՝ գործիականով լրացում՝ *հիանալ նկարով* և այլն:

3. *Առդրությունը* կապակցման այն եղանակն է, որի դեպքում լրացումը և լրացյալը իրար կապակցվում են իմաստով և շարադասությամբ, այսինքն՝ լրացումը կապակցվելու համար քերականորեն չի փոփոխվում: Օրինակ՝ *գեղեցիկ տուն, հետաքրքիր գիրք* և այլն:

Վարժություն 11: Փակագծերում տրվածներից ընտրեք խնդրառական ճիշտ տարբերակը:

Նվագել (ջութակի վրա, ջութակ), կռվել թշնամու (դեմ, հետ), վերաբերել (հարցի մասին, հարցին), վատ վերաբերվել (ընկերոջ հետ, ընկերոջը), անհանգստանալ (կատարվածով, կատարվածից), մասնակցել (մրցույթին, մրցույթում), կասկածել (ընկերոջ վրա, ընկերոջը), մասնակցել (գործում, գործին), համաձայն լինել (առաջարկի հետ, առաջարկին):

Վարժություն 12: Փակագծերում տրվածներից ընտրեք ճիշտ համաձայնությամբ կապակցվողը:

1. Կամ Հասմիկը, կամ Լուսինեն (կգան, կգա) կայարան՝ քեզ դիմավորելու:
2. Արմենը ընկերների հետ (գնաց, գնացին) կինո:
3. Այդ խանութում վաճառվում (է, են) գեղեցիկ ծաղկամաններ:
4. Պահանջվում (է, են) փորձառու վարպետներ:
5. Ես՝ որպես (աշակերտի, աշակերտ), դիմում եմ Ձեզ՝ իմ ուսուցչին:
6. Նրա պարտեզում բազմաթիվ գեղեցիկ ծաղիկներ (կան, կա):
7. Տունը և նրա մոտ գտնվող այգին շատ գեղեցիկ (էր, էին):

8. Տեղակալը տնօրենի հետ (անցան, անցավ) միջանցքով:
9. Որպես փորձված (մարզիկ, մարզիկի)՝ նրան ուղարկեցին մրցույթին:
10. Ժողովուրդը ողջունում (էին, էր) հաղթողներին:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նախադասության գլխավոր անդամներն են ենթական և ստորոգյալը: *Ենթական նախադասության այն անդամն է, որը ցույց է տալիս մի բան անող կամ լինող առարկա, անձ*: Ենթական դրվում է ուղղական հոլովով: Ենթական արտահայտվում է գոյականով, անձնանիշ և առարկայանիշ դերանուններով, գոյականաբար գործածված բառերով:

Ստորոգյալը նախադասության այն անդամն է, որը ցույց է տալիս, թե ինչ է անում, ինչ է լինում, ինչ է ենթական: Ստորոգյալն ունի երկու տեսակ՝ *պարզ* և *բաղադրյալ*: Պարզ է այն ստորոգյալը, որն արտահայտված է միայն խոնարհված բայով, օրինակ՝ *երգում է, կգրի, պետք է գրի, գրիր, ծափ է տալիս* և այլն: Բաղադրյալ ստորոգյալը կազմվում է որևէ խոսքի մասով, որը կոչվում է ստորոգելի, և *եմ* օժանդակ բայով կամ *լինել, համարվել, թվալ, դառնալ* բայերով, որոնք հանդես են գալիս որպես ստորոգիչ, օրինակ՝ *աշակերտ է, աշակերտ է դարձել, մեծ է, մեծ է թվում, կարևոր է համարվում, հինգն են, նա է, վազող է, արագ է:*

Վարժություն 13: Գտեք, թե շղատառ գրվածներից որոնք են ենթականեր:

1. *Այգին* պահպանում էին նրա հավատարիմ *շները*:
2. Դասարանի *ավագը*՝ *Աննան*, մասնակցեց օլիմպիադային:
3. *Նա* հայտնի *բժիշկ* է և բազում *կյանքեր* է փրկել:
4. *Անձրևը* թրջեց *հողը*:
5. *Ծառերը* օրորվում էին *քամուց*:
6. *Ամպը* ծածկեց *լուսինը*:
7. Այդ *գրքերն* էր ուղարկել *ընկերս*:
8. *Արտը* հնձեցին:
9. Քաղաքի *շենքերը* լվացվել էին անձրևից:
10. Հինավուրց *տաճարը* հիացրեց բոլորին:

Վարժություն 14: Գտեք, թե շղատառ գրվածներից որոնք են ստորոգյալներ, և որոշեք դրանց տեսակը (պարզ կամ բաղադրյալ):

ՍԵՎԱՆԸ ԱՄՊՐՈՊԻՑ ՀԵՏՈ

Ամպերը գունդ առ գունդ *նահանջեցին*:
Եվ հորիզոնն արդեն *հագել է* զառ:

Անցնում է թուխպը՝ *քսվելով* լեռան լանջին,
Ինչպես մի *ուշացած* իխտիոզավր:

Բլրի գլխից ես լուռ *նայում եմ* շուրջս:
Ժայռերն ասես *կենդանիներ են* շունչ առած,
Այն մեկը *արջ է* գորշ, կողքինն *առյուծ է*,
Վագրին *հեծել է* մի խարտյաշ քարայծ:

Ինչպե՞ս *կենդանացնեմ* թղթի վրա
Այս պահը, այս պերճանքն արտասովոր:
Երազի պես *կանցնի, կանհետանա*,
Չի կրկնվի այլևս ոչ մի օր:

Ուրեմն *կանգ առ,* պահ, մի քի՛չ, մի քի՛չ:
Դաջվիր հոգուս վրա ավելի խոր,
Եվ *թող* այնտեղ մի շող, մի լուսագիծ,
Որով մարդիկ *դառնում են բախտավոր:*

Նաիրի Զարյան

Վարժություն 15: Կազմեք երեքական նախադասություն, որոնցում ենթականերն արտահայտված լինեն գոյականներով, առարկայանիշ կամ անձնանիշ դերանուններով, գոյականաբար գործածված ածականներով:

Վարժություն 16: Գտեք ենթակաները և նշեք, թե ինչով են արտահայտված: Գտեք ստորոգյալները և որոշեք՝ պարզ են, թե՞ բաղադրյալ:

1. Աշակերտները հավաքվել էին դպրոցի բակում:
2. Ծառաները գլուխ տվեցին արքային և դուրս եկան սրահից:
3. Հոգնած ճամփորդները նստեցին աղբյուրի մոտ, իսկ երկուսը գնացին մոտակա գյուղը, որ ուտելիք ճարեն:
4. Շինարարները պետք է նորոգեն կամուրջը, որից հետո այն երթևեկելի կդառնա:
5. Նրանք լավ նկարիչներ են և աշխատանքը կկատարեն բարձր որակով:
6. Ճերմակ թութակները հանգիստ նստել էին ճյուղին, իսկ կարմիրները անհանգստացած այս ու այն կողմ էին թռչում:
7. Վագրերը հասան վերջնագծին և կանգ առան, իսկ նրանց դիմավորողները, ծաղկեփնջերը ձեռքներին, մոտեցան նրանց:
8. Նա իսկապես լավ սովորող է, միշտ կատարում է հանձնարարությունները, պարզապես այս անգամ պատրաստ չէ:
9. Գետը սկիզբ էր առնում լեռնակատարների ձյուներից, և այդ պատճառով ջուրը սառն էր:
10. Ժամանակն անցնում էր, իսկ նա դեռ չէր կատարել աշխատանքը:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Գոյականական անդամի լրացումներն են *որոշիչը, հատկացուցիչը* և *բացահայտիչը*:

Որոշիչը ցույց է տալիս գոյականի հատկանիշը, օրինակ՝ *Աշակերտ* Արամը եկավ. *Մեծ* տունը քանդեցին. *Փայտից* դարակը կախեցին:

Հատկացուցիչը ցույց է տալիս պատկանելություն, վերաբերություն, օրինակ՝ *Աշակերտի* գիրքը կորավ. *Սեղանի* ոտքը կոտրվեց:

Բացահայտիչը բացահայտում է գոյականի էությունը, ով կամ ինչ լինելը: Բացահայտիչը լինում է *բուն* և *մասնական*, օրինակ՝ Ընկերս՝ *Արամը*, եկավ (բուն). Աշոտը՝ *որպես դասարանի ավագ,* արդարացնում է իրեն (մասնական):

Վարժություն 17: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. գոյականական անդամի լրացումներն են՝
   ա) խնդիրներն ու պարագաները
   բ) որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը
   գ) կոչականներն ու ձայնարկությունները
2. որոշիչը ցույց է տալիս՝
   ա) գոյականական անդամի որևէ հատկանիշ
   բ) պատկանելություն, վերաբերություն
   գ) խոսողի վերաբերմունքը
3. հատկացուցիչը ցույց է տալիս՝
   ա) պատկանելություն, վերաբերություն
   բ) բացահայտում է անձի, առարկայի ով կամ ինչ լինելը
   գ) գոյականական անդամի որևէ հատկանիշ
4. հատկացուցիչը կարող է արտահայտվել՝
   ա) ուղղական հոլովով
   բ) սեռական հոլովով
   գ) գործիական հոլովով

Վարժություն 18: Շղատառ գրվածներից որո՞նք են որոշիչներ:

1. *Մայթերի* սիզամարգերը զարդարված էին *գույնզգույն* ծաղիկներով:
2. Կրպակում շարված ծաղկեփնջերը շատ *գեղեցիկ* էին:
3. *Արագ* հասնելով գնդակին՝ ֆուտբոլիստը կարողացավ *գեղեցիկ* հարված կատարել:
4. Մեր դպրոցի *ութերորդ* դասարանի աշակերտները *հետաքրքիր* միջոցառում էին կազմակերպել:
5. *Վազող* երեխաները *անսպասելի* ձայնից կանգ առան և շրջվեցին՝ նայելով *ձայնի* ուղղությամբ:

6. Մարզիկը *ուշ* վերադարձավ և *հոգնած* պառկեց քնելու:
7. *Սարի* ծաղիկը գեղեցիկ է լինում, ուստի նրանք սկսեցին հավաքել այդ *սարի* ծաղիկներից:
8. Այդ գիրքը *նոր* է և *հետաքրքիր*:
9. *Արագ* վագքը *շուտ* հոգնեցրեց երեխաներին:
10. *Քանդակազարդ* սյուները *շատ* էին գեղեցկացնում դահլիճը:

Վարժություն 19: Շղատառ գրվածներից որո՞նք են հատկացուցիչներ:

1. Հասնելով մի *սարի*՝ երկրաբանները *սարի* մոտ վրան խփեցին, որպեսզի մնան և ուսումնասիրեն այդ *սարի* օգտակար հանածոները:
2. Ուսուցիչը *աշակերտի* մասին խոսեց նրա ծնողների հետ և նրանց ցույց տվեց *աշակերտի* առաջադիմության թերթիկը:
3. Տղան գնաց *հացի* և մտնելով *հացի* խանութ՝ անմիջապես զգաց թարմ *հացի* բույրը:
4. Ապուրին աղ լցնելիս աղամանը բացվեց, *աղի* մի կտոր ընկավ ապուրի մեջ, և այդ *աղի* ապուրը ոչ ոք չկերավ:
5. *Ջրի* ուժեղ հոսանքը նավակը խփեց մի *քարի*, և նավակը վնասվեց:
6. *Առվի* մեջ *կաղնու* դեղնած տերևներ էին ընկել և *նավակների* նման սահում էին *ջրի* մակերևույթին:
7. Հանդիպելով *ընկերոջը*՝ նրան պատմեց իրենց մյուս *ընկերոջ* հաղթանակի մասին:
8. *Դպրոցի* բակում հավաքվել էին այն երեխաները, որոնք մեկնելու էին *մրցույթի*:
9. *Ծովի* շառաչը հասնում էր մոտակա *բնակավայրին*:
10. *Արևի* ճառագայթներից *երեխայի* այտերը կարմրել էին:

Վարժություն 20: Գտեք գոյականական անդամի լրացումները և նշեք, թե ինչով են արտահայտված:

Աղը անգույն, թափանցիկ միներալ է: Առաջանում է՝ աղի լճերի հատակին նստվածք տալով: Դարեր ի վեր աղը սերտորեն կապված է մարդկանց կենցաղին և բանահյուսությանը: Աղը բոլոր ժամանակներում համարվել է ամենաարժեքավոր օգտակար հանածոներից մեկը: Եվ պատահական չէ, որ նրա մասին կան բազմաթիվ ասացվածքներ ու առասպելներ: Հայկական դիցաբանության մեջ աղը համարվել է մաքրության և պտղաբերության աստվածուհի Անահիտի ընծան: Եվ, իրոք, աղն անհրաժեշտ է բոլորին:

Ըստ Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքի

Վարժություն 21: Նախադասություններում ավելացրեք բառեր, որոնք կկատարեն շարահյուսական նշված պաշտոնները:

ա) Հեռվում երևաց *(հատկացուցիչ)* տղան՝ *(բացահայտիչ)*, որն ինչ-որ բան էր ասում, սակայն *(որոշիչ)* աղմուկի պատճառով չէր լսվում:

բ) *(Հատկացուցիչ, որոշիչ)* նկարը շատ դուր եկավ բոլորին:

գ) *(Որոշիչ)* մեքենաները *(որոշիչ)* պտույտն էին կատարում, և *(որոշիչ)* հանդիսատեսները սրտատրոփ սպասում էին, թե որ մեքենան առաջինը կհասնի վերջնագծին:

դ) Առավոտյան *(հատկացուցիչ)* բակում հավաքվել էին *(որոշիչ)* աշակերտները, որոնք պետք է էքսկուրսիա գնային մոտակա բնակավայրը՝ *(բացահայտիչ)*:

ե) Արկղերում շարված *(որոշիչ)* մրգերը՝ *(բացահայտիչ)*, փայլում էին *(հատկացուցիչ)* շողերից, որոնք ընկել էին բաց լուսամուտից:

զ) Այդ *(հատկացուցիչ, որոշիչ)* պտուղներից պատրաստում են *(որոշիչ)* հյութեր, որոնք բուժիչ հատկություն ունեն:

է) *(Որոշիչ)* գործարանում պատրաստվող սարքերը *(որոշիչ)* նշանակություն ունեն և արտահանվում են մի շարք երկրներ՝ *(բացահայտիչներ)*:

ը) Նորաբաց *(հատկացուցիչ, որոշիչ)* ապրանքները շատ դուր եկան *(որոշիչ)* այցելուներին, որոնք *(հատկացուցիչ)* բարձր կարծիքն արտահայտեցին դրանց մասին:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Բայական անդամի լրացումները *խնդիրներն* ու *պարագաներն* են, որոնք ունեն իրենց ենթատեսակները: Խնդիրները ցույց են տալիս գործողությանն առնչվող առարկաներ, իսկ պարագաները՝ գործողության հանգամանքներ:

Խնդիրներ

Ուղիղ խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որն իր վրա է կրում գործողությունը, օրինակ՝ «Ես կոտրեցի *փայտը»*. «Աշակերտը կարդաց *գիրքը»*. «Նա տեսավ *տղային*»:

Ներգործող անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից գործողությունն անցնում է ենթակային, օրինակ՝ «Ծառը կոտրվեց *քամուց*». «Աշակերտը գնահատվեց *հանձնաժողովի կողմից»*:

Հանգման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է գործողությունը, օրինակ՝ «Մենք մոտեցանք *քաղաքին»:*

Անջատման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից ծագում, սկսվում է գործողությունը, օրինակ՝ «Տերևը պոկվեց *ծառից»:*

Միջոցի անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի միջոցով կատարվում է գործողությունը, օրինակ՝ «Գրում էր *գրիչով»*. «Փորում էր *բահով»*. «Ուղարկեց *ծառայի միջոցով»:*

Վերաբերության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է խոսքը, որի մասին մտածվում կամ պատմվում է, օրինակ՝ «Խոսում էր *գործերից»*. «Երազում էր *մեկնելու մասին»*:

Վարժություն 22: Որոշեք շղատառ գրված անդամների պաշտոնները:

Մի անգամ կաչաղակը, նստելով պառավի տան կտուրին, ավետում է *նրան* որդու՝ օտարությունից *վերադառնալու մասին*: Առանց հասկանալու *ավետիքը* պառավը *հացից* մի *կտոր* է պոկում, նետում: Կաչաղակն իսկույն տանում, տալիս է պառավի *որդուն*, որը *քաղցից* սաստիկ հյուծված է լինում: Հետո վերադառնալով՝ նորից *նույնն* է ավետում և մի կտոր *հաց* ևս ստանալով՝ տանում է պառավի որդուն տալու համար: Նույնը կրկնվում է մի քանի անգամ, մինչև որ պառավը ձանձրանալով *քար* է նետում *կաչաղակին:* Սա առնում է *քարը* և տանում է, նետում պառավի որդու *գլխին*. նա իսկույն մահանում է: Պառավը գալիս է մահացած որդու մոտ և ճանաչում է իր նետած *քարը:* Դրանից հետո այլևս *քար* չեն նետում *կաչաղակին*, այլ միշտ *հաց* են տալիս ու ասում. «Բարին՝ մեզ, չարը՝ թշնամուն»:

Ըստ Արամ Ղանալանյանի «Ավանդապատում» գրքի

Վարժություն 23: Գտեք, թե որ նախադասություններում կան նշված անդամները:

ա) ուղիղ խնդիր

1. Ծովափին կանգնած բարդիները սուր
   Այրվում են ծագող արևի բոցում...
2. Քերծում են դեմքս թուփ ու մացառ,
   Արյունոտվել են արդեն ծունկերս...
3. Ճայերը թրջում են ջրի մեջ թևերը,
   Ճախրում ու ճչում են օդում,
4. Քամին քանդակում է չքնաղ քո ձևերը,
   Շոյում է վարսերը քո թուխ:
5. Ուռիները մեղմ օրորվում էին,
   Եվ սոսափում էին տերև ու սեզ...

Վահագն Դավթյան

բ) ներգործող անուղղակի խնդիր

1. Նպատակը ետ է մնում միջոցից,
   Միջոցն ինքը նոր նպատակ է հուշում:

   Երվանդ Պետրոսյան
2. Խոնարհ թեքվում էին գոռոզ քամուց
   Եղևնիներն ու գեղիրան նոճին:

   Նաիրի Զարյան
3. Եվ ողողվում է սիրտս այս գիշեր
   Կարոտով, սիրով, մաքրությամբ ձյունի...
4. Դու ձեր կանաչ այգուց ինձ միշտ կանչում էիր,
   Ու ես գերվում էի քո ջինջ ձայնից...

   Վահագն Դավթյան
5. Խշշում են ձորում ջրերը լուսե,
   Ճեղքում պատնեշը մթին ժայռերի...

   Գևորգ Էմին

գ) հանգման անուղղակի խնդիր

1. Եվ նրա երգը՝ ջինջ ու հեռավոր,
   Հյուսվում է քնած գյուղի երազին:

   Վահագն Դավթյան

2. Հեռու երկնքի կապույտ խայտանքում
Աստղերի արծաթ ցորենն է մաղվում,
3. Ու ծաղիկների թերթերին հուշիկ
Իջնում է նրանց բյուրեղյա փոշին:

Վաչագան Հովհաննիսյան

4. Տխրադալուկ դեմքի քո գծերը նրբին
Ու քայլերիդ փափուկ շշնջյունը հուզիչ
Որպես կապույտ մշուշ փարվում են իմ դեմքին:

Գուրգեն Մահարի

5. Հոգնած նայում եմ ես ճամփաներին.
Սերմնացանները չդարձան տուն...

Գեղամ Մարյան

դ) անջատման անուղղակի խնդիր

1. Լերկ բլուրներ, սարեր, ժայռեր,
լերկ քարերի հարահոս վազք.
սրանից է կերպար առել
բիբլիական հզոր մի ազգ:

Ռազմիկ Դավոյան

2. Ես նոր եմ երգի գինը հասկանում,
Նոր եմ հասկանում ես ուժը խոսքի,
Նա տառապանքից քամում է ոսկին...

Լիպարիտ Սարգսյան

3. Եվ մենք երջանիկ ենք
Լինում սոսկ այն պահին,
Քանի դեռ չենք բախվել
Մեր հերթական ցավին:

Երվանդ Պետրոսյան

4. Այն տունը, սիրտ իմ, որ մանուկ չունի,
Լեզվակը պոկած զանգի է նման...

Հովհաննես Շիրազ

5. Տարրալուծեցեք կարոտն էլ հապա,
Բաղադրեցեք այն ծուխն էլ անտես,
Որ անջատվում է միշտ այդ կարոտից...

Պարույր Սևակ

ե) միջոցի անուղղակի խնդիր

1. Հո չե՞ս կարող քո ջերմությամբ կրակոտ
Գոլորշիացնել թափվող հեղեղը այս հորդ:

Երվանդ Պետրոսյան

2. Թե աչքերս քեզ որոնեն,
Ես կփակեմ մութ կոպերով...

Միլվա Կապուտիկյան

3. Ու մատներդ երկար
Եվ աչքերդ հոգնած
Լույս ու տաքությունով
Խեղդում են ինձ...

Ռազմիկ Դավոյան

4. Իմ սենյակի մեջ կանգնած է տխուր մի արմավենի՝
Դժբախտ մասունքը մի մեծ անտառի, որ հիմա չկա...

5. Ես գավաթով եմ հանգցնում նրա ծարավը անհագ,
Մինչ մի ժամանակ Եփրատն էր նրան մայրաբար ջրում:

Հրաչյա Հովհաննիսյան

զ) վերաբերության անուղղակի խնդիր

1. Հեռվում երգում է մի ջահել ջրվոր
Իր յարի խումար աչքերի մասին...

Վահագն Դավթյան

2. Այսօր կանչել են ինձ, որ ես հուշեր պատմեմ,
Որ ես հուշեր պատմեմ, պատմեմ քեզնից...

Միլվա Կապուտիկյան

3. Նրանք խոսում էին հոգեկորով
Հպարտ, ինքնավայել մարդու մասին...

Նաիրի Զարյան

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Պարագաներ

Ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը, օրինակ՝ «*Ուրախությամբ* համաձայնեց». «*Արագ-արագ* հեռացավ». «*Մտերմաբար* ժպտաց»:

Տեղի պարագան ցույց է տալիս գործողության կատարման տեղը, օրինակ՝ «*Դաշտում* արածում էին ձիեր». «Դուրս եկավ *տնից»:*

Ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը, օրինակ՝ «*Առավոտյան* մեկնեցինք». «*Զմեռվանից* հիվանդ է». «*Գիշերը* վերադարձավ». «*Ժամը հինգին* ֆիլմն սկսվեց»:

Չափի պարագան ցույց է տալիս գործողության կատարման չափը, աստիճանը, օրինակ՝ «*Երեք անգամ* եկավ». «Աշխատանքը *լիովին* կատարեց»:

Պայմանի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պայմանը, օրինակ՝ «*Ցանկության դեպքում* կարող ես կատարել աշխատանքը». «Գրքերը տվեց *վերադարձնելու պայմանով*»:

Նպատակի պարագան ցույց է տալիս այն նպատակը, որի համար կատարվում է գործողությունը, օրինակ՝ «Իջան աղբյուրը՝ *ջրի»*. «Եկել է այստեղ՝ *նյութեր տանելու»*:

Պատճառի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պատճառը, օրինակ՝ «*Բարկությունից* կարմրեց». «*Հիվանդության պատճառով* բացակայում էր»:

Հիմունքի պարագան ցույց է տալիս այն հիմունքը, ըստ որի կատարվում է գործողությունը, օրինակ՝ «*Թագավորի հրամանով* բոլորը հավաքվեցին». «*Ըստ օրենքի*՝ դա թույլատրվում է». «Այստեղ որսն *օրենքով* արգելված է»:

Զիջման պարագան ցույց է տալիս, թե հակառակ ինչին է կատարվում գործողությունը, օրինակ՝ «*Հակառակ արգելքին*՝ բոլորը եկան»:

Վարժություն 24: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. բայական անդամի լրացումներն են՝
   ա) որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը
   բ) խնդիրները և պարագաները
   գ) շաղկապներն ու վերաբերականները
2. խնդիրները բայական անդամի այն լրացումներն են, որոնք ցույց են տալիս՝
   ա) գործողության հատկանիշ
   բ) խոսողի վերաբերմունքը
   գ) գործողության կատարմանն առնչվող առարկաներ
3. պարագաները բայական անդամի այն լրացումներն են, որոնք ցույց են տալիս՝
   ա) գործողության կատարմանն առնչվող առարկաներ
   բ) գործողության կատարման հանգամանքներ (հատկանիշներ)
   գ) ենթակայի կատարած գործողությունը
4. պարագաները լինում են՝
   ա) ուղիղ, հանգման, անջատման, ներգործող, վերաբերության, միջոցի
   բ) տեղի, ժամանակի, ձևի, նպատակի, պատճառի, հիմունքի, պայմանի, զիջման, չափի
   գ) համադասական, ստորադասական, ստորոգումային

Վարժություն 25: Դուրս գրեք շղատառ գրված անդամները՝ որոշելով նրանց շարահյուսական պաշտոնները:

Մեր *հանրապետությունում* կա ավելի քան տասնհինգ հազար քարանձավ, բայց դրանց *մեծամասնությունը* ստեղծել է մարդը: Բնական դատարկ տարածություններն առաջանում են հրաբխային *ժայթքումների ժամանակ* շիկացած ապարների հոսքի *սառչելու* կամ էլ *ջրի միջոցով,* որը հոսել է ստորգետնյա գալարուն *շավիղներով* և անցել է հեշտ լուծվող *կրաքարերի միջով*: *Նախկինում* համարում էին, որ սակավաջուր Հայաստանում չեն կարող լինել ստորգետնյա խոշոր *գետերի միջոցով* ստեղծված քարայրեր: Սակայն վերջին տարիների անսպասելի հայտնագործությունները փոխեցին այդ կայուն թվացող *տեսակետը*: Եղեգնաձորի *լեռներում* հայտնաբերվել են մի քանի գեղատեսիլ *անձավներ, որոնք* ուսումնասիրում են հանրապետության քարանձավագիտական կենտրոնի աշխատողները: Առաջին քարայրի *մուտքը նրանց* ցույց է տվել հմուտ որսորդ Մագիլը, որի անունով էլ կոչվել է քարայրը:

Ըստ Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքի

Վարժություն 26: Կազմեք պարզ ընդարձակ նախադասություններ, որոնցում լինեն *ուղիղ, հանգման, անջատման, ներգործող, վերաբերության, միջոցի* **խնդիրներ,** *տեղի, ժամանակի, ձևի, նպատակի, պատճառի, հիմունքի, պայմանի, զիջման, չափի* **պարագաներ:**

Վարժություն 27: Կազմեք նախադասություններ՝ *հաց* **բառը գործածելով** *ուղիղ, հանգման, անջատման, վերաբերության, միջոցի* **խնդիրների շարահյուսական պաշտոններով:**

Վարժություն 28: *«Նա գնաց»* **նախադասությանը ավելացրեք այնպիսի լրացումներ, որոնք կկատարեն** *տեղի, ժամանակի, ձևի, նպատակի, պատճառի, հիմունքի, զիջման* **պարագաների շարահյուսական պաշտոններ:**

Վարժություն 29: Տրված նախադասություններին ավելացրեք այնպիսի լրացումներ, որոնք կկատարեն շարահյուսական նշված պաշտոնները:

1. Այգեպանը փորում էր: *(միջոցի անուղղակի խնդիր, ուղիղ խնդիր)*
2. Հավաքվածները զրուցում էին: *(վերաբերության անուղղակի խնդիր, ձևի պարագա)*
3. Մարզիկները մեկնեցին: *(ժամանակի պարագա, տեղի պարագա)*
4. Նրանք անպատճառ կգնային: *(պայմանի պարագա, զիջման պարագա)*
5. Ընկերս չեկավ: *(պատճառի պարագա, զիջման պարագա)*
6. Ապրանքը պետք է ուղարկեին: *(նպատակի պարագա, ժամանակի պարագա)*
7. Վարպետը վերանորոգեց: *(ուղիղ խնդիր, ձևի պարագա)*
8. Ճյուղը կտրեցին: *(անջատման անուղղակի խնդիր, միջոցի անուղղակի խնդիր)*
9. Տղան պետք է մեկներ: *(հատկացուցիչ, բացահայտիչ)*
10. Բերեցին միրգը: *(որոշիչ, հատկացուցիչ)*

Վարժություն 30: Գտեք բայական անդամի լրացումները և որոշեք արտահայտության ձևը:

Երևանի մի պուրակում՝ ծառերի ստվերում, դրված է անսովոր մի քանդակ՝ միմյանց ձգվող մարմարե երկու ձեռքեր: Այդ ձեռքերը Երևանին են նվիրել Իտալիայի Կարարա քաղաքի մեր բարեկամները: Կարարայի մարմարը փառաբանված է աշխարհում: Հազարամյակների ընթացքում լավագույն քանդակագործները այդ քարերով կերտել են արվեստի հրաշալի ստեղծագործություններ, իսկ ճարտարապետները դրանցով զարդարել են հոյակապ պալատներ:

Ըստ Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքի

Վարժություն 31: Գտեք, թե որ նախադասություններում կան նշված անդամները:

ա) ձևի պարագա

1. Ասում են, թե միանգամից կյանքում ոչի՞նչ չի կատարվում.
   Միանգամից ոչ մի կարպետ և ոչ մի գորգ չի պատռվում...

   Պարույր Սևակ

2. Դու հեռանում ես անձայն ու անխոս՝
   Ոսկե վարսերդ ուսերիդ առած...

   Գևորգ Էմին

3. Ու խոսքերդ փութկոտ, խոստումները քո ջերմ
   Մեղմ հնչում են կապույտ իրիկնային միգում...

   Գուրգեն Մահարի

4. Ա՛խ, ես հոգնեցի երկաթ երգերից,
   Բարի՛ այգեպան, հույսիս դուռը բա՛ց...

5. Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր...

Հովհաննես Շիրազ

բ) տեղի պարագա

1. Օրս ուր բացվում է, ուր էլ մթնում է,
Մեր Արարատյան հովիտը պերճ
Գալիս, փնտրում է, գալիս, գտնում է,
Գալիս, մտնում է երգերիս մեջ:

Համո Սահյան

2. Ճամփեն իր միտքը ծռել,
Իջել է ափը գետի,
Ձուկը հանկարծ վեր թռել,
Ընկել է խոտի կեռին:

Հովիկ Հովեյան

3. Եվ ուր էլ քեզնից հեռանամ, անգին,
Քայլերս կրկին քեզ մոտ են բերում...

Գևորգ Էմին

4. Հյուրանոց է սիրտը քո բաց,
Հեշտ գալիս են, հեշտ էլ գնում...

Միլվա Կապուտիկյան

5. Մենք ճամփա ընկանք առավոտ ծեգին՝
Կապույտ երկնքի խորությամբ արբած:

Եղիշե Չարենց

գ) ժամանակի պարագա

1. Այս գիշեր տեսա մի անուշ երազ.
Ես հայրենի տունն էի նորոգում...
2. Իսկ անտառում մարում էր մայրամուտը՝
Նման հանգչող սիրո գունատ բոցին...

Նաիրի Զարյան

3. Գարնանային ամպը խուլ որոտաց,
Հեղեղի պես թափեց արցունքն իր զով...
4. Նորից աշուն է, աշուն... Քաղցրության տակ իր բեռան
Արարատյան բարեբեր ու շռայլ դաշտն է հևում...

Վահագն Դավթյան

5. Իմ օրերում ես ցանկացա լինել վսեմ և ինքնուրույն,
Իմ օրերում ես ցանկացա կյանքս զոհել դրա սիրուն:

Եղիշե Չարենց

դ) չափի պարագա

1. Եվ տքնելով, ինքն իրենից
Հազար անգամ հզորացած,
Մեղր է քամում փշից անգամ...

Համո Սահյան

2. Ես սիրում եմ նստել ամեն իրիկուն
Պատուհանիս առաջ երկար, երկար...

Եղիշե Չարենց

3. Ընկեր իմ անանուն, թող քո հոգին պայծառ
Հազար անգամ ավել, հազար սրտով զգա:

Գեղամ Սարյան

4. Հազար ամպրոպ է մտրակել նրան,
Թե բարդի լիներ, մոխիր էր դարձել...

Գևորգ Էմին

5. Ու թավիշներ իջան աշխարհների վրա,
Սահմաններին բոլոր...

Մարո Մարգարյան

ե) նպատակի պարագա

1. Մնացինք գիշերն հանգչելու համար:
Եվ գիշերն ամբողջ պատմեցին նրանք
Զրույցներ արնոտ ու խայտանկար...
2. Պետք չէ, որ մարդը հեկեկա անքուն
Աշխարհում մի օր ապրելու համար:

Եղիշե Չարենց

3. Պիտի նրանց հոգու համար
վառեմ մոմեր ոսկեդեղին...

Ռազմիկ Դավոյան

4. Ընկնեմ սար, ձոր, մտնեմ անտառ,
Արբեմ օդով՝ ջինջ ու թարմ...

Հրաչյա Հովհաննիսյան

5. Քո խակ սերը և իմ հասուն տանջանքը
Հանդիպեցին որպես երկու ուղևոր
Կյանքի ինչ-որ սակավամարդ կածանում...

Պարույր Սևակ

զ) պատճառի պարագա

1. Քարերը ճաքել են կարոտից,
Ճաքերից կարոտ է բուսել...

Վաչագան Հովհաննիսյան

2. Աշնանամուտի ջրերը բարակ
Նորից մասուր են բերում սարերից...

Համո Սահյան

3. Քո աչքերի՛, քո աչքերի՛, քո աչքերի՛ պատճառով
Իմ աչքերը ամբո՛ղջ գիշեր, ամբո՛ղջ գիշեր չեն փակվում:
4. Աշխարհին, այո՛, մաքրություն է պետք՝
Այն հերոսների տխրունակ տեսքով,
Որոնք մեռնում են... անգործությունից...

5. Ես հոգնել եմ մանրաքանդակ պաղ խոսքերից:
   Լավ է լինել հմուտ դարբին, քան ոսկերիչ...

Պարույր Սևակ

է) հիմունքի պարագա

1. Օրենքի ուժով պարտավոր է նա
   Հիշել, որ ինքը երկոտանի է...
2. Առանց հայելու էլ ես ինձ տեսնել գիտեմ
   Ծառաբնի վրա, քո ափի մեջ:

Պարույր Սևակ

3. Գարնան թագավոր ինձ թագադրեմ
   Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ...

Հովհաննես Շիրազ

4. Ես արթնացնող մի ժամացույց եմ՝
   Ըստ ձեր ցանկության:

Պարույր Սևակ

5. Նրանք պարզապես կարճ ժամանակում
   Անցել են երկար, երկար ճանապարհ...

Մարո Մարգարյան

ը) զիջման պարագա

1. Ու չնայած դրան՝ արդեն տաք է դրսում,
   Այնուամենայնիվ, հալվեց ձյունը...

Միլվա Կապուտիկյան

2. Ամեն ինչ լռել է: Եվ լռել է այնպես,
   Ինչպես բառարանում բառն է լռում:

Պարույր Սևակ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ

Անկախ դերբայն իր լրացումներով, ինչպես նաև լրացման լրացումներով (եթե դրանք կան) կազմում է մեկ կապակցություն, որը կոչվում է դերբայական դարձված: Օրինակ՝ *արագ վազել, արագ վազելիս, արագ վազելով, շատ արագ վազելիս* և այլն: Ըստ կետադրման՝ դերբայական դարձվածները լինում են տրոհվող և չտրոհվող: Տրոհվում են միայն անորոշ դերբայի գործիական հոլովով (օր.՝ *տուն գալով*) և հարակատար դերբայով (օր.՝ *ճանապարհից հոգնած)* կազմված դերբայական դարձվածները, այն էլ ոչ միշտ: Նախադաս և հետադաս դերբայական դարձվածները տրոհվում են բութով, իսկ միջադասները՝ ստորակետերով, օրինակ՝ *Խորհելով անելիքների մասին՝ նա քայլում էր ծառուղով: Նա, խորհելով անելիքների մասին, քայլում էր ծառուղով: Նա քայլում էր ծառուղով՝ խորհելով անելիքների մասին:*

Վարժություն 32: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. դերբայական դարձվածը՝
   ա) դերբայի հոլովված ձևն է
   բ) դերբայն է իր լրացումներով և լրացման լրացումներով
   գ) դերբայն է՝ գործածված օժանդակ բայի հետ
2. դերբայական դարձվածը կարող է կազմվել՝
   ա) անկատար, ապակատար, վաղակատար, ժխտման դերբայներով
   բ) անորոշ, համակատար, հարակատար, ենթակայական դերբայներով
   գ) բայի խոնարհված ձևերով
3. ըստ կետադրման՝ բոլոր դերբայական դարձվածները լինում են՝
   ա) միայն տրոհվող
   բ) միայն չտրոհվող
   գ) տրոհվող և չտրոհվող
4. նախադասության մեջ դերբայական դարձվածները կարող են գործածվել՝
   ա) միայն նախադաս
   բ) միայն հետադաս
   գ) նախադաս, միջադաս և հետադաս

Վարժություն 33: Գտեք դերբայական դարձվածները, որոշեք, թե որոնք են տրոհվող. կետադրեք նախադասությունները:

1. Պուրակում զբոսնելիս հանդիպեց ընկերոջը:
2. Իր աշխատանքը կատարելով լռելյայն հեռացավ:
3. Սեղանին դրված ծաղկամանը շատ գեղեցիկ էր:
4. Նա նստեց բազմոցին սպասելով ֆիլմի սկսվելուն:
5. Մի օր նրան տեսել էի իր տնամերձ այգում աշխատելիս:
6. Մեր մարզիկները գիշերուզօր մարզվելով կարողացան հաղթել:
7. Այդ լուրից ուրախացած նրանք վազեցին ընկերոջ տուն ճանապարհին անհամբերությամբ քննարկելով իրենց հետագա անելիքները:
8. Ամբողջ օրը քայլելով ճամփորդները հասան մի աղբյուրի և նստելով նրա մոտ հանեցին իրենց մոտ եղած ուտելիքները պատրաստվելով ընթրիքի:
9. Այդ մասին խոսելիս նա նշեց որ այդպես աշխատելով տարեվերջին հնարավոր կլինի ավարտել շինարարությունը:
10. Մարմարով պատված հատակը փայլում էր հիացնելով բոլորին:

Վարժություն 34: Արտագրեք տեքստը և կետադրեք. ընդգծեք չտրոհվող դերբայական դարձվածները:

Ամերիկացի մի ճանապարհորդ Ամազոնի առափնյա բնակիչներից մեկի պատմության հիման վրա գրել է հետևյալը Նավարկելով հոսանքն ի վար ուղևորվում էի տուն: Հասնելով գետի վտակներից մեկին հանկարծ ինչ-որ աղմուկ լսեցի: Մտածեցի թե որսի մի կենդանի կլինի ու նավակն ուղղեցի այդ կողմը զենքը պատրաստ պահած: Իջա և ափն ուշադիր զննելով ու ոչինչ չնշմարելով վերադարձա նավակ: Փոքր-ինչ հեռացել էի երբ կանգ առա մի անըմբռնելի ուժ ինձ հետ էր քաշում: Չկարողանալով

ընդդիմանալ այդ անհաղթահարելի ուժին վերադարձա: Լուսնկա գիշեր էր և տեսնում էի գետի ափը ոչինչ չկար: Որևէ արտառոց երևույթ չտեսնելով փորձեցի նավակ նստել բայց հազիվ էի ութ-ինը քայլ արել երբ նորից մի խորհրդավոր ուժ ինձ հետ բերեց: Միանգամայն սթափ վիճակում էի բայց ես այդ վայրերում ծնված ու այդտեղ մեծացած որսորդս առանց պատճառի սկսեցի հեկեկալ սրտիս համակած մի տարօրինակ ճնշումից: Այդտեղով անցնում են երեք բանվոր որոնք լսելով լացիս ձայնը կանգ են առնում ապա ձայնի ուղղությամբ գալով գտնում ինձ: Հենց այդտեղ մի ծառի տակ տեսնում են ջրային մի վիթխարի վիշապօձ որը սևեռուն հայացքով նայում էր ինձ: Ես զարմանալիորեն չէի տեսել ինձնից մի քանի քայլ հեռու գտնվող օձին բայց քարացել էի նրա հայացքից: Բանվորները սպանեցին նրան և ես նոր միայն մի փոքր ուշքի եկա: Բայց տուն վերադառնալիս ամբողջ ճանապարհին ցնցվում էի դողէրոցքով հիվանդի նման:

Ահա այսպիսի տարօրինակ պատմություն է պատմել տեղաբնակներից մեկը ամերիկացի ճանապարհորդին:

Ըստ Վախթանգ Անանյանի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԿՈՉԱԿԱՆ

Կոչականը ցույց է տալիս, թե ում է դիմում խոսողը: Կոչականը կարող է ունենալ լրացումներ, օրինակ՝ «*Հարգելի՛ գործընկերներ,* շնորհավորում եմ ձեր Ամանորը» նախադասության մեջ *հարգելի*-ն *գործընկերներ* կոչականի որոշիչ լրացումն է: Կոչականը մյուս բառերից տրոհվում է ստորակետերով և շեշտվում է: Կոչականը նախադասության անդամ չի համարվում:

Վարժություն 35: Կազմեք կոչական ունեցող 10 նախադասություն:

Վարժություն 36: Գտեք կոչականները, առանձնացրեք անձ ցույց տվողները:

– Ներողություն, թագավո՛ր, ես վաղ պիտի գայի, ուշացա:

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի՝ կոտը կռնատակին:
– Դո՛ւ ինչ ես ուզում, ա՛յ մարդ,– հարցնում է թագավորը:

– Բարի լուս, սանահեր աքլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:
– Գնում ենք աշխարհ տեսնելու,– պատասխանեց աքլորը:

Աղվեսը գնում է աղբյուրի մոտ:
– Աղբյո՛ւր, աղբյո՛ւր, ջո՛ւր տուր ինձ:

– Վա՜յ, քու տունը քանդվի, ա՛յ աղվես. էդ ի՞նչ ես արել,– ասում է վախեցած ջաղացպանը:

– Ա՛յ մարդ, էս հագուստը որտեղի՞ց է ընկել քեզ մոտ:

Հովհաննես Թումանյան

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԹԵՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն նախադասությունը, որի գլխավոր անդամներից որևէ մեկը զեղչված է, բայց հասկացվում է նախադասության ընդհանուր իմաստից, կոչվում է թերի նախադասություն: Օրինակ՝ *«Ես գնացի տուն, իսկ նա՝ դպրոց»* նախադասության երկրորդ բաղադրիչում զեղչված է *գնաց* ստորոգյալը:

Վարժություն 37: Կազմեք զեղչված ստորոգյալով հինգ նախադասություն:

Վարժություն 38: Գտեք թերի նախադասությունները:

1. Առաջադրանքների մի մասը դասարանում կատարեցինք, իսկ մյուս մասը՝ տանը:
2. Ծառերը ծաղկել էին, և այգին հեռվից ճերմակին էր տալիս:
3. Կտուրին բարդու ստվերն էր քնում,
   Եվ շեմքի վրա քնում էր շունը:
4. Անթեղի վրա կատուն էր ննջում,
   Իսկ անթեղի տակ՝ հոգնած կրակը:

Համո Սահյան

5. Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
   Իմ մեջ երկինքն է երգում.
   Բռնկում է սիրո հրդեհն,
   Վշտի հեղեղն՝ աղմկում...

Ավետիք Իսահակյան

6. Երկարում են խիտ ստվերներն անփույթ
   Եվ կամաց-կամաց խառնվում իրար:

Համո Սահյան

7. Երևան. պուրակ. մայիս:
   Ծառուղում սպասում եմ քեզ.
   Երանի դռ՛ւ շուտ գայիր,
   Տանջվեի՛ր մենակ ինձ պես...

Գևորգ Էմին

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միակազմ նախադասություններում առկա է լինում մեկ գլխավոր անդամ: Միակազմ նախադասությունները լինում են դիմավոր (կամ անենթակա) և անդեմ: Անենթակա նախադասություններում ենթակա չկա, և այն վերականգնելի չէ, օրինակ՝ *Մթնեց: Անձրևում է: Լուսացավ:* Անդեմ միակազմ նախադասություններն ունեն մեկ գլխավոր անդամ, որը կարող է լինել անուն խոսքի մաս կամ անորոշ դերբայ, օրինակ՝ *Ամառ: Շոգ: Չաղմկել:*

Վարժություն 39: Կազմեք հինգ դիմավոր (անենթակա) և հինգ անդեմ միակազմ նախադասություն:

Վարժություն 40: Որոշեք միակազմ նախադասությունների տեսակը:

Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:
Միրգ ու փոշի: Անխիղճ արև:
Ծողամրցում Մասիսների, Արագածի:
Սրբագործված հին-հին քարեր:

Պարույր Սևակ

***

Դալուկ դաշտեր, մերկ անտառ...
– Մահացողի տխուր կյանք.
Անձրև, քամի, սև կամար...
– Սրտակտուր հեկեկանք:

***

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,
Ամենին մոռանալ.
Չսիրել, չխորհել, չափսոսալ.
Հեռանա՛լ...

Վահան Տերյան

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բարդ են այն նախադասությունները, որոնք կազմված են մեկից ավելի բաղադրիչ պարզ նախադասություններից: Բաղադրիչ նախադասությունները կապակցվում են տարբեր հարաբերություններով. դրանք կարող են լինել իրար համազոր կամ իրար նկատմամբ ունենալ գերադասի և ստորադասի հարաբերություն: *Այն բարդ նախադասությունը, որի բաղադրիչներն իրար համազոր են, կոչվում է համադասական*: Օրինակ՝ «*Քամին փչեց, և ծառերն օրորվեցին*»: *Այն բարդ նախադասությունը, որի բաղադրիչներից մեկը լրացնում է մյուսին, կոչվում է ստորադասական*: Օրինակ՝ «*Որովհետև քամին փչեց, ծառերն օրորվեցին*»:

Բարդ նախադասության բաղադրիչներն իրար կապակցվում են *հնչերանգով, շարադասությամբ, որոշ դերանուններով, հարաբերական բառերով* և *շաղկապներով*:

Անշաղկապ կապակցությունը կոչվում է շարահարություն:

Վարժություն 41: Ընտրեք ճիշտ պատասխանները:

1. բարդ է այն նախադասությունը,
   ա) որն ունի մեկից ավելի ենթականեր
   բ) որում կա մեկ դիմավոր բայ
   գ) որում կա մեկից ավելի ստորոգում

2. բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններն իրար նկատմամբ՝
   ա) միշտ հավասարազոր են
   բ) միշտ ունեն գերադասի և ստորադասի հարաբերություն
   գ) կարող են ունենալ և՛ համադասական, և՛ ստորադասական հարաբերություն
3. բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների անշաղկապ կապակցությունը կոչվում է՝
   ա) խնդրառություն
   բ) առդրություն
   գ) շարահարություն
4. բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններն իրար կարող են կապվել՝
   ա) կապերով, շաղկապներով, շարահարությամբ
   բ) շաղկապներով, դերանուններով, շարահարությամբ
   գ) մակբայներով, կապերով, վերաբերականներով

Վարժություն 42: Գտեք, թե որ նախադասություններն են բարդ:

1. Ավարտելով իր գործը՝ նա մեկ անգամ էլ անթաքույց հաճույքով զննեց սեղանը, ուղղեց անձեռոցիկները և ելավ սենյակից:
2. Եռօրյա անդորրությունից հետո՝ մի չարաբաստիկ առավոտ, օվկիանոսը անակնկալ ծածկվեց մշուշով, իսկ երկինքը՝ թուխպերով:
3. Դասամիջոցներին գրեթե բոլոր աշակերտները դուրս էին գալիս պուրակ՝ վայելելու մաքուր օդն ու զմրուխտե կանաչի անդորրությունը:
4. Գարնանը՝ բնության հերթական զարթոնքին, նա կարծես նոր ուժ ու եռանդ էր ստանում, աշխուժանում:
5. Այդ թռչունը կարող է անընդհատ երգել՝ երբևէ չկրկնելով միևնույն մեղեդին:
6. Այստեղ ամենուրեք թևին են տալիս ճեփ-ճերմակ թիթեռնիկներ՝ պտտվելով երփներանգ ծաղիկների շուրջը:
7. Այդտեղ կային նաև այլ թիթեռներ, որոնք թռչում են այս ու այն կողմ՝ թափահարելով գույնզգույն թևերը:
8. Իսկ երեկոյան, երբ զով սյուքը փոքր-ինչ մեղմում է կեսօրվա տապը, կարող ես տեսնել, թե ինչպես են խխունջները խեցիների միջից հանում գլուխները:
9. Ցանկանալով փոքր-ինչ կտրվել առօրյա հոգսերից՝ ես մտնում եմ ճամփեզրի՝ ապակյա մեծ-մեծ ցուցափեղկերով սրճարանը:
10. Հաջորդ օրը՝ կեսօրին, Սուքիասը հապճեպ փակեց նեղլիկ ցուցափեղկերով իր խանութը և գնաց դահլիճ՝ ունկնդրելու համերգը:

Վարժություն 43: Առանձնացրեք բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունները:

1. Նա գոհունակությամբ ժպտաց, իսկ մենք ուրախացած դուրս եկանք՝ հրաժեշտ տալով ու առողջություն մաղթելով:

2. Կարծում եմ՝ մեր այցելությունը ոգևորեց նրան:
3. Անծանոթը հագել էր երկար վերարկու, որի տակից երևում էր օսլայած վերնաշապիկի օձիքը:
4. Հետաքրքրասեր ուղեկիցը ուզում էր խոսել օտարականի հետ, բայց չէր համարձակվում:
5. Ուղեկցին թվում էր՝ ուղևորը չի հասկանա իր լեզուն:
6. Նկարիչը շտապում էր, որ հանկարծ բաց չթողնի արևածագի ամենօրյա ակնթարթային հրդեհը լեռան գագաթին:
7. Երբ իշխանին հայտնեցին նոր լուրը, նա վճռեց այլևս չդանդաղել:
8. Եթե զգույշ չլիներ, իսկույն կըմբռնեին նրա մտադրությունը:
9. Թեև նախորդ ամբողջ օրը ճանապարհորդել էի, առավոտյան շատ վաղ արթնացա:
10. Արդեն աղջամուղջ էր, և անթուխպ երկնքում աղոտ սկսել էին փայլատակել աստղերը:

Վարժություն 44: Կազմեք երեքական բարդ նախադասություն, որոնց բաղադրիչ նախադասությունները կապակցված լինեն շաղկապով և շարահարությամբ:

Վարժություն 45: Կետադրեք տրված բարդ նախադասությունները:

1. Մեքենայի արագ ընթացքը համահունչ էր տարեց ուղևորի հոգեվիճակին որի գլխում խառնիճաղանջ մտքերը ակնթարթորեն հաջորդում էին իրար:
2. Հաճախ լսում էր ինչպես են երեխաները աղմկում բակում բայց դա նրան չէր զայրացնում:
3. Նա բացեց պատուհանի փեղկը և ներս խուժեց երեկոյան սյուքը բերելով խոնավ հողի բույրը:
4. Սիրտը թպրտում էր ու քար լռության մեջ նա ասես լսում էր սեփական սրտի բաբախյունը:
5. Հիշում եմ անցյալ ամառ նրանք գնացել էին ծովափ հանգստանալու սակայն անհետաձգելի գործերի պատճառով մի քանի օրից վերադարձել էին:
6. Այդ պահին մենք գտնվում էինք ամենաբարձր լեռներից մեկի լանջին որտեղից երևում էին շրջակա բնակավայրերը որոնք թաղված էին կանաչի մեջ:
7. Տղան վերցնելով ծանր ճամպրուկը տարավ և դրեց մեքենայի մոտ որը կանգնած էր տան առջև:
8. Հիմա ամեն ինչ փոխվել էր ամեն նոր գործ ձեռնարկելիս լավ նախապատրաստվում էր որովհետև աշխատանքի բոլոր պայմաններն ապահովված էին:
9. Աշխատանքն ավարտելուց հետո երբ հայացքն ինքնըստինքյան սահեց շրջապատի վրայով նոր միայն նկատեց բակում կատարված փոփոխությունները:

10. Սեղանը ծածկված էր ճերմակ սփռոցով շարված էին արծաթազօծ դանակներ ու պատառաքաղներ ըմպանակները շողշողում էին մաքրությունից իսկ կերակուրների բուրմունքն ախորժակ էր գրգռում:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԴԵՐԸ

Ստորադաս նախադասությունները կապակցվում են գերադասին՝ հիմնականում կատարելով այն նույն գործառույթները, որոնք կատարում են նախադասության անդամները: Ըստ այդմ՝ երկրորդականները լինում են ենթակա, ստորոգելի, գոյականական անդամի լրացում և բայական անդամի լրացում:

Վարժություն 46: Տրված բաղադրիչ նախադասությունները շարունակեք նշված բնույթների երկրորդականներով:

1. Լիովին պարզվեց, ... (ենթակա երկրորդական):
2. Այդ հարցի միակ լուծումն այն է, ... (ստորոգելի երկրորդական):
3. Հիացած կանգնել էինք եկեղեցու առաջ, ... (որոշիչ երկրորդական):
4. Ներկայացված էին միայն նրանց աշխատանքները, ... (հատկացուցիչ երկրորդական):
5. Վերադարձել էր նա, ... (բացահայտիչ երկրորդական):
6. Այդ ամենից հետո միայն իմացանք, ... (ուղիղ խնդիր երկրորդական):
7. Աշխատանքը պետք է գնահատվեր նրանց կողմից, ... (ներգործող խնդիր երկրորդական):
8. Երեխաները մոտեցան նրանց, ... (հանգման խնդիր երկրորդական):
9. Մենք դժվարությամբ բաժանվեցինք նրանցից, ... (անջատման խնդիր երկրորդական):
10. Յուրաքանչյուրը փորձում էր կրակը մարել նրանով, ... (միջոցի խնդիր երկրորդական):
11. Զրուցում էին այն մասին, ... (վերաբերության խնդիր երկրորդական):
12. Բոլորն այնպես էին խոսում, ... (ձևի պարագա երկրորդական):
13. Շենքը կառուցեցին այնտեղ, ... (տեղի պարագա երկրորդական):
14. Բոլորն արդեն հավաքվել էին, ... (ժամանակի պարագա երկրորդական):
15. Փորեցին այնքան, ... (չափի պարագա երկրորդական):
16. Նա չմասնակցեց մրցությունին, ... (պատճառի պարագա երկրորդական):
17. Բոլորս էլ կմասնակցենք, ... (պայմանի պարագա երկրորդական):
18. Ցանկանում էր հանդիպել տնօրենին, ... (նպատակի պարագա երկրորդական):
19. Առավոտյան ճանապարհ ընկանք, ... (զիջման պարագա երկրորդական):

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱԶՄԱՍՏՈՐԱԴԱՍ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այն բարդ նախադասությունը, որում մեկ գերադաս նախադասությանը լրացնում են մեկից ավելի ստորադաս նախադասություններ, կոչվում է բազմաստորադաս: Բազմաստորադաս նախադասությունները լինում են *ենթաստորադասական, համաստորադասական, տարաստորադասական*:

ա. *Ենթաստորադասական:* Կազմված է հաջորդաբար իրար լրացնող նախադասություններից, օրինակ՝ *«Ես կարդացի գիրքը (1. գլխավոր), որն ինձ տվել էր ընկերս (2. որոշիչ), երբ իրենց տանն էի (3. ժամանակի պարագա)»:*



բ. *Համաստորադասական:* Կազմված է մեկ գլխավոր և մեկից ավելի իրար համադաս երկրորդական նախադասություններից, օրինակ՝ *«Մենք հասանք գյուղին (1. գլխավոր), որը հայտնի է իր գեղեցիկ բնաշխարհով (2. որոշիչ), և որտեղ պատմական շատ հուշարձաններ կան (3. որոշիչ)»:*



գ. *Տարաստորադասական:* Կազմված է մեկ գլխավորից և մեկից ավելի տարաբնույթ երկրորդականներից, օրինակ՝ *«Երբ մութն ընկավ (1. ժամանակի պարագա), մենք հասանք գյուղին (2. գլխավոր), որը գտնվում էր գետի ափին (3. որոշիչ)»:*



Վարժություն 47: Կազմեք երեքական համաստորադասական, ենթաստորադասական, տարաստորադասական նախադասություն:

Վարժություն 48: Որոշեք տրված նախադասությունների կառուցվածքային տեսակները:

1. Երբ մենք մտանք գյուղ, մեզ դիմավորեցին տանտերերը, որոնք վաղուց մեզ էին սպասում:

2. Այդ մարդիկ, որոնք ջանք չէին խնայել աշխատանքը լավ կատարելու համար, զսպված ժպիտով լսում էին նրանց, ովքեր ոչինչ չէին արել:
3. Երբ արդեն մթնել էր, ճանապարհորդները հասան մի աղբյուրի, որի ջուրը շատ սառն էր:
4. Շինարարները վերակառուցում էին այն եկեղեցին, որն ավերվել էր երեք դար առաջ, երբ այդտեղ կռիվներ էին եղել:
5. Ապրանքները, որոնք շարված էին ցուցափեղկում, դուր եկան միայն նրանց, ովքեր առաջին անգամ էին լինում այդ խանութում:
6. Մի քանի գյուղացիներ, որոնք նստած էին ծառի ստվերում և զրուցում էին առօրյայից, նայեցին մոտեցող մեքենային:
7. Քանի որ ամեն ինչ արդեն պարզվել էր, ու տեղափոխման հարցը լուծվել էր, ոչ ոք այլևս չէր խոսում:
8. Գյուղ գնալիս նա տարավ այն գրքերը, որոնք ուսուցիչը հանձնարարել էր կարդալ, և ինքը վերցրել էր գրադարանից:
9. Բոլորին էլ դուր էր եկել այդ ծաղկեփունջը, որը շատ գեղեցիկ էր ու դրված էր հախճապակե ծաղկամանում:
10. Եթե հավատաք ձեր ուժերին, կհաղթահարեք դժվարությունները, որոնք երբեմն հանդիպում են:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՄԵՋԲԵՐՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Խոսելիս հաճախ մեջբերվում է որևէ մեկի խոսքը: Այն կարող է մեջբերվել ուղղակիորեն կամ անուղղակի ձևով, օրինակ՝ – *Ես շուտով կգամ,– ասաց տղան* և *Տղան ասաց, որ ինքը շուտով կգա*:

Ուղղակիորեն մեջբերված խոսքը կոչվում է ուղղակի խոսք, իսկ անուղղակիորեն՝ պատմողաբար մեջբերված խոսքը՝ անուղղակի: Ուղղակի խոսքը հիմնականում հնարավոր է լինում դարձնել անուղղակի:

Վարժություն 49: Տրված ուղղակի խոսքը փոխակերպե՛ք անուղղակիի:

1. Վարդանը խորազնին նայեց Ատոմին և ասաց կիսաձայն.
   – Դու կլինես վերջապահում:
2. – Խմբո՞վ եք ուզում նկարվել, թե՞ առանձին-առանձին,– հարցրեց լուսանկարիչը մարզիկներին:
3. «Այդ վճիռն անբեկանելի է»,– մտածեց նա՝ փոքր-ինչ հանգստացած:
4. Թագուհին սրբեց արցունքազօծ աչքերը և ասաց դայակին.
   – Դու ինձանից էլ լավ ես հասկացել այդ ամենը:
5. – Սրանք հրաշալիքներ են, բայց դու չես հասկանում,– Ադամի խոսքը արհամարհանքով կտրելով՝ ասաց Լիլիթը:
6. – Ոչ ոք չի կարող ինձ հետ պահել իմ որոշումից,– աներկբայորեն ասաց նա:
7. – Դուք չէի՞ք կարող ավելի վաղ այցելել ձեր հիվանդ ընկերոջը,– աշակերտներին հարցրեց ուսուցչուհին:

8. – Ես,– ասաց եղբայրը,– նրան երբևէ չեմ այցելել և չեմ էլ այցելելու:
9. «Մենք ժամանակին կկատարենք բոլոր պատվերները»,– գրված էր հայտարարության մեջ:
10. – Մենք,– ասաց վարպետը տանտերերին,– ժամանակին կնորոգենք ձեր տունը:

Վարժություն 50: Տրված անուղղակի խոսքը փոխակերպե՛ք ուղղակիի:

1. Նա ընկերոջը ասաց, որ ինքը մեկ շաբաթից մեկնելու է գործուղման. իրեն հրավիրել են զեկուցում կարդալու այն աշխատանքի մասին, որը իրենք սկզբում միասին էին կատարում:
2. Նկարիչը մտածում էր, որ ինքը այդ լեռան կատարից կկարողանա նկարել իրեն դուր եկած տեսարանը, բայց պետք է խնդրի մարզիկներին, որ իրեն օգնեն բարձրանալու այդ լեռը:
3. Դերասանը հանդիպման ժամանակ ասաց, որ ինքը թեև հաջողությամբ է կերտել այդ կերպարը, բայց նրա բնավորությունը բոլորովին նման չէ իրենին, և իր համար բավական դժվար էր խաղալ այդ դերը:
4. Սարգիսը նրանց ասաց, որ ինքը այդքան երկար չի կարող մնալ նրանց մոտ, բայց իրենք շուտով նորից կհանդիպեն, քանի որ իրենք էլ նրանց են հրավիրելու:
5. Ծերունին խորհուրդ տվեց, որ տունը կառուցելիս նրանք լավ աշխատեն և չմոռանան իր ասածները:
6. Հայտարարության մեջ գրված էր, որ մրցույթին կարող են մասնակցել նրանք, ովքեր ունեն մասնագիտական կրթություն:
7. Վարպետն ասաց տանտերերին, որ ինքը չի կարող նրանց տունը վերանորոգել. թող նրանք դիմեն ուրիշի:
8. Հուզված աղջիկը պատասխանեց, որ դա իր առաջին հաղթանակն է, բայց ինքը հուսով է, որ վերջինը չէ:
9. Այգում աշխատող գյուղացին հարևանին ասաց, որ նա վերցնի իր բահը և գա իր այգին՝ իրեն օգնելու:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՐԶԻ

Հաճախ հնարավոր է բարդ ստորադասական նախադասության իմաստն արտահայտել պարզ նախադասության միջոցով և հակառակը, օրինակ՝ «*Գնում էր գյուղ, որ այգում աշխատի – Գնում էր գյուղ՝ այգում աշխատելու*»: Բարդ նախադասությունը պարզի փոխակերպելիս դուրս են գալիս շաղկապները և հարաբերական-կապակցական բառերը, որոնց փոխարեն կարող են գործածվել համապատասխան կապեր, երկրորդական նախադասության ստորոգյալը վերածվում է դերբայի: Եթե ստորոգյալը բաղադրյալ է, ապա ստորոգիչը կամ փոխարինվում է *լինել* (նաև *թվալ, դառնալ, համարվել, կոչվել*) բայով, կամ էլ դուրս է ընկնում:

Հնարավոր է, որ այս փոփոխությունները մասնակիորեն կատարվեն:

Վարժություն 51: Պարզի՛ փոխակերպեք տրված բարդ ստորադասական նախադասությունները:

1. Շուտով կնորոգեն այն ճանապարհը, որն ավերվել է հեղեղից:
2. Այդ ամենը կկարողանաք կատարել այն դեպքում, եթե ամբողջ օրն աշխատեք:
3. Երբ անձրևը դադարեց, զբոսայգին լցվեց մարդկանցով:
4. Գիտնականը ցանկանում էր ավարտել աշխատանքը, որ մեկնի գիտաժողովի:
5. Ընթերցեցին նրանց անունները, ովքեր հաղթել էին նկարչության մրցույթում:
6. Պարզվեց, որ այդ ապրանքները լավ որակ ունեն:
7. Ծաղիկները, որոնք դրված էին ծաղկամանում, արդեն թոշնել էին:
8. Ձայնը, որը լսվում էր բակից, ծանոթ թվաց:
9. Եթե մեքենան ճանապարհին չխափանվեր, երեկոյան կհասնեին քաղաք:
10. Գրքերը, որոնք հանձնարարել էր ուսուցիչը, շատ հետաքրքիր էին:

Վարժություն 52: Բարդ ստորադասականի՛ փոխակերպեք տրված պարզ նախադասությունները:

1. Նոր կառուցված շենքը շատ գեղեցիկ էր:
2. Այգում զբոսնելիս հանդիպեց ընկերոջը:
3. Ձորի միջով ոլոր-մոլոր հոսող գետը գարնանը վարարում էր:
4. Երկար ժամանակ չարչարվում էր հաջողության հասնելու համար:
5. Առավոտից տեղացող ձյունը ծածկել էր ամեն ինչ:
6. Պահապանները, տեսնելով մոտեցող մարդկանց, բացեցին դարպասը:
7. Եղանակի վատ լինելու պատճառով թռիչքը հետաձգվեց:
8. Բոլորին հայտնի էր նրա՝ լավ բժիշկ լինելը:
9. Լսվում էին բակում խաղացող երեխաների ձայները:
10. Այգում աշխատելիս մի կճուճ գտավ:

Վարժություն 53: Գտե՛ք, թե որ բառը, բառաձևը կամ կապային կառույցը պետք է տեղադրել իմաստով և քերականորեն ճիշտ նախադասություն ստանալու համար:

1. Եվ ամեն անգամ քեզ (հանդիպելուց, հանդիպելիս, հանդիպած)
   Ես թեթևակի բարև եմ տալիս...
   Ու (անցորդներից, անցորդներին, անցորդները) այնպես է թվում,
   Թե մենք հազիվ ենք իրար բարևում:

   Վահագն Դավթյան

2. Ձրերն են անուշ (կարկաչից, կարկաչի պես, կարկաչով) հոսում.
   Այդպես են գարնանն իմ Հայաստանում
   Ձանգակ աղբյուրներն (իրարով, իրար հետ, իրար) խոսում:

   Համո Սահյան

3. Մենք երկուսս էլ հպարտ եղանք,
   Ոչ ոք չուզեց սեր աղերսել.
   Գաղտնի (պահելիս, պահելու համար, պահած) տենչանք ու սեր՝
   Մենք երկուսս էլ հպարտ եղանք...

   Գևորգ Էմին

4. Հայաստան ասում, լեռներ են հիշում,
Գագաթներ՝ (կորչելիս, կորչելով, կորած) ձյուներում հավերժ,
Ձորեր՝ ընկղմված ամպի (մշուշով, մշուշում, մշուշից),
Ժայռից ժայռ (թռչելիս, թռչելուն պես, թռչող) գետեր գահավեժ:

Միլվա Կապուտիկյան

5. Այդպես արևը ամենից առաջ
Լուսավորում է բարձրաբերձ (ծառից, ծառի, ծառի վրա)
Կատարին (թառում, թառելիս, թառած) թռչունի բույնը:

Պարույր Սևակ

6. Թող Երևանի քամին զովարար
Այգուս ծառերը կամաց (օրորի, օրորվի, օրորվող),
Թող իմ ստվերում սեր երդվեն իրար
Պատանիները գալիք (օրերի, օրերից, օրերով):

Նաիրի Զարյան

7. Ձյունը լալիս է, ձմեռն է մեռնում,
Ձյան (անցնելիս, անցած, անցնելով) ճամփով զվարթ ու անվիշտ
Գարունը գալիս, աշխարհն է բռնում...
Երանի (մեռնող, մեռնելիս, մեռնում) ձյուներին, որ միշտ
Հետևից կանաչ գարուն են թողնում:

Հովհաննես Շիրազ

8. Հայրենի (հողի վրա, հողից, հողով) եմ նորից,
Նորից մանկական աչքով տեսնում եմ
Հավերժից դիտող (աստղերն, աստղերից, աստղերով) հրեղեն,
Հրաշք է դառնում աշխարհն ինձ նորից:

Ավետիք Իսահակյան

9. Հոգ չէ, որ մեր օրերն անցան (տենդից, տենդի պես, տենդը),
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.
– Մենք կժպտանք, գրի կժպտանք (մեռնելուց, մեռնելիս, մեռնելը),
Որ երազում երազեցինք ու անցանք...

Եղիշե Չարենց

10. Դու մի՛ հավատա ժպտուն (աչքերը, աչքերին, աչքերից).
Շատ անգամ նրանք ծաղիկներ են վառ,
Բուսած կորստյան անդունդի ծայրին,
Միամիտ մարդկանց (քաշելուց հետո, քաշելուն պես, քաշելու համար):

Հովհաննես Թումանյան

Վարժություն 54: Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզ նախադասության:

Հենց որ արևը բարձրացավ, խիզախ ճանապարհորդները շարունակեցին ճամփան:

1. Արևի բարձրանալուց հետո խիզախ ճանապարհորդները շարունակեցին ճամփան:

2. Արևի բարձրանալու ժամանակ խիզախ ճանապարհորդները շարունակեցին ճամփան:
3. Արևը բարձրանալով՝ խիզախ ճանապարհորդները շարունակեցին ճամփան:
4. Արևի բարձրանալուն պես խիզախ ճանապարհորդները շարունակեցին ճամփան:

Վարժություն 55: Շարահյուսորեն վերլուծեք տրված նախադասությունները:

1. Կանաչ անտառը մեր ոտքերի տակ
   Արահետներն է փռում իր ոսկի,
   Խոնարհ թեքվում է ուռին գլխահակ,
   Որ մեր գաղտնիքը քնքշորեն հսկի:
2. Ձիլ սուլում է գնացքն ու տեղից իր պոկվում թափով,
   Աղմուկից չեմ լսում այդ հարցի պատասխանը դժվար...

Վահագն Դավթյան

3. Իմ քաղաքում հիմա գարնան իրիկունն է իջնում շքեղ:
4. Կրկին անձրևն է տեղում գիշերային մայթերին,
   Քնած, խաղաղ քաղաքի տանիքներին երազկոտ:

Պարույր Սևակ

5. Քնաթաթախ բարդին սրթսրթում է, մրսում...
6. Ողջ աշխարհը կարծես համակված է նինջով...

Գևորգ Էմին

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

Իրենց հիմնական կիրառությունների հիման վրա կետադրական նշանները պայմանականորեն բաժանվում են երեք խմբի՝ տրոհության, առոգանության, բացահայտության:

Տրոհության նշաններն են վերջակետը, միջակետը, ստորակետը, բութը:

Բացահայտության նշաններն են չակերտները, փակագծերը, միության գծիկը, անջատման գիծը, կախման կետերը, բազմակետը, ենթամնան, ապաթարցը:

Առոգանության նշաններն են շեշտը, հարցականը, բացականչականը:

Վարժություն 56: Արտագրեք՝ կետադրելով և ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողնված տառերը:

1) Բոսորագույն արևը մայր էր մտնում: Երկու հեծ...լներ անցնում էին Գանձակի դաշտով: Նրանցից մեկը տարիքավոր տղամարդ էր գլուխը ծածկած պղնձե թեթև սաղավարտով և զինված արծաթազ...ծ սրով ու փոքրիկ վահանով մ...սը պո...պատե սաղավարտով հա...թանդամ մի երիտասարդ էր: Տարիքավոր տղամարդն ըն...անում էր առ...ևից իսկ երիտասարդը որը նրա թիկնապահն էր հետ...ում էր նրան: Երկուսի ձիերն էլ սաստիկ քրտնած էին և հևիհև փ...փ...ացնում էին ռունգները: Երևում էր նրանք խոչ...նդոտներով լի երկար ճանապար... էին կտրել:

Շուտով երևաց Գարդմանը իր հաստաբեստ պարիսպներով և բարձրաբեր... աշտարակներով: Դրանք բարձրանում էին բեր...ի արևմտյան կողմից և աջ ու ձախ ձ...վելով միանում հյուսիսային մասի անմա...չելի լեռնալանջին և հարա...արևելյան կողմերի ու...ածիգ ժայռերի բնական պատնեշներին:

Ըստ Մուրացանի

2) Ես այստեղ եկա հազար կամ տասնհինգ տարի ուշացումով: Եթե գայի հազար կամ տասնհինգ տարի առա... այս քարանձավները կլինեին կեն...անի տներ բակերը զվար... կզրնգային աշխ...ժ երեխաների գոռու...-գոչյունից թոնիրներից հացի ախորժագ...գիռ բույր կելներ: Ուշացա և հիմա քարայրերի կույր աչքերն են ինձ նայում իսկ փողոցներում ու բակերում հու...թի կանաչ է տաքացած քարերին ճարպիկ մողեսներ: Ես մտնում եմ հինավուր... եկեղեցու բաց դռնով որի շա...անակագույն փե...կի վրա կան նա...շեր ժամանակի ըն...ացքում տեղ-տեղ ջնջված: Կորնթար... կամարով նեղ պատուհանից արևը ներս է ընկել և լույսի աներևույթ ժապավենի մեջ միլ...նավոր փոշեհատիկներ պար են բռնել:

Ըստ Վարդգես Պետրոսյանի

3) Ժայռը դղրդում էր: Քարհատները մերկացրել էին նրա պղնձագույն կողը ու հիմա էլ ան...նդհատ հարվածում էին քլունգներով: Քարերի բեկորները խորդուբոր... ահագին ու կարծր ան...նդմեջ հարվածներից անճռ...նի գազանների նման կ...ճտացնում էին իրենց ատամները:

Դե այս մեկն էլ շուռ տվեք ու վերջացնենք գործը երիտասարդ բանվորներին հրահանգեց մի ալեզար... մարդ ու իջավ փոքր-ինչ ներքև մի որ...աքարի մոտ:

Վարպետ Սար...իսն էր որը ճակատի քրտինքը սր...ելով հողոտ բա...կոնը մե...քին գցելով նստեց մի քարի ծխելու իր նա...շազարդ ծխամորճը: Աչքը սակայն բանվորների կողմն էր որոնք ան...նդհատ հարվածելով քլունգները խրում էին ժայռի մեջ: Սար...իսը որն ամբողջ օրը եռուզեռի մեջ էր եղել գոհունակությամբ նայեց աշխատանքի ար...յունքին արդեն պոկված քարաբեկորներին: Իրիկնադեմ էր: Քարհատները հո...նել էին ու նրանց ձայները հազվադեպ էին լսվում չկար կես...րվա աշխ...ժ եռանդը: Մի մեծ քարի շուրջն էին խմբվել: Պետք էր տեղահան անել բայց պարզվեց որ դա այնքան էլ հեշտ չէ որքան թվում էր սկզբում: Քարը պինդ կպած էր ժայռին և չէր շարժվում:

Ըստ Դեռենիկ Դեմիրճյանի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐ

Հոմանիշ բառերն արտահայտում են իրար մոտ իմաստներ, օրինակ՝ *գեղեցիկ – հիասքանչ – չնաշխարհիկ* և այլն: Սակայն իրար մոտ իմաստներ կարող են արտահայտվել լեզվի տարբեր միավորներով: Բառակապակցություններով ու բարդ բառերով, հոլովաձևերով ու կապական կառույցներով, դերբայական դարձվածներով ու երկրորդական նախադասություններով, ներգործական և կրավորական կառույցներով, ուղղակի և անուղղակի խոսքի միջոցով ևս հաճախ հնարավոր է մոտ իմաստներ արտահայտել: Այսինքն՝ այս միավորներն իրար նկատմամբ ունենում են հոմանշային հարաբերություն:

Վարժություն 57: Կապակցությունների իմաստներն արտահայտեք մեկ բառով:

Հիանալի և սքանչելի, սյուների շարք, նուրբ հյուսված, օղակի ձև ունեցող, լայն տերևներ ունեցող, ջերմություն չափող, ծառի բուն, ջրից զրկված, նարնջի գույն ունեցող, ասֆալտով պատված, գրքերի պահարան, ալիքներով ծփացող:

Վարժություն 58: Շեղատառ գրված կապային կառույցները փոխարինեք հոլովաձևերով:

1. Խաղի *կանոնների համաձայն*՝ արգելվում է գնդակը ձեռքով բռնել:
2. Խնձորները *արկղի միջից* լցրին *կողովի մեջ:*
3. Պայուսակը դրեց *սեղանի վրա* և գնաց հյուրասենյակ՝ *ճաշելու համար:*
4. Երկար *լարի միջոցով* կարողացան միացնել սարքը:
5. Նա թերանում է *աշխատանքի մեջ:*
6. Տուփերը դասավորեց *արկղի մեջ:*
7. Նա *ընկերների հետ* գնաց զբոսնելու:

Վարժություն 59: Տրված կրավորական կառուցվածքով նախադասությունները փոխակերպեք ներգործականի:

1. Մրցույթի մասնակիցների աշխատանքները գնահատվեցին հանձնաժողովի կողմից:
2. Անխնամ այգին պատվել էր մոլախոտերով:
3. Քարը ծակվել էր ջրի անընդմեջ կաթոցից:
4. Այդ անսպասելի ընդունելությունից նա չափազանց հուզվել էր:
5. Անհրաժեշտ տվյալները ներկայացվեցին մասնագետի կողմից:
6. Ծխնելույզը թեքվել էր ուժեղ քամուց:
7. Կամուրջը նորոգվեց հմուտ շինարարների կողմից:
8. Լուսամուտի փեղկը բացվեց քամուց:
9. Ծաղիկները օրորվում էին մեղմ զեփյուռից:
10. Երեխայի հագուստը թրջվել էր անձրևից:

Վարժություն 60: Ներգործական կառուցվածքով տրված նախադասությունները փոխակերպեք կրավորականի:

1. Անընդմեջ փչող քամին ավելի էր բորբոքում կրակը:
2. Թանձրացող խավարը աստիճանաբար ծածկեց փողոցները, մարդկանց, շենքերը:
3. Մարզիչը թիմի ավագին փոխարինեց մեկ այլ խաղացողով:
4. Նա շատ արագ կատարել էր հանձնարարված աշխատանքը:
5. Կաթնագույն մշուշը պատեց շրջակա սարերը:
6. Ծխնելույզների ծուխը մրոտում էր մոտակա ամեն ինչ:
7. Գույնզգույն ծաղիկները զարդարել էին սարալանջը:
8. Մեղմ քամին ցրում էր ծխնելույզներից բարձրացող ծուխը:
9. Գարնան հորդառատ անձրևներն ավելի էին պղտորել լեռնային գետը:
10. Վարպետը գյուղի կենտրոնում կառուցեց մի աղբյուր-հուշարձան:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԲԱՌԻ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՔՍՏԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Բառերը կազմվում են հնչյուններից, նախադասությունները՝ բառերից, տեքստը՝ նախադասություններից: Սրանցից յուրաքանչյուրը կազմվում է որոշակի օրինաչափություններով: Եթե հնչյունները, բառերը կամ նախադասությունները անհրաժեշտ հերթականությամբ չդրվեն, ապա կամ իմաստ չի արտահայտվի, կամ այլ իմաստ կարտահայտվի, օրինակ՝ *վագր* բառի հնչյունների տեղափոխությամբ հնարավոր է կազմել *գրավ* բառը, իսկ *գարվ* դասավորությամբ իմաստ չի արտահայտվի, այսինքն՝ բառ չի կազմվի: Համեմատենք հետևյալ նախադասությունները. *Լսվում էր զվարթ երեխայի ձայնը: Լսվում էր երեխայի զվարթ ձայնը:* Առաջինում *զվա*րթ բառը *երեխա*-ի լրացումն է, իսկ երկրորդում՝ *ձայ*ն բառի: Հետևաբար խոսելիս և գրելիս պետք է ուշադիր լինել, որ լեզվական միավորներն այնպես դասավորվեն, որ արտահայտվի անհրաժեշտ իմաստը:

Վարժություն 61: Տրված նախադասություններն այնպե՛ս դասավորեք, որ ստացվի տեքստ:

1. ա) Դեռևս հին Հայաստանում ագաթից պատրաստում էին զանազան հուլունքներ, արձանիկներ:
   բ) Իսկ այժմ բարձրորակ ագաթները օգտագործվում են ոչ միայն ոսկերչության մեջ, այլև ճշգրիտ տեխնիկայում:
   գ) Հայաստանում հայտնաբերված գայլախազ քարի տարատեսակներից ամենափառաբանվածը ագաթն է, որը սկսել են մշակել վաղուց:
   դ) Դրանցից ամենափայլուն գործը Մեծամորի պեղումների ժամանակ հայտնաբերված նրբագեղ գորտիկն է, որը միաժամանակ նաև կշռաքարի և հուռութի դեր է կատարել:
2. ա) Այդ միներալի անվանումն առաջացել է հունարեն «պիրոս» բառից, որը նշանակում է հուր, կրակ, և ահա թե ինչու:
   բ) Կրակ ստանալու այդ միջոցը փոխանցվել է տոհմից տոհմ, սերնդից սերունդ այնքան, մինչև հայտնաբերվել է լուցկին:
   գ) Դեռևս քարի դարում նախամարդը նկատել է, որ երբ քարով խփել է պիրիտին, նրանից ավելի շիկացած կայծեր են դուրս եկել, քան մյուս քարերին հարվածելիս:
   դ) Պիրիտը դեղին միներալ է. հաճախ հանդիպում է գեղեցիկ, խոշոր բյուրեղների տեսքով:
3. ա) Մեր ժողովրդի պատմության ընթացքում այս քարն ունեցել է մի քանի անուններ՝ սատանի քար, վանակատ, օբսիդաքար:
   բ) Օբսիդիանը մուգ գույնի, երբեմն նաև թափանցիկ հրաբխային ապար է:

գ) Այս անվանումներից բացի՝ մուգ գույնի և սուր սայրերի համար, որոնցով հնարավոր է վնասել ձեռքը, օբսիդիանը հաճախ անվանում են նաև սատանի եղունգ:

դ) Այն առաջանում է հրաբխի շատ արագ սառչելուց:

Ըստ Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքի

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՄԱԿԴԻՐ, ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ, ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Խոսքում, հատկապես գեղարվեստական խոսքում, որևէ առարկա, երևույթ բնութագրելու համար հեղինակները գործածում են գեղարվեստական որոշիչներ. դրանք մակդիրներ են, օրինակ՝ *երգող աղբյուր, խենթ քամի, մռայլ ժայռ* և այլն:

Դիպուկ պատկերներ ստեղծելու, որևէ իրողություն ավելի լավ նկարագրելու համար խոսքում հաճախ կատարվում են համեմատություններ: Դրանց շնորհիվ հնարավոր է դառնում հայտնի իրողության հետ համեմատելու միջոցով բնորոշել, բնութագրել նորը, անծանոթը և միևնույն ժամանակ խոսքը դարձնել գեղեցիկ ու բազմազան, օրինակ՝

Ինձ ճանաչելը մի քիչ դժվար է,
Հասկացեք, էլի, ես մի քիչ բարդ եմ.
Քարի պես պինդ եմ, *հողի պես* փխրուն,
Ինչքան չլինի, դեռ մի քիչ մարդ եմ:

Համո Սահյան

Առարկաների, երևույթների արտաքին կամ ներքին նմանության հիման վրա գեղարվեստական խոսքում բառերը հաճախ գործածվում են ոչ իրենց սովորական իմաստով: Սա կոչվում է փոխաբերություն, օրինակ՝ Մութն օրորվելով *նստում է* ծառին *(Ռազմիկ Դավոյան):*

Վարժություն 62: **Շղատառ գրվածներից որո՞նք են մակդիրներ:**

Զրնգում է *կանաչ* քամին
Դաշտում *լայնատարած*՝
Իմ մանկության *կանաչ* երգը
Բերանացի արած:

Խշխշում է *խարտյաշ* քամին
Կիրճերի մեջ *անանց*՝
Իմ այրության *խարտյաշ* երգը
Բերանացի արած:

Որոտում է *կարմիր* քամին՝
Կարմիր կրակ դառած,
Պատանության *կարմիր* երգը
Բերանացի արած:

Հառաչում է *ճերմակ* քամին՝
Աչքն անհայտին հառած,
Իմ ծերության *ճերմակ* երգը
Բերանացի արած:

Համո Սահյան

Վարժություն 63: Գտեք մակդիրները:

Հնձած խոտի բույր է բերում
Սարից փախած քամին...

.....

Ինչ է ասում ճամփորդներին
Հալված-մաշված այս կածանը,
Ժամանակին հազար ու մի
Քայլեր հաշված այս կածանը,
Անցող-դարձող քարավանի
Ծանր ու դանդաղ ոտքերի տակ
Մեջքը կոտրած, կուրծքը պատռած,
Հոգնած-տանջված այս կածանը,
Մեծ աշխարհի մեծաժխոր
Ճանապարհից հեռու քաշված,
Հիսուսի պես ապառաժի
Կողին խաչված այս կածանը:

Համո Սահյան

Վարժություն 64: Գտեք համեմատությունները:

– Չէ՞ որ չէ՞, ասավ, էն լեռ սարի պես
Գընաց, դիք կանգնեց գեղի մեյդանում...

.....

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկընքի մընթած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ՝ սաստիկ սրընթաց,
Գյուղից սըլացան մի խումբ կտրիճներ:

Հովհաննես Թումանյան

Կրակի բոցը դանդաղ մարում է,
Մեռնող սրտի պես թույլ բաբախում...

Համո Սահյան

Տուն վերադարձան հնձվորները հանդից
Մայրամուտ իջնող արևի նման...

Հովհաննես Շիրազ

Վարժություն 65: Գտեք փոխաբերությունները:

Ծալվել է սարը սարի վրա,
Ձորը ձորի մեջ մոլորվել է,
Չոքել է ամպը ժայռի վրա,
Աչքերը վրաս խոլորել է:

– Ինչ ունեմ-չունեմ, հողին կտամ.
Հողից է ծնվում հորովելը,
Եվ աշխարհով մեկ կորոտամ,
Որ հողը մարդուց խռովել է...

Համո Սահյան

Վարժություն 66: Գրեք «Մայրամուտ», «Ծովափին», «Անտառում», «Լեռան կատարին», «Ծաղիկների աշխարհում» թեմաներից որևէ մեկով շարադրություն՝ գործածելով մակդիրներ, համեմատություններ, փոխաբերություններ և ընդգծելով դրանք:

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԺԱՆՐԵՐ

Տեղեկատվական ժանրերից են ակնարկը, թղթակցությունը, ռեպորտաժը, հարցազրույցը: Ակնարկում հեղինակը կոնկրետ փաստերը ներկայացնում է գեղարվեստական երանգավորումով: Թղթակցության հեղինակը ներկայացնում է որոշակի դեպք, փաստ, ինչպես նաև արտահայտում է իր կարծիքը, կատարում վերլուծություններ: Ռեպորտաժի միջոցով հեղինակը՝ որպես անմիջական ականատես, ամփոփ ձևով ներկայացնում է որևէ իրադարձության վերաբերյալ տեղեկություններ: Հարցազրույցի միջոցով հեղինակը փորձում է բացահայտել որևէ անձի (երբեմն անձանց) կարծիքը, տեսակետները, վերաբերմունքը որևէ իրողության վերաբերյալ:

Վարժություն 67: **Գրեք ակնարկ ձեզ ծանոթ որևէ անձի մասին:**

Վարժություն 68: **Գրեք 10 հարց, որոնք հարցազրույց վարելիս կուղղեիք՝ ա) հայտնի նկարչին. բ) հայտնի կոմպոզիտորին. գ) որևէ մարզաձևի աշխարհի չեմպիոնին:**

ՎԵՐՀԻՇԵ՛Ք

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործնական գրություններից են դիմումը, ինքնակենսագրությունը, պաշտոնական նամակը, բացատրագիրը, բնութագիրը, տեղեկանքը, արձանագրությունը, քաղվածքը: Սրանք գրվում են գործնական տարբեր հարաբերություններ կարգավորելու համար և ունեն գրության ընդունված ձևեր:

Վարժություն 69: **Գրեք դիմում, ինքնակենսագրություն, նամակ, բացատրագիր:**

Վարժություն 70: **Ներկայացրեք բնութագիր, տեղեկանք, արձանագրություն, քաղվածք գրելու սկզբունքները:**

Վարժություն 71: **Գտեք, թե որտեղ են ճիշտ հերթականությամբ ներկայացված դիմումի մեջ գրվող տեղեկությունները:**

1. ա) դիմում գրողի վերաբերյալ տվյալները
   բ) նրա վերաբերյալ տվյալները, ում ուղղված է դիմումը
   գ) դիմումի բուն շարադրանքը
   դ) ամսաթիվը և ստորագրությունը
2. ա) նրա վերաբերյալ տվյալները, ում ուղղված է դիմումը
   բ) դիմում գրողի վերաբերյալ տվյալները
   գ) դիմումի բուն շարադրանքը
   դ) ամսաթիվը և ստորագրությունը

Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին[1]

Նկատի առնելով բաղադրյալ հատուկ անունների մեջ մեծատառերի գործածության անմիօրինակությունն ու սահմանված կանոնների անհետևողական կիրառությունը, ինչպես նաև բաղադրյալ անունների ու անվանումների ավելացման հետևանքով սրանց գրության ուսուցման և տպագրական գործում ստեղծված դժվարությունները՝ վերջիններս հաղթահարելու և մեծատառերի գրության մեջ միասնականություն սահմանելու նպատակով ՀՀ Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը որոշում է.

1. Բոլոր բառերն սկսել մեծատառով.

Ա. Բոլոր պետությունների պաշտոնական բաղադրյալ հատուկ անուններում.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Արաբական Միացյալ Ամիրայություններ, Աֆղանստանի Իսլամական Պետություն, Բելառուսի Հանրապետություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն *(նախկինում՝* Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն), Հայաստանի Հանրապետություն *(նախկինում՝* Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն), Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Ռուսաստանի Դաշնություն *(այսպես նաև՝* Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն), Օսեթ-Ալանիայի Հանրապետություն *և այլն:*

Ծանոթություն: *Պետությունների պատմական անուններում* (պետություն, ամիրայություն, թագավորություն, կայսրություն, խանություն, մելիքություն *և այլն) մեծատառ է գրվում բաղադրյալ անվան միայն առաջին բաղադրիչը (տես իր տեղում):*

Բ. Բոլոր բաղադրյալ այն անձնանուններում և մականուններում ու ծածկանուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են. օրինակ՝ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկին, Ալեքսանդր Ստեփանի Թևոսյան (Ակսել Բակունց), Եղիշե Աբգարի Սողոմոնյան (Եղիշե Չարենց), Խոսե Ռաուլ Կապաբլանկա, Կիմ Իր Սեն, Հո Շի Մին, Մաո Ցզեդուն, Մելիք-Հակոբյան Հակոբ Մելիք-Միրզայի (Ռաֆֆի), Նիկոլայ Անդրեևիչ Ռիմսկի-Կորսակով, Ջորջ Նոել Գորդոն Բայրոն, *այսպես նաև՝* Գամառ-Քաթիպա, Նար-Դոս, Սայաթ-Նովա *և այլն.*

---

1 Նախագիծը կազմել է Հ. Բարսեղյանը, խմբագրել՝ Վ. Ասլանյանը: Հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի 2003 թ. հունվարի 14-ի թիվ 18 հրամանով: Զետեղված է «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուում», Երևան, 2006, էջ 286–294:

բ) լրացյալը հատուկ անուն է, իսկ լրացումը (նախադաս թե հետադաս)՝ մականուն. օրինակ՝ Աշոտ Երկաթ, Արա Գեղեցիկ, Գայոս Սեկունդոս, Դավիթ Անհաղթ, Իվան Ահեղ, Մխիթար Սպարապետ, Պետրոս Առաջին, Պլինիոս Ավագ, Ջորջ Բուշ Կրտսեր, Սահակ Պարթև, Տիգրան Մեծ, Անանիա Շիրակացի, Ներսես Աշտարակեցի, Սողոմոն Իմաստուն, Հայկ Նահապետ, *այսպես նաև՝* Առյուծաձև Միհեր, Գայլ Վահան, Ձախորդ Փանոս, Ձենով Օհան, Մայր Թերեզա, Քաջ Նազար, Անբան Հուռի, Միկիտան Սաքո *և այլն:*

Գ. Բոլոր բաղադրյալ այն աշխարհագրական անուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են. օրինակ՝ Անի-Կամախ, Արփա-Սևան, Բաղք-Քաշունիք, Դոնի Ռոստով, Էլզաս-Լոթարինգիա, Խութ-Բռնաշեն, Մայնի Ֆրանկֆուրտ, Վան-Տոսպ, Վոլգա-Դոն *և այլն.*

բ) հասարակ անուն լրացումը նախադաս է, իսկ հատուկ անուն լրացյալը՝ հետադաս. օրինակ՝ Արևելյան Եփրատ, Արևմտյան Բեռլին, Բարձր Հայք, Կենտրոնական Աֆրիկա, Հարավային Ամերիկա, Մեծ Մասիս, Նոր Արեշ, Փոքր Ասիա, Ներքին Թալին, Վերին Արտաշատ, *այսպես նաև՝* Հին Հունաստան, Հին Հռոմ *և այլն.*

գ) լրացումն ու լրացյալը օտարալեզու, բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող (վերոհիշյալ որևէ տեսակի) անուններ են. օրինակ՝ Ադիս Աբեբա, Ալմա Աթա (այժմ՝ Ալմաթի), Բուենոս Այրես, Իսիկ Կուլ, Խալխին Գոլ, Կրիվոյ Ռոգ, Ղարա Բողազ Գյոլ, Մատոչկին Շար, Միներալնիե Վոդի, Յասնայա Պոլյանա, Նիժնի Նովգորոդ, Նյու Յորք, Սան Ֆրանցիսկո *և այլն.*

դ) երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են (առաջինը՝ նաև հատուկ), բայց պայմանական կամ փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ անվան բաղադրիչ և գրվում մեծատառ. օրինակ՝ Ծիր Կաթին *(աստղակույտ)*, Նոր Երկիր, Հեռավոր Արևելք, Հին Արևելք, Մերձավոր Արևելք *(երկրամասեր)*, Հայկական Պար *(լեռնաշղթա)*, Մեծ Արջ, Փոքր Արջ *(համաստեղություններ)*: *Այսպես նաև՝ հատուկ անվան և նրան հաջորդող պայմանական գործածության անվան բաղադրություններում. օրինակ՝* Աֆրիկայի Եղջյուր *(թերակղզի)*, Վիեննայի Անտառ *(լեռնազանգված)*, Բերենիկեի Վարսեր *(համաստեղություն) և այլն:*

Դ. Հոգևոր-պատմամշակութային այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ միասին հատուկ անուն են. օրինակ՝ Անգղա Սուրբ Նշան, Արգյազի Սուրբ Ստեփանոս Նախավկա, Դարաշամբի Սուրբ Ստեփանոս, Ընծայից Սուրբ Աստվածածին, Մաստարայի Սուրբ Հովհաննես, Մուղնու Սուրբ Գևորգ, Վասպուրականի Մոկաց Սուրբ Մինաս, կամ նաև՝ Սուրբ Նշան, Սուրբ Ստեփանոս Նախավկա, Սուրբ Աստվածածին, Սուրբ Հովհաննես, Սուրբ Գևորգ, Սուրբ Մինաս (վանք, եկեղեցի):

Ծանոթություն 1: *Հայերեն թե օտարալեզու բաղադրյալ անձնանուններում և աշխարհագրական անուններում գործածված միջադաս և վերջադաս մեկնական-լրացական բառերն ու քերականական-վերաբերական նշանակության բառ-մասնիկները*

(նախդիր, հոդ, կապ, շաղկապ), ինչպես այլ լեզուներում, այնպես էլ հայերենում գրվում են փոքրատառ. օրինակ՝ Աբդ էլ Քերիմ, Անդրեա դել Սարտո, Անդրեա դըլլա Ռոբիա, Բոդուեն դե Կուրտենե, Ժաննա դ'Արկ, Լեոնարդո դա Վինչի, Հարուն ալ Ռաշիդ, Միրզա Մելքում խան (Հովսեփ Մելքոնյան), Միրզո Թուրսուն-զադե, Մուքիմի Մուհամադ Ամին խոջա, Նուր ադ դին ալ Հալաբի, Շառլ դը Գոլ, Վիլհելմ ֆոն Հումբոլդտ, Օմար Խայամ Ղիասսադդին Աբու-լ-Ֆաթհ իբն Իբրահիմ, Մահարի Աբու-լ-Ալա, Ադրիան վան Օստադե, Մուհամեդ Սուլեյման օղլի Ֆիզուլի (Ֆուզուլի). այսպես նաև աշխարհագրական բաղադրյալ անուններում՝ Անտիոք առ Եփրատավ, Անտիոք առ Տավրոսիվ, Իլ դը Ֆրանս (պատմական մարզ Ֆրանսիայում), Մեծ կամ Խաղաղ օվկիանոս, Նահր էլ Արդեն (Հորդանան գետի արաբերեն անվանումը), Ռիո դե Ժանեյրո (քաղաք), Սան Պիեռ և Միքելոն (կղզեխումբ), Տուլլա դե Համդոն, Տալլ իբն Համտուն (Թիլ Համտուն բերդավանի ֆրանսերեն և արաբերեն անվանումները), Ջաբալ ալ Հարիթ (Արարադի՝ Ջուդի լեռան արաբերեն անվանումը) *և այլն:*

Սակայն բաղադրյալ հատուկ անվան սկզբում կամ նախադաս դիրքում (թե՛ հայերենում, թե՛ այլ լեզուներում) այդ կարգի մեկնական-լրացական բառերն ու կապակցական բառ-մասնիկները գրվում են մեծատառ. օրինակ՝ Իբն էլ Ֆաքի, Լա Կրոզ Մաթյուրեն Վեյսիե, Լա Վալե Պուսեն Շառլ Ժան, Վան Գոգ Վինսենտ, Վան Դեյք Անտոնիս, Օ'Ռիորդան Մայքլ, Օ'Նեյլ (Օ'Նիլ) Յուջին, **այսպես նաև՝ աշխարհագրական անուններում՝** Լա Մանշ (նեղուց), Լա Պլատա (քաղաք), Լե Կրեզո (քաղաք), Սեն Գոթարդի (լեռնանցք), Սեն Պիեռ (նավահանգիստ) **և այլն:**

Ծանոթություն 2: *Հատուկ անձնանվան զբաղմունքը, մասնագիտությունը, պաշտոնը (բանաստեղծ, վիպասան, նկարիչ, երգիչ, ուսուցիչ, երկրագործ, կոշկակար, թագավոր և այլն) և տեղանվան տեսակը (գետ, լիճ, ծով, լեռ, դաշտ, գյուղ, քաղաք և այլն) որոշող հիմնաբառերը, բոլոր բառերը մեծատառով գրվող հատուկ անունների հետ գործածվելիս, գրվում են փոքրատառ. օրինակ՝* Աշոտ Երկաթ թագավորը, Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը, Դերենիկ Դեմիրճյան վիպասանը, Եղիշե Չարենց բանաստեղծը, Մարտիրոս Սարյան նկարիչը, Անի-Կամախ քաղաքը, Արփա-Սևան ջրատարը, Արևմտյան Եփրատ գետը, Բարձր Հայք աշխարհը, Խալխին Գոլ լիճը, Հայկական Պար լեռնաշղթան, Մեծ Մասիս լեռը, Մաստարայի Սուրբ Հովհաննես եկեղեցին, Վասպուրականի Մոկաց Սուրբ Մինաս վանքը *և այլն:*

2. Միայն առաջին բառն սկսել մեծատառով (դրանց կազմում հատուկ անուն լինելու դեպքում պահպանելով նաև այդ անվան մեծատառով գրությունը).

Ա. Ֆիզիկաաշխարհագրական այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ լրացյալը, առանձին վերցված, հատուկ անուն չէ.

Աղթամար կղզի, Արայի լեռ, Արարատյան դաշտ, Բաղակի քար (բերդ-ամրոց), Գեղամա լեռներ, Լոռու հրաբխային բարձրավանդակ, Կասպից (Վրկանա) ծով, Կովկասի լեռնաշղթա, Հիմալայան լեռներ, Հրազդանի ձոր, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս *(կամ՝*

Սառուցյալ օվկիանոս), Մեծ կամ Խաղաղ օվկիանոս *(կամ՝* Խաղաղ օվկիանոս), Որոտանի լեռնանցք, Պարսից ծոց, Սև ծով, Սևանա լիճ, Տրդատի թախտ (բերդավան, դաստակերտ), Ուրմիա (Կապուտան) լիճ **և այլն:**

Ծանոթություն: *Այս կարգի աշխարհագրական բաղադրյալ հատուկ անունները գրաբարում ունեն այլ շարադասություն, որի հետևանքով հասարակ անուն լրացյալները լինում են նախադաս և նույնպես գրվում են մեծատառ. այն է՝* Աթոռ Անահտա(յ), Դուռն Անտիոքա(յ), Քարն Բաղակու, Թախտ Տրդատա(յ) *և այլն:*

Բ. Պետությունների վարչատարածքային հին ու նոր այն անվանումներում, որոնց մեջ լրացյալը, առանձին վերցված, հատուկ անուն չէ.

Արագածոտնի մարզ, Վայոց ձորի մարզ, Տավբովի մարզ, Լոռի վոյեվոդություն, Կրակովի վոյեվոդություն, Վանի նահանգ, Փենսիլվանիայի նահանգ, Մասյացոտն գավառ, Մուշի գավառ, Կրասնոյարսկի երկրամաս, Ստավրոպոլի երկրամաս, Լանկաշիրի կոմսություն, Քենտի կոմսություն, Հոկայդոյի պրեֆեկտուրա, **այսպես նաև՝ պետությունների, ավատական (ֆեոդալական) ինքնավար իշխանությունների պատմական անվանումներում՝** Կիլիկիայի հայկական պետություն (**կամ** թագավորություն), Կարսի թագավորություն, Սյունիքի թագավորություն, Վասպուրականի թագավորություն (**բայց նաև՝** Կարսի Բագրատունիների թագավորություն, Վասպուրականի Արծրունյաց թագավորություն), Բյուզանդական կայսրություն, Հռոմեական կայսրություն, Խամսայի մելիքություն, Հուլիսյան միապետություն, Հայաստանի առաջին հանրապետություն **կամ** Առաջին հանրապետություն, Ֆրանսիայի հինգերորդ հանրապետություն **կամ** Հինգերորդ հանրապետություն և այլն:

Գ. Պետությունների խմբերի (դաշինքների, միավորումների) այն անուններում, որոնց մեջ լրացյալը (նաև սրան նախորդող միջադաս բաղադրիչը), առանձին վերցված, հատուկ անուն չէ.

Արաբական պետությունների լիգա, Երեք կայսրերի դաշինք, Եռյակ դաշինք, Սրբազան դաշինք, Նավթ արտահանող երկրների կազմակերպություն, Բրիտանիայի ազգերի համագործակցություն (**բայց՝** Անկախ Պետությունների Համագործակցություն) **և այլն:**

Դ. Չակերտների մեջ առնվող անվանումներում.

ա) գրական, գիտական, արվեստի և այլ երկերի ու ստեղծագործությունների, լրագրերի, պարբերականների բաղադրյալ անուններ՝

«Պատերազմ և խաղաղություն», «Հացի խնդիր», «Իններորդ ալիք», «Ամբոխները խելագարված», «Գրական թերթ», «Հայկական բանակ» (ամսագիր), «Հայոց աշխարհ» (թերթ), «Իմ ընկեր Նեսոն», «Մենք ենք, մեր սարերը», «Մամուլի տեսություն» հեռուստածրագիր, «Հողի արյուն» (գինի), «Անհաղթ աքլոր» (կոնֆետ), «Արգումենտի ի ֆակտի» շաբաթաթերթ, «Ռեսպուբլիկա Արմենիա» *և այլն.*

բ) հիմնարկներին, կուսակցություններին, կազմակերպություններին և զանազան այլ հաստատություններին ու առարկաներին (տարբերանշաններ, շքանշաններ և այլն) տրվող բաղադրյալ անուններ՝

«Մուրճ և մանգաղ» գործարան, «Նաիրիտ» գործարան, «Ազգային միաբանություն» կուսակցություն, «Հանրապետություն» կուսակցություն, «Հզոր հայրենիք» կուսակցություն, «Հող և ազատություն» կուսակցություն, «Միացյալ Հայաստան» կուսակցություն, «Միություն և առաջադիմություն» կուսակցություն, «Օրինաց երկիր» կուսակցություն, «Ռադիկալ ժողովրդավարական կուսակցություն» (Գերմանիայում) *(բայց նաև՝* Գերմանիայի սոցիալ-ժողովրդավարական կուսակցություն, Ավստրալիայի լեյբորիստական կուսակցություն, Ճապոնիայի ազատական-ժողովրդավարական կուսակցություն, Հայաստանի ժողովրդական կուսակցություն, Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցություն), «Աշխատանք», «Դինամո», «Սպարտակ» (մարզական ընկերություններ), «Զինվորի մայր» կազմակերպություն, «Պատվո նշան» շքանշան, «Մարտական ծառայությունների համար» մեդալ, «Մայրական փառք» շքանշան, «Գերազանցիկ ֆինանսիստ» կրծքանշան *և այլն:*

Ե. Համաշխարհային կամ համապետական ճանաչման հաստատության, մրցանակի կամ բարձրագույն պատվավոր կոչման, ինչպես նաև պետություններից շնորհվող շքանշանների և մեդալների բաղադրյալ անուններում.

(Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան) Մատենադարան, (ՀՀ) Գիտությունների ազգային ակադեմիա, Նոբելյան մրցանակ, ԽՍՀՄ Լենինյան մրցանակ, ՀԽՍՀ Պետական մրցանակ, Հայաստանի Ազգային հերոս, Հերոսուհի մայր, *այսպես նաև՝* Հայրենիքի շքանշան, Կարմիր դրոշի շքանշան, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան, Փառքի (առաջին աստիճանի, երկրորդ աստիճանի) շքանշան, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշան, Կարմիր աստղի շքանշան, Մարտական խաչի երկրորդ աստիճանի շքանշան, Արիության մեդալ, Պատվո լեգեոնի շքանշան *(բայց նաև՝* Անանիա Շիրակացու մեդալ, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան, Սուրբ Գեորգի խաչ շքանշան) և այլն:

Զ. Համաշխարհային կազմակերպությունների, միությունների, հաստատությունների, եզակի քաղաքական, արհմիութենական և հասարակական մարմինների ընդարձակ և համառոտ բաղադրյալ անուններում.

Միավորված ազգերի կազմակերպություն, Անվտանգության խորհուրդ, Խաղաղության համաշխարհային խորհուրդ, Արհեստակցական միությունների համաշխարհային ֆեդերացիա, Շախմատի միջազգային ֆեդերացիա, Ազգերի լիգա *և այլն:*

Է. Բոլոր պետությունների կենտրոնական ղեկավար օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անուններում.

ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների *պալատ* և Սենատ, Բուլղարիայի Հանրապետության Ժողովրդական *ժողով* և Նախարարների *խորհուրդ*, Լեհաստանի Հանրապետության Սեյմ, Հայաստանի Հանրապետության Ազգային *ժողով* և Կառավարություն, ՀՀ Վճռաբեկ *դատարան* և Սահմանադրական *դատարան*, Մեծ Բրիտանիայի Պառլամենտի Համայնքների *պալատ* և Լորդերի *պալատ*, (ԱՄՆ, ՌԴ) Գերագույն *դատարան*, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական *ներկայացուցիչների համաչինական ժողովի* Մշտական կոմիտե, ՉԺՀ Պետական խորհուրդ, Ռուսաստանի Դաշնության Պետդումա (Պետական *դումա* կամ Դումա), ՌԴ Կառավարություն, Ֆրանսիայի Ազգային *ժողով* և այլն:

Ծանոթություն: *Պաշտոնական փաստաթղթերում և հաղորդագրություններում մեծատառով գրվող* Պառլամենտ, Կոնգրես, Սենատ, Սեյմ, Մեջլիս, Դուման, Ռադա, Խուրալ, հայերեն՝ Կառավարություն *և այլ անունները՝ իբրև պետական կենտրոնական ղեկավարի մարմնի տեսակ անվանող բառեր գործածվելիս գրվում են փոքրատառ և մտնում են բառարան՝ որպես հասարակ անուն:*

Ը. Պատմահասարակական նշանավոր անցքերի ու շրջափուլերի և պաշտոնական ու ազգային-ավանդական տոների անուններում.

ա) պատմահասարակական նշանավոր անցքեր՝

Առաջին համաշխարհային պատերազմ (Առաջին աշխարհամարտ), Երկրորդ համաշխարհային պատերազմ (Երկրորդ աշխարհամարտ), Դիմադրության շարժում, Երեսնամյա պատերազմ, Թոնդրակյան շարժում, (հայկական) Մեծ եղեռն, Հայրենական մեծ պատերազմ (Մեծ Հայրենական), Հարյուրամյա պատերազմ, Հյուսիսային պատերազմ, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխություն, Ռուսաստանի 1812 թ. Հայրենական պատերազմ, 1920 թ. Մայիսյան ապստամբություն, Յոթնամյա պատերազմ, 1917 թ. Փետրվարյան հեղափոխություն, 1848 թ. Ֆրանսիական բուրժուադեմոկրատական հեղափոխություն, 1789-1794 թթ. Ֆրանսիական մեծ հեղափոխություն, Գրիգորյան տոմար, Հուլյան տոմար *և այլն.*

բ) պետական-պաշտոնական և միջազգային տոներ՝

Թարգմանչաց տոն, Հաղթանակի տոն, Մայիսի մեկ, Ապրիլի յոթ (Մայրության և գեղեցկության տոն), Մարտի ութ (Կանանց միջազգային օր), Նոր տարի կամ Ամանոր, Անկախության օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Ռազմաօդային ուժերի օր, Սահմանադրության օր, Երկաթուղայինի օր *և այլն.*

գ) եկեղեցական-ծիսական և ժողովրդական, ավանդական դարձած տոներ՝

Քրիստոսի հարության կամ պայծառակերպության տոն, Սուրբ ծննդի տոն (Սուրբ ծնունդ), Տյառնընդառաջի տոն, *ինչպես նաև՝* Կանաչ կիրակի, Կարմիր կիրակի, Մեծ պաս (տոն օրեր), Զատկի տոն (Զատիկ), Ծաղկազարդի տոն (Ծաղկազարդ), Համբարձման տոն (Համբարձում), Ջրօրհնեքի տոն (Ջրօրհնեք), Վարդավառի տոն (Վարդավառ) *և այլն:*

3. Դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հաղորդագրությունների մեջ, Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվում, հեղինակային վերաբերմունքի՝ քաղաքավարական և մեծարման ոճերում թույլատրվում է մեծատառի ազատ գործածություն՝ ըստ ընդունված կարգի:

4. Վերոհիշյալ կանոնների մեջ չմտնող բաղադրյալ անվանումները, եթե չեն տեղայնացված, որպես հասարակ անուններ գրել փոքրատառով.

(ՀՀ) արտաքին գործերի նախարարություն, գիտության և կրթության նախարարություն, պետական գիտատնտեսական խորհուրդ, գազի արդյունաբերության գլխավոր վարչություն, լեզվի պետական տեսչություն, գլխավոր դատախազություն, ռազմածովային ուժեր, գրողների միություն, նկարիչների միություն, արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ, երիտասարդության միություն, մարզական ընկերությունների և կազմակերպությունների միություն, պետական համալսարան, բժշկական համալսարան, պետական հումանիտար քոլեջ, կաուչուկի գործարան, քաղաքային դեպարտամենտ,

ազգային գրադարան, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն, հայկական երգի-պարի վաստակավոր անսամբլ, պատմության պետական թանգարան:

Այսպես են գրվում կուսակցությունների՝ չակերտներում չառնվող բաղադրյալ անունները. օրինակ՝ կոմունիստական կուսակցություն, բանվորական կուսակցություն, դեմոկրատական կուսակցություն, սոցիալիստական միասնական կուսակցություն, լեյբորիստական կուսակցություն, քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն: *Այսպես են գրվում նաև պետական, զինվորական, գիտական պաշտոնների, պատվավոր և այլ կոչումների բաղադրյալ անունները. օրինակ՝* գերագույն գլխավոր հրամանատար, գլխավոր դատախազ, ավիացիայի մարշալ, ժողովրդական արտիստ, գիտության վաստակավոր գործիչ, վաստակավոր ուսուցիչ, վաստակավոր շինարար, *այսպես նաև՝* հանրապետության նախագահ, կուսակցության կենտկոմի քարտուղար, երկրի վարչապետ *և այլն:*

Ծանոթություն: *Եթե բաղադրյալ անվան վերադիր ածականը տեղայնացնող կամ մասնավորող նշանակություն ունի և օտարաբանությամբ գործածված է տեղանվան սեռական հոլովի իմաստով ու կարող է փոխարինվել այդ ձևով, գրվում է մեծատառով. օրինակ՝* Լեհական *(փոխանակ՝* Լեհաստանի) միացյալ բանվորական կուսակցություն, Հայ (Հայկական կամ Հայաստանի) ռամկավար ազատական կուսակցություն, *այսպես նաև՝* Երևանյան լիճ, Թբիլիսյան խճուղի, Կիևյան փողոց *և այլն:*

5. Հապավումների մեջ մեծատառերով գրել՝

Ա. Հատուկ և հասարակ բաղադրյալ անունների տառային հապավումներն ամբողջությամբ.

ՌԴ, ԱՄՆ, ՉԺՀ, ՄԱԿ, ՀԳՄ, ՀԺԿ, ՀԴԿ, ԳԱԱ (Գիտությունների ազգային ակադեմիա), ՄՏԿ, ՀՕՊ, ՊԱՊ *և այլն:*

Ծանոթություն: *Հասարակ գոյականի արժեք ստացած* բուհ, նեպ, հէկ, զագս *և նման տառային հապավումները գրել փոքրատառով:*

Բ. Բաղադրյալ հատուկ անունների ոչ տառային հապավումների միայն առաջին տառը.

(Լեհաստանի Հանրապետության) Պետխորհուրդ, (Ռուսաստանի Դաշնության) Պետդումա, Անդրֆեդերացիա *և այլն:*

Գ. Հասարակ անվան գործածություն ունեցող բաղադրյալ անունների տեղայնացնող բաղադրիչի առաջին տառը.

Հայկինո, Հայպետհրատ, Գրոզնեֆտ, Լենֆիլմ, Մոսֆիլմ, Հայոսկի *և այլն:*

Դ. Խառը տիպի հապավումների նաև առանձին բաղադրիչների առաջին տառը.

ԱՄ Նահանգներ, ՌԴ Դումա (Պետդումա), ԼՂ Հանրապետություն, ՀՀ Կառավարություն, ՀամԼԿԵՄ, ՀամԿ(բ)Կ *և այլն:*

Ե. Օտարազգի տառանուններով հատուկ անունների յուրաքանչյուր տառանվան առաջին տառը.

ԱյԲիԷմ, ԲիԲիՍի, ԷյԲիՍի, ԷլԲիԷյ, ԷՖԷմ, ՍիԷնԷն *և այլն:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ 3
ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔ 5
ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔ ԳՐԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 7
ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ԼԵԶՈՒՆ 9
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ 12
ՇԱՐԱԴՐԱՆՔԻ ՊԼԱՆԸ 14
ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ 17
ԲԱՌԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ 22
ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՁՈՑՆԵՐԻ ՈՒ ՁԵՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ 23
ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԻՁՈՑՆԵՐԻ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ 26
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԵՐ 28
ԳԻՏԱԿԱՆ ՈՃ 30
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ (ՎԱՐՉԱԿԱՆ) ՈՃ 32
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ՈՃ 34
ԱՌՕՐՅԱ-ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃ 36
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃ 39
ԳՐՎԱԾՔԻ ՈՃԸ. ՈՃԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ 43

ԱՆՑԱԾ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ 47
Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում..... 47
Արևելահայերեն և արևմտահայերեն..... 48
Բարբառներ 49
Լեզվաբանության բաժինները 49
ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 51
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ 53
ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 64
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 79
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ 114
ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ 145
ԲԱՌԻ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՔՍՏԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ
ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 148
ՄԱԿԴԻՐ, ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ, ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ 149
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԺԱՆՐԵՐ 151
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 151

ՀԱՎԵԼՎԱԾ
Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին 152

Լևոն Եզեկյան, Արտաշես Սարգսյան, Ռուբեն Սաքապետոյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
12

ԴԱՍԱԳԻՐՔ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Շապիկի ձևավորումը՝ Արտակ Բաղդասարյանի

Մուտքագրում՝ Սվետլանա Այվազյան
Էջադրում՝ Միքայել Աբրահամյան
Սրբագրիչ՝ Պարույր Հակոբյան

Տպագրված է «Տիգրան Մեծ»
հրատարակչություն ՓԲԸ տպարանում
Պատվեր՝ 1065: Տպաքանակ՝ 17300:

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ
Երևան, Ղ. Փարպեցու 9, հեռ. 53-79-82, 53-79-83
E-mail: manmar@arminco.com
www. manmar.am